ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԲԱՆԿ

2020
ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ



Տեսարան Նալբանդյան փողոցից (1930-ական թթ.)

ՀՀ ԿԲ-ի մասին օրենքի համաձայն՝ տարեկան հաշվետվությունը վերաբերում է Կենտրոնական բանկի կառավարման դրույթներին: Այն ներառում է ԿԲ ռազմավարությունից բխող հիմնական գործառույթների վերաբերյալ տարեկան գործունեության ամփոփ տվյալներ և միջազգային աուդիտորական եզրակացություն անցած ֆինանսական հաշվետվությունները:

Այդուհանդերձ, ԿԲ գործունեության ամբողջական պատկերը ստանալու համար անհրաժեշտ է նաև դիտարկել ԿԲ երկու գլխավոր խնդիրների իրագործմանն ուղղված ռազմավարությունները և դրանց իրագործման վերաբերյալ Գնաճի և Ֆինանսական կայունության հաշվետվությունները: Դրանք պարունակում են խոր մասնագիտական վերլուծություններ և գնահատականներ ՀՀ և համաշխարհային տնտեսությունների ու ֆինանսական շուկաների վարգացումների վերաբերյալ:

Վերջիններիս մասին, ըստ թեմաների, հղմամբ նշված է սույն հաշվետվության մեջ:

Հայաստանի
Հանրապետության
Կենտրոնական Բանկ

2020

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ **2021**



Բովանդակություն

01

ՀՀ կենտրոնական բանկ **13**

Կենտրոնական բանկի մասին 14

Կենտրոնական բանկի ռազմավարական ուղղություններ 16

02

Հիմնական նպատակներ **26**

Գների կայունության ապահովում 27

Ֆինանսական կայունության ապահովում 36

03

Այլ նպատակներ **38**

Ֆինանսական համակարգի կարգավորում և վերահսկողություն 40

Արժեթղթերի շուկա 44

Վճարահաշվարկային համակարգ 46

Ուսումնահետազոտական կարողությունների վարգացում 51

Ֆինանսական համակարգի սպառողների շահերի պաշտպանություն և ֆինանսական կրթում 57

Արժույթի թողարկում, դրամաշրջանառության կազմակերպում 64

Միջազգային պահուստների կառավարում 69

Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի կազմակերպում և կարգավորում 70

04

Ինստիտուցիոնալ զարգացում **80**

ԿԲ անվտանգություն և գործընթացների անընդհատություն 82

Գիտելիք և մարդկային ռեսուրսներ 88

Հաղորդակցում և հաշվետվողականություն 90

05

ՀՀ կենտրոնական բանկի տարեկան համախմբված ֆինանսական հաշվետվություններ **97**



Մարտին Գալստյան

ՀՀ կենտրոնական բանկի
նախագահ

Հարգելի՛ ընթերցող

2020 թվականը որպես ԿԲ Նախագահի իմ պաշտոնավարման առաջին տարին էր: Ազգային ժողովի կողմից Նախագահի պաշտոնում հունիսի 15-ին նշանակվելու ժամանակ երկիրն ապրում էր կորոնավիրուսի առաջին ալիքը, և տնտեսության համար բավականին ծանր ժամանակահատված էր: Կենտրոնական բանկը հիմնականում աշխատում էր հեռավար, սակայն՝ ոչ պակաս լարվածությամբ: Չնայած գլոբալ անորոշությունը շատ մեծ էր, բայց բոլորս հուսով էինք, որ աշխարհը մոտ ժամանակներում կհաղթահարի համավարակը, և կյանքը կվերադառնա իր բնականոն հուն:

2020 թվականի սեպտեմբերին սկսված Արցախյան երկրորդ պատերազմի դաժան օրերին Կենտրոնական բանկն ամբողջ երկրի հետ միասին անցավ ռազմական դրության: Ռազմական նորությունները միախառնվում էին ֆինանսական շուկաների նորություններին, և շատ մեծ էր պատասխանատվությունը ընդունած բոլոր որոշումների համար: Աշխատանքը կատարվում էր 24/7 ռեժիմով, այն պարագայում, երբ ԿԲ և ֆինանսական համակարգի անձնակազմի մի մասն անցնում էր պատերազմի միջով, մյուսը՝ վարակի: Եվ հետահայաց նայելով մեր անցած ճանապարհին՝ պետք է փաստեմ, որ թե՛ ԿԲ անձնակազմը և թե՛ ֆինանսական համակարգը պատվով դուրս եկան այս մեծ փորձությունից:

Այժմ անդրադառնամ տնտեսական իրավիճակին: Տարին սկսելով տնտեսական բարձր ակտիվությամբ՝ համավարակի պատճառով Հայաստանի տնտեսությունը խոր անկում գրանցեց: Ընդ որում, պետք է նշել, որ թե՛ Կառավարությունը՝ պետական

բյուջեի պակասուրդի միջոցով, թե՛ Կենտրոնական բանկը՝ խթանող քաղաքականության և իրացվելիության տրամադրման միջոցով մեծ ջանքեր գործադրեցին ավելի վատատեսական սցենարից խուսափելու համար:

Տարվա վարգացումների հետևանքով վգալիորեն ավելացան երկրի ներքին և արտաքին ռիսկերը, ինչն արտացոլվեց նաև ֆինանսական շուկաներում, այդ թվում՝ տարեվերջին փոխարժեքի արժեզրկման միջոցով: Գնաճը, որը տարվա ընթացքում կրելով թույլ պահանջարկի ազդեցությունը պահպանվում էր ցածր մակարդակի վրա, տարեվերջին առաջարկի գործոնների ներքո կտրուկ ավելացավ: ԿԲ դրամավարկային քաղաքականությունը բնութագրվում էր նվազող տոկոսադրույքների հետագծով և ուներ վգալի խթանող դիրք: Տարեվերջին, արձագանքելով կանխատեսվող գնաճի արագացմանը, ԿԲ խորհուրդը կտրուկ բարձրացրեց վերաֆինանսավորման տոկոսադրույքը՝ կրճատելով խթանման չափը: Միևնույն ժամանակ, ֆինանսական շուկաներում ԿԲ գործողությունների արդյունքում հնարավոր եղավ ապահովել սահուն ճշգրտում՝ խուսափելով մեծ ցնցումներից:

Ֆինանսական համակարգը նույնպես գործել է բարձր անորոշության և բարձր տատանողականության միջավայրում: Համավարակի բռնկման և հատկապես պատերազմով պայմանավորված անորոշությունների ներքո բանկային համակարգը կանգնած էր վարկերի որակի վատթարացման և ավանդների արտահոսքի վտանգի առջև: Այնուամենայնիվ, բանկային համակարգի ձևավորած անվտանգության բարձիկները և ԿԲ քաղաքականությունը՝ ուղղված բանկային համակարգի դրամային և արտարժութային իրացվելիության ապահովմանը, թույլ տվեցին հնարավորինս անցնցում հաղթահարել այդ բարդ իրավիճակները՝ ապահովելով ֆինանսական համակարգի անխափան աշխատանքը:

Չնայած դժվարագույն և փորձություններով լի տարվան՝ Կենտրոնական բանկին, կարծում եմ, հաջողվել է պահպանել գների և ֆինանսական կայունությունը՝ ի բարօրություն մեր հասարակության:

Միևնույն ժամանակ, որպես անկախ մարմին, Կենտրոնական բանկը պետք է մշտապես թափանցիկ և հասկանալի լինի հասարակության համար: Այդ նպատակով անցած տարվա ընթացքում բարեփոխվել է նաև ԿԲ հաղորդակցման գործընթացը: Դրամավարկային քաղաքականության բոլոր որոշումներին հաջորդում են ԿԲ Նախագահի ասուլիսները, իսկ Խորհրդի նիստերի արձանագրությունները շատ ավելի մանրամասն են նկարագրում տոկոսադրույքների վերաբերյալ որոշումների քննարկումը և հիմքում ընկած դատողությունները: ԿԲ Նախագահի ասուլիսներով են ուղեկցվում նաև ֆինանսական կայունության հաշվետվությունները, որոնք ներկայումս որակական բարեփոխման փուլում են և աստիճանաբար ավելի մանրամասն կներկայացնեն ԿԲ վարած մակրոպրուդենցիալ քաղաքականությունը:

Տարվա ընթացքում շարունակվել են նաև ԿԲ կառուցվածքային փոփոխությունները: Բոլոր ներքին ծառայությունները միավորվել են Կորպորատիվ ծառայությունների և վարգացման դեպարտամենտում՝ գործընթացների արդյունավետության բարձրացման նպատակով: Այս բարեփոխման թիրախներից է անձնակազմի կառավարման քաղաքականության, տեղեկատվական տեխնոլոգիաների ու տեղեկատվական անվտանգության, բյուջետային և գնումների գործընթացների և մյուս ներքին ծառայությունների որակի բարելավումը: Ներկայումս ԿԲ-ն, որպես ինստիտուտ, անցնում է բարեփոխումների հերթական շրջանը, որի արդյունքները տեսանելի կլինեն մոտակա տարիներին:

Կցանկանայի նաև անդրադառնալ այն կարևորագույն գործոնին, որը տարիներ շարունակ ընկած է ԿԲ հաջողության հիմքում: Դա ԿԲ ինստիտուցիոնալ կարողությունն է, որի ձևավորմանը ներդրում ունեն ԿԲ ներկա և նախկին բոլոր ղեկավարներն ու աշխատակիցները: Ես ևս իմ պաշտոնավարման ողջ ընթացքում կարևորելու եմ այդ ժառանգության պահպանումն ու վարգացումը: Այդ խնդրի կենսագործման տեսլականը կարտացոլվի մեր նոր ռազմավարության մեջ, որի մշակման վրա սկսել ենք աշխատել անցած տարվանից:

Որպես խոսքիս վերջաբան՝ կցանկանայի իմ խորին շնորհակալությունը հայտնել ԿԲ անձնակազմին՝ ստեղծված դժվարին պայմաններում անձնուրաց աշխատանքի համար: Ես հատկապես տպավորված եմ մոդելավորման և կանխատեսման մեր թիմի աշխատանքով: Համավարակի սկզբում, երբ ամբողջ աշխարհում տնտեսագիտական միտքը դեռևս աշխատում էր տնտեսական հետևանքների մոդելավորման վրա, մեր թիմն առաջիններից էր աշխարհում, որ կարողացավ մոդելավորել իրավիճակը և հիմք ստեղծել, ձևավորված բարձր անորոշության պարագայում, ԿԲ խորհրդի որոշումների համար: Տեղեկատվական տեխնոլոգիաների մեր թիմը համավարակի և պատերազմի ընթացքում ահռելի աշխատանք կատարեց բանկի անխափան գործունեությունն ապահովելու համար: Յուրաքանչյուր աշխատող, ներառյալ ղեկավար թիմը և ԿԲ խորհուրդը, տարվա մեծ մասն աշխատել է գերծանրաբեռնված, որպեսզի այսօր կարողանանք հպարտորեն փաստել, որ գների կայունությունը և ֆինանսական կայունությունը Հայաստանում անսասան են, և վստահ լինենք, որ երաշխավորված են նաև ապագայում:

Շնորհակալություն

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ

ԽՈՐՀՈՒՐԴ



Մարտին ԳԱԼՍՏՅԱՆ

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ



Ներսես ԵՐԻՑՅԱՆ

Նախագահի տեղակալ



Վախթանգ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Նախագահի տեղակալ



Հասմիկ ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ



Օլեգ ԱՂԱՍՅԱՆ



Դավիթ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ




Հովհաննես ԽԱՉԱՏՐՅԱՆ



Արթուր ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ
ԿԱՌՈՒՑՎԱԾՔ



ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

www.cba.am

ԴՐԱՄԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

12-ԱՄՍՅԱ ԳՆԱՁ
3.7%

ՎԵՐԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔ
5.25%

ԴՐԱՄԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԳՏՆՎՈՂ ԹՂԹԱԴՐԱՄՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ/ԾԱՎԱԼ
728,686,331.41 ֏

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱԿՏԻՎՆԵՐ
7 ՏՐԼՆ 918 ՄԼՐԴ 909 ՄԼՆ ֏

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱԿՏԻՎՆԵՐ/ՀՆԱ
128.1 %

ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱԿՏԻՎՆԵՐ
6 ՏՐԼՆ 692 ՄԼՐԴ 8 ՄԼՆ ֏

ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱԿՏԻՎՆԵՐ/ՀՆԱ
108.2 %

ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՊԻՏԱԼԻ ՀԱՄԱՐԺԵՔՈՒԹՅՈՒՆ
16.9 %

ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՑՎԵԼԻՈՒԹՅԱՆ ՆՈՐՄԱՏԻՎԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇ
25.6 %

ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԸՆԹԱՑԻԿ ԻՐԱՑՎԵԼԻՈՒԹՅԱՆ ՆՈՐՄԱՏԻՎԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇ
108.8%

ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ԵՎ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ՊԱՀՈՒՍՏԱՎՈՐՈՒՄ

ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՍՏԱՑՎԱԾ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ
16 916 ՔԱՆԳ
1195 ԳՐԱՎՈՐ ԴԻՄՈՒՄ

ՊԱՀՈՒՍՏՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՀՈՒՍՏՆԵՐԻ ՄԱԿԱՐԴԱԿԸ
$2 616 ՄԼՆ

ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ՀՏՑ ԿԱՊԵՐ

ՆՈՐՄԱՏԻՎ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ
45

ԱՆՀԱՏԱԿԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ
168

ԼՈԿԱԼ ՈՐՈՇՈՒՄ
18

ԱՅՑԵԼՈՒՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԻ ԱՅՑԵԼՈՒՆԵՐԻ ԹԻՎԸ
2 075

ԱՇԽԱՏԱԿԱԺԱՌ

ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՄԻՋԻՆ ԹԻՎ
765 ՄԱՐԴ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄ
70 ՄԱՐԴ

«ԴԻԼԻՋԱՆԻ ՈՒՀԿ»-ՈՒՄ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊՐԱԿՏԻԿԱ ԱՆՑԱԾ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԲՈՒՀ-ԵՐԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐ
11

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2020



Հայաստանի
Հանրապետության
Կենտրոնական Բանկ

01


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ **ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ**

Կենտրոնական բանկի մասին

Կենտրոնական բանկի ռազմավարական ուղղություններ

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՄԱՍԻՆ

Կենտրոնական բանկի արժեքները, տեսլականը և առաքելությունը



Արժեքներն են՝

Անկախություն. Իր նպատակներին հասնելու գործիքակազմի ընտրության և որոշումների կայացման մեջ Կենտրոնական բանկն անկախ է:

Արհեստավարժություն. Կենտրոնական բանկի արհեստավարժ անձնակազմի միջոցով մարտահրավերներին ժամանակին և բարձր որակով արձագանքելու ունակություն:

Թափանցիկություն. Իր գործունեության վերաբերյալ համապատասխան տեղեկատվության բաց, պարզ և ժամանակին տրամադրում շահառուներին:

Տեսլականն է՝

լինել վստահելի իր շահառուների համար, կայուն՝ իր քաղաքականության մեջ՝ միաժամանակ մնալով առաջադեմ և կարգացող կառույց:

Առաքելությունն է՝

գների և ֆինանսական կայունության ապահովումը:

Կենտրոնական բանկի հիմնական նպատակներն են՝

Հայաստանի Հանրապետությունում գների կայունության և ֆինանսական կայունության ապահովումը:

Կենտրոնական բանկի այլ նպատակներն ու գործառույթները*

- Հայաստանի Հանրապետության ֆինանսական համակարգի կայունության, իրացվելիության, վճարունակության և բնականոն գործունեության համար անհրաժեշտ պայմաններ ապահովելը.
- դրամավարկային, ֆինանսական համակարգի, վճարային հաշվեկշռի, միջազգային ներդրումային դիրքի և արտաքին պարտքի վիճակագրության հավաքագրումը, ամփոփումը և հրապարակումը.
- գործուն վճարահաշվարկային համակարգերի ստեղծումն ու զարգացումը.
- Հայաստանի Հանրապետության արժույթի թողարկումը, դրամաշրջանառության կազմակերպումը և կարգավորումը.
- փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի կազմակերպումն ու կարգավորումը.
- արժեթղթերում ներդրողների պաշտպանության, շուկայում արժեթղթերի արդար գնագոյացման համակարգի ձևավորման ու պահպանման, արժեթղթերի արդար, թափանցիկ և վստահելի շուկայի կանոնակարգված և բնականոն գործունեության և զարգացման համար անհրաժեշտ պայմանների ապահովումը.
- ֆինանսական համակարգում սպառողների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության համար անհրաժեշտ պայմանների ապահովումը.
- ֆինանսական համակարգում ազատ և բարեխիղճ տնտեսական մրցակցության ապահովումը:

* *Մանրամասն տե՛ս* «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքը (https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=121585)

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2018-2020 թվականների ռազմավարությունը[1] սահմանում է Կենտրոնական բանկի ռազմավարական ոլորտները և ամփոփում դրանց վարգացման ուղղությունները (նկար 1): Այն ուղղված է նախորդ տարիներին Կենտրոնական բանկի ձեռքբերումների հետագա վարգացմանը և արդի մարտահրավերներով պայմանավորված՝ նոր ուղղությունների սահմանմանը:

Կենտրոնական բանկն իր ռազմավարությունը իրականացնելիս առաջնորդվում է միջազգային լավագույն փորձով և չափորոշիչներով:

[1] *Մանրամասն տե՛ս www.cba.am*

Նկար 1. ՀՀ կենտրոնական բանկի գերակա ռազմավարական ոլորտների շրջանակը



- Ինստիտուցիոնալ վարգացման ոլորտներ
- 2018-2020 թթ. ռազմավարական ոլորտներ
- ԿԲ քաղաքականությունների շրջանակ

Գների կայունության ապահովում ռազմավարական ուղղության ամփոփում: ՀՀ կենտրոնական բանկի վարած դրամավարկային քաղաքականությունն ուղղված է եղել 12-ամսյա գնաճի 4% թիրախային մակարդակի ապահովմանը: Տարվա ընթացքում պահպանվել է ցածր գնաճային միջավայր, որն ածանցվել է տարեսկզբից աշխարհի մի շարք երկրներում, մարտից՝ նաև Հայաստանում բռնկված Նոր կորոնավիրուսի (COVID-19) համավարակի, իսկ սեպտեմբերի 27-ից՝ երկրում հայտարարված ռավմական դրության առողջապահական և տնտեսական հետևանքներից:

2020 թվականին, 12-ամսյա գնաճն իր թիրախային մակարդակին մոտեցնելու նպատակով, ՀՀ ԿԲ-ն վարել է խթանող դրամավարկային քաղաքականություն: ԿԲ-ն հունվար-նոյեմբեր ժամանակահատվածում վերաֆինանսավորման տոկոսադրույքն աստիճանաբար իջեցրել է: Սակայն դեկտեմբերին, երբ արտաքին հատվածից սպասվող գնաճային ազդեցությունների պայմաններում կանխատեսվում էր գնաճի և գնաճային սպասումների որոշակի արագացում, ԿԲ-ն մեծ քայլով՝ 1.0 տոկոսային կետով բարձրացրել է տոկոսադրույքը և սահմանել 5.25%: Արդյունքում՝ տարեվերջին գնաճը գտնվել է նպատակային ցուցանիշին բավականին մոտ՝ 3.7% մակարդակում:

Տարվա ընթացքում տնտեսաքաղաքական հեռանկարի հետ կապված անորոշություններն իրենց արտահայտությունն են ստացել նաև ՀՀ արժութային շուկայում, որտեղ արձանագրվել է ՀՀ դրամի որոշակի արժեզրկում: ԿԲ-ն, շարունակելով հավատարիմ մնալ լողացող փոխարժեքի քաղաքականությանը, ֆինանսական շուկայի բնականոն գործունեության ապահովման նպատակով արժութային շուկայում ունեցել է իրավիճակային փոքր չափով մասնակցություն:

Ֆինանսական կայունության ապահովում ռազմավարական ուղղության ամփոփում: Համավարակի տարածման և ռավմական դրության հայտարարման հետ կապված՝ 2020 թվականին ֆինանսական համակարգը գործել է էական անորոշությունների ներքո, ինչի հետևանքով ֆինանսական համակարգի մասնակիցները 2020 թվականին ցուցաբերել են համեմատաբար պահպանողական վարքագիծ, և գործունեության ծավալների աճի տեմպերը եղել են չափավոր:

2020 թվականին Կենտրոնական բանկի կարգավորման դաշտի և պրուդենցիալ գործիքակազմի կիրառության տրամա-

բանությունը բխել է ֆինանսական միջնորդության անընդհատության և սահունության ապահովման առաջնահերթությունից: Անորոշությունների և արագ փոփոխվող իրավիճակի պայմաններում բանկային համակարգի մշտադիտարկումը իրականացվել է առավել օպերատիվ՝ ռիսկային վարգացումների ժամանակին բացահայտման և դրանք հասցեագրելու արդյունավետ գործողությունների մշակման համար:

ՀՀ կենտրոնական բանկի այլ նպատակներ

Ֆինանսական համակարգի կարգավորում և վերահսկողություն ռազմավարական ուղղության ամփոփում: Կարևորելով ֆինանսական համակարգի կարգավորման դաշտի անընդհատ կատարելագործումը՝ 2020 թվականի ընթացքում Կենտրոնական բանկը նախաձեռնել և իրականացրել է մի շարք օրենսդրական փոփոխություններ: Երկրում ստեղծված իրավիճակը իր ազդեցությունն է ունեցել նաև այս խնդրի իրականացման վրա: Իրավիճակով պայմանավորված՝ ֆինանսական համակարգի վերահսկողության խնդիրներն ու ուղղությունները փոփոխվել են, և ֆինանսական կազմակերպություններում տեղերում պլանավորված որոշ ստուգումներ հետաձգվել են կամ իրականացվել հեռավար՝ հեռակա վերահսկողության շրջանակներում: Ռազմավարական այս խնդրի իրագործման շրջանակում իրականացվել են իրավիճակից բխող, առավել առաջնահերթ ուղղվածության վերահսկողական միջոցառումներ:

Արժեթղթերի շուկա ռազմավարական ուղղության ամփոփում: Արժեթղթերի շուկայի վարգացման նպատակով 2020 թ. ընթացքում Կենտրոնական բանկի ուշադրության կենտրոնում է եղել կապիտալի շուկայի վարգացման իրատեսական, բավմակողմանի և խոր վերլուծությամբ հիմնավորված ռազմավարության ձևավորումն ու իրագործումը՝ որպես ներդրումների, մրցունակության և կայուն աճի նախապայման:

Վճարահաշվարկային համակարգ ռազմավարական ուղղության ամփոփում: Ինչպես ամբողջ աշխարհում, այնպես

էլ ՀՀ-ում 2020 թվականի մարտահրավերները ևս մեկ անգամ ընդգծեցին անկանխիկ գործարքների կենսական դերը բնակչության բնականոն կյանքի ապահովման գործում: Համաճարակը, բացի մարտահրավերներից, նաև հնարավորություն ստեղծեց խրախուսելու անկանխիկ գործարքների իրականացումը: 2020 թվականին ռազմավարական այս խնդրի իրականացման շրջանակում Կենտրոնական բանկը իր ջանքերն ուղղել է բնակչության անկանխիկ վճարումների խրախուսմանը, պետության կողմից սոցիալական ապահովության նպաստների վճարման գործընթացի՝ բնակչության համար առավելագույնս հարմարավետ ձևով իրականացմանը, ինչպես նաև ամբողջ վճարահաշվարկային համակարգի սահուն և անխափան գործունեության ապահովմանը՝ պետության, հասարակության և տնտեսավարող սուբյեկտների պահանջմունքները բավարարելու համար: Իրականացված միջոցառումների արդյունքում վճարային քարտերով կատարված անկանխիկ գործարքների ծավալը նախորդ տարվա համեմատ աճել է 37%-ով:

Նպատակ ունենալով նվազեցնել վճարումների մշակման հետ կապված ծախսերը, ինչպես նաև ապահովել տեղեկատվության փոխանակման գործընթացների ավտոմատացումը ռազմավարական այս ուղղության իրականացման համատեքստում՝ 2020 թ. Կենտրոնական բանկի կողմից որդեգրվել է վճարային համակարգերում ստանդարտացված հաղորդագրությունների կիրառման քաղաքականություն: Այս քաղաքականության շրջանակներում Կենտրոնական բանկի խորհուրդը սահմանել է ֆինանսական կազմակերպությունների կողմից շահագործվող համակարգերում ԻՍՕ 20022 միջազգային ստանդարտի հաղորդագրությունների ներդրման և կիրառման գործընթացին ներկայացվող նվազագույն պահանջները:

Ուսում նահետազոտական կարողությունների զարգացում ռազմավարական ուղղության ամփոփում: Չնայած COVID-19 համաճարակով և պատերազմով պայմանավորված սահմանափակումներին՝ ուսումնահետազոտական կարողությունների զարգացման ուղղության ներքո իրականացվող աշխատանքները չեն դադարել՝ դրանց մի մասը կազմակերպվել է առցանց եղանակով: 2020 թվականին իրականացված աշխատանքների ու հետազոտությունների առանցքային վերլուծությունները վերաբերել են ՀՀ-ում կորոնավիրուսի սոցի-

ալ-տնտեսական հետևանքների գնահատման և իրավիճակի վարգացման հնարավոր սցենարների մոդելավորմանը, կորոնավիրուսի շրջանակներում տնտեսական արձագանքման միջազգային փորձին: Հոդվածների և վերլուծությունների արդիականության լավագույն գնահատումը դրանց հրապարակումն էր միջազգային տարբեր պարբերականներում:

Ուշադրության կենտրոնում պահելով տարվա հիմնական թրենդները և պահի հրամայականները՝ Կենտրոնական բանկը իր ուսումնահետազոտական կարողություններն ուղղել է նաև իր հիմնական քաղաքականությունների ուղղությամբ վերլուծությունների և հետազոտությունների իրականացմանը, ինչի արդյունքում ձևավորված հոդվածները և վերլուծական նյութերը հրապարակվելու են ԿԲ կայքում՝ ՀՀ և միջազգային մասնագետներին ու հետազոտողներին հասանելի դարձնելու նպատակով:

Դիլիջանի ուսումնահետազոտական կենտրոնը 2020 թվականին Հարվարդի, Նոտր Դամի, Չիկագոյի, Թաֆթսի համալսարանների 11 ուսանողների համար կազմակերպել է հեռավար հետազոտական պրակտիկա:

Կենտրոնական բանկի կորպորատիվ սոցիալական պատասխանատվության շրջանակում շարունակել են գործել Դիլիջանի կենտրոնական դպրոցը, ֆաբլաբ-ը, «Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնը, Դիլիջանի դրամի ցուցասրահը:

Ֆինանսական համակարգի սպառողների շահերի պաշտպանություն և ֆինանսական կրթում ռազմավարական ուղղության ամփոփում: Ռազմավարական այս խնդրի իրականացման հիմնական ուղղություններից մեկը համապատասխան միջավայրի ապահովումն է՝ կարգավորման դաշտի վարգացման միջոցով: Այս համատեքստում հատկանշական է, որ ընդլայնվել է ֆինանսական համակարգի հաշտարարին դիմողների ցանկը, ֆինանսական կազմակերպության և սպառողի միջև լռելյայն հաղորդակցման «փոստային» եղանակը փոխարինվել է «էլեկտրոնայինով», իսկ հիպոտեկային վարկեր ունեցող սպառողները հնարավորություն կունենան **հիպոտեկային վարկերի գծով տարեկան 4 անգամ անվճար ստանալու քաղվածքներ (տեղեկանք),** որոնք կարող են ներկայացնել Պետական եկամուտների կոմիտե՝ վճարված տոկոսագումարների վերադարձման նպատակով:

2020 թվականը առաջ բերեց մարտահրավերներ, որոնք սահմանափակեցին ռազմավարական այս խնդրի մյուս հիմնա-

կան ուղղության՝ գործարար վարվելակերպի վերահսկողության իրագործումը: Չնայած այդ սահմանափակումներին՝ 2020 թվականին Կենտրոնական բանկը իրականացրել է գործարար վարվելակերպի հեռակա վերահսկողություն: Իրականացված միջոցառումների արդյունքում առանձին ֆինանսական կազմակերպություններ պարտավորվել են սպառողներին վերադարձնել նաև գումարներ:

2020 թվականին ռազմավարական այս խնդրի ֆինանսական կրթման ուղղությամբ տարվող աշխատանքները կազմակերպվել են էլեկտրոնային և առցանց հարթակների միջոցով: Արդյունքում՝ «Ֆինանսական կրթությունը դպրոցում» ծրագրի շրջանակում իրականացվել են 336 դպրոցների 2050 ուսուցիչների առցանց վերապատրաստումներ, իսկ «Քաղաքացի» ծրագրին մասնակցել են 25 ուսուցիչներ և 125 աշակերտներ, abcfinance.am կայքի և համանուն սոցիալական էջերի միջոցով հրապարակվել են մի շարք տեղեկատվական նյութեր՝ ինֆոգրաֆիկաներ, տեսադասեր, հոդվածներ:

Արժույթի թողարկում, դրամաշրջանառության կազմակերպում ռազմավարական ուղղության ամփոփում: 2020 թվականին ռազմավարական այս ուղղության իրականացման կիսակետում են եղել 2 հիմնական մարտահրավերներ. համաճարակի պայմաններում դրամաշրջանառության կազմակերպումը՝ վիրուսի տարածման նվազագույն ռիսկով և պատերազմի պայմաններում դրամաշրջանառության անընդհատության ապահովումը: Առաջին մարտահրավերի հաղթահարման նպատակով շուրջ մեկ ամիս Կենտրոնական բանկից հաճախորդներին տրամադրվել են միայն էմիսիոն թղթադրամներ, իսկ Կենտրոնական բանկի դրամարկղ մուտքագրված կանխիկ դրամը 3-5 օր պահպանվել է «կարանտին» վիճակում և հաճախորդներին տրամադրվել է նվազագույնը 15 օրվա «կարանտին» անցնելուց հետո: Հանրապետության մարզերում և Արցախում դրամաշրջանառության անընդհատությունն ապահովել են Երևանի դրամարկղը և տարածքային դրամարկղային կենտրոնները: 2020 թվականի սահմանափակումներով պայմանավորված՝ Կենտրոնական բանկի հաշվետու տարվա դրամարկղային շրջանառության ծավալը նախորդ տարվա համեմատ նվազել է 7.3%-ով:

Տարվա ընթացքում Կենտրոնական բանկը ոչ միայն հաղթահարել է 2020-ին հատուկ մարտահրավերները, այլև շարունակել

է հուշադրամների թողարկման իր գործառույթը: Այս համատեքստում 2020 թ. մեկնարկել է «Նոյյան տապան» առաջին ոսկե ներդրումային դրամների թողարկման ծրագիրը, որն ապահովել է ՀՀ ոսկե ներդրումային դրամների 4 քաշային տարբերակների հատումն ու տարածումը աշխարհի տարբեր երկրներում: Տարին ևս մեկ անգամ կարևորեց Հայաստանի ավգային, պատմական, մշակութային և հոգևոր արժեքների հանրայնացումը: Այդ նպատակով տարվա ընթացքում ԿԲ-ն շարունակել է թողարկել թանկարժեք մետաղներից պատրաստված հուշադրամներ, իսկ աշխարհահռչակ հայ երգահան Կոմիտասի ծննդյան 150-ամյակին նվիրված հուշադրամը 2020 թ. Ռուսաստանի Դաշնությունում անցկացված «Դրամների համաստեղություն-2020» 14-րդ միջավգային մրցույթում վբաղեցրել է 3-րդ տեղը «Տարվա հուշադրամը» անվանակարգում:

Միջազգային պահուստների կառավարում ուղղության ամփոփում: 2020 թվականին ՀՀ կենտրոնական բանկը շարունակել է նվավագույն ռիսկերով ՀՀ միջավգային պահուստների կառավարման իր որդեգրած ռավմավարությունը, որն ուղղված է միջավգային պահուստների ապահովության, իրացվելիության ու արդյունավետ կառավարման ապահովմանը: Կարևոր է նշել, որ 2020 թվականին նույնպես ՀՀ միջավգային պահուստների մակարդակը շարունակել է համապատասխանել արտարժութային պահուստներին ներկայացվող հիմնական պահանջներին, մասնավորապես՝ հնարավոր արտաքին ցնցումները մեղմելու կարողության առումով:

Արդյունքում՝ 2020 թվականին ՀՀ միջավգային պահուստներն ապահովել են ներմուծման շուրջ հինգ ամսվա, իսկ ընթացիկ պարտավորությունների սպասարկման՝ ավելի քան չորս տարվա ծածկույթ:

Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի կազմակերպում և կարգավորում ռազմավարական ուղղության ամփոփում: 2020 թ. իրականացվել են ՓԼ/ԱՖ ռավմավարական և թեմատիկ (ոլորտային) վերլուծություններ, ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ավգային ռիսկերին համահունչ գործառնական վերլուծություններ, հնարավոր կասկածներ պարունակող ավդակների հետ կապված կանխարգելիչ միջոցառումներ, ինչպես նաև օրենսդրության վարգացմանը, ներպետական և միջավգային համագործակցության կատարելագործմանն ուղղված աշխատանքներ:

2020 թ. նկատելիորեն աճել է դրամական փոխանցում իրականացնող կազմակերպությունների կողմից ստացված՝ կասկածելի գործարքի մասին հաշվետվությունների թիվը, ինչպես նաև առաջին անգամ այդպիսի հաշվետվություններ են ստացվել նոտարներից և ՀՀ իրավաբանական անձանց գրանցման ռեգիստրից:

ԿԲ անվտանգություն և գործընթացների անընդհատություն ռազմավարական ուղղության ամփոփում: 2020 թ. մարտահրավերներով լի տարի էր Կենտրոնական բանկի անվտանգության և գործընթացների անընդհատության ապահովման տեսանկյունից:

COVID-19 համաճարակով պայմանավորված՝ ԿԲ աշխատակիցների վգալի մասն անցել է հեռավար աշխատանքի, ինչը ստիպեց կիրառել անվտանգության աննախադեպ միջոցառումներ՝ աշխատակիցների մեծ թվաքանակի դեպքում անվտանգ և անընդհատ աշխատանքային միջավայր ապահովելու համար:

Սեպտեմբերի 27-ից հայտարարված ռազմական դրությամբ պայմանավորված՝ Կենտրոնական բանկի և ֆինանսական հատվածի վրա սկսվեցին կիբեռհարձակումներ, որոնց ուժգնությունը սովորական օրերի համեմատությամբ մի քանի հարյուր անգամ ավելի մեծ էր: ԿԲ համապատասխան ստորաբաժանումները ֆինանսական հատվածի գործընկերների հետ միահամուռ ջանքերով 24/7 ռեժիմով կարողացան դիմագրավել բոլոր գրոհներին, և կիբեռհարձակումների հետևանքով որևէ կորուստ չարձանագրվեց:

Գիտելիք և մարդկային ռեսուրսներ ռազմավարական ուղղության ամփոփում: Ռազմավարական այս խնդրի իրագործման համատեքստում տարվա ընթացում կարևորվել է կառավարման արդյունավետության բարձրացումը, որակյալ ներքին ծառայությունների մատուցումը և ինստիտուցիոնալ վարգացումը: Այս նպատակի իրականացման համար 2020 թ-ին Կենտրոնական բանկում տեղի ունեցան կառուցվածքային փոփոխություններ:

Արդյունքում՝ տարվա ընթացքում Կենտրոնական բանկի աշխատակիցների միջին թիվը կազմել է 765՝ 60% կին և 40% տղամարդ, միջին տարիքը՝ 41: ՀՀ ԿԲ 70 աշխատակից ունի միջազգային որակավորում՝ ֆինանսական, հաշվապահական, աուդիտորական, ապահովագրական, տեղեկատվական տեխնո-

լոգիաների և այլ ոլորտներում:

2020 թվականը, իր բոլոր դժվարություններով հանդերձ, ևս մեկ անգամ ապացուցեց, որ անձնակազմը Կենտրոնական բանկի կարևորագույն հիմնասյուներից մեկն է: Բարձր մասնագիտական որակներ ունեցող, միջազգային հավաստագրեր ստացած մեր գործընկերները իրենց գիտելիքի, մտքի ճկունության և արհեստավարժության շնորհիվ այս բարդ և անկայուն ժամանակաշրջանում, վեր դասելով հանրային շահը, իրականացրեցին իրենց առջև դրված աշխատանքային խնդիրները՝ ապահովելով գործընթացների անընդհատությունը:

Հաղորդակցում և հաշվետվողականություն ռազմավարական ուղղության ամփոփում: Կենտրոնական բանկի հիմնական նպատակների իրականացման թափանցիկության ապահովման շրջանակում ֆինանսական շուկայի մասնակիցները և հանրությունն իրավեկվել են դրամավարկային քաղաքականության, ֆինանսական կայունության և վերահսկողության ապահովման ոլորտում Կենտրոնական բանկի գործողությունների, ծրագրերի, նախաձեռնությունների մասին:

Ելնելով 2020 թվականի առանձնահատկությունից՝ Կենտրոնական բանկն աշխատանքային աննախադեպ ռեժիմով համագործակցել է բանկերի և վարկային կազմակերպությունների հետ, որի արդյունքում ֆինանսական կառույցների կողմից իրենց հաճախորդներին ցուցաբերված աջակցության՝ վարկային արձակուրդների կամ այլ կերպ վերանայված վարկային պարտավորությունների մասին հանրությունը տեղեկացվել է հաղորդագրությունների, ռեպորտաժների, հարցազրույցների միջոցով, օգտագործվել են սոցցանցային հարթակները ևս:

Կենտրոնական բանկն իր գործունեության թափանցիկության ապահովման նպատակով հրապարակել է նաև մի շարք պարբերականներ, որոնք ներկայացնում են դրամավարկային քաղաքականության, ֆինանսական կայունության, ՓԼ/ԱՖ դեմ պայքարի, դրամաշրջանառության ոլորտներում բանկի կողմից իրականացվող աշխատանքները:

02

ՉԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐ

Գների կայունության ապահովում

Ֆինանսական կայունության ապահովում

ԳՆԵՐԻ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ

Գների կայունության խնդրի իրագործումը և մարտահրավերները


ՀՀ կենտրոնական բանկի հիմնական խնդիրներից՝ գների կայունության ապահովման նպատակով սահմանվում է միջնաժամկետ գնաճի նպատակային մակարդակ կամ գնաճի թիրախ, որի իրագործմանն ուղղված ԿԲ քաղաքականությունը կարևոր նախապայման է հասարակության գնաճային սպասումների առավելագույն խարսխման, մակրոտնտեսական կայունության ապահովման և, դրանով հանդերձ, երկարաժամկետ տնտեսական աճին նպաստելու տեսանկյունից: Հայաստանի Հանրապետությունում գնաճի թիրախն ամրագրվում է Կենտրոնական բանկի դրամավարկային քաղաքականության ծրագրերում, ՀՀ Կառավարության պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրերում, պետական բյուջեի մասին ՀՀ օրենքներում և կայուն վարգացման ծրագրերում:

2020 թվականին ՀՀ կենտրոնական բանկի դրամավարկային քաղաքականությունն ուղղված է եղել **12-ամսյա գնաճի 4%** թիրախային մակարդակի ապահովմանը: Տարվա ընթացքում պահպանվել է ցածր գնաճային միջավայր, որն ածանցվել է տարեսկզբից աշխարհի մի շարք երկրներում, մարտից՝ նաև Հայաստանում բռնկված Նոր կորոնավիրուսի (COVID-19) համավարակի, իսկ սեպտեմբերի 27-ից՝ երկրում հայտարարված ռավմական դրության առողջապահական և տնտեսական հետևանքներից: Դրանք արտահայտվել են թե՛ տնտեսական ակտիվության անկմամբ և թե՛ համախառն պահանջարկի էական թուլացմամբ: Նման իրավիճակում Կառավարությունն իրականացրել է սոցիալական և տնտեսական օժանդակությանն ուղղված վգալի խթանող հարկաբյուջետային քաղաքականություն: Սակայն, համավարակի և ռավմական դրության հետևանքով կուտակված մեծ անորոշության պայմաններում հասարակությունը դրսևորել է սպառման և ներդրումների նախավգուշական վարքագիծ, ինչը, չնայած հարկաբյուջետային և դրամավարկային խթանմանը, հանգեցրել է ներքին թույլ պահանջարկի և գնաճային ցածր միջավայրի ձևավորմանը:

2020 թվականին, 12-ամսյա գնաճն իր թիրախային մակարդակին մոտեցնելու նպատակով, ՀՀ ԿԲ-ն վարել է խթանող դրամավարկային քաղաքականություն: ԿԲ-ն հունվար-նոյեմբեր ժամանակահատվածում վերաֆինանսավորման տոկոսադրույքն աստիճանաբար իջեցրել է ընդհանուր հաշվով 1.25 տոկոսային կետով: Դեկտեմբերին, երբ արտաքին հատվածից սպասվող գնաճային ազդեցությունների պայմաններում կանխատեսվում էր գնաճի և գնաճային սպասումների որոշակի արագացում, ԿԲ-ն մեծ քայլով՝ 1.0 տոկոսային կետով

բարձրացրել է տոկոսադրույքը և սահմանել **5.25%**: Արդյունքում՝ 12-ամսյա գնաճը տարվա ընթացքում աստիճանաբար, իսկ տարեվերջին՝ մեծ չափով ավելացել է՝ հասնելով նպատակային ցուցանիշին բավականին մոտ՝ **3.7%** մակարդակի:

Գծապատկեր 1. 2020 թ. ընթացքում պահպանվել է ցածր գնաճային միջավայր, և միայն դեկտեմբերին, պայմանավորված ներմուծվող մի շարք պարենային ապրանքների գների աճով, այն կտրուկ ավելացել է



Դրամավարկային քաղաքականության իրականացումը

2020 թվականի ընթացքում կորոնավիրուսի համավարակի և հայտարարված ռազմական դրության հետևանքով ՀՀ ֆինանսական շուկայում պարբերաբար դիտարկվել է որոշակի տատանողականություն, ինչին ՀՀ ԿԲ-ն օպերատիվ կերպով արձագանքել է դրամավարկային իր հիմնական գործիքակազմով: Այսպես, ԿԲ-ն բավարարել է դրամային իրացվելիության նկատմամբ ձևավորված բարձր պահանջարկը՝ իր հիմնական գործիքի միջոցով շուկային տրամադրելով համապատասխան ծավալի իրացվելիություն: Արդյունքում՝ շուկայական տոկոսադրույքները մեծ մասամբ ձևավորվել են գործառնական նպատակի՝ քաղաքականության տոկոսադրույքի շուրջ: Տարվա

ընթացքում տնտեսաքաղաքական հեռանկարի հետ կապված անորոշություններն իրենց արտահայտությունն են ստացել նաև ՀՀ արժութային շուկայում, որտեղ արձանագրվել է ՀՀ դրամի որոշակի արժեզրկում: ԿԲ-ն, շարունակելով հավատարիմ մնալ լողացող փոխարժեքի քաղաքականությանը, ֆինանսական շուկայի բնականոն գործունեության ապահովման նպատակով արժութային շուկայում ունեցել է իրավիճակային փոքր չափով մասնակցություն:

Քաղաքականության տոկոսադրույքի վերաբերյալ որոշումների կայացման գործընթացը

2020 թվականին դրամավարկային քաղաքականության մշակման և քաղաքականության տոկոսադրույքի վերաբերյալ որոշման կայացման գործընթացում տեղի են ունեցել որոշակի փոփոխություններ, որոնք էապես բարձրացրել են գործընթացի արդյունավետությունը: Խոսքը վերաբերում է դրամավարկային քաղաքականության մշակման և կանխատեսումների իրականացման ընթացքին ՀՀ ԿԲ խորհրդի մեծ ներգրավվածությանը, ինչը նախկինում սահմանափակվում էր միայն որոշման կայացման քննարկումներով: Դա Խորհրդի անդամներին հնարավորություն է տալիս, մինչև որոշման քննարկումը, առավել մանրամասն տեղեկացված լինել փաստացի իրավիճակի, կանխատեսումների հիմքում դրված ենթադրությունների և դատողությունների մասին, ինչպես նաև կանխատեսման սցենարների վերաբերյալ ներկայացնել իրենց դիտողություններն ու առաջարկությունները:

ՀՀ կենտրոնական բանկը դրամավարկային քաղաքականությունն իրականացնում է գնաճի նպատակադրման ռազմավարությամբ: Դրա ներքո վերջնական նպատակի՝ 12-ամսյա գնաճի թիրախին կայուն կերպով սահմանվում է նաև միջանկյալ նպատակ, որն է՝ գնաճը նպատակային ցուցանիշին մոտեցնելու կանխատեսված ուղին, ինչպես նաև գործառնական նպատակ, այն է՝ կարճաժամկետ շուկայական տոկոսադրույքը: Վերջինիս նպատակային մակարդակը ԿԲ կողմից սահմանվող վերաֆինանսավորման տոկոսադրույքն է, որը նաև ուղենիշ է ֆինանսական շուկայում ԿԲ գործառնությունների համար: Դրամավարկային քաղաքականության հիմնական գործիքը 7-օրյա ռեպո համաձայնագիրն է, որով ԿԲ-ն կարգավորում է իրացվելիության մակարդակը ֆինանսական համակարգում:

Դրամավարկային քաղաքականության արտաքին հաղորդակցում

2020 թվականին, ԿԲ դրամավարկային քաղաքականության իրագործման թափանցիկության և որոշումների հաղորդակցման արդյունավետության բարձրացման նպատակով, ամրագրվեց հաղորդակցման նոր սկզբունք, որի համաձայն՝ տոկոսադրույքի վերաբերյալ յուրաքանչյուր որոշումից հետո, մինչև ժամը 12:00-ն հրապարակվում է կարճ հաղորդագրություն՝ ներառելով միայն ԿԲ գործառնությունների տոկոսադրույքների սահմանված մակարդակների վերաբերյալ տեղեկատվություն: Որոշման օրը՝ ժամը 15:30-ին, կազմակերպվում է մամուլի ասուլիս լրագրողների հետ՝ ԿԲ նախագահի մասնակցությամբ: Ասուլիսը ուղիղ հեռարձակվում է ՀՀ ԿԲ կայքէջում, որտեղ ներկայացվում են կայացրած որոշման հակիրճ հիմնավորումն ու տրամաբանությունը, այնուհետև, մինչև ժամը 16:00-ն, ներկայացված մամուլի հաղորդագրությունը հրապարակվում է, իսկ ասուլիսը շարունակվում է հարց ու պատասխանի ձևաչափով: Բարեփոխվել է նաև տոկոսադրույքի վերաբերյալ արձանագրությունը, որտեղ առավել մանրամասն ներկայացվում են Խորհրդի նիստի քննարկումները և Խորհրդի անդամների՝ հիմնական սցենարից տարբերվող դիրքորոշումները՝ նախկինում տրվող հակիրճ և ավելի ընդհանուր տեղեկատվության փոխարեն:

Գնաճի նպատակադրման ռազմավարության ներքո էապես կարևորվում է Կենտրոնական բանկի հաղորդակցությունը հասարակության հետ: Դրամավարկային քաղաքականության արտաքին հաղորդակցման ապահովման շրջանակում ԿԲ-ն հրապարակում է քաղաքականության տոկոսադրույքի որոշման վերաբերյալ օպերատիվ տեղեկատվություն՝ մամուլի հաղորդագրություն (որոշման ընդունման օրը), Տոկոսադրույքի արձանագրություն՝ ավելի մանրամասն տեղեկատվությամբ (որոշման ընդունումից 10 աշխատանքային օրվա ընթացքում) և Գնաճի եռամսյակային հաշվետվություն (որոշման ընդունումից 10 աշխատանքային օրվա ընթացքում): Գնաճի հաշվետվության առաջին բաժինը ներառում է ընթացիկ եռամսյակի դրամավարկային քաղաքականության ծրագիրը, իսկ երկրորդ բաժինը՝ նախորդ եռամսյակի գնաճի իրագործմանն ուղղված դրամավարկային քաղաքականության ծրագրի կատարման հաշվետվությունը:

Դրամավարկային քաղաքականության մշակման գործընթացի բարելավում և կատարելագործում

2020 թվականին կատարվել են մի շարք աշխատանքներ՝ ուղղված դրամավարկային քաղաքականության մշակման մոդելային համակարգի կատարելագործմանը և քաղաքականության իրականացման գործընթացի բարելավմանը: Դրանք մեծ մասամբ առնչվել են տարվա յուրահատուկ դրսևորումների՝ կորոնավիրուսի համավարակի և հայտարարված ռազմական դրության՝ ՀՀ տնտեսության վրա ազդեցությունների բացահայտմանը և այդ պայմաններում դրամավարկային քաղաքականության իրականացման արդյունավետության բարձրացմանը: Մասնավորապես՝

1. Ներդրվել է դրամավարկային մոնիտորինգային շաբաթական հանդիպումների ձևաչափը՝ նախկինում գործող դրամավարկային կոմիտեի շաբաթական նիստերի փոխարեն: Այդ հանդիպումների նպատակն է Կանխատեսող թիմի և շահագրգիռ ստորաբաժանումների կողմից դրամավարկային քաղաքականության մշակման ու իրականացման համար անհրաժեշտ տեղեկատվության փոխանակումը և վերլուծությունների քննարկումը՝ բարձրացնելով դրամավարկային քաղաքականության ոլորտի խնդիրների լուծման և որոշումների կայացման արդյունավետությունը:

2. Արդիականացվել է կարճաժամկետ կանխատեսումների համակարգը, ինչը ենթադրում է հնարավորինս օպերատիվ և բարձր հաճախականության տվյալների լիարժեք ինտեգրում ու կիրառություն, մոդելների որակի պարբերաբար գնահատման և բարելավման նոր մեխանիզմների ներդրում:

3. Դրամավարկային քաղաքականության մշակման գործընթացում ընդլայնվել և բարելավվել են դատողությունների ներառման ու սցենարների կառուցման մոտեցումները՝ այդ թվում մշակելով և ներդնելով առանձին խնդիրների բացահայտմանն ու գնահատմանն ուղղված մի շարք մոդելներ.

   - Կառուցվել են երկու Դինամիկ ստոքաստիկ ընդհանուր հավասարակշռության (ԴՍԸՀ կամ DSGE) մոդելներ, որտեղ մոդելավորված է կորոնավիրուսի գործոնը: Առաջին մոդելում տնային տնտեսությունների առողջության մակարդակը նվազում է կորոնավիրուսի հետևանքով, ինչին ի պատասխան՝ նրանք սպառում են առողջապահական ապրանքներ և ծառայություններ, ինչպես նաև մեկուսանում են: Երկրորդ մոդելում կան մի քանի տիպի տնային տնտեսություններ, ինչպես նաև մի քանի տնտեսության ճյուղեր, որոնք տարբեր կերպ են արձագանքում կորոնավիրուսային շոկին, այսինքն՝ վարակվելու հավանականությունները տարբեր են ըստ վբաղվածության տեսակների: Այս մոդելների արդյունքները կիրառվել են դրամավարկային քաղաքականության մշակման գործընթացում՝ նպաստելով համավարակի տնտեսական ազդեցությունների գնահատմանը և քաղաքականության որոշումների կայացմանը:

   - Կառուցվել է մոդել՝ գնահատելու համար պատերազմի շոկի երկարաժամկետ ազդեցությունները Հայաստանի և Արցախի տնտեսությունների վրա: Տնային տնտեսությունները

հնարավորություն ունեն աշխատելու ինչպես հայրենիքում, այնպես էլ կարող են աշխատուժ առաջարկել արտաքին աշխարհին: Մոդելի միջավայրում տեղի է ունենում Հայաստանից կապիտալ ռեսուրսների հոսք դեպի Արցախ: Մոդելը հնարավորություն է տալիս գնահատելու երկարաժամկետ ազդեցությունները՝ կախված պատերազմի ուժգնությունից: Այս մոդելի միջոցով գնահատվել են Արցախյան պատերազմի երկարաժամկետ տնտեսական ազդեցությունները Հայաստանի և Արցախի տնտեսությունների վրա:

- Իրականացվել է հետազոտություն, որտեղ քննարկվում է կառուցվածքային բարեփոխումների և գնաճի միջև կապը: Խաղերի տեսությամբ կառուցված մոդելում ենթադրվում է, որ կառավարությունն իր նպատակներն իրագործելու համար կարող է կա՛մ իրականացնել բարեփոխումներ, կա՛մ ստեղծել գնաճ: Բարեփոխումները ենթադրում են կարճաժամկետ ծախսեր՝ ուղղված երկարաժամկետ հատվածում հասարակության բարեկեցության աճի ապահովմանը: Աշխատանքը բացահայտել է, որ բարեփոխումներ իրականացնելու հիմնական շարժիչ ուժը կարող է լինել հասարակության ապագային միտվածության աստիճանի բարձրացումը: Եթե հասարակությունը իր կյանքը ծրագրում է կարճ հորիզոնի համար, դրանով խոչընդոտում է կառավարության կողմից բարեփոխումների իրականացմանը, իսկ երկարաժամկետ պլանավորում իրականացնող հասարակությունը ստիպում է իր կառավարությանը բարեփոխումներ իրականացնել՝ չստեղծելով գնաճ: Աշխատանքը եզրահանգում է կատարում, որ փոքր բարեփոխումներով հնարավոր է հասնել հասարակության ապագային միտվածության աստիճանի աճին, ինչն էլ հետագայում կապահովի բարեփոխումների լայն շրջանակի իրականացում և հասարակության կողմից ցածր գնաճի քաղաքականությանը համընդհանուր աջակցություն: Աշխատանքը վերահաստատում է գների կայունության նպատակի կարևորությունը ընդհանուր կառուցվածքային բարեփոխումների համատեքստում, ինչը կկիրառվի դրամավարկային քաղաքականության նպատակների քննարկման և հաղորդակցման աշխատանքներում:

Ուշադրության կենտրոնում

Դրամավարկային քաղաքականության վարչության մակրոտնտեսական մոդելավորման թիմը պարբերաբար առնչվում է այնպիսի իրավիճակների, երբ կարճ ժամանակահատվածում անհրաժեշտություն է առաջանում կառուցելու մոդելներ և դրանով նպաստելու քաղաքականության ուղղությունների վերաբերյալ քննարկումներին: 2020 թվականին այդպիսի մի դրվագ էր մարտ ամիսը, երբ կորոնավիրուսային համավարակը ուժգնանում էր, և աշխարհի շատ երկրներ կիրառում էին սահմանափակումներ: Այդ ժամանակ դեռևս չկային տնտեսագիտական մոդելներ, որոնք քննարկում էին կորոնավիրուսային համավարակը և դրամավարկային քաղաքականության արձագանքը այդ շոկին: Մոդելավորման թիմի աշխատանքի արդյունքում ԿԲ-ն արդեն ամսվա կեսին ունեցավ մոդել, որն իր նպաստումը բերեց վերաֆինանսավորման տոկոսադրույքի վերաբերյալ քննարկումներին[2]: Կորոնավիրուսի շոկի պայմաններում տնային տնտեսությունները սպառում են առողջապահական ապրանքներ և ծառայություններ, ինչպես նաև մեկուսանում են, որպեսզի պահպանեն կամ վերականգնեն իրենց առողջությունը: Քանի որ մեկուսանալը ժամանակատար է, ապա մեկուսացման այլընտրանքային գինը աշխատավարձն է: Շոկի ժամանակ մարդիկ ինքնաբերաբար սպառում են առողջապահական ապրանքներ և մեկուսանում են՝ այդպիսով նվազեցնելով վիրուսի տարածումը: Ընդլայնողական (շեղում Կենտրոնական բանկի՝ Թեյլորի կանոնից) դրամավարկային քաղաքականության արդյունքում քիչ են նվազում աշխատավարձերը՝ թանկացնելով մեկուսացման գինը: Հետևաբար, մարդիկ նախընտրում եմ շատ աշխատել և քիչ մեկուսանալ՝ արագացնելով համավարակի տարածումը: Եզրահանգումն այն էր, որ դրամավարկային քաղաքականությունը չի կարող միաժամանակ և՛ կանխել տնտեսության անկումը, և՛ կսպել համավարակի տարածումը, ուստի անհրաժեշտ է, նպատակների առաջնահերթությունից ելնելով, ընտրել դրանցից մեկը: Աշխատանքը ներկայացվել է Հայկական տնտեսագիտական միության տարեկան համաժողովին և արժանացել Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ կամ IMF) «Լավագույն աշխատանք» մրցանակին: Հետագայում այդ աշխատանքը նաև հրապարակվել է մասնագիտական հեղինակավոր ամսագրում[3]:

Դրանից հետո թիմն առաջադրանք ստացավ պարզելու, թե ինչ գործիքակազմով հնարավոր կլինի կսպել տնտեսական անկումը՝ միաժա-

[2] *Ներգիր 3, Դրամավարկային քաղաքականության ծրագիր. 1-ին եռամսյակ, 2020:*

[3] *Asoyan, A., Davtyan, V., Igityan, H., Kartashyan, H. and Manukyan, H. (2020). Modelling the Effects of a Health Shock on the Armenian Economy. Russian Journal of Money and Finance, 79(4), pp. 18-44*

մանակ կսպելով համավարակի տարածումը: Արդեն ապրիլ ամսվա վերջին մոդելավորման թիմը ներկայացրեց մոդել, որտեղ գնահատվում էր կորոնավիրուսի ազդեցությունը տարբեր եկամուտներ ունեցող տնային տնտեսությունների, ինչպես նաև տնտեսության տարբեր ճյուղերի վրա: Այն համավարակի գործոնը ներառող ԴՍԸՀ (DSGE) մոդել է, որտեղ տնտեսությունը դիտարկվում է առողջապահական, սոցիալական և այլ ճյուղերի բաժանմամբ, ինչը ենթադրում է մարդկանց միջև առավել ինտենսիվ շփում ինչպես աշխատելիս, այնպես էլ տվյալ ճյուղի ապրանքը կամ ծառայությունը սպառելիս: Սոցիալական ճյուղերի օրինակ են հանրային սննդի օբյեկտները, թատրոնները և այլն: Այսինքն՝ այդ ճյուղերում աշխատելիս, ինչպես նաև դրանց ապրանքները և ծառայությունները սպառելիս առավել մեծ է կորոնավիրուսով վարակվելու հավանականությունը: Մոդելի արդյունքները ցույց են տալիս, որ կորոնավիրուսի շոկի հետևանքով խորանում է եկամուտների անհավասարությունը հիմնականում սոցիալական ճյուղերում վբաղված աղքատ և այլ ճյուղերում վբաղված հարուստ մարդկանց միջև[4]: Մյուս կողմից՝ դրամավարկային քաղաքականությունը, ինչպես նաև հարկաբյուջետային քաղաքականության ագրեգատ գործիքները առաջացնում են երկընտրանք տնտեսական ակտիվության և համավարակի միջև: Աշխատանքում քննարկվում է քաղաքականության բավականին լայն գործիքակազմ և եզրահանգում կատարվում, որ տարբեր թիրախային ու հատվածային հարկաբյուջետային գործիքներով հնարավոր է վսպել ինչպես համավարակի տարածումը, այնպես էլ տնտեսական անկումը: Ստացված արդյունքներից մեկն էլ այն է, որ եթե հասարակության տեղեկատվությունը համավարակի տարածման վերաբերյալ ոչ լիարժեք է, ապա դա հանգեցնում է ինչպես ՀՆԱ ավելի խոր անկմանը, այնպես էլ վարակվածների թվաքանակի ավելի բարձր ցուցանիշին՝ համեմատած այն իրավիճակի հետ, երբ հասարակությունն ունի ամբողջական տեղեկատվություն համավարակի տարածման վերաբերյալ: ■

[4] *Ներգիր 1, Դրամավարկային քաղաքականության ծրագիր. 3-րդ եռամսյակ, 2020:*

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ

2020 թվականին ֆինանսական համակարգը գործել է էական անորոշությունների ներքո՝ պայմանավորված դեռևս տարվա սկզբից համավարակի տարածմամբ և ձեռնարկված կանխարգելիչ միջոցառումներով, ինչն աշնանը վուգորդվեց նաև ռազմական դրության հետ կապված վարգացումներով: Արդյունքում ֆինանսական համակարգի մասնակիցները 2020 թվականին ցուցաբերել են համեմատաբար պահպանողական վարքագիծ, և գործունեության ծավալների աճի տեմպերը եղել են չափավոր: Ֆինանսական համակարգն անմասն չի մնացել ստեղծված իրավիճակի անբարենպաստ ազդեցությունից, ընդ որում, տարվա ընթացքում ի հայտ եկած ռիսկերի հետևանքները դեռևս ամբողջությամբ չեն արտացոլվել ֆինանսական կազմակերպությունների վարկային պորտֆելի որակի և եկամտաբերության ցուցանիշներում, և Կենտրոնական բանկի գնահատականներով վերջիններիս հետագա վատթարացման հավանականությունը պահպանվում է:

2020 թվականին Կենտրոնական բանկի կարգավորման դաշտի և պրուդենցիալ գործիքակազմի կիրառության տրամաբանությունը բխել է ֆինանսական միջնորդության անընդհատության և սահունության ապահովման առաջնահերթությունից: Անորոշությունների և արագ փոփոխվող իրավիճակի պայմաններում բանկային համակարգի մշտադիտարկումն իրականացվել է առավել օպերատիվ. առանցքային նշանակության որոշ ցուցանիշներ մշտադիտարկվել են օրական պարբերականությամբ: Այս համատեքստում Կենտրոնական բանկը կարևորել է ակտիվ երկխոսությունը ֆինանսական համակարգի մասնակիցների հետ՝ արագ փոփոխվող իրավիճակում ռիսկային վարգացումների ժամանակին բացահայտման և դրանք հասցեագրելու արդյունավետ գործողությունների մշակման համար:

Կենտրոնական բանկը ֆինանսական կայունության ապահովման գործառույթի շրջանակներում մեծապես կարևորում է հանրության հետ հաղորդակցումը՝ որպես քաղաքականության թափանցիկության և հանրության սպասումների ձևավորման հիմնական գործիք: ԿԲ կողմից արտաքին հաղորդակցումը չի սահմանափակվել միայն հերթական մամուլի հաղորդագրություններով և ասուլիսներով: Իրավիճակի անհրաժեշտությունից

Կենտրոնական բանկի բնորոշմամբ ֆինանսական կայունությունը ֆինանսական համակարգի՝ ֆինանսական հաստատությունների, շուկաների և շուկայի ենթակառուցվածքների կողմից հավանական ցնցումներին ու անհավասարակշռություններին դիմակայելու ունակությունն է՝ այդ կերպ նվազեցնելով ֆինանսական միջնորդության գործառույթների խաթարման հավանականությունը: Ֆինանսական կայունության ապահովման նպատակով Կենտրոնական բանկն իրականացնում է մակրոպրուդենցիալ քաղաքականություն: Համակարգային ռիսկերի կուտակումը ժամանակին բացահայտելու և հասցեագրելու նպատակով Կենտրոնական բանկը մշտադիտարկում է ռիսկերի կուտակումը (կամ նյութայնացումը) նախանշող վաղ ահազանգման տարատեսակ ցուցանիշները, դրանց համախմբման արդյունքում կառուցված ինդեքսները, ինչպես նաև կիրառում է ռիսկերի գնահատման տարբեր մոդելներ և մակրո սթրես թեստավորման համակարգեր:

ելնելով՝ կազմակերպվել են լրացուցիչ ասուլիսներ կամ այլ կերպ տրվել են պարզաբանումներ հանրության տեսանկյունից հետաքրքրություն ներկայացնող թեմաների վերաբերյալ:

ԿԲ-ի կողմից հաղորդակցումը տեղի է ունենում մամլո հաղորդագրությունների և ասուլիսների միջոցով, որի ընթացքում ներկայացվում են ֆինանսական համակարգի հիմնական վարգացումները, հնարավոր ռիսկերի միտումները և դրանք մեղմելուն կամ չեզոքացնելուն ուղղված ԿԲ գործողությունները: Մասնավորապես՝ նախքան ֆինանսական կայունության հաշվետվության հրապարակումը, դրանում առկա հիմնական ուղերձները պարզաբանելու նպատակով հանդիպում է կազմակերպվում լրատվամիջոցների ներկայացուցիչների հետ: Մակրոպրուդենցիալ քաղաքականության գործիք հանդիսացող կապիտալի հակացիկլիկ բուֆերի դրույքաչափի վերաբերյալ ԿԲ կայքում եռամսյակային պարբերականությամբ հրապարակվում են տվյալ գործիքի հերթական սահմանաչափը հաստատելու հիմնավորումները, որոնք ամփոփ ներկայացնում են վարկային շուկայի ընթացիկ վարգացումները և տնտեսության դիրքը ֆինանսական ցիկլում:

Կենտրոնական բանկը շարունակել է ֆինանսական կայունության ապահովման գործիքակազմի վարգացմանն ուղղված աշխատանքները, իսկ դրանց կիրառման տրամաբանությունը բխել է ստեղծված իրավիճակում համակարգային ռիսկերի արդյունավետ մեղմման և կանխարգելման նպատակից:

2020 թվականի մայիսին, Կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ, հիմնական կապիտալի համարժեքության նորմատիվը 10%-ից իջեցվել է 9%-ի: Նորմատիվի փոփոխության արդյունքում ՀՀ առևտրային բանկերին հնարավորություն է տրվել կապիտալի կառուցվածքում ավելացնելու լրացուցիչ կապիտալի տեսակարար կշիռը և դրանով իսկ՝ ընդհանուր կապիտալի համարժեքության մակարդակը՝ մեծացնելով տնտեսության լրացուցիչ վարկավորման և կորուստների կլանման հնարավորությունը: Միևնույն ժամանակ, Կենտրոնական բանկն ապդակներ է փոխանցել բանկերին ձևավորված կապիտալի բուֆերներն օգտագործելու հնարավորության վերաբերյալ:

2020 թվականին ավարտին են հասցվել իրացվելիության նոր նորմատիվների՝ Իրացվելիության ծածկույթի գործակցի և Զուտ կայուն ֆինանսավորման գործակցի ներդրման աշխատանքները, և նորմատիվները փաստացի ուժի մեջ են դրվել 2021 թվականի հունվարի մեկից: Նորմատիվները կոչված են առավել

ճշգրիտ հասցեագրելու իրացվելիության ռիսկի առանձնահատկությունները: Բանկերի արտարժութային իրացվելիության բուֆերների բարձրացմանը նպաստելու նպատակով իրականացվել է արտարժույթով ներգրավված միջոցների դիմաց դրամի փոխարեն արտարժույթով պահուստավորմանն անցնելու հերթական քայլը՝ 2 տոկոսային կետի չափով:

Ներկայումս մակրոպրուդենցիալ քաղաքականության գործառնականացման շրջանակներում Կենտրոնական բանկի կողմից աշխատանքներ են տարվում կիսակառուցվածքային բնույթի քանակական մոդելի մշակման ուղղությամբ, որը թույլ կտա առավել արդյունավետ և ճշգրիտ հասցեագրել մակրոպրուդենցիալ քաղաքականության վարման տեսանկյունից կարևորություն ներկայացնող խնդիրները: Այն ուղղված է մակրո սթրես թեսթավորման, մակրոտնտեսական սցենարների մշակման, ինչպես նաև մակրոպրուդենցիալ գործիքների դրույքաչափերի փոփոխության ազդեցությունների գնահատման աշխատանքների արդյունավետության բարձրացմանը: Մոդելը կնպաստի նաև մակրոպուդենցիալ և դրամավարկային քաղաքականությունների արդյունավետ կոորդինացմանը՝ այդ քաղաքականությունների գործիքների փոխադարձ ազդեցությունների հաշվարկման և դրա հիման վրա առավել ճշգրիտ ու հասցեական կիրառության միջոցով:

Ուշադրության կենտրոնում

Թե՛ կորոնավիրուսի տարածման սկզբնական փուլում, թե՛ ռազմական դրության ժամանակահատվածում Կենտրոնական բանկում մշտապես քննարկվել է մակրոպրուդենցիալ պահանջների՝ հակացիկլիկ սկզբունքով վերանայման նպատակահարմարության հարցը: Որպես այս քաղաքականության դրսևորում՝ նվազեցվել է հիմնական կապիտալի համարժեքության նորմատիվը, հնարավորություն է տրվել օգտագործելու կապիտալի բուֆերները, իսկ հակացիկլիկ բուֆերը պահպանվել է 0% մակարդակում: Միևնույն ժամանակ, Կենտրոնական բանկը մշտադիտարկել է առանձին ոլորտային ուղղություններով վարկավորման հնարավոր ռիսկային վարգացումները և դրանց առավել արդյունավետ հասցեագրման համար տարվա ընթացքում քննարկումներ են տեղի ունեցել թիրախային գործիքակազմի ներդրման հնարավորությունների վերաբերյալ: ■

03

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ **ԱՅԼ ՆՊԱՏԱԿՆԵՐ**

Ֆինանսական համակարգի կարգավորում և վերահսկողություն

Արժեթղթերի շուկա

Վճարահաշվարկային համակարգ

Ուսումնահետազոտական կարողությունների զարգացում

Ֆինանսական համակարգի սպառողների շահերի պաշտպանություն և ֆինանսական կրթում

Արժույթի թողարկում, դրամաշրջանառության կազմակերպում

Միջազգային պահուստների կառավարում

Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի կազմակերպում և կարգավորում

Ֆինանսական համակարգի կարգավորում և վերահսկողություն

COVID - 19: «Ավգային հիփոթեքային ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ-ն, «Բնակարան երիտասարդներին» ՎՎԿ ՓԲԸ-ն և «Գերմանա-հայկական հիմնադրամը», հետևելով ստեղծված իրավիճակին և նպատակ ունենալով աջակցել ֆինանսական դժվարությունների բախված վարկառուներին, հնարավորություն են ստեղծել իրենց ծրագրերի շրջանակներում բանկերի միջոցով հաճախորդներին տրամադրված վարկերի մայր գումարների մարումները հետաձգել մինչև 6 ամսով:

COVID - 19: Նպատակ ունենալով ապահովել պետության կողմից իրականացվող սոցիալական ծրագրերի արդյունավետ իրականացումը և հաշվի առնելով դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության կողմից որդեգրված մոտեցումները՝ Կենտրոնական բանկը բանկերին ուղղորդել է առաջնորդվել հետևյալ սկզբունքներով.

- Բռնագանձում չտարածել վարկառուների այն հաշիվների նկատմամբ, որոնց միջոցով ՀՀ Կառավարության կողմից հաստատված միջոցառումների շրջանակներում տրամադրվել են ֆիզիկական անձանց օգնությունները և այլ սոցիալական աջակցությունները:
- Միջոցներ ձեռնարկել, որպեսզի սոցիալական աջակցության միջոցներից չգանձվի որևէ միջնորդավճար:

Օրենքով սահմանված հիմնական և այլ նպատակների իրագործումն ապահովելու համար Կենտրոնական բանկն իրականացնում է ֆինանսական համակարգի կարգավորում և վերահսկողություն:

Ֆինանսական համակարգի կարգավորման դաշտում իրականացվել են մի շարք օրենսդրական փոփոխություններ ինչպես Կենտրոնական բանկի նախաձեռնությամբ, այնպես էլ Կենտրոնական բանկի հետ սերտ համագործակցությամբ:

Մասնավորապես՝ Հայաստանի Հանրապետության բանկային համակարգի նկատմամբ վստահության ամրապնդման, ներդրված ավանդների պահպանման և ավելացման նպատակով փոփոխություն է կատարվել նաև «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում: Երաշխավորված ավանդների սահմանաչափերն ավելացել են՝ դրամային ավանդների համար՝ 16 մլն դրամ՝ 10 մլն դրամի փոխարեն, արտարժութային ավանդների համար՝ 7 մլն դրամ՝ 5 մլն դրամի փոխարեն:

Կարևորելով առանձին ֆինանսական կազմակերպությունների կայունությունը՝ Կենտրոնական բանկը շարունակել է աշխատանքները՝ ուղղված նաև միկրո մակարդակում ռիսկերի արդյունավետ կառավարման կարողությունների վարգացմանը:

2020 թվականի հունվարից ուժի մեջ են դրվել բանկերում սթրես թեսթավորման մասով նոր խմբագրությամբ պահանջները, որոնք ուղղված են բանկերի ռիսկերի կառավարման կարողությունների մեծացմանը:

Կենտրոնական բանկում աշխատանքներ են կատարվում կապիտալի համարժեքության նորմատիվի սահմանաչափի և հաշվարկի կարգի վերանայման ուղղությամբ, որը նպատակ ունի բարձրացնել կարգավորման դաշտի համապատասխանելիությունը միջազգային ստանդարտներին: Զուգահեռ կատարվում են Բազելյան 2-րդ հենասյան (Pillar 2) կանոնակարգային պահանջների և համապատասխան վերահսկողական գործընթացների ներդրման աշխատանքներ: Այս դեպքում ևս առաջնային նպատակը բանկերում ռիսկերի կառավարման կարողությունների վարգացումն է:

Կենտրոնական բանկը կարգավորման քաղաքականության մշակման ընթացքում մշտապես մեծ ուշադրություն է դարձրել ֆինանսական համակարգի գործունեության բիզնես մոդելների կենսունակության խնդրին: Հաշվի առնելով վերջին տարիներին բանկերի վարկային պորտֆելի առաջանցիկ աճի տեմպերը, ֆինանսական համակարգում մրցակցության աճը, տոկոսադրույքների սպրեդի նվազումը, ինչպես նաև 2020 թվականի ընթացքում արագ փոփոխվող ռիսկային վարգացումները և անորոշությունների աճը՝ բանկերի բիզնես մոդելների կենսունակության և արդյունավետության խնդիրն առավել կարևորվեց: Մասնավորապես՝ առկա անորոշությունների պայմաններում ԿԲ կարգավորման քաղաքականության մոտեցումներում շեշտադրվել են բանկերի կողմից սեփական կապիտալի արդյունավետ կառա-

վարման և կապիտալի գեներացման հիմնարար կարողությունների ընդլայնման խնդիրները: Միևնույն ժամանակ նշենք, որ կապիտալի համարժեքության և իրացվելիության մասով կարգավորման նորմատիվային դաշտի հետագա վարգացման տրամաբանությունը առավելագույնս միտված է լինելու հասցեագրելու ոչ միայն ընթացիկ, այլ նաև բանկի բիզնես մոդելից ածանցվող պոտենցիալ ապագա ռիսկերը:

Տարվա ընթացքում երկրում ստեղծված իրավիճակով պայմանավորված՝ ֆինանսական համակարգի վերահսկողության խնդիրներն ու ուղղությունները փոփոխվել են, և ֆինանսական կազմակերպություններում տեղերում պլանավորված որոշ ստուգումներ հետաձգվել են կամ իրականացվել հեռավար՝ հեռակա վերահսկողության շրջանակներում:

Իրականացվել են իրավիճակից բխող, առավել առաջնահերթ ուղղվածության վերահսկողական միջոցառումներ, մասնավորապես՝ հսկողական միջոցառումներ բանկերի կողմից իրացվելիության գործառնական կառավարման, հաճախորդների (ավանդատուների) հետ հաղորդակցման, խոշոր գործարքների իրականացման և ռիսկերի կանխարգելման գծով այլ աշխատանքների նկատմամբ:

Վերահսկողության արդյունքում ձեռնարկված վարույթները հիմնականում վերաբերել են սպառողների շահերի պաշտպանությանը, ֆինանսական համակարգում անբարեխիղճ դրսևորումների կանխարգելմանը: Բացահայտված խախտումները վերացվել են, այդ թվում՝ սպառողների իրավունքների վերականգնմանն ուղղված միջոցառումներով, ձեռնարկվել են նաև միջոցներ՝ ապագայում նման խախտումները կանխելու նպատակով:

Միաժամանակ, վերլուծությունների և սթրես թեստերի միջոցով իրականացվել է բանկերում ռիսկերի բացահայտման, եկամուտների հնարավոր կրճատման գնահատում: Վերահսկողական միջամտության արդյունքում ֆինանսական կազմակերպություններում ճշգրտվել են այդ ռիսկերից բխող ֆինանսական ցուցանիշները: **Բանկերի ֆինանսական կայունության և հետագա վարգացման պայմաններն ապահովվել** են նաև բանկերում ձևավորված շահույթի բաշխման նկատմամբ վերահսկողական միջամտության միջոցառումներով:

Ձեռնարկված միջոցառումներն ապահովել են նաև բանկերի միջոցով տնտեսական և սոցիալական աջակցման պետական ծրագրերի արդյունավետ և սահուն իրագործումը, ինչպես նաև առկա սահմանափակումների պայմաններում ֆի-

նանսական կազմակերպությունների կողմից հաճախորդների անխափան և անվտանգ սպասարկումը, ֆինանսական համակարգի մասնակիցների՝ սոցիալական պատասխանատվության (վարկային արձակուրդներ, վիջումներ և այլ օժանդակություններ) համակարգված մոտեցումները:

2020 թվականից Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը պաշտոնապես հանդիսանում է **«Կանաչ ֆինանսական համակարգի համագործակցության» միջազգային հեղինակավոր հարթակի** (NGFS - NETWORK FOR GREENING FINANCIAL SYSTEM) լիիրավ անդամ:

NGFS-ին անդամակցում են շուրջ 89 երկրների կենտրոնական բանկեր կամ ֆինանսական ոլորտի կարգավորման ու վերահսկողության համար պատասխանատու կառույցները: Հարթակում դիտորդի կարգավիճակով ներգրավված են նաև միջազգային ֆինանսական կազմակերպությունները և վերահսկող մարմինները, մասնավորապես՝ ԱՄՀ-ն, Համաշխարհային բանկը և IFC-ին, BIS-ը, EBRD-ին, EIB-ին, Բազելյան կոմիտեն, IOSCO-ն, Ասիական վարգացման բանկը:

NGFS-ի նպատակն է Փարիզյան համաձայնագրի (Կլիմայական փոփոխություններին հակազդման համար ածխաթթու գազի արտանետումների նվազեցման և երկրի վրա գլոբալ տաքացման հետևանքների մեղմման հանձնառություններ) կիրարկման համար ամրապնդել համաշխարհային կարողությունները և այդ նպատակով խթանել ու օժանդակել ֆինանսական համակարգի մասնակիցներին՝ ռիսկերի կառավարման ու կանաչ ֆինանսավորման (մասնավորապես՝ էներգաարդյունավետ, քիչ արտանետումներ պարունակող միջոցներում ներդրումներ) ներգրավման, շրջակա միջավայրի պահպանության ուղղվածություն ունեցող ներդրումների իրականացման և կայուն վարգացման համար: **Այս նպատակի իրագործման համար NGFS-ի գործունեությունն** ուղղված է անդամ երկրներում և դրանից դուրս կանաչ ֆինանսավորման միջազգային լավագույն փորձի և ստանդարտների ներդրման աջակցմանը, ինչպես նաև այդ ուղղությամբ վերլուծական աշխատանքների իրականացմանը[5]:

2019 թվականի ընթացքում ներդրվել է Solvency II համակարգը, որի նպատակն էր կատարելագործել վճարունակության հաշվարկման համակարգը՝ ապահովագրական ընկերությունների

[5] *Հարթակի մասին ավելի մանրամասն տեղեկատվությունը տե՛ս հետևյալ հղումով՝ https://www.ngfs.net*

սնանկացման հավանականության նվազեցման միջոցով ապահովելով ապահովադիրների շահերի առավելագույն պաշտպանությունը: Վերոնշյալ փոփոխությունը հնարավորություն է տվել բարձրացնելու ապահովագրական ընկերությունների կողմից ապահովագրական գործունեության ռիսկայնությունը վսպելու ունակությունը: Solvency II համակարգի սահուն ներդրումը ապահովելու համար 2020 թվականի ընթացքում վերանայվել են հիմնական տնտեսական նորմատիվների վերաբերյալ ապահովագրական ընկերությունների կողմից Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունները, համապատասխանեցվել Solvency II համակարգի ներդրմամբ պայմանավորված նորմատիվային դաշտի փոփոխություններին: Solvency II համակարգի ներքո կապիտալի համարժեքության նորմատիվում անդերռայթինիգի ռիսկի գնահատման մեթոդաբանության ամբողջական վերանայման արդյունքում ներառվել է աղետների ռիսկի բաղադրիչը: Վերոնշյալ նորմատիվի պահպանման դեպքում ապահովագրական ընկերությունները կկարողանան փոխհատուցել ստանձնած աղետների ռիսկերից առաջացած վնասներն ու կորուստները:

Փոփոխություններ են կատարվել նաև Հայաստանի ավտոապահովագրողների բյուրոյի կողմից ԿԲ ներկայացվող հաշվետվություններում: Փոփոխությունների արդյունքում հնարավոր կլինի առավել համապարփակ տեղեկատվություն ստանալ Հայաստանի ավտոապահովագրողների բյուրոյի ֆինանսական վիճակի, ինչպես նաև Երաշխավորման ֆոնդում առկա փաստացի միջոցների, կրկնակի փորձաքննությունների վերաբերյալ, որը հնարավորություն է տալիս իրականացնելու արդյունավետ վերահսկողություն՝ ապահովելով ինչպես Հայաստանի ավտոապահովագրողների բյուրոյի, այնպես էլ ԱՊՊԱ համակարգի կայունությունը:

Նոյեմբերին ՀՀ կենտրոնական բանկի կողմից Տորոնտո կենտրոնի հետ համատեղ կազմակերպվել է «Վերաապահովագրություն ապահովագրական կազմակերպությունները վերահսկողների համար» թեմայով միջազգային գործնական առցանց դասընթացը: Գործնական ուսուցում տրամադրելու հիմնական նպատակն էր վարգացող շուկաներում և ցածր եկամուտ ունեցող երկրներում գործող ֆինանսական կարգավորող և վերահսկող մարմինների ֆինանսական կայունության և համընդհանուր հասանելիության խթանումը:

ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՇՈՒԿԱ

Նշված նպատակի իրագործման համար էկոնոմիկայի նախարարության կոորդինացմամբ և Կենտրոնական բանկի մասնակցությամբ 2020 թ. ընթացքում մշակվել է կապիտալի շուկայի զարգացման ծրագիր, որն ամփոփում է բոլոր այն հնարավոր ռազմավարական ուղղությունները, որոնք այս կամ այն կերպ կարող են կարևորվել կապիտալի շուկայի զարգացման համատեքստում, մասնավորապես՝ կապիտալի շուկայում առաջարկվող գործիքները և դրանց շուկաները, պահանջարկն ապահովող ներդրողները, շուկայի ենթակառուցվածքը, կապիտալի շուկայի կարգավորումն ու վերահսկողությունը:

Ծրագիրն ուղղված է ներդրումային նոր գործիքների ստեղծմանը, որոնք կապահովեն երկրում ձևավորված խնայողությունների ներդրումը տնտեսության իրական հատվածում, հնարավորություն կտան բնակչությանը (այդ թվում՝ կենսաթոշակային ֆոնդերի միջոցով) մասնակցելու երկրում իրականացվող ներդրումային ծրագրերին և ստանալու դրանցից եկամուտներ:

Փոփոխություն է կատարվել Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում, որի նպատակն է խթանել միջազգային շուկայի մասնակիցների մուտքը Հայաստանի Հանրապետության շուկա: Փոփոխության արդյունքում, մասնավորապես, հնարավորություն է ընձեռվել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկին՝ դիմելու Կապիտալի շուկայի միջազգային ասոցիացիային (ICMA), որ վերջինս իր կայքէջում հրապարակի իրավական եզրակացություն Հայաստանի Հանրապետությունում Համընդհանուր ռեպո գլխավոր համաձայնագրի (GMRA) կիրառելիության վերաբերյալ:

2020 թ. սեպտեմբերի 18-ին Վարշավայի ֆոնդային բորսայի (ՎՖԲ) կառավարման խորհուրդը և ՀՀ կենտրոնական բանկը (ՀՀ ԿԲ) ստորագրեցին պայմանաթերթ՝ ՎՖԲ-ի կողմից Հայաստանի արժեթղթերի բորսայում 65% հսկիչ փաթեթ ձեռք բերելու շուրջ բանակցությունների վերաբերյալ: ՎՖԲ-ի և ՀՀ ԿԲ-ի միջև ստորագրված պայմանաթերթը սահմանում է հետագա բանակցությունների շրջանակային պայմանները, որոնք ուղղված են հնարավոր ներդրումային համաձայնագիր կնքելուն: Ձեռքբերման վերջնական պայմանները, ի թիվս այլոց, կախված կլինեն անհրաժեշտ ուսումնասիրությունների իրականացման և համա-

Կենտրոնական բանկի գործունեության նպատակներից մեկը կապիտալի շուկայի խթանման և կարգավորման ուղղությամբ գործառույթների իրականացումն է, որն ուղղված է արժեթղթերում ներդրողների պաշտպանության, արդար, թափանցիկ և վստահելի կապիտալի շուկայի գործունեության, ինչպես նաև այս շուկայի միջոցով նոր ներդրումային հնարավորությունների ստեղծման համար անհրաժեշտ նախապայմանների ապահովմանը:

պատասխան կորպորատիվ հավանությունների արդյունքներից: ՎՖԲ մուտքը կապիտալի շուկայի ենթակառուցվածքների վարգացման և շուկայի արագ աճի լուրջ խթան կարող է հանդիսանալ: ՎՖԲ փորձառությունը թույլ կտա իրականացնել մի շարք վարգացման ծրագրեր, այդ թվում՝ նորարարական տեխնոլոգիաների ներդրում, հայկական և լեհական շուկաների հեշտացված փոխգործակցություն (փոխադարձ հասանելիության մեխանիզմներ), նոր գործիքներով առևտրի կազմակերպում և այլն: Դրանց իրականացման համար կմշակվի առանձին Գործողությունների ծրագիր:

ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ

2020 թ. Կենտրոնական բանկը, նպատակ ունենալով նվազեցնել և կանխարգելել ռիսկերը (վարկային, հաշվարկային, գործառնական, այդ թվում՝ տեղեկատվական անվտանգության, և այլ), որոնք կարող են վտանգել վճարահաշվարկային համակարգերի բնականոն գործունեությունը և ՀՀ ֆինանսական համակարգի կայունությունը, Հայաստանյան վճարահաշվարկային համակարգերի նկատմամբ սահմանել է հետևյալ պահանջները.

Կենտրոնական բանկի գործունեության նպատակներից է գործուն վճարահաշվարկային համակարգի ստեղծումն ու զարգացումը, ինչի իրականացումը մեծապես նպաստում է Կենտրոնական բանկի հիմնական նպատակների՝ ֆինանսական կայունության և գների կայունության ապահովմանը: Վճարահաշվարկային համակարգերը, վճարային ծառայությունները կարևոր դեր ունեն ինչպես ֆինանսական համակարգի, այնպես էլ ամբողջ տնտեսության զարգացման գործում: Վճարահաշվարկային համակարգերի միջոցով են իրականացվում տնտեսվարող սուբյեկտների և քաղաքացիների միջև վճարումները և փոխանցումները, միջազգային տրանսֆերտները, հարկային, սոցիալական և այլ վճարները՝ ապահովելով տնտեսության և հասարակության սպասարկումը: Այդ իսկ պատճառով Կենտրոնական բանկը մեծապես կարևորում է վճարահաշվարկային համակարգերի անխափան, հուսալի, անվտանգ և արդյունավետ գործունեությունը՝ միջազգայնորեն ընդունված սկզբունքներին և ստանդարտներին համապատասխան:

Վճարային քարտերի քանակը

2 496 586 4.44% ▲

		2018 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅԱՄԲ	2019 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅԱՄԲ
VISA	42.3%	+31%	+6%
ArCa	30.5%	+21%	+0.7%
MasterCard	25.4%	+16%	+7%
HSBC	1.2%	+8%	+0.5%
AMERICAN EXPRESS	0.4%	+4%	+2%
Diners Club	0.1%	+17%	+0.1%

- Հայաստանյան վճարահաշվարկային համակարգում **պրոցեսինգ, քլիրինգ և/կամ վերջնահաշվարկ իրականացնող կարող է հանդիսանալ բացառապես ՀՀ կենտրոնական բանկի կողմից լիցենզավորված սուբյեկտը**,
- արագ դրամական փոխանցումների հայաստանյան համակարգի **ցանկացած մասնակից պետք է ունենա իր կողմից նախաձեռնվող փոխանցումների գումարի չափով համարժեք ապահովվածություն՝ համակարգի վերջնահաշվարկն իրականացնող բանկում**,
- Հայաստանյան վճարահաշվարկային համակարգը հանրային կամ համակարգային նշանակություն ունեցող համարվելու դեպքում՝ **համակարգի օպերատորը պետք է ապահովի Կենտրոնական բանկի կողմից սահմանված լրացուցիչ պահանջների կատարումը**, օրինակ՝ ռիսկերի կառավարման արդյունավետ համակարգի ներդրում, վերջնահաշվարկի իրականացում գործարքների կատարումից հետո ամենաուշը մեկ օրվա ընթացքում և այլն:


Տեղական և միջազգային վճարումների կատարման գործընթացների արդյունավետության բարձրացման, վճարումների մշակման հետ կապված ծախսերի նվազեցման, ինչպես նաև վճարային համակարգերի միջև տեղեկատվության փոխանակման գործընթացների ավտոմատացման և փոխգործելիության ապահովման նպատակով 2020 թ. **Կենտրոնական բանկը որդեգրել է վճարային համակարգերում ստանդարտացված հաղորդագրությունների կիրառման քաղաքականություն**, որի մշակման ժամանակ հաշվի են առնվել միջազգային պրակտիկայում կիրառվող հաղորդագրությունների ստանդարտացման մոտեցումները, որոնք փոխադարձ ազդեցություն ունեն նաև ՀՀ ֆինանսական կազմակերպությունների կողմից շահագործվող համակարգերի գործունեության վրա: Այդ քաղաքականության շրջանակներում Կենտրոնական բանկի խորհուրդը սահմանել է ֆինանսական կազմակերպությունների կողմից շահագործվող վճարային համակարգերում **ԻՍՕ 20022 միջազգային ստանդարտի հաղորդագրությունների ներդրման և կիրառման գործընթացին ներկայացվող նվազագույն պահանջները**:

Անկանխիկ տնտեսության վարգացման քաղաքականության համատեքստում 2020 թ. Կենտրոնական բանկը շարունակել է

անկանխիկ գործառնությունների խթանմանն ուղղված օրենսդրական փաթեթի քննարկման աշխատանքները շահագրգիռ պետական մարմինների հետ: Օրենսդրական փաթեթի ընդունումը կբարձրացնի քաղաքացիների համար հասանելիությունը անկանխիկ վճարային ծառայություններին և թույլ կտա հարմարավետ վճարումներ իրականացնել առևտրի կետերում: Մյուս կողմից, տնտեսավարող սուբյեկտները հնարավորություն կստանան իրենց հաճախորդներին մատուցելու առավել որակյալ ծառայություններ, կիրառելու տարատեսակ վեղչային և բոնուսային մեխանիզմներ՝ այդպիսով ներգրավելով ավելի շատ հաճախորդների և ավելացնելով վաճառքի ծավալները: Բացի այդ, «Անկանխիկ գործառնությունների մասին» ՀՀ օրենքի ընդունումը կնպաստի ստվերային տնտեսության կրճատմանն ուղղված միջոցառումների արդյունավետության բարձրացմանը, կխորացնի ֆինանսական միջնորդության մակարդակը:

2020 ԹՎԱԿԱՆԻՆ ՀՀ ԵՎ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԲԱՆԿԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԹՈՂԱՐԿՎԱԾ ՔԱՐՏԵՐՈՎ ՀՀ-ՈՒՄ ԱՆԿԱՆԽԻԿ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ

2019 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅԱՄԲ



42%
POS ՏԵՐՄԻՆԱԼՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ

1%
ԲԱՆԿՈՄԱՏՆԵՐՈՎ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ԱՎՏՈՄԱՏ ՄԵՔԵՆԱՆԵՐՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ


57%
ՎԻՐՏՈՒԱԼ ՄԻՋԱՎԱՅՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ

Կորոնավիրուսային համավարակի տարածման և սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի Հանրապետության կողմից Արցախի Հանրապետության հանդեպ սանձավերծված պատերազմով պայմանավորված մարտահրավերների հաղթահարման նպատակով Կենտրոնական բանկը ՀՀ կառավարության և այլ պետական գերատեսչությունների հետ համատեղ իր ջանքերն ուղղել է բնակչության կողմից անկանխիկ վճարումների իրականացման խրախուսմանը, պետության կողմից իրականացվող սոցիալական ապահովության նպաստների վճարման գործընթացի՝ բնակչության համար առավելագույնս հարմարավետ ձևով իրականացմանը, ինչպես նաև ամբողջ վճարահաշվարկային համակարգի սահուն և անխափան գործունեության ապահովմանը՝ պետության, հասարակության և տնտեսավարող սուբյեկտների պահանջմունքները բավարարելու համար: Մասնավորապես՝

1. Կենտրոնական բանկը հայտարարություն է տարածել՝ հաճախորդներին հորդորելով օգտվել առցանց ֆինանսական ծառայություններից և վճարային հավելվածներից:
2. Որոշակի օրերի երկարացվել են Կենտրոնական բանկի էլեկտրոնային վճարումների համակարգի աշխատանքային ժամերը՝ բյուջետային և այլ տեսակի վճարումների սպասարկման նպատակով:
3. Համավարակից և պատերազմից տուժած քաղաքացիներին հատկացված նպաստների վճարման գործընթացի սահուն և հարմարավետ կազմակերպման գործում աջակցություն է ցուցաբերվել պետական գերատեսչություններին:

Այս համատեքստում կարևոր է արձանագրել, որ, ի թիվս այլ բարենպաստ գործոնների, Կենտրոնական բանկի և առևտրային բանկերի կողմից իրականացվող իրազեկման և անկանխիկ գործարքների խրախուսման միջոցառումների արդյունքում 2020 թվականին, 2017 թվականից ի վեր առաջին անգամ, Հայաստանի Հանրապետությունում վճարային քարտերով կատարված անկանխիկ գործարքների քանակային ցուցանիշը գերազանցել է քարտերից կանխիկացման և կանխիկի մուտքագրման գործարքների քանակային ցուցանիշին՝ կազմելով ընդհանուր քարտային գործարքների 58.7 տոկոսը: Ընդ որում՝ 2020 թվականին, 2017 թվականի համեմատ, շուրջ երկու անգամ նվազել է վճարային քարտով կատարված մեկ անկանխիկ գործարքի միջին

Գծապատկեր 2. ՀՀ-ում վճարային քարտերով կատարված գործառնությունների ծավալը (հազար դրամ)



արժեքը՝ կազմելով շուրջ 12 հազար դրամ, ինչը վկայում է բնակչության կողմից առօրյա կյանքում իրականացված մանրածախ անկանխիկ գործարքների ավելացման մասին:[6]

[6] *ՀՀ վճարահաշվարկային համակարգի հիմնական ցուցանիշների վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվությունը տե՛ս Կենտրոնական բանկի «Ֆինանսական կայունության հաշվետվությունում»:*

ՈՒՍՈՒՄՆԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Կենտրոնի տեսլականը զարգացող տնտեսություններում դրամավարկային և ֆինանսական կայունության քաղաքականություններին առնչվող հարցերում առաջատար լինելն է:


2020 թվականին Դիլիջանի ուսումնահետազոտական կենտրոնը (ԴՈՒԿ) իր առջև դրված նպատակներն իրագործելու ուղղությամբ շարունակել է աշխատանքները հետազոտությունների իրականացման, միջազգային համագործակցության և սոցիալական պատասխանատվության ոլորտներում, սակայն, COVID-19-ով պայմանավորված, հնարավորություն չի եղել աշխատանքներն իրականացնել ամբողջ ծավալով. դրանց մի մասը կատարվել է առցանց եղանակով: Կենտրոնում ստեղծվել է այնպիսի միջավայր, որը նպաստում է գիտահետազոտական

Դիլիջանի ուսումնահետազոտական կենտրոնի առաքելությունն է ստեղծել գիտական այնպիսի միջավայր, որը կնպաստի գիտահետազոտական աշխատանքների իրականացմանն արդի տնտեսագիտական խնդիրների և դրանց գործնական կիրառման միջազգային փորձի ուսումնասիրության շուրջ (հետազոտությունների վրա հիմնված որոշումների կայացման մշակույթի արմատավորմանը), կտրամադրի որակյալ հետազոտական աշխատանքներ վարգացող տնտեսությունների վերաբերյալ և կնպաստի Կենտրոնական բանկի նպատակների արդյունավետ իրականացմանը:

ՀՀ ԿԲ ԴԻԼԻՋԱՆԻ ՈՒՍՈՒՄՆԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԱՆՁՆԱԿԱԶՄ

Աշխատակիցներ
Ծառայությունների մատուցման պայմանագրեր



աշխատանքների իրականացմանը, արդի տնտեսագիտական խնդիրների և դրանց կիրառման միջազգային փորձի ուսումնասիրությանը՝ նպատակ ունենալով իրականացնելու որակյալ հետազոտական աշխատանքներ վարգացող տնտեսությունների վերաբերյալ և նպաստելու Կենտրոնական բանկի նպատակների արդյունավետ իրագործմանը:

2020 թվականի ընթացքում կատարվել են մի շարք աշխատանքներ ու հետազոտություններ, իրականացվել են վերլուծություններ ՀՀ-ում կորոնավիրուսի սոցիալ-տնտեսական հետևանքների գնահատման և իրավիճակի վարգացման հնարավոր սցենարների մոդելավորման համար: Արդյունքները քննարկվել և ներկայացվել են Կառավարության գործընկերներին: Ուսումնասիրվել է կորոնավիրուսի շրջանակներում տնտեսական արձագանքման միջազգային փորձը, որի արդյունքները տպագրվել են հոդվածի տեսքով London School of Economics (LSE)-ի բլոգային բաժնում: Ասիական վարգացման բանկի (ADB) հետ համատեղ իրականացվել են հետազոտություններ ՀՀ տարածքային վարգացման խնդիրների և ենթակառուցվածքային ծրագրերի արդյունավետության գնահատման նպատակով: Կատարվել է հարկային եկամուտների պոտենցիալի գնահատում պանելային տվյալների հիման վրա, ինչպես նաև վերլուծություն՝ «Covid-19 and the New Era of Policy Making in Emerging Economies» թեմայով:

Դրամավարկային քաղաքականության և Ֆինանսական կայունության հետազոտությունների մասով իրականացվել են վերլուծություններ Ստենֆորդի և Յեյրիխի համալսարանների, Արժույթի միջազգային հիմնադրամի մասնագետների հետ ՀՀ տնային տնտեսությունների խնայողության վարքագծի վրա փոխարժեքի արժեվրկումների ազդեցության գնահատման, հիպոտեկի շուկայում ուղղորդման (steering), առաջարկի ու պահանջարկի գնահատման և բանկային վարկավորման վրա դրամավարկային քաղաքականության ազդեցության գնահատման նպատակով, որոնց արդյունքները նախատեսվում է տպագրել միջազգային հոդվածներում: Կատարվել են հետազոտություններ ՀՀ-ում սպառողական գների կոշտություններն ու միկրոկառուցվածքը, գների ճշգրտման վարքագիծը ուսումնասիրելու, կապիտալ հոսքերի վրա ազդող գործոնները գնահատելու, ֆիրմաներին տրամադրվող վարկերի վերաֆինանսավորման միտումների, յուրահատկությունների բացահայտման և ռիսկի հավելավճարի փոփոխությունների

ազդեցությունը մակրոտնտեսական փոփոխականների վրա ուսումնասիրելու նպատակով: Միևնույն ժամանակ, գրեթե ավարտին են հասցվել ֆինանսական դոլարայնացման տվյալների բազայի կառուցման աշխատանքները, որը հետագայում նախատեսվում է հրապարակել ԿԲ կայքում՝ ՀՀ և միջազգային մասնագետներին ու հետազոտողներին հասանելի դարձնելու նպատակով:

Դիլիջանի ուսումնահետազոտական կենտրոնը կարևորում է կրթական հաստատությունների հետ համագործակցությունը, ուսանողների կրթումը և այդ ուղղությամբ տարվող աշխատանքները: ԴՈՒԿ-ի նպատակը ուսանողներին ԿԲ գործունեության ներկայացումն է, ինչպես նաև գիտելիքի փոխանցումը նոր սերնդին: ԴՈՒԿ-ի աշխատակիցները ևս այցելել են համալսարաններ՝ դասախոսություններ կարդալու նպատակով:

ՀՀ ԿԲ և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի համատեղ ջանքերով հիմնովին վերանայվել է տնտեսագիտական ֆակուլտետի կրթական ծրագիրը: Արդյունքում՝ դասավանդվող առարկաների ցանկը, գրականության աղբյուրները, ինչպես նաև դասավանդման մեթոդները համապատասխանեցվել են միջազգային լավագույն փորձին: ԿԲ բավմաթիվ աշխատակիցներ ակտիվորեն ներգրավված են ուսումնական գործընթացում և վարում են տնտեսագիտական հիմնական առարկաների դասընթացները՝ մակրոտնտեսագիտություն, միկրոտնտեսագիտություն, էկոնոմետրիկա, վիճակագրություն: Համագործակցության շրջանակներում ԿԲ տարբեր աշխատակիցներ պարբերաբար հանդես են գալիս նաև թեմատիկ դասախոսություններով: Ծրագրի հիմնական սպասվող արդյունքը ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի՝ տնտեսագիտության ոլորտում Հայաստանում լավագույն կրթական հաստատություններից մեկը դարձնելն է: Սա թույլ կտա նաև ԿԲ Դիլիջանի ուսումնահետազոտական կենտրոնին ավելի ակտիվ տարածաշրջանից աշխատակիցների ներգրավել:

Դիլիջանի ուսումնահետազոտական կենտրոնը 2020 թվականին Հարվարդի, Նոտր Դամի, Չիկագոյի, Թաֆթսի համալսարանների 11 ուսանողների համար այս անգամ կազմակերպել է հեռավար հետազոտական պրակտիկա:

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱ ԱՆՑՆՈՂ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՈՒՍԱՆՈՂՆԵՐ

11

ՀԱՐՎԱՐԴԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՉԻԿԱԳՈՅԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՆՈՏՐ ԴԱՄԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԹԱՖԹՍԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Դիլիջանի ուսումնահետազոտական կենտրոնը, հանդիսանալով մարզի համայնքի մաս, տարվա ընթացքում շարունակել է իր առաքելությունը մարզի վարգացման ուղղությամբ: Կենտրոնը մարզի վարգացումը դիտարկում է որպես իր կորպորատիվ սոցիալական պատասխանատվության մանդատի գլխավոր բաղադրիչ:

Կենտրոնական բանկի կորպորատիվ սոցիալական պատասխանատվության շրջանակում շարունակել են գործել Դիլիջանի կենտրոնական դպրոցը, ֆաբլաբը, «Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնը, դրամի ցուցասրահը:

- Հատկանշական է, որ **դրամի ցուցասրահի** շահառուների շրջանակը մեծ է և բավմական: 2020 թվականին նոր կորոնավիրուսային հիվանդության համավարակի պատճառով դադարեցվեց կրթամշակութային հաստատությունների գործունեությունը, այդ իսկ պատճառով ՀՀ ԿԲ Դիլիջանի

դրամի ցուցասրահն ընդունել է ընդամենը 20 այցելու: Գնահատելով դրամի ցուցասրահում ներկայացված նմուշների նկատմամբ հետաքրքրությունը՝ մեր աշխատակիցները ուսումնական տարվա ընթացքում կազմակերպել են առցանց էքսկուրսիա, որին մասնակցել է ավելի քան 80 աշխատակայան:

- Կորպորատիվ սոցիալական պատասխանատվության շրջանակում, ՀՀ ԿԲ և «Ֆաբ» հիմնադրամի համագործակցությամբ, Դիլիջանի ֆաբլաբը նորարարության և գյուտերի համար նախատեսված տեխնիկական նախատիպերի հարթակ, ինչպես նաև ստեղծելու, սովորելու կրթական միջավայր է: Ծրագրի նպատակն է նպաստել տարածաշրջանում նորարարության և տեխնոլոգիաների կիրառմանը:

2020 թ. ընթացքում ծավալվել է կրթական գործունեություն, մշակվել և նախատիպավորվել է մի քանի սարք, ֆաբլաբը մասնակցել է Ֆաբ կոնֆերանսին:

Ֆաբակադեմիան՝ https://fabacademy.org/, 6 ամիս տևողությամբ կրթական ծրագիր է՝ նախատեսված ֆաբլաբերի աշխատակիցների, ուսանողների համար: Դիլիջանի ֆաբլաբը Հայաստանի առաջին և մեր տարածաշրջանի դեռ միակ ֆաբակադեմիայի հանգույցն է: 2019 թ-ից Հայաստանն իրավունք է ձեռք բերել իրականացնելու համապատասխան կրթական ծրագիրը: 2020 թ. 4 ուսանողի համար ֆաբլաբը ստացել է 70% -ի չափով վեղչի իրավունք: Ուսանողները «Ֆաբ» հիմնադրամի տրամադրած ժամանակահատվածում պատրաստել են իրենց ավարտական նախագծերը:

Առցանց դասընթացների տեսադասերի համար մշակվել է ուսումնական պլան 3D մոդելավորման, CAD/CAM-ի, սարքավորումների շահագործման վերաբերյալ:

Յուրաքանչյուր տարի տարբեր երկրներում անցկացվում է ֆաբլաբերի տարեկան համաժողովը, որին մասնակցում են բոլոր ֆաբլաբերը (1900): Միջոցառման ընթացքում անցկացվում են թեմատիկ քննարկումներ, վարժանքներ, կազմակերպվում են ցուցահանդեսներ, մրցույթներ և այլն: Դիլիջանի ֆաբլաբը ևս մասնակցեց կոնֆերանսին, ինչպես նաև ներկայացրեց ֆաբլաբի մասին պատմող տեսահոլովակ:

COVID-19-ի տարածման կանխարգելման և բժշկական հաստատություններին աջակցելու նպատակով ամբողջ աշխարհի Ֆաբ համայնքն սկսեց նախագծել ու պատրաստել պաշտպա-

նիչ միջոցներ և սարքավորումներ: Դիլիջանի ֆաբլաբը նույնպես մասնակցեց այդ նախաձեռնությանը՝ պատրաստելով պաշտպանիչ վահաններ, ինտուբացիայի տուփեր, թոքային սարքը մեկից ավելի հիվանդի միացնելու դետալներ: Ընդհանուր առմամբ, պատրաստվել են 300 պաշտպանիչ վահաններ, որոնք տրամադրվել են հիվանդանոցներին, այլ շահառուների:

Պատերազմի հետևանքներով պայմանավորված՝ սկսվել է նոր նախագիծ՝ մասնագիտորեն աջակցել պրոթեզարաններին և այլ բուժհաստատությունների: Թուլուպի ֆաբլաբի խորհրդատվությամբ պրոթեզարաններին ներկայացվել է 3D մոդելավորման, սքանավորման և տպագրության միջոցով պրոթեզավորման նոր եղանակ: Այս տեխնոլոգիան կօգնի ավելի կարճ ժամանակահատվածում առավել շատ մարդու պրոթեզավորել:

ՀՀ ԿԲ ԴԻԼԻՋԱՆԻ ՈՒՍՈՒՄՆԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ԴԻԼԻՋԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ (ԱՅԲ) ԱՇԱԿԵՐՏՆԵՐ

143

ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՍԱՆԵՐ

32

- **Դիլիջանի կենտրոնական դպրոցը**, որը կառավարվում է «Այբ» հիմնադրամի կողմից, ունի 143 աշակերտ, իսկ ուսուցիչների մի մասը տարածաշրջանի բնակիչներ են, որոնք վերապատրաստվել են «Այբ» կրթական համալիրի ծրագրով:

- 2020 թվականին Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի և «Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնի համագործակցության արդյունքում կենտրոնն ընդլայնվել է և դարձել Թումո HUB: ԿԲ աջակցությամբ 2020 թվականի ավարտին Բերդում և Գավառում բացվեցին Թումո տուփեր (Tumo in the box): Այս տուփերի բացումը հնարավորություն տվեց մոտակա քաղաքների և գյուղերի երեխաներին օգտվելու Թումոյի կրթական ծրագրերից:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՉԱՄԱԿԱՐԳԻ ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿՐԹՈՒՄ

COVID - 19: Հանրության ֆինանսական կրթման շարունակականության ապահովում՝ ֆինանսական կրթումը էլեկտրոնային եվ առցանց հարթակների միջոցով:

Կենտրոնական բանկն իրականացնում է սպառողների շահերի պաշտպանություն ֆինանսական ծառայություններ մատուցող կազմակերպությունների արդար վարվելակերպի և համապատասխան ինստիտուցիոնալ միջավայրի ապահովման միջոցով, ինչպես նաև իրականացնում է ֆինանսական կրթում՝ սպառողներին օգնելով ստանալ գիտելիք, հմտություններ, ձևավորել պատասխանատու վերաբերմունք և վարքագիծ:

Կարգավորման դաշտի զարգացումներ

2020 թ. ընթացքում մշակվել են ֆինանսական կազմակերպությունների գործարար վարվելակերպին ուղղված մի շարք կարգավորումներ: Այսպես՝

Սահմանվել է **հիպոտեկային վարկի քաղվածքի նոր ձևանմուշ և հաղորդակցման ընթացակարգ**: Հիպոտեկային վարկեր ունեցող սպառողները 2021 թ. երկրորդ եռամսյակում արդեն հնարավորություն կունենան **հիպոտեկային վարկերի վերաբերյալ տարեկան 4 անգամ անվճար ստանալու քաղվածքներ (տեղեկանք)**, որոնք կարող են ներկայացնել Պետական եկամուտների կոմիտե՝ վճարված տոկոսագումարների վերադարձման նպատակով:

Այս ուղղությամբ իրականացվող աշխատանքները շարունակական են լինելու. շահագրգիռ պետական այլ գերատեսչությունների և շուկայի հետ իրականացվում են քննարկումներ՝ հիպոտեկային վարկերի գծով եկամտահարկի հետվերադարձման նպատակով Պետական եկամուտների կոմիտե ներկայացվող տեղեկատվության գործընթացները ավտոմատացնելու նպատակով:

«Սպառողական կրեդիտավորման մասին» և **«Բանկային ավանդների ներգրավման մասին»** ՀՀ օրենքներում կատարված փոփոխությունների համաձայն՝ ֆինանսական կազմակերպության և սպառողի միջև լռելյայն հաղորդակցման «փոստային» եղանակը փոխարինվել է «էլեկտրոնայինով», իսկ «առձեռն» եղանակով կազմակերպության տարածքում հաղորդակցումը այլևս չի կարող դիտվել որպես առանձին և միակ հաղորդակցման ուղի: Փոփոխությունների արդյունքում սպառողներն առավել հասցեական, օպերատիվ և արդյունավետ հաղորդակցման միջոցով կտեղեկանան իրենց մատուցած ֆինանսական ծառայությունների և դրանցից բխող իրավունքների ու պարտավորությունների մասին, ինչպես նաև կկանխվեն հնարավոր չարաշահումները:

Սպառողների շահերի պաշտպանության շրջանակն ընդլայնելու և մեխանիզմները վարգացնելու նպատակով փոփոխություններ են իրականացվել **«Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին»** ՀՀ օրենքում: Փոփոխությունների արդյունքում հաշտարարին դիմելու իրավունք են ստացել նաև անհատ ձեռնարկատերերը, ինչպես նաև միկրոձեռնարկատեր համարվող իրավաբանական անձինք: Այսուհետ սպառողները կարող են կազմակերպությունների դեմ բողոք-պահանջը ներկայացնել նաև Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակի միջոցով: Կատարված փոփոխությունները սպառողներին առավել հասանելի դարձնելու նպատակով փոփոխվել է ֆինանսական կազմակերպությունների կողմից տրամադրվող **«Ինչ անել, եթե բողոք ունեք»** հանրամատչելի իրավեկող թերթիկը:


Ավտոապահովագրության ոլորտի ենթակառուցվածքների վարգացման և արդյունավետության բարձրացման նպատակով 2020 թվականի ընթացքում ավարտին հասցվեց Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պարտադիր ապահովագրության (ԱՊՊԱ) «միասնական պատուհանի» ներդրումը, որը ներկայացնում է մեկ ընդհանուր էլեկտրոնային միջավայր ԱՊՊԱ պայմանագրերի կնքման, պատահարների և

հատուցումների կառավարման ողջ գործընթացի համար: Այս համակարգի միջոցով հնարավոր է դարձել.

- արագ և արդյունավետ կերպով կնքել ԱՊՊԱ պայմանագրեր առցանց ռեժիմում,
- առավել ճշգրիտ իրականացնել ԱՊՊԱ պատահարների հետևանքով առաջացած վնասների գնահատումը,
- բացառել ապահովագրական ընկերությունների կողմից հայեցողական որոշումների կայացումը ինչպես պայմանագրերի կնքման, այնպես էլ վնասի գնահատման ու հատուցման հարցում,
- առավել կարճ ժամկետում կայացնել ԱՊՊԱ պատահարներում մեղավոր կողմի վերաբերյալ որոշումը,
- առավել թափանցիկ կազմակերպել փոխհատուցման գործընթացը,
- ունենալ կիրառելի, որակյալ և համակարգի սահմաններում համադրելի տվյալներ:

Գործարար վարվելակերպի վերահսկողություն

Կորոնավիրուսով պայմանավորված՝ 2020 թ. կատարվել է միայն հեռակա **վերահսկողություն**:



Դիմումների միջոցով ստացված ապդակների հիման վրա իրականացված վերահսկողական միջոցառումների արդյունքում բացահայտվել են ֆինանսական կազմակերպությունների կողմից **գործարար վարվելակերպին առնչվող** մի շարք **իրավախախտումներ**, որոնց նկատմամբ կիրառվել են համապատասխան վերահսկողական **միջոցառումներ**: Ընդ որում՝ ԿԲ **ձեռնարկած վերահսկողական միջոցառումների արդյունքում բացահայտվել են այնպիսի խախտումներ, որոնց հետևանքով առանձին ֆինանսական կազմակերպություններ** պարտավորվել են սպառողներին վերադարձնել գումարներ:

ՀՀ-ում հանրության ֆինանսական կրթվածության մակարդակի բարձրացմանն ուղղված միջոցառումներ

2020 թ. շարունակվել են ֆինանսական կրթման ուղղությամբ տարվող աշխատանքները՝ չնայած ծառացած մարտահրավերներին: Գործընկերների հետ արդյունավետ և օպերատիվ աշխատանքների շնորհիվ հնարավոր եղավ անխոչընդոտ կազմակերպել ֆինանսական կրթումը էլեկտրոնային և առցանց հարթակների միջոցով:

Վերամշակվել և Ֆինանսական կրթման ռազմավարության մշակման և իրագործման հանձնաժողովի ու ԿԲ խորհրդի կողմից հաստատվել է **Ֆինանսական կրթման ազգային ռազմավարությունը (ՖԿԱՌ), մշակվել է 2021–2025 թթ. գործողությունների նոր ծրագիրը**: Արդյունքում՝ վերանայվել են ֆինանսական կրթման առաքելությունը, նպատակները, նպատակային ցուցանիշները, թիրախային խմբերը, ծրագրերի արդյունավետության գնահատման և ֆինանսավորման մոտեցումները, որոնք կօգնեն սպառողներին՝ ստանալու գիտելիք և ձևավորելու պատասխանատու վերաբերմունք ու վարքագիծ ֆինանսների ոլորտում:

«Ֆինանսական կրթությունը դպրոցում» ծրագրի շրջանակում ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության և Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի հետ համատեղ առցանց եղանակով իրականացվել են **336 դպրոցի 2050 ուսուցչի առցանց վերապատրաստումներ**: Վերապատրաստված ուսուցիչները կկարողանան դասավանդել *ֆինանսական կրթության բաղադրիչը*, որի արդյունքում աշակերտները կկարևորեն անձնական միջոցների կառավարումը, ունակ կլինեն իրականացնելու ֆինանսական գործողություններ, խնայելու գումար, ծանոթ կլինեն ֆինանսական համակարգին, ծառայություններին, կիմանան իրենց իրավունքները պաշտպանելու եղանակները, կխուսափեն ֆինանսական վեղծարարություններից:

Առցանց եղանակով իրականացվել է **«Քաղաքացի» ֆինանսական հիմունախնդիրների ուսուցման** ծրագիրը Գեղարքունիքի մարզում: Ծրագիրը նպատակ ունի աջակցելու

ՀՀ հիմնական և ավագ դպրոցների «Հասարակագիտություն» առարկայի *տնտեսագիտություն բաղադրիչի* առկա խնդիրների ու բովանդակային բացթողումների լրացմանը՝ ֆինանսական կրթման մասով, ինչպես նաև խրախուսելու դասավանդողներին և սովորողներին՝ կիրառելու նախագծային ուսուցման մոտեցումները: Ծրագրին մասնակցել են 25 ուսուցիչ և 125 աշակերտ: Ծրագրի արդյունքում մասնակիցները բարելավել են նախագծային ուսուցման հմտությունները, ինչպես նաև խորացրել են անձնական ֆինանսների կառավարման վերաբերյալ իրենց գիտելիքներն ու հմտությունները:

Ֆինանսական կրթման և իրազեկման աշխատանքներն ինտենսիվորեն իրականացվել են «Ֆինանսներ բոլորի համար» (www.abcfinance.am) կայքի, ինչպես նաև սոցիալական էջերի (Facebook, Instagram, Youtube) համանուն կայքի միջոցով: Կայքի հիմնական նպատակն է հանրությանը տեղեկացնել, բացատրել և ուսուցանել ֆինանսական ծառայությունների և անձնական ֆինանսներին վերաբերող ոլորտների մասին, որպեսզի նրանք կարողանան կայացնել ճիշտ որոշումներ: 2020 թ. ընթացքում հրապարակվել են մի շարք տեղեկատվական նյութեր՝ ինֆոգրաֆիկաներ, տեսադասեր, հոդվածներ վարկերի, վարկային պատմության, օնլայն վճարումների, ֆինանսական խարդախություններից պաշտպանվելու եղանակների, սպառողներին վերաբերող օրենսդրական փոփոխությունների մասին: 2020 թ. սեպտեմբերից հանրության համար գործարկվել է FinInfo.am տեղեկատվական համակարգը, որը հնարավորություն է տալիս «մեկ պատուհանի» սկզբունքով տեղեկանալու, համեմատելու և կայացնելու որոշումներ տարբեր ֆինանսական կազմակերպությունների կողմից առաջարկվող ֆինանսական ծառայությունների վերաբերյալ: Երկրում ստեղծված պայմաններում գործարկման 4 ամիսների ընթացքում կայքն առանց առաջմղման ունեցել է շուրջ 17 000 դիտում:

Սպառողների շահերի պաշտպանության և ֆինանսական կրթման ոլորտում փորձի փոխանակման նպատակով 2020 թ. փետրվարից ՀՀ կենտրոնական բանկ են այցելել Հյուսիսային Մակեդոնիայի Հանրապետության կենտրոնական բանկի ներկայացուցիչները: Բացի այդ, 2020-ի հունիսին ՀՀ կենտրոնական բանկը և Ֆինանսական ներգրավման դաշինքը կազմակերպել են Ֆինանսական ներգրավման քաղաքականության փորձագետների խմբի (ECAPI) 5-րդ նիստը: Ծրագրի փորձագիտական խմբի հանդիպումը և նրա անդամների համար կազմակերպվող դա-

սընթացը անդամ երկրների հիմնական ձեռքբերումներին ու առկա մարտահրավերներին ծանոթանալու հիանալի հնարավորություն էր: Հանդիպման ժամանակ ամփոփվել են վերջին մի քանի ամիսների աշխատանքի արդյունքները, ուսումնասիրվել՝ համատեղ ուսումնառության հնարավորությունները: Իսկ արդեն հոկտեմբերին առցանց տեղի է ունեցել խմբի 6-րդ նիստը, որի ընթացքում ներկայացվել են կատարված աշխատանքները, քննարկվել են գործողությունների ծրագրով նախատեսված հետագա անելիքները: Միջոցառման օրակարգը բաղկացած է եղել երկու հիմնական թեմաներից՝ ֆինանսական կրթում (Financial Education and Literacy) և հաճախորդների էլեկտրոնային ճանաչում/նույնականացում (e-KYC and e-ID): 2020-ին Ֆինանսական ներառման դաշինքի (AFI) աջակցությամբ կազմակերպվել է «Ֆինանսական կրթման ռազմավարության իրականացում» թեմայով հասակակիցների ուսուցման ծրագիր ՀՀ կենտրոնական բանկի և Լեսոտոյի կենտրոնական բանկի միջև: Գիտելիքների և փորձի փոխանակման այս միջոցառման ընթացքում քննարկվել են ֆինանսական կրթության և գրագիտության բնագավառի որոշակի մարտահրավերներ, մասնակիցներն անդրադարձել են նաև ֆինանսական ներառումը խթանող թվային նորարարություններին:

ԱՐԺՈՒՅԹԻ ԹՈՂԱՐԿՈՒՄ, ԴՐԱՄԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԿԱՋՄԱԿԵՐՊՈՒՄ


Ակգային արժույթի շրջանառության կարգավորման ոլորտում Կենտրոնական բանկի գործունեությունն ուղղված է եղել տնտեսության մեջ կանխիկ դրամի նկատմամբ ձևավորված պահանջարկի բավարարմանը՝ ըստ անհրաժեշտ ծավալների, կառուցվածքի, որակի և ժամկետների: Կանխիկ դրամի շրջանառության կազմակերպումն ու կարգավորումն իրականացվել են՝ ապահովելով հուսալիության, հարմարավետության, օպերատիվության և անընդհատության սկզբունքները:

COVID-19: Համաճարակի պայմաններում վիրուսի տարածումը նվազեցնելու նպատակով շուրջ մեկ ամիս Կենտոնական բանկից հաճախորդներին տրամադրվել են միայն էմիսիոն թղթադրամներ (գործարանային արտադրության վիճակում):

COVID - 19: ՀՀ կենտրոնական բանկի դրամարկղ մուտքագրված կանխիկ դրամը երեքից հինգ օր պահպանվել է «կարանտին» վիճակում, որից հետո միայն վերահաշվվել և տեսակավորվել է: Վերահաշվված և տեսակավորված կանխիկ դրամը հաճախորդներին տրամադրվել է նվազագույնը 15-օրյա «կարանտին» անցնելուց հետո:

Հանրապետության մարզերում և Արցախի Հանրապետությունում իր հաճախորդների դրամարկղային սպասարկումը Կենտրոնական բանկն իրականացրել է Երևանում գտնվող գլխավոր


Գծապատկեր 3. Կենտրոնական բանկի դրամարկղային շրջանառությունը 2020 թվականին



գրասենյակի դրամարկղի և տարածքային դրամարկղային կենտրոնների (այսուհետ՝ ՏԴԿ-ներ) միջոցով:

2020 թվականին Կենտրոնական բանկի դրամարկղային շրջանառության ծավալը նախորդ տարվա համեմատությամբ նվազել է 7.3%-ով: ՏԴԿ-ների միջոցով ապահովվել է Կենտրոնական բանկի դրամարկղային շրջանառության 15.0%-ը: Ինչպես և նախորդ տարիներին, ՏԴԿ-ների միջոցով առավելապես իրականացվել են կանխիկ դրամի ելքագրման գործառնություններ. դրամարկղային ելքերը կազմել են ՏԴԿ-ների շրջանառության 75.9%-ը:

Գծապատկեր 4. Կենտրոնական բանկից դուրս գտնվող կանխիկ դրամի տեսակային կառուցվածքը 31.12.2020 թ. դրությամբ (գումարային առումով):



Տարվա ընթացքում Կենտրոնական բանկից դուրս կանխիկ դրամի ծավալն ավելացել է 23.8%-ով: 20.000 դրամ անվանական արժեքով թղթադրամների բարձր պահանջարկը, որը պահպանվում է տարիներ շարունակ, գրանցվել է նաև 2020 թվականին: Շրջանառությունում առկա 20.000 դրամ անվանական արժեքով թղթադրամների ծավալը տարվա սկզբի համեմատությամբ աճել է 30.7%-ով: 20.000 դրամանոցների նման պահանջարկը հիմնականում պայմանավորված է բանկոմատների միջոցով կանխիկ դրամի ստացման գործոնով:

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻՑ ԴՈՒՐՍ ԿԱՆԽԻԿ ԴՐԱՄԻ ԾԱՎԱԼԸ



+23.8%

ԱՄԵՆԱԾԱՆ ԹՂԹԱԴՐԱՄԻ ՊԱՀԱՆՋ

20 000

ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՌԿԱ ԾԱՎԱԼԸ ՏԱՐՎԱ ՍԿԶԲԻ ՀԱՄԵՄԱՏ ԱՃԵԼ Է 30.7%-ՈՎ

ԳԵՐԱԿՇՌՈՂ ՄԵՏԱՂԱԴՐԱՄ

500

ՏԵՍԱԿԱՐԱՐ ԿՇԻՌԸ ՄԵՏԱՂԱԴՐԱՄՆԵՐԻ ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐՈՒՄ ԿԱԶՄՈՒՄ Է 50.53%

Նոր անվանական արժեքով դրամանիշերի լայն շրջանառություն ապահովելու համար պահանջվում է որոշակի ժամանակահատված: Հատկապես թղթադրամների շրջանառության ապահովման կարևոր գործոն է համարվում բանկոմատների միջոցով թղթադրամների տրամադրումը: Նշենք, որ 2000 դրամ անվանական արժեքով թղթադրամները (տեխնիկական պատճառով) բանկոմատներում դեռ չեն տեղադրվում: Չնայած նշված հանգամանքին՝ 2020 թվականին 2000 դրամ անվանական արժեքով թղթադրամներն ունեցել են աճի միտում: Հաշվետու տարվա ընթացքում 2000 դրամ անվանական արժեքով թղթադրամի տեսակարար կշիռը տարվա սկզբի համեմատությամբ աճել է 19.16%-ով: Նշենք նաև, որ 2000 դրամ անվանական արժեքով թղթադրամների շրջանառության արդյունքում 1000 դրամ անվանական արժեքով թղթադրամների «բեռը» շրջանառությունում նկատելիորեն թեթևացել է:

Մետաղադրամների անվանական արժեքների տեսակարար կշիռներում 2020 թվականին էական փոփոխություններ չեն գրանցվել: Մետաղադրամների տեսակարար կշիռը, գումարային առումով, ընդհանուր կանխիկ դրամի ծավալում կազմել է 3.03%, իսկ քանակական առումով՝ 72.08%:

Կենտրոնական բանկը, բացի դրամաշրջանառության ապահովումից, իրականացնում է նաև հուշադրամների թողարկում:

Հուշադրամների թողարկման նպատակն է.

- լայնորեն ներկայացնել հայ հասարակությանը և միջազգային հանրությանը ազգային արժեքները, մշակույթն ու պատմությունը,
- բավարարել հասարակության հավաքորդական և ներդրումային պահանջարկը,
- բավարարել հասարակության՝ ներկայացուցչական և նվիրատվական առարկաների պահանջարկը:

Հուշադրամները թողարկվում են ի հիշատակ առանձին անհատների, նշանավոր իրադարձությունների հոբելյանների ու տարեդարձերի, շրջակա միջավայրի և այլ երևույթների կապակցությամբ:

Ներդրումային մետաղադրամները (ներդրումային դրամները) թողարկվում են որպես ներդրումային միջոց, որը թույլ է տալիս հասարակությանը կատարել երկարաժամկետ խնայողություններ: Ներդրումային դրամները հատվում են բարձր հարգի թանկարժեք մետաղներից՝ հիմնականում ոսկուց և արծաթից, և նախատեսված չեն շրջանառության համար: Ներդրումային դրամներն ունեն անվանական արժեք, մետաղի արժեքին մոտեցված վաճառքի և հետգնման գին:

Թանկարժեք մետաղների համայնքում Հայաստանի հեղինակության բարձրացման և պատմական ու մշակութային արժեքների ճանաչման և տարածման նպատակով 2020 թ. մեկնարկել է «Նոյյան տապան» ոսկե ներդրումային դրամների թողարկման ծրագիրը, որն ապահովել է ՀՀ ոսկե ներդրումային դրամների 4 քաշային տարբերակների (1 գ, ¼, ½ և 1 ունցիա) հատումն ու տարածումը աշխարհի տարբեր երկրներում:

Ավանդույթի համաձայն՝ 2020 թ. ՀՀ կենտրոնական բանկը թողարկել է մի շարք հուշադրամներ՝ նվիրված հայ անվանի անհատներ Անրի Վեռնոյի, Հրաչյա Ներսիսյանի, Ժանսեմի, Եղիշե Թադևոսյանի ծննդյան հոբելյանական տարեդարձերին: Այս մեծանուն անհատներից յուրաքանչյուրը, շնորհիվ կինոարվեստի, թատրոնի, նկարչության ոլորտներում ձեռք բերած վաստակի և հաջողությունների, նշանակալի տեղ է վբաղեցնում հայկական և համաշխարհային մշակույթի պատմության մեջ: Հայ ազգային-ազատագրական շարժման հերոս, ֆիդայի Գևորգ Չավուշի ծննդյան հոբելյանի կապակցությամբ ևս թողարկվել է հուշադրամ,

որը համալրել է հայոց պատմության տարբեր ժամանակահատվածների վորավարներին նվիրված հուշադրամների շարքը:

2020 թ. Հայաստանը և նախկին ԽՍՀՄ երկրները նշել են Հայրենական մեծ պատերազմում ֆաշիստական Գերմանիայի և նրա դաշնակիցների դեմ տարած հաղթանակի 75-ամյա հոբելյանը: Այդ առիթով թողարկվել է հաղթանակի 75-ամյակին նվիրված հուշադրամ: Դրանով ՀՀ կենտրոնական բանկը մեկ անգամ ևս արժևորել է Հայրենական մեծ պատերազմում թշնամու դեմ հերոսաբար մարտնչած և նահատակված հայ ժողովրդի վավակների դերը հաղթանակի կերտման գործում:


Ինչպես և նախորդ տարիներին, 2020 թ. ՀՀ կենտրոնական բանկը սերտորեն համագործակցել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հետ, ինչի արդյունքում թողարկվել են Ամենայն Հայոց 125-րդ Կաթողիկոս Խրիմյան Հայրիկի ծննդյան 200-ամյակին և Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարին նվիրված հուշադրամները: «Սուրբ Էջմիածնի Մայր Տաճար» արծաթե հուշադրամը՝ 1 կգ քաշով, առանձնանում է տեխնիկական կատարման բարդ լուծումներով. օգտագործվել են ուլտրաբարձր ռելիեֆի փորագրության տեխնոլոգիա (Smartminting©), մասնակի ոսկեզօծում և գունավոր տամպոտպագրություն: Այս թողարկումներով կարևորվել է Հայ առաքելական եկեղեցու դերը մեր ժողովրդի հոգևոր կյանքում և ազգային դիմագծի պահպանման գործում:

Հավատարիմ մնալով արժույթի թողարկման ոլորտում ՀՀ կենտրոնական բանկի քաղաքականությանը, որը միտված է դրամանիշերի միջոցով հայ ժողովրդի դարավոր պատմության և մշակույթի տարածման ու ճանաչելիության ընդլայնմանը, յուրաքանչյուր տարի ՀՀ հուշադրամները ներկայացվում են միջազգային դրամագիտական մրցույթներում: 2020 թ. Ռուսաստանի Դաշնությունում անցկացված «Դրամների համաստեղություն-2020» 14-րդ միջազգային մրցույթում աշխարհահռչակ հայ կոմպոզիտոր և երաժշտագետ Կոմիտասի ծննդյան 150-ամյակին նվիրված հուշադրամը, որը թողարկվել էր 2019 թ., վբաղեցրել է 3-րդ տեղը «Տարվա հուշադրամը» անվանակարգում: Հերթական այս մրցանակը ՀՀ հուշադրամների թեմաների գաղափարական ընտրության, գեղարվեստական ձևավորման բարձր մակարդակի և հատման ժամանակակից տեխնոլոգիաների կիրառման արդյունք է:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՀՈՒՍՏՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

2020 թվականին ՀՀ համախառն միջազգային պահուստները նվազել են շուրջ 234 մլն ԱՄՆ դոլարով և տարեվերջին կազմել շուրջ 2,616 մլն ԱՄՆ դոլար (տե՛ս գծապատկեր 5):

Գծապատկեր 5. RA International Reserves in 2010-2020



Պահուստների նվազումը հիմնականում պայմանավորված էր շուրջ 559 մլն ԱՄՆ դոլարին համարժեք պետական պարտքի մայր գումարների և տոկոսագումարների մարմամբ: Միևնույն ժամանակ, տարվա ընթացքում իրականացվել է շուրջ 147 մլն ԱՄՆ դոլարին համարժեք արտարժույթի վուտ վաճառք ներքին շուկայում, իսկ ՀՀ Կառավարության համար այլ փոխարկումները կազմել են շուրջ 180 մլն ԱՄՆ դոլար: Ջուգահեռաբար՝ տարվա ընթացքում գրանցվել է շուրջ 347 մլն ԱՄՆ դոլարին համարժեք ներհոսք պետական փոխառությունների գծով, ՀՀ կենտրոնական բանկում առևտրային բանկերի թղթակցային հաշիվների մնացորդներն աճել են շուրջ 180 մլն ԱՄՆ դոլարով, ինչպես նաև շուրջ 25 մլն ԱՄՆ դոլարին համարժեք դրական ազդեցություն են ունեցել ԵՏՄ փոխգործակցության գծով հոսքերը:

ՀՀ միջազգային պահուստների մակարդակը շարունակել է համապատասխանել արտարժութային պահուստներին ներկայացվող հիմնական պահանջներին, մասնավորապես՝ հնարավոր արտաքին ցնցումները մեղմելու կարողության առումով: Այսպես՝ 2020 թվականի ընթացքում ՀՀ միջազգային պահուստներն ապահովել են ներմուծման շուրջ հինգ ամսվա, իսկ ընթացիկ պարտավորությունների սպասարկման՝ ավելի քան չորս տարվա ծածկույթ:

2020 թվականին ՀՀ կենտրոնական բանկը շարունակել է նվազագույն ռիսկերով ՀՀ միջազգային պահուստների կառավարման իր որդեգրած ռազմավարությունը, որն ուղղված է միջազգային պահուստների ապահովության, իրացվելիության ու արդյունավետ կառավարման ապահովմանը:

ՓՈՂԵՐԻ ԼՎԱՑՄԱՆ ԵՎ ԱՆԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ ԵՎ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ

Այս համատեքստում կատարվում են ՓԼ/ԱՖ ռազմավարական և թեմատիկ (ոլորտային) վերլուծություններ, ՓԼ/ԱՖ-ի դեմ պայքարի ազգային ռիսկերին համահունչ գործառնական վերլուծություններ, հնարավոր կասկածներ պարունակող ակդակների հետ կապված կանխարգելիչ միջոցառումներ, այդ թվում՝ ՓԼ/ԱՖ հիմնավոր կասկածների առնչությամբ իրավապահ մարմիններին ծանուցումների տրամադրմանը, օրենսդրության վարգացմանը, ներպետական և միջազգային համագործակցության կատարելագործմանն ուղղված աշխատանքներ:

Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման (ՓԼ/ԱՖ) դեմ պայքարի գործառույթը իրականացվում է Կենտրոնական բանկի ներքո գործող Ֆինանսական դիտարկումների կենտրոնի (ՖԴԿ) կողմից: Այս համատեքստում կենտրոնի հիմնական գործառույթներն են ՓԼ/ԱՖ-ի դեմ պայքարի նպատակով տեղեկությունների հավաքագրումը, վերլուծությունը և փոխանակումը: Կենտրոնն այս գործառույթներն իրականացնում է՝ հանդես գալով որպես միջնորդ հաշվետու անձանց և իրավապահ մարմինների միջև:

Ռազմավարական և թեմատիկ վերլուծություններ

2020 թ. իրականացվել են ՓԼ/ԱՖ ռիսկերի ազգային գնահատման հերթական՝ 2017-2019 թթ. ժամանակահատվածին անդրադարձող շրջափուլի աշխատանքներ այդ նպատակով ձևավորված, ՖԴԿ համակարգմամբ գործող աշխատանքային խմբի կողմից: Նախորդ շրջափուլի համեմատությամբ բարելավվել է ռիսկերի ազգային գնահատման մեթոդաբանությունը, մասնավորապես՝ վերանայվել են նախորդող հանցագործություններին առնչվող սպառնալիքների և դրանց նկատմամբ խոցելիությունների գնահատման մեթոդներն ու գործիքները: Գնահատման նպատակով մշակվել են ՓԼ/ԱՖ ազգային ռիսկերի վերհանման համար անհրաժեշտ տեղեկությունների վերաբերյալ հարցաշարեր, համապատասխան գերատեսչություններից հավաքվել և վերլուծվել են նշված տեղեկությունները, պատրաստվել է վերլուծության առաջին նախագիծը, որը ներկայում գտնվում է համաձայնեցման փուլում: Վերլուծության արդյունքների օգտագործմամբ ՓԼ/ԱՖ-ի դեմ պայքարում ներգրավված հանրային մարմինները և մասնավոր անձինք իրենց ջանքերն ուղղում են դեպի բացահայտված բարձր ռիսկերը՝ իրականացնելով դրանց վսպմանն ուղղված հասցեական միջոցառումներ:

ՖԴԿ-ի կողմից իրականացվող ռազմավարական վերլուծությունները նպատակաուղղված են ՓԼ/ԱՖ համակարգային, իսկ թեմատիկ վերլուծությունները՝ ոլորտային ռիսկերի բացահայտմանը և բացահայտված ռիսկերին համարժեք միջոցառումների ձեռնարկմանը:

Գործառնական վերլուծություններ

2020 թ. նկատելիորեն աճել է դրամական փոխանցում իրականացնող կազմակերպությունների կողմից, ի կատարումն ՓԼ/ԱՖ-ի դեմ պայքարի օրենսդրության պահանջների, ներկայացված կասկածելի գործարքի մասին հաշվետվությունների թիվը, ինչպես նաև առաջին անգամ այդպիսի հաշվետվություններ են ստացվել նոտարներից և ՀՀ իրավաբանական անձանց գրանցման ռեգիստրից: Նշվածը վկայում է ՓԼ/ԱՖ-ի դեմ պայքարի համակարգում հաշվետու անձանց ներգրավվածության ընդլայնման մասին:

ՖԴԿ-ի կողմից իրականացվող գործառնական վերլուծություններն ուղղված են ՓԼ/ԱՖ հնարավոր դեպքերի բացահայտմանը, ըստ անհրաժեշտության՝ կանխարգելիչ միջոցառումների իրականացմանը և ՓԼ/ԱՖ հիմնավոր կասկածների առնչությամբ իրավապահ մարմիններին ծանուցումների տրամադրմանը:

Վերլուծություններում հաճախակի հանդիպող սխեմաներից կարելի է առանձնացնել հետևյալները.

- ՔԱՈՒԱ-ների մասնակցությամբ ֆինանսական գործարքներ.
- Խարդախության տարատեսակ հանցագործություններով ձևավորված միջոցների տեղաբաշխմամբ ՓԼ սխեմաներ.
- Հարկային պարտավորություններից խուսափելու, ապօրինի ձեռնարկատիրություն իրականացնելու, տնտեսական գործունեության իրական ծավալները թաքցնելու միտում պարունակող ֆինանսական գործարքներ.
- Զանգվածային մարքեթինգի տարբեր մոդելների կիրառմամբ հանցավոր ճանապարհով ստացված միջոցների օրինականացման դեպքեր.
- ՀՀ բանկային համակարգի միջոցով ֆինանսական միջոցների տարանցիկ փոխանցումներ.
- Թմրանյութերի իրացման արդյունքում հանցավոր ճանապարհով ստացված միջոցների օրինականացման սխեմաներ.
- ՀՀ կենտրոնական բանկի և միջազգային կազմակերպությունների կողմից հրապարակված տիպաբանություններով նկարագրված սխեմաներին համապատասխանող այլ իրավիճակներ:

Ոչ բանկ հաշվետվություն տրամադրող անձանցից ստացված ԿԳՀ-ներում հանդիպել են դեպքեր, որոնք առնչվում են իրավաբանական անձի բաժնեմասնակցության և/կամ անշարժ գույքի շուկայական արժեքի թերագնահատմամբ կամ գերագնահատմամբ առուվաճառքի գործարքների միջոցով ՓԼ հնարավոր սխեմաներին, ինչպես նաև թմրանյութերի ապօրինի շրջանառության հետ կապված ֆինանսական գործարքներին:

Կանխարգելիչ միջոցառումներ

2020 թ. ընթացքում, կորոնավիրուսային համավարակով պայմանավորված, ՓԼ/ԱՖ հնարավոր ռիսկերի վսպման նպատակով անհրաժեշտություն է առաջացել ուղղորդել հաշվետվություն տրամադրող անձանց, մասնավորապես՝ գործող օրենսդրության շրջանակներում անդրադառնալով ռիսկերի գնահատման առանձնահատկություններին:

ՖԴԿ նախաձեռնությամբ Միջգերատեսչական հանձնաժողովին ներկայացվել և 2020 թ. դեկտեմբերի 8-ին հաստատվել է ահաբեկչության հետ կապված անձանց ազգային ցանկ, որը ներառում է 2020 թ. սեպտեմբերի 27-ից նոյեմբերի 10-ը Արցախի Հանրապետության դեմ սանձազերծված ռազմական գործողություններին նախորդող ժամանակահատվածում և դրանց ընթացքում Թուրքիայի օժանդակությամբ հավաքագրված և Ադրբեջան տեղափոխված վարձկանների ու ահաբեկիչների (150 ֆիզիկական անձ և 12 կազմակերպություն) վերաբերյալ տվյալներ: Ահաբեկչության հետ կապված անձանց ցանկը 2020 թ. դեկտեմբերի 10-ին հրապարակվել է ՖԴԿ կայքէջում, ինչի մասին իրազեկվել են նաև հաշվետվություն տրամադրող անձինք և պատկան գերատեսչությունները:

ԱՖ հնարավոր ռիսկերի արդյունավետ վսպման նպատակով հաշվետու ժամանակաշրջանում շարունակվել են կանխարգելիչ միջոցառումները՝ ուղղված միջազգային կառույցների կողմից կիրառվող սահմանափակումներին վերաբերող պահանջների կատարմանը, այդ թվում՝ ՖԴԿ կայքէջում ՄԱԿ-ի ԱԽ և ՖԱԹՖ համապատասխան ցանկերում կատարված թարմացումները հրապարակելու և հաշվետվություն տրամադրող անձանց իրազեկելու միջոցով:

Հաշվետվություն տրամադրող անձինք իրազեկվել են նաև առանձին կազմակերպությունների և երկրների կողմից կիրառվող սահմանափակումների վերաբերյալ՝ դրանց առնչվող հնարավոր ֆինանսական պատժամիջոցներից վերծ մնալուն ուղղված քայլեր ձեռնարկելու նպատակով:

Հաշվետու ժամանակահատվածում հաշվետվություն տրամադրող անձանց տրվել են հանձնարարականներ, որոնք ուղղված են եղել.

- Խարդախության սխեմաների և դրանցում հավանական ներգրավվածություն ունեցող անձանց հետ կապված կանխարգելիչ միջոցառումների ձեռնարկմանը.

Կանխարգելիչ միջոցառումները ներառում են հաշվետվություն տրամադրող անձանց տրվող հանձնարարականները՝ ուղղված ռազմավարական և գործառնական վերլուծությունների արդյունքում բացահայտված ՓԼ/ԱՖ ռիսկերի վսպմանը, ՖԴԿ կայքէջում թիրախային ֆինանսական պատժամիջոցների անհապաղ կիրառման նպատակով միջազգային ցանկերում տեղի ունեցող փոփոխությունների վերաբերյալ հրապարակային տեղեկացումների տեղադրումը, հաշվետվություն տրամադրող անձանց համար կազմակերպվող ուսուցումները և այլն:

- Առանձին հաճախորդների գործարքների և գործարար հարաբերությունների հավելյալ ուսումնասիրությանը.
- Առանձին գործարքներում ՓԼ հնարավոր ռիսկերով պայմանավորված միջոցների արտահոսքի կանխարգելմանն ուղղված միջոցառումների ձեռնարկմանը.
- Հաշվետվություն տրամադրող անձանց կողմից ՓԼ/ԱՖ-ի դեմ պայքարի օրենսդրությամբ սահմանված մի շարք պարտականությունների կատարմանն առնչվող պահանջների պարզաբանմանը:

Հաշվետու ժամանակահատվածում բանկերը միայն ԿԳՀ-ներում ներառված դրվագներով շուրջ 60 դեպքում մերժել են բարձր ռիսկային գնահատված գործարքների իրականացումը կամ դադարեցրել հաճախորդի հետ հաստատված գործարար հարաբերությունները:

Օրենսդրության զարգացում

Գործառնական ռիսկերի նվազեցման և ոչ ավտոմատացված եղանակով հաշվետվությունների ներկայացման քանակի և, դրանով պայմանավորված, մարդկային ռեսուրսների տնտեսման նպատակով հաստատվել է բանկերի կողմից պարտադիր տեղեկացման ենթակա գործարքների և կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվությունների նոր ձևը, առցանց տրամադրման կարգը և ժամկետները նախատեսող իրավական ակտը: Գործարկվել է ՖԴԿ հաշվետվությունների տրամադրման առցանց համակարգը: Նախագծվել է նաև նույն համակարգով նոտարների կողմից հաշվետվությունների տրամադրման կարգ նախատեսող իրավական ակտ, որը ներկայում համաձայնեցման փուլում է:

ՓԼ/ԱՖ-ի դեմ պայքարի համակարգի արդյունավետության կարևորագույն տարրերից է միջազգային ստանդարտները լավագույնս արտացոլող և բացահայտված ՓԼ/ԱՖ ռիսկերը կսպող օրենսդրությունը:

Համագործակցություն

ՖԴԿ-ն շարունակել է համագործակցությունը միջազգային կառույցների հետ: Այսպես՝ էգմոնտ խմբի հետ համագործակցության շրջանակներում ՖԴԿ ներկայացուցիչն ընտրվել է այդ խմբի գործադիր կոմիտեում «Եվրոպա II» տարածաշրջանի ներկայացուցիչ, իսկ ՖԴԿ-ն ներգրավված է եղել էգմոնտ խմբի մի շարք ծրագրերում: Վարշավայի կոնվենցիայի Կողմերի համաժողովում ՖԴԿ մեկ այլ ներկայացուցիչ վերընտրվել է որպես Բյուրոյի անդամ:

2020 թ. նոյեմբերին Եվրոպայի խորհրդի ՄԱՆԻՎԱԼ հանձնախմբին ներկայացվել է ՀՀ ՓԼ/ԱՖ-ի դեմ պայքարի համակարգի 5-րդ փուլի գնահատման հաշվետվությամբ արձանագրված հանձնարարականների կատարման վերաբերյալ 2-րդ հերթական Առաջընթացի հաշվետվության շրջանակներում ՀՀ-ի կողմից իրականացված քայլերի վերաբերյալ տեղեկատվությունը: Նշված քայլերի թվում հատկանշական է ֆինանսական և ոչ ֆինանսական հաստատությունների հաճախորդների իրական շահառուների բացահայտման, պատշաճ ուսումնասիրության այլ պահանջների՝ միջազգային ստանդարտներին համապատասխանող նորմերը ՓԼ/ԱՖ-ի դեմ պայքարի հայաստանյան համակարգում ինտեգրելու նպատակով համապատասխան օրենսդրական փոփոխությունների նախագծի ներկայացումը ՀՀ Ազգային ժողովին:

ՓԼ/ԱՖ դեպքերի բացահայտման, կանխման և խափանման նպատակով կարևոր նշանակություն ունի ՖԴԿ-ի և իրավապահ մարմինների միջև տեղեկությունների փոխանակումը, համատեղ քննարկումների և ուսուցումների իրականացումը:

Վիճակագրություն

Համաձայն «Պաշտոնական վիճակագրության մասին» ՀՀ օրենքի՝ ՀՀ կենտրոնական բանկը (ՀՀ ԿԲ) հանդիսանում է պաշտոնական վիճակագրության արտադրող և «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքով ամրագրված դրույթներով հավաքագրում, ամփոփում և հրապարակում է դրամավարկային, ֆինանսական հատվածի և արտաքին հաշիվների վիճակագրությունը, որն օգտագործվում է ՀՀ ԿԲ-ի կողմից դրամավարկային քաղաքականության մշակման, ֆինանսական կայունության ապահովման, ֆինանսական վերահսկողության, վճարահաշվարկային համակարգի զարգացման և այլ գործառույթների իրականացման, ինչպես նաև ՀՀ ԿԲ-ից դուրս՝ պետական գերատեսչությունների, ֆինանսական շուկայի մասնակիցների, միջազգային ֆինանսատնտեսական կազմակերպությունների, վանգվածային լրատվության միջոցների և հանրության կողմից՝ տնտեսական վերլուծությունների, ներդրումային որոշումների և տնտեսական քաղաքականությունների մշակման համար:

Չնայած տարվա ընթացքում COVID-19 համավարակի բռնկմանը և պատերազմական գործողություններին՝ ՀՀ ԿԲ-ին հաջողվել է ապահովել ժամանակին և արժանահավատ տեղեկատվության հրապարակումը[7], ինչպես նաև աշխատել հրապարակվող տեղեկատվության շրջանակների ընդլայնման և հասանելիության ապահովման, հավաքագրվող վիճակագրության մեթոդաբանության կատարելագործման ու միջազգային չափորոշիչներին դրանց համապատասխանեցման ուղղությամբ:

Սկզբունքային փոփոխություններ են կատարվել ՀՀ ԿԲ-ի կողմից պարբերաբար հաշվարկվող և հրապարակվող բանկային տոկոսի հաշվարկային դրույքի հաշվարկման մեթոդաբանության մեջ[8]: Մասնավորապես՝ նոր կարգով հաշվարկներում ներառվում են միայն վարկերի տոկոսադրույքները (նախկինում՝ ավանդների և վարկերի տոկոսադրույքները), որոնք տրամադր-

[7] *ՀՀ կենտրոնական բանկը վիճակագրական տվյալները հրապարակում է ԿԲ տնային էջի «Վիճակագրություն» բաժնում (www.cba.am):*

[8] *Հիմք ընդունելով ՀՀ ԿԲ նախագահի կողմից ՀՀ բանկային տոկոսի հաշվարկային դրույքի հաշվարկման և սահմանման կարգի վերաբերյալ ընդունված որոշման (թիվ 1/212Լ 10.04.2020 թ.) դրույթները:*

վել են ՀՀ-ում գործող առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից (նախկինում՝ միայն առևտրային բանկերի կողմից): Համաձայն նոր կարգի՝ բանկային տոկոսի հաշվարկային դրույքը սահմանվում է՝ հաշվի առնելով հաշվարկված վարկերի տոկոսադրույքների միջին կշռված մակարդակը, շուկայում տոկոսադրույքների կառուցվածքը և միտումները, առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների վարկային պորտֆելների կառուցվածքը, միջազգային շուկաներից եկող ազդակները, տարածաշրջանային առանձնահատկությունները, սեզոնայնությունը և այլ կանխորոշող գործոններ: Վերջապես, վարկերի տոկոսադրույքների միջին կշռված մակարդակի հաշվարկները սկսեցին կատարվել եռամսյակային պարբերականությամբ՝ նախկին կարգով սահմանված ամսական պարբերականության փոխարեն:

Արտաքին հատվածի վիճակագրության բարելավման՝ ամբողջականության ապահովման և արժանահավատության բարձրացման նպատակով 2020 թվականին ՀՀ վճարային հաշվեկշռում իրականացվել են լրահաշվարկներ՝ ուղղված որոշ երևույթների գնահատմանը և վճարային հաշվեկշռում ներառմանը: Մասնավորապես՝ վերջին տարիներին գրանցվել է ֆիզիկական անձանց կողմից ավտոմեքենաների ներմուծման թռիչքաձև աճ, որոնց զգալի մասը այնուհետ արտահանվել է ԵԱՏՄ երկրներ: Ավտոմեքենաների արտահանման գործարքների ծավալը մեր կողմից գնահատվել է՝ հիմք ընդունելով ընտրանքային հետազոտությունների արդյունքները և այլ պաշտոնական վիճակագրական տեղեկատվության ուսումնասիրությունը: Նշենք, որ վերոնշյալ գործարքները չեն գրանցվել մաքսային վիճակագրության մեջ՝ ելնելով ԵԱՏՄ անդամ երկրների մաքսային կարգավորման առանձնահատկություններից: Վերանայվել են ճանապարհորդությունների գծով ծախսերը՝ պայմանավորված վերջին տարիներին զբոսաշրջության ոլորտում տեղի ունեցած փոփոխություններով, ինչպես նաև առաջին անգամ տրվել են գնահատականներ մանածագործական արտադրության մեջ վերամշակման ծառայությունների մասով: Արդյունքում՝ էականորեն բարելավվել են ապրանքների և ծառայությունների հոդվածների գնահատականները: Բացի այդ, առաջին անգամ ՀՀ արտաքին հաշիվների ֆինանսական հոսքերը և դիրքերը պատրաստվել են ՀՀ ֆինանսական հաշվի կառուցման ներքո՝ միջազգային մեթոդաբանական պահանջներին համապատասխան, ինչը

վերլուծության լրացուցիչ հնարավորություններ է տալիս օգտագործողներին[9]:

COVID-19 համավարակը հանգեցրել է առցանց առևտրի կտրուկ վարգացմանը, որի պայմաններում ստեղծվել է բացառիկ հնարավորություն առցանց վաճառքով զբաղվող կազմակերպությունների ինտերնետային կայքերից սպառողական ապրանքների գների վերաբերյալ լայնածավալ տվյալների հավաքագրման, մշակման և գնաճի ընթացիկ մակարդակի գնահատման մեջ կիրառման համար: Մասնավորապես՝ սպառողական վամբյուղում ներառված մի շարք ապրանքատեսակների մասով օրական հավաքագրվում է տեղեկատվություն վաճառքի գների վերաբերյալ, որն այնուհետև ամփոփվում և օգտագործվում է ամսական գնաճի մակարդակի գնահատման նպատակով:

ՀՀ ԿԲ վիճակագրության վարչության և Հայաստանի ամերիկյան համալսարանի (ՀԱՀ) Manoogian College of Business & Economics-ի միջև կնքված համատեղ համաձայնագրի շրջանակում ՀԱՀ-ը հաշվարկելու և հրապարակելու է Տնտեսական ակտիվության և սպառողների վստահության ինդեքսները, ինչը հնարավորություն կտա ոչ միայն ստանալու օպերատիվ գնահատականներ տնտեսության իրական հատվածում տեղի ունեցող վարգացումների վերաբերյալ, այլև, նախագծի մեջ ներգրավելով ուսանողների ներուժը, խթանելու ակադեմիական աշխարհի և տնտեսության իրական հատվածի միջև առկա կապերի սերտացումը: Տարվա ընթացքում ՀՀ ԿԲ վիճակագրության վարչությունը վերոնշյալ երկու կարևորագույն բաղադրյալ տնտեսական ինդեքսների հաշվարկման մեթոդաբանության մասով իրականացրել է ՀԱՀ մասնագետների հրահանգավորման և փորձագիտական խորհրդատվության աշխատանքներ:

Կատարվել են մեծածավալ աշխատանքներ Վարկային ռեգիստրում առկա վարկային պատմությունների վերաբերյալ տեղեկատվության ամբողջականության ապահովման և արժանահավատության բարձրացման ուղղությամբ: Մասնավորապես՝ COVID-19 համավարակի պայմաններում հաջողվել է ամբողջականացնել Վարկային ռեգիստրի նոր համակարգի ձևավորումը և առկա տվյալները, ինչպես նաև ընդլայնել դրանց արժանահավատության ապահովման համար կատարվող ստուգումների տեսակները: Բացի այդ, 2020 թվականի ընթացքում կատարվել են COVID-19 համավարակից տուժած շահառուների, այսպես

[9] *Հաշվարկների արդյունքները փոխանցվել են ՀՀ վիճակագրական կոմիտեին և օգտագործվելու են ՀՀ ֆինանսական հաշվի կառուցման նպատակով:*

կոչված, «վարկային արձակուրդների» և պատերազմի մասնակից վարկառուների՝ մեծ ծավալով վարկային պատմությունների փոփոխությունների ստուգման գրառման գործառույթներ, որոնք պայմանավորված են եղել վարկառուների վարկային պատմությունների չվատթարացման անհրաժեշտությամբ, կրել են ոչ ստանդարտ բնույթ և վերաբերել հավարավոր վարկային պատմությունների:

04 ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

ԿԲ անվտանգություն և գործընթացների անընդհատություն

Գիտելիք և մարդկային ռեսուրսներ

Հաղորդակցում և հաշվետվողականություն

Կենտրոնական բանկը, որպես արդյունավետության ապահովմանը միտված կառույց, մշտապես վերանայում է իր գործընթացները՝ դրանք դարձնելով ժամանակի պահանջներին համահունչ և ճկուն:

2019-2020 թթ. Կենտրոնական բանկում տեղի ունեցան կառուցվածքային մի շարք փոփոխություններ, մասնավորապես՝ ձևավորվեցին դեպարտամենտներ՝ Ֆինանսական շուկաների, Մակրոտնտեսական, Ֆինանսական վերահսկողության և լիցենզավորման, Ֆինանսական կայունության, Կորպորատիվ ծառայությունների և վարգացման: Վերջինիս ստեղծմամբ մեկ Դեպարտամենտում ներգրավվեցին բոլոր օժանդակող ստորաբաժանումները և գործառույթները՝ ընթացիկ կառավարման արդյունավետությունը բարձրացնելու, որակյալ ներքին ծառայություններ մատուցելու և ինստիտուցիոնալ վարգացմանը նպաստելու նպատակով:

«Մեկ տանիքի տակ» սկսեցին գործել Կենտրոնական բանկի խնդիրների իրականացմանն աջակցող գործառույթները, ձևավորվեցին Գործընթացների անընդհատության կառավարման և Որակի հավաստիացման խմբերը, ինչպես նաև Նախագծերի կառավարման կենտրոնը: Կենտրոնական բանկի ստորաբաժանումների և աշխատակիցների սպասարկման հետ կապված բազմաթիվ աշխատանքներ սկսեցին իրականացվել՝ կիրառելով «մեկ պատուհանի» սկզբունքը: Այս տրամաբանությամբ Անձնակազմի կառավարման վարչությունը վերանվանվեց Անձնակազմի և կորպորատիվ մշակույթի վարչություն՝ նպատակ ունենալով շեշտադրելու Կենտրոնական բանկի աշխատակցի դերը, ապահովելու աշխատակիցներին ուսուցման և վարգացման բացառիկ հնարավորություններով, նպաստելու Կենտրոնական բանկում միասնական կորպորատիվ մշակույթի ձևավորմանն ու տարածմանը, ինչպես նաև ավելի հարմարավետ դարձնելու աշխատակիցների սպասարկումը:

ԿԲ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԱՆԸՆԴՀԱՏՈՒԹՅՈՒՆ

2020 թ. բարդ տարի էր բոլոր առումներով: COVID-19-ով պայմանավորված՝ ամեն օր անհրաժեշտ էր լինում դժվար որոշումներ կայացնել՝ ապահովելու և՛ Կենտրոնական բանկի, և՛ ֆինանսական համակարգի անխափան աշխատանքը:

COVID-19-ը ամբողջ աշխարհում մարտահրավեր նետեց մինչ այդ մշակված գործընթացների անընդհատության պլաններին: Կենտրոնական բանկերը և, ընդհանուր առմամբ, ցանկացած կազմակերպություն կարող են ունենալ լավագույն տեխնոլոգիաները, լավագույն և հասուն գործընթացները, սակայն դրանք չեն կարող աշխատել առանց մարդկանց՝ անկախ դրանց ինքնաշխատ լինելու աստիճանից և հնարավորություններից:

Մինչև COVID-19-ով պայմանավորված առաջին սահմանափակումները, ԿԲ-ն հեռավար աշխատանք ապահովում էր միմիայն ծայրահեղ անհրաժեշտության դեպքում՝ անվտանգության աննախադեպ միջոցառումներ կիրառելուց հետո: Երբ ԿԲ-ում առաջին վարակման դեպքերը գրանցվեցին, ղեկավարությունը խնդիր դրեց աշխատելու նվազագույն աշխատակազմով. աշխատակիցների զգալի մասը պետք է աշխատեր հեռավար: Փակ սահմաններով երկրի պայմաններում նման խնդրի լուծումն անհնար էր թվում, ինչը, սակայն, բարեհաջող լուծվեց:

2020 թ. երկրորդ սահմանափակումներից հետո, երբ, թվում էր, COVID-19-ով պայմանավորված մարտահրավերները հիմնականում հաղթահարված են, սկսվեց պատերազմը, որը լրացուցիչ մարտահրավերներ առաջ բերեց: Կենտրոնական բանկի և ֆինանսական հատվածի վրա սկսվեցին աննախադեպ կիբեռհարձակումներ, որոնց ուժգնությունը, սովորական օրերի հետ համեմատած, մի քանի հարյուր անգամ ավելի մեծ էր:

ԿԲ համապատասխան ստորաբաժանումների և ֆինանսական հատվածի գործընկերների միահամուռ ջանքերով 24/7 ռեժիմով հնարավոր եղավ դիմագրավել բոլոր գրոհներին, և որևէ կորուստ չարձանագրվեց կիբեռհարձակումների պատճառով:

Նկար 2-ում ցուցադրված են պատերազմին նախորդող օրերին (23/09 - 26/09/2020) ԿԲ ուղղությամբ հարձակումները, որոնք կարելի է դիտարկել որպես «ֆոնային հետապոտող»:

Նկար 3-ում ցուցադրված է 27/09 – 27/10/2020 ժամանակահատվածի հարձակումների բաշխվածությունը, ըստ որի՝ որոշակի օրերի հարձակումների քանակը գերազանցել է մի քանի միլիոնը:

Հաշվի առնելով պատերազմի վարգացման հնարավոր սցենարները՝ ներդրվեցին պաշտպանության մի քանի մակարդակի՝ ֆիզիկական, տեխնիկական և տեխնոլոգիական շերտեր, որոնք ցանկացած պարագայում պետք է ապահովեին ինչպես ԿԲ, այնպես էլ ֆինանսական համակարգի անխափան աշխատանքը: Մասնավորապես.

- գերկարճ ժամկետում կարգի բերվեցին ԿԲ ապաստարանները և վերապինվեցին համապատասխան տեխնիկայով,
- իրականացվեցին քաղաքացիական պաշտպանության փորձարկումներ,
- կայացվեցին ռազմավարական որոշումներ կապի և տեխնոլոգիաների անխափան աշխատանքի ապահովման նպատակով,
- գույքագրվեց և թարմացվեց Կենտրոնական բանկի և ֆինանսական համակարգի համար «կրիտիկական գիտելիքներ ունեցող» անձանց ցանկը, ովքեր պատրաստակամ էին միմյանց օգնելու՝ ըստ անհրաժեշտության:


Թեև ԿԲ-ի և ֆինանսական հատվածի վրա աննախադեպ գրոհները որևէ միջադեպի չհանգեցրին, այնուհանդերձ, առաջացած մարտահրավերները մի շարք ուղղություններով առաջնահերթ դարձրին մեր անելիքները գալիք տարիների համար:

Կենտրոնական բանկը, ֆինանսական համակարգի կայունության տեսանկյունից կարևորելով կիբեռհարձակումների դեմ արդյունավետ պայքարը և գործընթացների անընդհատության կառավարումը, շարունակելու է առկա ենթակառուցվածքի վարգացումը, ֆինանսական համակարգի մասնակիցների միջև տեղեկատվության փոխանակման հարթակ ստեղծելու ուղղությամբ աշխատանքները, ինչպես նաև կիբեռանվտանգության ոլորտում գիտելիքի կուտակման և տարածման կարևոր առաքելությունը:


Պատերազմի օրերին իրականացված հնարավոր ու անհնար բոլոր գործողությունները, ստացված արդյունքները մանրամասն ամփոփված և մշակված են, որոնք մեզ օգնելու են վերանայել մեր

պլանները ԿԲ գործընթացների անընդհատության կառավարման և ֆինանսական համակարգի ընդհանուր կայունության տեսանկյունից:

Նկար 2. **23/09 - 26/09/2020 ԿԲ ուղղությամբ հարձակում ները**



Նկար 3. **27/09 - 27/10/2020 ԿԲ ուղղությամբ հարձակում ները**



ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐ

ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՄԻՋԻՆ ԹԻՎԸ

765

306
ՏՂԱՄԱՐԴ

459
ԿԻՆ

ԱՇԽԱՏԱՆՔԻՑ ԱԶԱՏՎԱԾ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐ

101

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՆՑԱԾ ԱՆՁԻՆՔ

43

ՄԻՋԻՆ ՏԱՐԻՔԸ

41

ԻՍԱՀԱԿ ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԿՐԹԱԹՈՇԱԿ

3 դիմորդ

Հաղթողները՝

ՀՊՏՀ 3



Իսահակ Իսահակյան

Հայ անվանի տնտեսագետ, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի առաջին նախագահ

Իսահակ Իսահակյանի անվան կրթաթոշակը ներդրվել է **2003 թվականին**, և մինչ օրս տնտեսագիտական կրթություն ունեցող լավագույն **104 ուսանող** ստացել է կրթաթոշակ:

ՍԵՐՏԻՖԿԱՑԻԱ

2020 թվականին ԿԲ գիտահետազոտական պրակտիկա անցած՝ Հայաստանի Հանրապետության բուհերի ուսանողների թիվը՝

62

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄ

70

2019 թվականին Հարվարդի Դեյվիս կենտրոնում ԿԲ արդի խնդիրներին վերաբերող հետազոտություն իրականացրած աշխատակիցներ

1

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄՆԵՐ

ՆԵՐՔԻՆ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

55
ԱՇԽԱՏԱԿԻՑ

ԱՐՏԱՔԻՆ ՍՏԱՆԴԱՐՏ ՏԵՂՈՒՄ

26
ԱՇԽԱՏԱԿԻՑ

ԱՌՑԱՆՑ ՎԵԲԻՆԱՐՆԵՐ, ՍԵՄԻՆԱՐՆԵՐ

540
ԱՇԽԱՏԱԿԻՑ

ԳԻՏԵԼԻՔ ԵՎ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Համաշխարհային միտումներին համահունչ՝ կենտրոնական բանկերը հանդես են գալիս ֆինանսական համակարգի շարժիչ ուժի դերում և խրախուսում նոր աշխատանքային միջավայրերի ձևավորումը: Իր ռազմավարական նպատակներին հասնելու համար Կենտրոնական բանկը ձևավորել է մարդակենտրոն, նորարար և անընդհատ վարգացող աշխատանքային միջավայր՝ արժևորելով վերլուծական միտքը, վարգացումը և թիմային աշխատանքը:

ԿԲ քաղաքականության հիմքում տաղանդավոր մասնագետների ներգրավումն է, վարգանալու, գիտելիքներն ու հմտությունները խորացնելու և կատարելագործելու հնարավորության ընձեռումը, աշխատակիցների համար աշխատանքային բարենպաստ պայմանների ապահովումն ու փոխհատուցման արդար համակարգի վրա հիմնվելով՝ նրանց աշխատանքի գնահատումը: Կենտրոնական բանկում անընդհատ թարմացվող գիտելիքը և շարունակական կրթությունը աշխատանքային անհրաժեշտություն են և ոչ՝ ինքնանպատակ: Այս առումով, Կենտրոնական բանկի աշխատակիցները, արագ ադապտացվելով աշխարհում տեղի ունեցող վարգացման և վերապատրաստման գործիքակազմի փոխակերպությանը, ակտիվորեն սկսեցին մասնակցել առցանց դասընթացների, սեմինարների, քննարկում-հանդիպումների և կոնֆերանսների:

2020 թվականը լի էր մարտահրավերներով՝ սկսած համավարակով, վերջացրած պատերազմով: Կենտրոնական բանկն իր առաքելության շրջանակներում ապահովել է աշխատանքների անընդհատությունը՝ աշխատակիցների համար նպաստավոր աշխատանքային պայմաններ և միջավայր ձևավորելու միջոցով: Բարդագույն տարին պահանջում էր ոչ ստանդարտ լուծումներ և դժվար որոշումներ:

Մեծ կարևորություն տալով աշխատակիցների առողջության պահպանմանն ու անվտանգության ապահովմանը՝ որոշում կայացվեց բանկում աշխատել խիստ սահմանափակ կազմով: Մեծ թվով աշխատակիցների հնարավորություն տրվեց աշխատանքը կատարել տնից՝ ունենալով ծրագրային ապահովություն և խստորեն հետևելով տեղեկատվական անվտանգության կանոններին:

Այն աշխատատեղերի համար, որոնք կբաղեցնող աշխատակիցների ֆիզիկական ներկայությունը բանկի տարածքում պարտադիր էր, սահմանվեց հերթափոխով աշխատանքի գրաֆիկ՝ պահպանելով համավարակի կանոնները և ապահովելով փոխարինելիություն:

Առավել ուշադրություն դարձվեց այն աշխատակիցներին, ովքեր գտնվում էին COVID-19 համավարակի խոցելի խմբում:

Այսպիսով՝ անցումը հեռավար աշխատանքի իրականացվեց բավականին սահուն, և որևէ կերպ չխաթարվեցին աշխատանքի արդյունավետությունն ու շարունակականությունը:

Փորձելով հարմարվել նոր իրականության պայմաններում աշխատանքին՝ Կենտրոնական բանկը կանգնեց մեկ այլ մարտահրավերի առջև. սկսվեց պատերազմը: 2020 թ. սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի Հանրապետության կողմից սանձազերծված պատերազմին իրենց մասնակցությունն ունեցան նաև ԿԲ աշխատակիցները: 27 աշխատակից զորակոչվեց կամ կամավորագրվեց՝ պաշտպանելու հայրենիքի սահմանները: Ցավոք, եղան նաև կորուստներ: Պատերազմին անմիջական մասնակցություն չունեցած ԿԲ աշխատակիցները կամավորության հիմունքներով իրենց թե՛ ֆինանսական, թե՛ նյութական և թե՛ հոգեբանական աջակցությունը ցուցաբերեցին մեր հայրենակիցներին:

2020 թվականը, իր բոլոր դժվարություններով հանդերձ, մեկ անգամ ևս ցույց տվեց, որ անձնակազմը Կենտրոնական բանկի կարևորագույն հիմնասյուներից մեկն է: Բարձր մասնագիտական որակներ ունեցող, միջազգային հավաստագրեր ստացած ԿԲ աշխատակիցներն իրենց գիտելիքի, մտքի ճկունության և արհեստավարժության շնորհիվ այս բարդ և անկայուն ժամանակաշրջանում, վեր դասելով հանրային շահը, իրականացրին իրենց առջև դրված աշխատանքային խնդիրները՝ ապահովելով գործընթացների անընդհատությունը:

Կենտրոնական բանկը ոչ միայն մասնակցել է գործընկեր կառույցների կողմից կազմակերպվող միջոցառումներին որպես ակտիվ սպառող, այլև հյուրընկալել է Եվրասիական անդամ պետությունների կենտրոնական/ազգային բանկերի անձնակազմի վերապատրաստման հարցերով Կոորդինացիոն խորհրդի անդամներին: Այցի արդյունքում հաստատվել է համակարգող խորհրդի 2020 թվականի աշխատանքային ծրագիրը, ձևավորվել՝ Կենտրոնական (ազգային) բանկերի անձնակազմի 2021 թվականի մասնագիտական վերապատրաստման ծրագրերի շտեմարանը:

ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒՄ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

COVID - 19: Կենտրոնական բանկի թեժ գիծը աշխատել է արտակարգ ռեժիմով: Կենտրոնական բանկի մասնագետները պատասխանել են քաղաքացիների կողմից բարձրացված հարցադրումներին, ուղղորդել են և տրամադրել անհրաժեշտ տեղեկատվություն, ուսումնասիրել նրանց ներկայացրած բողոքները:

COVID - 19: Կենտրոնական բանկի կողմից արվել են հայտարարություններ՝ հաճախորդներին ուղղորդելով օգտվել առցանց ֆինանսական ծառայություններից, վճարահաշվարկային հավելվածներից և առցանց բանկային ծառայություններից, ինչի նպատակը ֆինանսական կազմակերպություններում հաճախորդների կուտակումներից խուսափումն էր, COVID-19 համավարակի տարածման կանխումը, ինչպես նաև ֆինանսական կազմակերպությունների գործառնական կարողությունների մեծացումը:

2020 թվականն առանձնացավ մարտահրավերներով, ինչը Կենտրոնական բանկի համար առավել կարևորեց ֆինանսական շուկայում գործող կազմակերպությունների գործունեության, ԿԲ նախաձեռնությունների վերաբերյալ հանրության իրազեկման աշխատանքները:


Ճգնաժամային իրավիճակի պայմաններում ֆինանսաբանկային համակարգն իրավացիորեն հայտնվում է ուշադրության կենտրոնում, դառնում ավելի վգայուն, բնակչության համար համակարգին առնչվող խնդիրները ստանում են առաջնային նշանակություն: Այս առումով վճռորոշ դեր են խաղում ոլորտների պատասխանատու մարմինների գործողությունները և դրանց վերաբերյալ հստակ տեղեկատվության տրամադրումը հանրությանը: Ըստ այդմ՝ Կենտրոնական բանկն աշխատանքային աննախադեպ ռեժիմով գործակցել է բանկերի և վարկային կազմակերպությունների հետ, որի արդյունքում ֆինանսական կառույցների կողմից իրենց հաճախորդներին ցուցաբերված աջակցության՝ վարկային արձակուրդների կամ այլ կերպ վերանայված վարկային պարտավորությունների մասին հանրությունը տեղե-

կացվել է հաղորդագրությունների, ռեպորտաժների, հարցազրույցների միջոցով, օգտագործվել են սոցցանցային հարթակները ևս:

Կենտրոնական բանկի հիմնական նպատակների իրականացման թափանցիկության ապահովման շրջանակում ֆինանսական շուկայի մասնակիցները և հանրությունն իրավեկվել են դրամավարկային քաղաքականության, ֆինանսական կայունության և վերահսկողության ապահովման ոլորտում Կենտրոնական բանկի գործողությունների, ծրագրերի, նախաձեռնությունների մասին: Հիմնական քաղաքականությունների հաղորդակցման համատեքստում իրականացված բարելավումները մանրամասն նկարագրված են «Գների կայունության ապահովում» և «Ֆինանսական կայունության ապահովում» բաժիններում: ԶԼՄ-ներով հարցազրույցների և հեռուստատեսային հաղորդումների միջոցով հանրությունը տեղեկացվել է, որ ԿԲ-ի կողմից լիցենզավորված կազմակերպություններն իրենց գովազդներում պարտադիր նշում են ԿԲ-ի կողմից վերահսկվելու մասին:

Տարվա ընթացքում հրապարակվել է ռեպո (վերաֆինանսավորման) գործառնությունների տոկոսադրույքների մասին ԿԲ խորհրդի 8 որոշում, որոնցից յուրաքանչյուրին հաջորդել է ասուլիս՝ ԿԲ նախագահի մասնակցությամբ:

Կենտրոնական բանկն ակտիվորեն օգտագործել է սոցկայքերի հարթակները՝ հրապարակելով նորություններ, հաղորդա-



գրություններ, բանկի գործունեության մասին այլ նյութեր, արձագանքել հարցումներին և քաղաքացիների դիմումներին: Մասնավորապես՝ սոցցանցերի միջոցով ստացվել են ավելի քան 1200 հարցեր և տարբեր բովանդակությամբ դիմումներ:

Կենտրոնական բանկն իր գործունեության թափանցիկության ապահովման նպատակով հրապարակում է նաև մի շարք պարբերականներ, որոնք ներկայացնում են դրամավարկային քաղաքականության, ֆինանսական կայունության, ՓԼ/ԱՖ-ի դեմ պայքարի, դրամաշրջանառության ոլորտներում բանկի կողմից իրականացվող աշխատանքները: Մասնավորապես՝ «Գնաճի հաշվետվություն» եռամսյակային պարբերականում անդրադարձ է արվում «Դրամավարկային քաղաքականության ծրագրին», որը ներառում է կանխատեսվող հորիզոնում դրամավարկային քաղաքականության ուղղությունները և դրանց ներքո գնաճի ու մակրոտնտեսական մյուս ցուցանիշների կանխատեսումները, որոնք հիմնված են ներկա իրավիճակի ԿԲ գնահատումների և ապագայի վերաբերյալ ենթադրությունների վրա՝ ներառելով ԿԲ գործողությունների ավդեցությունը: «Դրամավարկային քաղաքականության ծրագրի կատարման հաշվետվություն» բաժնում ներկայացվում են իրականացված դրամավարկային քաղաքականության արդյունքները և տնտեսության փաստացի վարգացումները: «Ֆինանսական կայունության հաշվետվություն» կիսամյակային պարբերականում արտացոլված են Հայաստանի ֆինանսական համակարգի կայունությանը սպառնացող հավանական ռիսկերի գնահատականը և ֆինանսական համակարգի՝ այդ ռիսկերը չեզոքացնելու կարողությունը: Կենտրոնական բանկը հանրությանն է ներկայացնում նաև «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի տարեկան հաշվետվությունը»: Վերջինիս բաղկացուցիչ տարրերից են ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան կազմված տարեկան համախմբված ֆինանսական հաշվետվությունները, որոնք աուդիտի են ենթարկվում միջազգային ճանաչում ունեցող անկախ աուդիտորական կազմակերպությունների կողմից: «Հայաստանի Հանրապետության հուշադրամներ» տարեկան պարբերականում հանրությանը ներկայացվում են թողարկվող ՀՀ հուշադրամների մասին տեղեկատվություն, տվյալ տարվա թողարկման ՀՀ հուշադրամների մասնակցությամբ անցկացված մրցույթների արդյունքները, ՀՀ հուշադրամներին առնչվող այլ նյութեր: «Տեղեկագիր» ամսական պարբերականում տեղ են գտնում Կենտրոնական բանկի խորհրդի նորմատիվ և անհատական որոշումները, Կենտրոնական բանկի

նախագահի որոշումները, այլ իրավական ակտեր, ինչպես նաև վիճակագրական ամփոփագիրը: Ֆինանսական դիտարկումների կենտրոնի տարեկան հաշվետվությունում ներկայացվում են ՓԼ/ԱՖ-ի դեմ պայքարի ոլորտում իրականացված աշխատանքները:

Այցելուների կենտրոն [10]

Այցելուների կենտրոնը Կենտրոնական բանկի կրթական-մշակութային գործառույթ իրականացնող ստորաբաժանում է, որի նպատակն է տարաբնույթ կրթական գործիքների՝ ստատիկ, թեմատիկ և ինտերակտիվ ցուցադրությունների միջոցով բարձրացնել ՀՀ ազգային արժույթի պատմության, Կենտրոնական բանկի գործունեության և դերի վերաբերյալ հանրային իրազեկվածությունը:

2020 թվականին աշխարհում և Հայաստանում նոր կորոնավիրուսային հիվանդության համավարակի պատճառով մեր թիմը կանգնեց լուրջ մարտահրավերների առջև, քանի որ դադարեցվեց/սահմանափակվեց կրթամշակութային և ժամանցային հաստատությունների գործունեությունը: Այդ իսկ պատճառով այցելությունները ԿԲ ԱԿ կտրուկ՝ 82,2 %-ով նվազեցին (2020 թ. սպասարկվել է 2075 այցելու՝ նախորդ տարվա 11 673 այցելուի փոխարեն):

Այս խնդիրը լուծելու համար որոշվեց ակտիվացնել Այցելուների կենտրոնի գործունեությունը վիրտուալ տարածքում՝ համացանցում: Մասնավորապես՝ Այցելուների կենտրոնի աշխատակիցների կողմից.

1. ստեղծվեցին 60 ֆինանսական խաղեր, խաչբառեր, որոնք տեղադրվեցին ԿԲ այցելուների կենտրոնի ֆեյսբուքյան էջում, իսկ տարեվերջին հրատարակվեցին «Ֆինանսական խաղեր, խաչբառեր» բրոշյուրի տեսքով, ինչպես նաև տեղադրվեցին ԿԲ այցելուների կենտրոնի տնային էջում,
2. մշակվեցին 31 պատմական նյութեր, որոնք նույնպես տեղադրվեցին Այցելուների կենտրոնի տնային և ֆեյսբուքյան էջերում:

Ըստ այդմ՝ էականորեն ակտիվացավ ԿԲ այցելուների կենտրոնի տնային և ֆեյսբուքյան էջերի աշխատանքը:



[10] *Մանրամասն տե՛ս visitorcentre.cba.am, museum.cba.am, www.cba.am կայքէջերում:*

ԱՅՑԵԼՈՒՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

Ֆեյսբուքյան էջ

ՀԵՏԵՎՈՐԴՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ	ՀԱՎԱՆՈՒՄՆԵՐԻ ՑՈՒՑԱՆԻՇԸ	ԱՌՆՎԱԶՆ 1 ԱՆԳԱՄ ԷՋԻ ՈՐԵՎԷ ԳՐԱՌՈՒՄ ՏԵՍԱԾ ՄԱՐԴԿԱՆՑ ԹԻՎԸ
+32.9%	+33.3%	~3 ԱՆԳԱՄ ԱՃ

Կայք

ՕԳՏՎՈՂՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ	ԴԻՏՈՒՄՆԵՐԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ	ԴԻՏՈՒՄՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ
+34.06%	+26.1%	+6.6%



ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ԱՅՑԵԼՈՒՆԵՐ

2020 թ. Այցելուների կենտրոնի ուշադրության կենտրոնում են եղել ԿԲ և ԴՈՒՀԿ գրադարանային նոր ծրագրի փորձարկման, թեստավորման, թերությունների բացահայտման, ծրագրային հնարավորությունների արդիականացման, վարգացման, կատարելագործման աշխատանքները: Այդ ծրագիրը հնարավորություն կտա առավել արդյունավետ կառավարելու տնտեսական և ֆինանսական ոլորտին վերաբերող ԿԲ եվակի գրադարանային ֆոնդը:

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹԸ

Համապատասխանության ծառայությունը՝ որպես ԿԲ ներքին հսկողության համակարգի տարր, նպատակ ունի ապահովելու ԿԲ-ի կողմից իրականացվող գործառնություններում համապատասխանության բարձր մակարդակը ներպետական օրենսդրությանը և միջազգային լավագույն ստանդարտներին՝ դրանով իսկ նպաստելով ԿԲ հեղինակության ամրապնդմանը:

2020 թվականի ընթացքում իրականացվել են համապատասխանության ընթացիկ ապահովմանն ուղղված աշխատանքներ ԿԲ հաճախորդների, օտարերկրյա ֆինանսական հաստատությունների և կենտրոնական բանկերի հետ հարաբերությունների, ինչպես նաև ԿԲ կարիքների համար իրականացվող մատակարարումների ոլորտներում:

Մարտահրավերներով հարուստ տարում օտարերկրյա գործընկերների հետ հարաբերություններում Համապատասխանության ծառայության կողմից իրականացվող միջոցառումները նպաստել են ԿԲ միջազգային հեղինակության ամրապնդմանը և ֆինանսական գործառնությունների անխոչընդոտ իրականացմանը: Միաժամանակ, ի թիվս ընթացիկ միջոցառումների, քայլեր են ձեռնարկվել նաև ԿԲ-ում համապատասխանության մշակույթի շարունակական վարգացման ուղղությամբ, այդ թվում.

- Ուսումնասիրվել են համապատասխանության ոլորտի միջազգային վարգացումները, մասնավորապես՝ միջազգային պատժամիջոցները և դրանցից բխող ռիսկերի կառավարման եղանակները, համապատասխան տեղեկատվական նյութեր են տրամադրվել շահագրգիռ ստորաբաժանումներին՝ ապահովելով իրազեկվածությունը նորագույն մարտահրավերներին և ռիսկերին:
- Իրականացվել են ուսուցողական բնույթի միջոցառումներ՝ ուղղված ԿԲ աշխատակիցների կողմից համապատասխանության գործառույթի խորացված տիրապետմանը, այդ թվում՝ թիրախային ուսուցումներ ֆինանսական գործառնություններ իրականացնող աշխատակիցների համար:
- Համապատասխանության հետ կապված հարցերով խորհրդատվություն է տրամադրվել շահագրգիռ ստորաբաժանումներին և ԿԲ ղեկավարությանը:
- Համապատասխանության ապահովման ներկա մոդելի արդյունավետության գնահատման արդյունքներով մշակվել է համապատասխանության գործառույթի վարգացման հայեցակարգը:

05

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ **ՏԱՐԵԿԱՆ ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ

Համախմբված ֆինանսական հաշվետվություններ

2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար
Անկախ աուդիտորական եզրակացության հետ միասին

Բովանդակություն

Անկախ աուդիտորական եզրակացություն

Համախմբված ֆինանսական հաշվետվություններ

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվություն 1
Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն 2
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն 3
Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն 4

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1. Ընդհանուր տեղեկատվություն 5
2. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփում 6
3. Հաշվապահական հաշվառման նոր հրապարակումներ 21
4. Տոկոսային եկամուտ 23
5. Տոկոսային ծախս 23
6. Զուտ օգուտ/(վնաս) փոխարժեքային տարբերություններից 23
7. Զուտ վնաս ածանցյալ գործիքներից 24
8. Զուտ օգուտ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներից 24
9. Այլ եկամուտ 24
10. Թղթադրամների, դրամագիտական արժեքների թողարկման և մետաղադրամների հատման ծախսեր 24
11. Այլ ծախսեր 25
12. Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ և ներդրումներ 25
13. Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ 30
14. Ածանցյալ ֆինանսական գործիքներ 31
15. Ներդրումային արժեթղթեր 31
16. Գործարքներ Արժույթի միջազգային հիմնադրամի հետ 33
17. Հիմնական միջոցներ 35
18. Ոչ նյութական ակտիվներ 36
19. Այլ ակտիվներ տեղական արժույթով 36
20. Ֆինանսական և այլ հաստատությունների ավանդներ և հաշիվների մնացորդներ 36
21. Այլ փոխառություններ 37
22. Այլ պարտավորություններ տեղական արժույթով 37
23. Պարտավորություններ Հայաստանի Հանրապետության Կառավարության հանդեպ 38
24. Թողարկված պարտատոմսեր 38
25. Կապիտալի կառավարում 38
26. Պայմանական պարտավորություններ 39
27. Գործարքներ կապակցված կողմերի հետ 39
28. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ 41
29. Ֆինանսական գործիքների իրական արժեք 41
30. Ռիսկերի կառավարում 46
31. Ակտիվների և պարտավորությունների մարման ժամկետների վերլուծություն 58
32. Ֆինանսավորման գործունեության արդյունքում առաջացող պարտավորությունների փոփոխություն 59

Ernst & Young CJSC
1 Northern Ave., office 27
Yerevan, 0001, Armenia
Tel: +374 (10) 500 790
+374 (10) 500 705
Fax: +374 (10) 500 706
www.ey.com/am

«Էրնսթ ընդ Յանգ» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան 0001
Հյուսիսային պող. 1, գրասենյակ 27
Հեռ. +374 (10) 500 790
+374 (10) 500 705
Ֆաքս. +374 (10) 500 706

Անկախ աուդիտորական եզրակացություն

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի և նրա դուստր ընկերությունների (միասին՝ Խումբ) համախմբված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունը, 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա համար սեփական կապիտալում փոփոխությունների եւ դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունները, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, կից համախմբված ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Խմբի համախմբված ֆինանսական վիճակը 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, նույն ամսաթվին ավարտված տարվա համախմբված ֆինանսական արդյունքները և համախմբված դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմքեր

Մենք աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը նկարագրված է այս եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Խմբից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ՀԷՄՍԽ) կողմից հրապարակված Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի միջազգային կանոնագրքի (ներառյալ՝ Անկախության միջազգային ստանդարտները) (ՀԷՄՍԽ կանոնագիրք), և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀԷՄՍԽ կանոնների: Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որը, ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Կառուցելով
բարեկեցիկ աշխարհ

Համախմբված ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Խմբի անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և կազմակերպության գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Խումբը, ընդհատել դրա գործունեությունը, կամ երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը պատասխանատու է Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման գործընթացի նկատմամբ վերահսկողության համար:

Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ համախմբված ֆինանսական հաշվետվությունները, ամբողջությամբ վերցրած, զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ Աուդիտի միջազգային ստանդարտներին համաձայն իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն:
Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով համախմբված ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում.
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Խմբի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար.
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը.

Կառուցելով
բարեկեցիկ աշխարհ

- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության սկզբունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք, թե արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է էական կասկած հարուցել Խմբի անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել համախմբված ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, երբ այդ բացահայտումները համապատասխան չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա իրադարձություններն ու հանգամանքները կարող են հանգեցնել Խմբի գործունեության անընդհատության դադարեցմանը.
- գնահատում ենք համախմբված ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքն ու բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը.
- ձեռք ենք բերում բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ Խմբի ներսում գործող կազմակերպությունների կամ ձեռնարկատիրական գործունեությունների ֆինանսական տեղեկատվության վերաբերյալ՝ համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ կարծիք արտահայտելու նպատակով: Մենք պատասխանատու ենք խմբի աուդիտի ուղղորդման, ղեկավարման և իրականացման համար: Մենք ամբողջովին պատասխանատու ենք մեր աուդիտորական կարծիքի համար:

Ի թիվս այլ հարցերի, մենք Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդին հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

«Էրնսթ ընդ Յանգ» ՓԲԸ

Աուդիտի բաժնի գործընկեր՝ Մարչելլո Գելաշվիլի

Գլխավոր տնօրեն՝ Էրիկ Հայրապետյան

30 մարտի, 2021թ.

ՀՀ, ք. Երևան

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվություն
2020 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

Հազար ՀՀ դրամ	*Ծնթգ.*	*2020թ.*	*2019թ.*
Տոկոսային եկամուտ	4	34,343,569	35,271,838
Տոկոսային ծախս	5	(22,836,209)	(21,092,209)
Զուտ տոկոսային եկամուտ		**11,507,360**	**14,179,629**
(Պարտքային կորուստների գծով ծախս)/պարտքային կորուստների գծով պահուստի հակադարձում	12, 15, 19	(791,184)	198,529
Զուտ տոկոսային եկամուտ պարտքային կորուստների գծով պահուստից հետո		**10,716,176**	**14,378,158**
Միջնորդավճարների գծով եկամուտ		490,216	608,934
Միջնորդավճարների գծով ծախս		(1,470,161)	(1,304,349)
Զուտ օգուտ/(վնաս) փոխարժեքային տարբերություններից	6	65,428,920	(1,455,792)
Զուտ վնաս ածանցյալ գործիքներից	7	(3,826,806)	(477,632)
Զուտ օգուտ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներից	8	9,120,334	14,501,951
Այլ եկամուտ	9	4,956,533	4,226,258
Թղթադրամների, դրամագիտական արժեքների թողարկման և մետաղադրամների հատման ծախսեր	10	(1,481,880)	(828,921)
Այլ ծախսեր	11	(18,833,509)	(17,895,318)
Շահույթ մինչև հարկումը		**65,099,823**	**11,753,289**
Շահութահարկի գծով ծախս		(2,186,836)	(1,993,458)
Հաշվետու տարվա շահույթ		**62,912,987**	**9,759,831**
Շահույթը վերագրելի է՝			
Բանկի սեփականատիրոջը		62,849,377	9,693,618
Չվերահսկող բաժնեմասին		63,610	66,213
Այլ համապարփակ եկամուտ			
Հաջորդող ժամանակաշրջաններում որպես շահույթ կամ վնաս վերադասակարգվող հոդվածներ			
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային ֆինանսական ակտիվների իրական արժեքի փոփոխություններից զուտ չիրացված (վնաս)/օգուտ		(407,164)	573,139
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային ֆինանսական ակտիվների արժեզրկման պահուստներում փոփոխություններ ակնկալվող պարտքային կորուստների գծով	15	(31,682)	30,870
Հաջորդող ժամանակաշրջաններում որպես շահույթ կամ վնաս վերադասակարգվող այլ համապարփակ զուտ (վնաս)/եկամուտ		**(438,846)**	**604,009**
Հաջորդող ժամանակաշրջաններում որպես շահույթ կամ վնաս չվերադասակարգվող այլ համապարփակ եկամուտ			
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող բաժնային գործիքներից զուտ օգուտ		668,345	7,977
Ընդամենը հաջորդող ժամանակաշրջաններում որպես շահույթ կամ վնաս չվերադասակարգվող այլ համապարփակ եկամուտ		**668,345**	**7,977**
Հաշվետու տարվա այլ համապարփակ եկամուտ		**229,499**	**611,986**
Ընդամենը հաշվետու տարվա համապարփակ եկամուտ		**63,142,486**	**10,371,817**
Ընդամենը հաշվետու տարվա համապարփակ եկամուտը վերագրելի է՝			
Բանկի սեփականատիրոջը		63,053,996	10,277,020
Չվերահսկող բաժնեմասին		88,490	94,797

Սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2021թ. մարտի 30-ին ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի կողմից և ստորագրվել՝

Մարտին Գալստյան
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ

Մարիաննա Ամիրբեկյան
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի ֆինանսական տնօրեն

1-32 ծանոթագրությունները հանդիսանում են սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն

2020 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ

Հազար ՀՀ դրամ		*31 դեկտեմբերի 2020թ.*	*31 դեկտեմբերի 2019թ.*
Ակտիվներ			
Ակտիվներ արտարժույթով			
Կանխիկ դրամ		51,108,237	39,603,848
Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ	12	385,019,006	559,991,988
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ	13	930,471,867	773,358,342
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ	15	3,459,465	2,702,167
ԱՄՀ-ում տեղաբաշխված միջոցներ	16	101,636,948	88,398,230
Այլ ակտիվներ		182,954	171,875
Ընդամենը ակտիվներ արտարժույթով		**1,471,878,477**	**1,464,226,450**
Ակտիվներ տեղական արժույթով			
Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ և ներդրումներ	12	704,534,763	433,882,868
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ	15	78,543,693	87,872,142
Հիմնական միջոցներ	17	61,252,975	65,679,935
Ոչ նյութական ակտիվներ	18	2,897,059	3,020,744
Այլ ակտիվներ	19	10,072,335	12,239,109
Ընդամենը ակտիվներ տեղական արժույթով		**857,300,825**	**602,694,798**
Ընդամենը ակտիվներ		**2,329,179,302**	**2,066,921,248**
Պարտավորություններ			
Պարտավորություններ արտարժույթով			
Ֆինանսական և այլ հաստատությունների ավանդներ և հաշիվների մնացորդներ	20	508,273,268	376,281,455
Պարտավորություններ ՀՀ Կառավարության հանդեպ	23	1,506,451	1,248,593
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	14	143,121	81,100
Պարտավորություններ ԱՄՀ-ի հանդեպ	16	247,496,568	240,948,903
Այլ փոխառություններ	21	160,585,640	142,742,121
Այլ պարտավորություններ		1,442,932	945,056
Ընդամենը պարտավորություններ արտարժույթով		**919,447,980**	**762,247,228**
Պարտավորություններ տեղական արժույթով			
Թղթադրամներ և մետաղադրամներ շրջանառության մեջ		751,465,873	607,209,301
Ֆինանսական և այլ հաստատությունների ավանդներ և հաշիվների մնացորդներ	20	310,400,907	347,119,824
Պարտավորություններ ՀՀ Կառավարության հանդեպ	23	265,035,664	326,045,767
Թողարկված պարտատոմսեր	24	9,655,324	6,626,428
Այլ պարտավորություններ	22	4,521,819	4,408,557
Ընդամենը պարտավորություններ տեղական արժույթով		**1,341,079,587**	**1,291,409,877**
Ընդամենը պարտավորություններ		**2,260,527,567**	**2,053,657,105**
Սեփական կապիտալ			
Թողարկված կապիտալ	25	100,000	100,000
Գլխավոր պահուստ		27,418,972	25,480,248
Կառավարության կողմից թողարկված մուրհակ	25	66,055,949	73,810,843
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ֆինանսական ակտիվների վերագնահատման պահուստ	25	2,626,918	2,422,299
Կուտակված վնաս		(28,568,054)	(89,478,707)
Բանկի սեփականատիրոջը վերագրելի զուտ ակտիվներ		**67,633,785**	**12,334,683**
Չվերահսկող բաժնեմաս		1,017,950	929,460
Ընդամենը սեփական կապիտալ		**68,651,735**	**13,264,143**
Ընդամենը պարտավորություններ և սեփական կապիտալ		**2,329,179,302**	**2,066,921,248**

1-32 ծանոթագրությունները հանդիսանում են սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն

2020 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

	Բանկի սեփականատիրոջը վերագրելի							
Հազար ՀՀ դրամ	*Թողարկված կապիտալ*	*Գլխավոր պահուստ*	*Կառավարության կողմից թողարկված մուրհակ*	*Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ֆինանսական ակտիվների վերագնահատման պահուստ*	*Կուտակված վնաս*	*Ընդամենը*	*Չվերահսկող բաժնեմաս*	*Ընդամենը սեփական կապիտալ*
Մնացորդը 2019թ. հունվարի 1-ին	**100,000**	**25,480,248**	**73,810,843**	**1,838,897**	**(99,172,325)**	**2,057,663**	**897,663**	**2,955,326**
Դուստր ընկերությունում բաժնեմասի ավելացում	–	–	–	–	–	–	(63,000)	**(63,000)**
Հաշվետու տարվա շահույթ	–	–	–	–	9,693,618	**9,693,618**	66,213	**9,759,831**
Այլ համապարփակ եկամուտ	–	–	–	583,402	–	**583,402**	28,584	**611,986**
Ընդամենը հաշվետու տարվա համապարփակ եկամուտ	**–**	**–**	**–**	**583,402**	**9,693,618**	**10,277,020**	**94,797**	**10,371,817**
Մնացորդը 2019թ. դեկտեմբերի 31-ին	**100,000**	**25,480,248**	**73,810,843**	**2,422,299**	**(89,478,707)**	**12,334,683**	**929,460**	**13,264,143**
Շահույթի բաշխում	–	1,938,724	(7,754,894)	–	(1,938,724)	**(7,754,894)**	–	**(7,754,894)**
Հաշվետու տարվա շահույթ	–	–	–	–	62,849,377	**62,849,377**	63,610	**62,912,987**
Այլ համապարփակ եկամուտ	–	–	–	204,619	**–**	**204,619**	24,880	**229,499**
Ընդամենը հաշվետու տարվա համապարփակ եկամուտ	**–**	**–**	**–**	**204,619**	**62,849,377**	**63,053,996**	**88,490**	**63,142,486**
Մնացորդը 2020թ. դեկտեմբերի 31-ին	**100,000**	**27,418,972**	**66,055,949**	**2,626,918**	**(28,568,054)**	**67,633,785**	**1,017,950**	**68,651,735**

Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն
2020 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

հազար ՀՀ դրամ	*Ծնթգ.*	*2020թ.*	*2019թ.*
Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից			
Շահույթ մինչև հարկումը		**65,099,823**	**11,753,289**
Ճշգրտումներ՝ հաշվետու տարվա շահույթը զուտ դրամական հոսքերին համաձայնեցնելու նպատակով			
Մաշվածություն և ամորտիզացիա	11, 17, 18	3,858,750	4,231,048
Հիմնական միջոցների օտարումից և դուրսգրումից վնաս/(օգուտ)		1,387,375	(11,458)
Ստացվելիք տոկոսներ		(623,393)	(972,116)
Վճարվելիք տոկոսներ		(380,556)	408,405
Զուտ (օգուտ)/վնաս արտարժույթի վերագնահատումից	6	(63,453,637)	1,982,331
Զուտ վնաս/(օգուտ) իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների վերաչափումից		2,835,330	(2,273,133)
Պարտքային կորուստների գծով ծախս/(պարտքային կորուստների գծով պահուստի հակադարձում)	12, 15, 19	791,184	(198,529)
Վճարված շահութահարկ		(1,664,628)	(2,096,085)
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր՝ նախքան գործառնական ակտիվներում և պարտավորություններում փոփոխությունները		**7,850,248**	**12,823,752**
Գործառնական ակտիվների զուտ (աճ)/նվազում			
Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ արտարժույթով		21,286,198	11,774,996
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ և ածանցյալ ֆինանսական գործիքներ		(74,408,589)	(72,633,468)
Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ և ներդրումներ տեղական արժույթով		(269,799,443)	9,880,361
Այլ ակտիվներ		2,497,585	1,856,851
Գործառնական պարտավորությունների զուտ աճ/(նվազում)			
Թղթադրամներ և մետաղադրամներ շրջանառության մեջ		144,256,572	40,502,834
Ֆինանսական և այլ հաստատությունների ավանդներ և հաշիվների մնացորդներ		65,659,763	112,422,725
Պարտավորություններ ՀՀ Կառավարության հանդեպ		(59,089,285)	136,197,289
Թողարկված պարտատոմսերից մուտքեր		3,000,664	3,512,226
Թողարկված պարտատոմսերի մարում		–	(4,710,600)
Այլ պարտավորություններ		(586,515)	849,946
Զուտ դրամական միջոցների հոսքեր՝ (օգտագործված գործառնական գործունեությունում) / ստացված գործառնական գործունեությունից		**(159,332,802)**	**252,476,912**
Դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից			
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում		(788,976)	(890,980)
Հիմնական միջոցների վաճառքից մուտքեր		81,764	41,512
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ֆինանսական ակտիվների վաճառքից և մարումից մուտքեր		1,170,000	1,308,092
Զուտ դրամական միջոցների հոսքեր ստացված ներդրումային գործունեությունից		**462,788**	**458,624**
Դրամական միջոցների հոսքեր ֆինանսավորման գործունեությունից			
Ստացված վարկեր		14,258,245	6,346,555
Մարված վարկեր		(39,375,111)	(34,421,137)
Վճարումներ վարձակալության գծով		(89,123)	(82,489)
Զուտ դրամական միջոցների հոսքեր օգտագործված ֆինանսավորման գործունեությունում		**(25,205,989)**	**(28,157,071)**
Արտարժույթի փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա		42,993,016	(3,586,638)
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ (նվազում)/աճ		**(141,082,987)**	**221,191,827**
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարեսկզբին	28	577,159,377	355,967,550
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարեվերջին	28	**436,076,390**	**577,159,377**
Լրացուցիչ տեղեկատվություն			
Ստացված տոկոսներ		33,720,176	34,299,722
Վճարված տոկոսներ		(23,216,765)	(20,683,804)

1-32 ծանոթագրությունները հանդիսանում են սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

1. Ընդհանուր տեղեկատվություն

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և այդ ամսաթվին ավարտված տարվա՝ ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին (այսուհետ՝ «ՖՀՄՍ») համապատասխան համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (այսուհետ՝ «Բանկ» կամ «Կենտրոնական բանկ») և վերջինիս դուստր կազմակերպությունների (այսուհետ միասին՝ «Խումբ») գործունեության համար:

Բանկն իրավաբանական անձ է, որի միակ հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է:

Բանկն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության սահմանադրությանը, «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքին (այսուհետ՝ «Օրենք») և Հայաստանի Հանրապետության այլ օրենքներին համապատասխան:

Բանկի իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան 0010, Վազգեն Սարգսյանի փող., 6 շենք: Բանկի աշխատակիցների միջին թվաքանակը 2020 թվականի ընթացքում կազմել է 765:

Բանկը շահույթ ստանալու նպատակ չի հետապնդում: Բանկի գործունեության ֆինանսական արդյունքները, ինչպես նաև ակտիվների, պարտավորությունների և սեփական կապիտալի կառուցվածքը սահմանվում են Բանկի գործառույթներով:

Համաձայն Օրենքի՝ Բանկի հիմնական խնդիրը Հայաստանի Հանրապետությունում գների կայունության և ֆինանսական կայունության ապահովումն է: Գների կայունության նպատակն իրագործելու համար Կենտրոնական բանկը մշակում, հաստատում և իրականացնում է դրամավարկային քաղաքականության ծրագրերը: Ի լրումն իր հիմնական խնդրի՝ Բանկի այլ խնդիրներն են.

- Ապահովել Հայաստանի Հանրապետության ֆինանսական համակարգի կայունության, իրացվելիության, վճարունակության և բնականոն գործունեության համար անհրաժեշտ այլ պայմաններ,
- Ստեղծել և զարգացնել գործուն վճարահաշվարկային համակարգ,
- Կարգավորել Հայաստանի Հանրապետության ազգային արժույթի թողարկումը և դրամաշրջանառությունը,
- Կազմակերպել և կարգավորել փողերի լվացումը և ահաբեկչության ֆինանսավորումը կանխարգելող միջոցառումները,
- Ապահովել ֆինանսական համակարգում սպառողների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության համար անհրաժեշտ պայմաններ,
- Ապահովել ֆինանսական համակարգում ազատ և բարեխիղճ տնտեսական մրցակցություն և այլն:

Իր խնդիրները իրականացնելու նպատակով Կենտրոնական բանկը.

- Հանդիսանում է Հայաստանի Հանրապետության Կառավարության (այսուհետ՝ «Կառավարություն») ֆինանսական գործակալն ու խորհրդատուն,
- Լիցենզավորում է առևտրային բանկերը, օրենքով նախատեսված դեպքերում՝ նաև այլ անձանց և կազմակերպությունները, վերահսկում ու կարգավորում է վերջիններիս գործունեությունը,
- Տիրապետում, օգտագործում և տնօրինում է Հայաստանի Հանրապետության միջազգային պահուստները և այլն:

2020թ. դեկտեմբեր 31-ի դրությամբ բանկի խոշոր դուստր կազմակերպությունները ներկայացված են ստորև.

Անվանումը	*Հիմնադրման երկիրը*	*Հիմնական գործունեությունը*	*Վերահսկվող %*		*Հիմնադրման ամսաթիվ*
			2020թ.	*2019թ.*	
«Արմենիան Քարդ» ՓԲԸ	Հայաստանի Հանրապետություն	Վճարահաշվարկային ծառայություններ	56.25	56.25	մարտ 2000թ.
«Հայինկասացիա» ՓԲԸ	Հայաստանի Հանրապետություն	Դրամական միջոցների փոխադրումներ	100.00	100.00	ապրիլ 1998թ.
«Ազգային Հիփոթեքային Ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ	Հայաստանի Հանրապետություն	Հիփոթեքային վերաֆինանսավորում	100.00	100.00	հունիս 2009թ.
«Բնակարան երիտասարդներին» ՎՎԿ ՓԲԸ	Հայաստանի Հանրապետություն	Հիփոթեքային վերաֆինանսավորում	100.00	100.00	փետրվար 2010թ.
«Փոքր և միջին բիզնեսի վարկավորման աջակցություն» ՓԲԸ	Հայաստանի Հանրապետություն	Վարկավորման աջակցություն	100.00	100.00	դեկտեմբեր 2010թ.
«Ավտոտրանսպորտային միջոցների հատուկ նշանակության միասնական պատուհան» ՓԲԸ	Հայաստանի Հանրապետություն	Ապահովագրական ենթակառուցվածքների աջակցություն	100.00	100.00	դեկտեմբեր 2013թ.
«Ստակ Պրոցեսինգ» ՓԲԸ	Հայաստանի Հանրապետություն	Վճարահաշվարկային ծառայություններ	100.00	100.00	դեկտեմբեր 2017թ.
«Ստակ Մանի Տրանսֆեր» ՓԲԸ	Հայաստանի Հանրապետություն	Վճարահաշվարկային ծառայություններ	100.00	100.00	դեկտեմբեր 2017թ.

1. Ընդհանուր տեղեկատվություն (շարունակություն)

Հետևելով Ծանոթագրություն 30-ի ներքո Խմբի քաղաքականությանը, բացահայտված 2020թ. մարտին, Խումբը հայտարարեց, որ մտադիր է լուծարման միջոցով օտարել կանխիկ դրամական առաքումներ/փոխադրումներ իրականացնող դուստր կազմակերպությունում իր ներդրումը: 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ դուստր կազմակերպությունը դեռևս գտնվում է լուծարման գործընթացում:

2020թ տարեվերջին Խումբը որոշել է միավորել իր երկու դուստր կազմակերպությունների գործունեությունը, որոնք մատուցում են վճարահաշվարկային ծառայություններ: Միացման գործարքը տեղի է ունեցել 2021թ. հունվարին:

(ա) Հայաստանի տնտեսական միջավայրը և COVID-19 համավարակի ազդեցությունը

Բանկը իր գործունեությունը ծավալել է ցածր տնտեսական ակտիվության և թույլ ներքին պահանջարկի միջավայրում՝ պայմանավորված Հայաստանի Հանրապետությունում սեպտեմբերի 27-ից հայտարարված ռազմական դրության և կորոնավիրուսի համավարակի բռնկման և հետագա տարածման պատճառով առաջացած բացասական ազդեցությամբ և բարձր անորոշությամբ:

Տարվա սկզբից, ՀՀ Կենտրոնական բանկը համախառն պահանջարկի խթանման նպատակով աստիճանաբար նվազեցրել է իր հիմնական գործիքի՝ վերաֆինանսավորման տոկոսադրույքի մակարդակը ընդհանուր առմամբ 1.25 տոկոսային կետով՝ նպաստելով մակրոտնտեսական կայունությանը և գնաճի աստիճանական մոտեցմանը նպատակային ցուցանիշին: Բանկի կողմից մշակվել են նաև աջակցության այլ միջոցառումներ, ինչպիսիք են վարկային արձակուրդների տրամադրումն ու կարգավորման որոշ սահմանափակումների մեղմացումները, որոնք միտված են օգնելու ֆինանսական համակարգին պահպանել իր՝ անհրաժեշտ ռեսուրսներ տրամադրելու կարողությունները, և աջակցել հաճախորդներին՝ խուսափելու COVID-19 համավարակի հաղթահարման սահմանափակումներով պայմանավորված իրացվելիության խնդիրներից:

Միաժամանակ, համաշխարհային պահանջարկի վերականգնման վերաբերյալ դրական սպասումներով, միջազգային ֆինանսական շուկաներում աննախադեպ բարձր իրացվելիության մակարդակով, ինչպես նաև առաջարկի որոշ գործոններով պայմանավորված, սննդի և ապրանքահումքային միջազգային շուկաներում գնաճային զարգացումները նպաստել են տարեվերջին Հայաստանում ներմուծված գնաճի արագացմանը: Մյուս կողմից տնտեսական և քաղաքական հեռանկարի անորոշություններով պայմանավորված, ՀՀ դրամի փոխարժեքը ԱՄՆ դոլարի նկատմամբ արժեզրկվել է, հատկապես 2020թ. նոյեմբեր ամսից: Արդյունքում, 12-ամսյա գնաճը տարեվերջին զգալի ավելացել է՝ կազմելով 3.7% մոտենալով գնաճի նպատակային ցուցանիշին և առաջացնելով գնաճային սպասումների որոշակի աճ, ինչի արդյունքում տարեվերջին վերաֆինանսավորման տոկոսադրույքը բարձրացվել է 1.0 տոկոսային կետով:

Խումբը շարունակում է գնահատել համավարակի և տնտեսական պայմանների փոփոխության ազդեցությունը իր գործունեության, ֆինանսական վիճակի և ֆինանսական արդյունքների վրա:

(բ) Անորոշությունների գնահատում

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հասանելի տեղեկատվության հիման վրա Խումբը արտացոլել է ապագա դրամական հոսքերի վերանայված գնահատումները ԱՊԿ գնահատումներում և ֆինանսական գործիքների իրական արժեքների գնահատումներում (Ծնթգ. 30):

2. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփում

(ա) Համապատասխանության մասին հայտարարություն

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և այդ ամսաթվին ավարտված տարվա համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (այսուհետ՝«ՖՀՄՍ») պահանջներին համապատասխան՝ Բանկի և վերջինիս դուստր կազմակերպությունների համար:

(բ) Չափման հիմունքները

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են պատմական արժեքի սկզբունքի հիման վրա, բացառությամբ ֆինանսական գործիքների, որոնք սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով և իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ֆինանսական ակտիվների և իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքների (ներառյալ՝ ածանցյալ ֆինանսական գործիքները): Սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները ներկայացված են ստորև: Այդ դրույթները հետևողականորեն կիրառվել են հաշվետվություններում ներկայացված բոլոր ժամանակաշրջանների նկատմամբ, եթե այլ բան նշված չէ:

2. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփում (շարունակություն)

(գ) Ֆինանսական հաշվետվությունների ներկայացման ձևը

Բացառիկ դեպքերում համապատասխան հաշվետու ժամանակաշրջանում կատարված գործառնությունների վերաբերյալ տեղեկատվության մանրամասն բացահայտումը կարող է բերել ՀՀ ամբողջ ֆինանսական համակարգի նկատմամբ վստահության կորստի: Հետևաբար, չնայած նման գործառնությունների ֆինանսական արդյունքներն արտացոլված են Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվություններում, Խումբը կարող է միայն սահմանափակ բացահայտումներ ներկայացնել նման գործարքների վերաբերյալ:

(դ) Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը ՀՀ դրամն է («դրամ»), որը հանդիսանում է նաև Խմբի ֆունկցիոնալ արժույթը և այն արժույթը, որով ներկայացված են սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունները: Ֆինանսական տեղեկատվությունը ներկայացված է ՀՀ դրամով՝ հազարների ճշտությամբ, եթե այլ բան նշված չէ:

(ե) Գնահատումների և դատողությունների կիրառում

Խմբի հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ընթացքում ղեկավարությունն օգտագործել է իր դատողությունները և գնահատումները համախմբված ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարները որոշելիս: Կիրառված էական դատողությունները և գնահատումները հետևյալն են.

Իրական արժեք

Եթե համախմբված ֆինանսական հաշվետվություններում արտացոլվող ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը հնարավոր չէ որոշել ակտիվ շուկայի գների հիման վրա, ապա այն որոշվում է տարբեր գնահատման մոդելների կիրառմամբ, ներառյալ՝ մաթեմատիկական մոդելները: Այդպիսի մոդելների համար ելակետային տվյալները որոշվում են որպես դիտարկվող շուկաների տվյալներ, եթե դա հնարավոր է: Հակառակ դեպքում իրական արժեքի որոշման համար կիրառում են դատողություններ:

Արժեզրկման գնահատում

Ֆինանսական ակտիվների բոլոր դասերի գծով արժեզրկումից կորուստների գնահատումը պահանջում է դատողությունների կիրառում, մասնավորապես ապագա դրամական հոսքերի արժեքի և ժամկետայնության ու գրավի արժեքի գնահատումը՝ արժեզրկումից կորուստները և պարտքային ռիսկի զգալի աճը որոշելիս: Այս գնահատումների հիմքում ընկած են մի շարք գործոններ, որոնց փոփոխությունները կարող են հանգեցնել պահուստների տարբեր մակարդակների: Խմբի ակնկալվող պարտքային կորուստների («ԱՊԿ») հաշվարկները բարդ մոդելների արդյունք են, որոնց հիմքում ընկած են մի շարք ենթադրություններ՝ ելակետային փոփոխականների ընտրության և դրանց փոխկապակցվածության վերաբերյալ: ԱՊԿ մոդելների դատողություններ և գնահատումներ պարունակող տարրերը հետևյալն են.

- Խմբի ներքին վարկային գնահատման մոդելը, որը առանձին դասերի համար սահմանում է դեֆոլտի հավանականությունները,
- Խմբի գնահատման չափանիշները և որակական գնահատումը, թե արդյոք տեղի է ունեցել պարտքային ռիսկի զգալի աճ, և հետևաբար, ֆինանսական ակտիվների գծով պահուստները պետք է չափվեն ակտիվի կյանքի ընթացքում ակնկալվող պարտքային կորստի (ԱԿԱՊԿ) հիմունքով,
- ԱՊԿ մոդելների մշակումը, ներառյալ տարբեր բանաձևերի և ելակետային տվյալների ընտրությունը,
- Մակրոտնտեսական սցենարների և այնպիսի տնտեսական ելակետային տվյալների միջև, ինչպիսիք են գործազրկության մակարդակը և գրավի արժեքը, կապերի որոշումը և դրանց ազդեցությունը դեֆոլտի հավանականության (PD), դեֆոլտի դեպքում գործիքի արժեքի (EAD) և դեֆոլտի դեպքում կորստի չափի (LGD) վրա,
- Կանխատեսվող մակրոտնտեսական սցենարների և դրանց հավանականությունների կշիռների ընտրությունը՝ ԱՊԿ մոդելների ելակետային տնտեսական փոփոխականները որոշելու համար:

Գործարքներ կապակցված կողմերի հետ

Բնականոն գործունեության ընթացքում Խումբը գործարքներ է կնքում կապակցված կողմերի հետ: ՖՀՄՍ 9-ով պահանջվում է ֆինանսական գործիքները սկզբնապես ճանաչել իրենց իրական արժեքով: Դատողություն է կիրառվում որոշելիս, թե արդյոք գործարքները գնանշվում են շուկայական, թե ոչ շուկայական տոկոսադրույքներով, երբ չկա այդպիսի գործարքների համար գործող շուկա: Դատողության համար հիմք է ծառայում չկապակցված կողմերի հետ համանման գործարքների գնանշումը և արդյունավետ տոկոսադրույքի վերլուծությունը: Կապակցված կողմերի հետ մնացորդների պայմաններն ու դրույթները բացահայտված են Ծանոթագրություն 27-ում:

2. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփում (շարունակություն)

(ե) Գնահատումների և դատողությունների կիրառում (շարունակություն)

Արժույթի միջազգային հիմնադրամի (այսուհետ՝ «ԱՄՀ») *հետ գործարքների հաշվառում*

Համաձայն «ԱՄՀ-ի գործարքները և ֆինանսական կազմակերպումը» ուղեցույցի՝ ԱՄՀ-ի յուրաքանչյուր անդամ նշանակում է ֆիսկալ գործակալություն (ֆինանսների նախարարություն, կենտրոնական բանկ կամ համանման կազմակերպություն)՝ ԱՄՀ-ի հետ ֆինանսական գործարքներ կատարելու համար և պահառուի՝ (կենտրոնական բանկ կամ համանման գործակալություն)՝ ԱՄՀ-ի հաշիվները պահելու համար (ԱՄՀ թիվ 1 և 2 հաշիվներ և արժեթղթերի հաշիվ):

Համաձայն «Արժույթի միջազգային հիմնադրամին, Վերակառուցման և զարգացման միջազգային բանկին, Միջազգային ֆինանսական կորպորացիային, Զարգացման միջազգային ասոցիացիային, Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկին, Կապիտալ ներդրումների բազմակողմանի երաշխիքների գործակալությանը և Կապիտալ ներդրումների վերաբերյալ տարածայնությունների կարգավորման միջազգային կենտրոնին Հայաստանի Հանրապետության անդամակցության մասին» ՀՀ օրենքի՝ Բանկը, ըստ ԱՄՀ-ի հետ կնքված պայմանագրի 5-րդ հոդվածի 1-ին կետի, հանդես է գալիս որպես Հայաստանի Հանրապետության ֆիսկալ գործակալ: Բանկը համարվում է նաև Հայաստանի Հանրապետության պահառու:

Այն դեպքում, երբ Կենտրոնական բանկն ԱՄՀ-ի հետ գործառնություններում իրականացնում է ֆիսկալ գործակալի գործառույթ, արդյունքում առաջացած ակտիվների և պարտավորությունների գումարները և գործառնությունների արդյունքները արտացոլվում են Կենտրոնական բանկի ֆինանսական վիճակի և շահույթի կամ վնասի մասին հաշվետվություններում: Երբ Կենտրոնական բանկը ԱՄՀ-ի հետ գործառնություններում իրականացնում է պահառուի գործառույթ, բոլոր գործառնություններն իրականացվում են Կենտրոնական բանկի թղթակցային հաշիվների միջոցով, սակայն այդ գործառնությունների արդյունքում առաջացող ակտիվների և պարտավորությունների գումարները և համապատասխան շահույթը կամ վնասը չեն արտացոլվում Կենտրոնական բանկի՝ ֆինանսական վիճակի և շահույթի կամ վնասի մասին հաշվետվություններում:

Վարձակալություններ. լրացուցիչ փոխառության տոկոսադրույքի գնահատում

Խումբը չի կարող հեշտությամբ որոշել վարձակալությամբ ենթադրվող տոկոսադրույքը, հետևաբար վարձակալության գծով պարտավորությունը չափելիս կիրառում է լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը: Լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը, այն տոկոսադրույքն է, որը վարձակալը ստիպված կլիներ վճարել համանման ժամկետով և համանման ապահովմամբ այն փոխառու միջոցների դիմաց, որոնք անհրաժեշտ են համանման տնտեսական միջավայրում համանման արժեք ունեցող օգտագործման իրավունքի ձևով ակտիվի ձեռքբերման համար: Լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը արտացոլում է այն գումարը, որը Խումբը «պետք է վճարի», ինչը պահանջում է գնահատումների կիրառում, երբ չկան դիտարկելի տոկոսադրույքներ (ինչպիսիք են այն դուստր կազմակերպությունները, որոնք ֆինանսավորման գործառնություններ չեն իրականացնում), կամ երբ անհրաժեշտ է կատարել ճշգրտումներ՝ վարձակալության ժամկետները և պայմանները արտացոլելու համար (օրինակ՝ երբ վարձակալությունները դուստր կազմակերպության ֆունկցիոնալ արժույթով չեն):

Խումբը գնահատում է լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը՝ օգտագործելով դիտարկելի ելակետային տվյալներ (ինչպիսիք են օրինակ՝ շուկայական տոկոսադրույքները), եթե հասանելի են և պետք է կատարեն որոշակի կազմակերպությանը բնորոշ գնահատումներ (ինչպիսիք են օրինակ՝ դուստր կազմակերպության վարկանիշը):

(զ) Նոր կամ վերանայված ստանդարտներին և մեկնաբանություններին անցում

Խումբն առաջին անգամ է կիրառել ստանդարտների որոշ փոփոխությունները, որոնք գործում են 2020թ. հունվարի 1-ին սկսվող կամ դրան հաջորդող տարեկան ժամանակաշրջանների համար: Խումբը վաղաժամկետ չի կիրառել որևէ հրապարակված, սակայն դեռևս կիրառության մեջ չմտած ստանդարտներ, մեկնաբանություններ կամ փոփոխություններ: Յուրաքանչյուր փոփոխության բնույթը և ազդեցությունը ներկայացված է ստորև.

Փոփոխություններ ՖՀՄՍ 3-ում՝ Բիզնեսի սահմանում

ՖՀՄՍ 3-ի փոփոխությունները պարզաբանում են, որ բիզնես համարվելու համար գործունեությունների և ակտիվների փոխկապակցված ամբողջությունը պետք է առնվազն ներառի ելակետային տվյալներ և բովանդակային գործընթացներ, որոնք միասին նշանակալիորեն կնպաստեն արդյունք ստեղծելու ունակությանը: Ավելին, այն սահմանում է, որ բիզնեսը կարող է գոյություն ունենալ առանց ներառելու բոլոր ելակետային տվյալները և գործընթացները, որոնք անհրաժեշտ են արդյունք ստեղծելու համար: Այս փոփոխությունները որևէ ազդեցություն չունեն Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա, բայց կարող են ազդել ապագա ժամանակահատվածների վրա, եթե Խումբը ձեռք բերի որևէ բիզնեսի միավորում:

2. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփում (շարունակություն)

(զ) Նոր կամ վերանայված ստանդարտներին և մեկնաբանություններին անցում (շարունակություն)

Փոփոխություններ ՖՀՄՍ 7, ՖՀՄՍ 9 և ՀՀՄՍ 39 ստանդարտներում՝ Տոկոսադրույքի ուղենիշի բարեփոխում

ՖՀՄՍ 9 և ՀՀՄՍ 39 «Ֆինանսական գործիքներ. Ճանաչումը և չափումը»-ի փոփոխությունները նախատեսում են մի շարք մեղմացումներ, որոնք կիրառելի են հեջավորման բոլոր փոխհարաբերությունների համար, որոնց վրա տոկոսադրույքի ուղենիշի բարեփոխումն ուղղակի ազդեցություն ունի: Բարեփոխումն ազդում է հեջավորման փոխհարաբերությունների վրա, եթե այն առաջացնում է անորոշություն հեջավորված հոդվածի կամ հեջավորման գործիքի՝ ուղենիշի վրա հիմնված դրամական հոսքերի ժամկետների կամ գումարի վերաբերյալ: Այս փոփոխությունները որևէ ազդեցություն չունեն Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա, քանի որ Խումբը չունի տոկոսադրույքի հեջավորման որևէ փոխհարաբերություն:

Փոփոխություններ ՀՀՄՍ 1-ում և ՀՀՄՍ 8-ում՝ «էականության» սահմանում

Փոփոխությունները ապահովում են էականության նոր սահմանում, որը նշում է, որ «Տեղեկատվությունը էական է, եթե խելամտորեն ակնկալվում է, որ դրա բացթողումը, սխալ ներկայացումը կամ խեղաթյուրումը կարող է ազդել հիմնական օգտագործողների՝ հաշվետու կազմակերպության մասին ֆինանսական տեղեկատվություն տրամադրող ընդհանուր նշանակության ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող որոշումների վրա»:

Փոփոխությունները պարզաբանում են, որ էականությունը կախված կլինի ֆինանսական հաշվետվությունների համատեքստում տեղեկատվության էությունից կամ ծավալից՝ առանձին վերցրած , կամ այլ տեղեկատվության հետ համատեղ: Տեղեկատվության սխալ ներկայացումը էական է, եթե խելամտորեն ակնկալվում է, որ այն կարող է ազդել հիմնական օգտագործողների որոշումների վրա: Այս փոփոխությունները որևէ ազդեցություն չունեն Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա, և որևէ ապագա ազդեցություն Խմբի համար չի ակնկալվում:

Փոփոխություններ «Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ներկայացման հայեցակարգային հիմունքներ»-ում՝ թողարկված 2018թ. մարտի 29-ին

Հայեցակարգային հիմունքները ստանդարտ չէ, և դրանում ներառված ոչ մի հիմունք չի կարող գերակայել որևէ ստանդարտում ներառված հասկացությունների կամ պահանջների նկատմամբ: Հայեցակարգային հիմունքների նպատակն է ստանդարտների մշակման գործում աջակցել ՀՀՄՍԽ-ին, օգնել պատրաստողներին՝ մշակելու հաշվապահական հաշվառման հետևողական քաղաքականություններ, երբ առկա չեն կիրառելի ստանդարտներ, և աջակցել բոլոր կողմերին հասկանալու և մեկնաբանելու ստանդարտները:

Վերանայված Հայեցակարգային հիմունքները ներառում են նոր հասկացություններ, ակտիվների և պարտավորությունների թարմացված սահմանումներ ու ճանաչման չափանիշներ, և պարզաբանում է որոշ կարևոր հասկացություններ: Այս փոփոխությունները որևէ ազդեցություն չունեն Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա:

Քանի որ Խմբի ընթացիկ մոտեցումը համապատասխանում է վերոնշյալ փոփոխություններին, դրանք որևէ ազդեցություն չունեն Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա:

(է) Համախմբման հիմունքներ

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները ներառում են Բանկի և վերջինիս դուստր կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունները 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ: Դուստր կազմակերպություններն այն կազմակերպություններն են, որոնցում կատարվել են ներդրումներ և որոնք վերահսկվում են Խմբի կողմից: Վերահսկողությունը ձեռք է բերվում, երբ Խումբը ստանում է փոփոխական հատույցների իրավունք կամ ռիսկին ենթարկվածություն՝ ներդրման օբյեկտում ներգրավվածության արդյունքում, ինչպես նաև ունի իր իշխանությունն օգտագործելու կարողություն՝ այդ հատույցների վրա ազդելու համար:

Մասնավորապես, Խումբն ունի վերահսկողություն միայն այն դեպքում, երբ.

- ունի կարողություն ուղղորդելու ներդրման օբյեկտ հանդիսացող կազմակերպության որոշակի գործունեությունը, որը զգալի ներգործություն ունի հատույցների վրա,
- կրում է հատույցներ չստանալու ռիսկը կամ ստանում է փոփոխական հատույցներ ներդրման օբյեկտ հանդիսացող կազմակերպությունում իր մասնակցությունից, և
- հնարավորություն ունի օգտագործելու ներդրման օբյեկտ հանդիսացող կազմակերպության վրա ազդեցություն ունենալու կարողությունը՝ ներդրողների հատույցների գումարի վրա ներգործություն ունենալու համար:

2. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփում (շարունակություն)

(է) Համախմբման հիմունքներ (շարունակություն)

Երբ Խումբն ունի ներդրման օբյեկտ հանդիսացող կազմակերպությունում մեծամասնությունից քիչ քվեարկող բաժնետոմսեր կամ համանման այլ իրավունքներ, Խումբը դիտարկում է բոլոր համապատասխան փաստերն ու հանգամանքները՝ գնահատելիս, թե արդյոք այն ունի ներդրման օբյեկտ հանդիսացող կազմակերպության վրա ազդեցություն ունենալու կարողություն, ներառյալ.

- ներդրման օբյեկտ հանդիսացող կազմակերպության քվեարկող բաժնետոմսերի այլ սեփականատերերի հետ պայմանագրային պայմանավորվածություն,
- այլ պայմանագրային պայմանավորվածություններից ծագող իրավունքներ,
- Խմբի քվեարկող բաժնետոմսեր և հնարավոր քվեարկող բաժնետոմսեր:

Խումբը վերագնահատում է, թե արդյոք այն վերահսկում է ներդրման օբյեկտ հանդիսացող կազմակերպությանը, եթե փաստերն ու հանգամանքները վկայում են, որ փոփոխություններ են տեղի ունեցել վերահսկողության երեք տարրերից մեկում կամ մի քանիսում: Դուստր կազմակերպության համախմբումը սկսվում է այն ժամանակ, երբ Խումբը ձեռք է բերում վերահսկողություն դուստր կազմակերպության նկատմամբ, և դադարում է, երբ Խումբը կորցնում է վերահսկողությունը դուստր կազմակերպության նկատմամբ:

Խմբի ընկերությունների միջև գործարքները, մնացորդները և գործարքներից չիրացված շահույթը բացառվում են, չիրացված վնասները նույնպես բացառվում են, բացառությամբ այն դեպքերի, երբ ծախսը չի կարող վերականգնվել: Բանկը և իր բոլոր դուստր կազմակերպությունները կիրառում են հաշվապահական հաշվառման միասնական քաղաքականություն՝ Խմբի քաղաքականությանը համահունչ:

Դուստր կազմակերպության սեփականության մասնաբաժնի փոփոխությունը առանց վերահսկողության փոփոխության հաշվառվում է որպես սեփական կապիտալի գործարք: Վնասները վերագրելի են չվերահսկող բաժնեմասին, նույնիսկ, եթե դա հանգեցնում է բացասական մնացորդի:

Չվերահսկող բաժնեմասը դուստր կազմակերպության սեփական կապիտալի և զուտ արդյունքների այն մասն է, որը վերագրելի է այն բաժնեմասին, որի սեփականության իրավունքը ուղղակի կամ անուղղակի կերպով չի պատկանում Խմբին: Չվերահսկող բաժնեմասը կազմում է Խմբի սեփական կապիտալի առանձին բաղադրիչ:

Խումբը գնահատում է չվերահսկող բաժնեմասը, որն իրենից ներկայացնում է ներկայիս սեփականության մասնաբաժինը և կրողին տալիս է զուտ ակտիվների նկատմամբ համամասնական իրավունք լուծարման դեպքում՝ յուրաքանչյուր առանձին գործառնության արժեքի սկզբունքով՝ հիմք ընդունելով ձեռքբերվող կազմակերպության զուտ ակտիվներում չվերահսկող բաժնեմասի համամասնությունը կամ իրական արժեքը:

Ասոցիացված կազմակերպություններ

Ասոցիացված կազմակերպություններն այն բիզնես միավորներն են, որոնց նկատմամբ Խումբն ունի էական ազդեցություն (ուղղակիորեն կամ անուղղակիորեն), սակայն չունի վերահսկողություն՝ տիրապետելով քվեարկող ձայների 20-ից 50 տոկոսին: Ասոցիացված կազմակերպություններում ներդրումները հաշվառվում են՝ կիրառելով հաշվառման բաժնեմասնակցության մեթոդը, և սկզբնապես ճանաչվում են սկզբնական արժեքով: Ասոցիացված ընկերության հաշվեկշռային արժեքը ներառում է գնման պահին որոշված գուդվիլը՝ հանած կուտակված արժեզրկման կորուստներ (եթե այդպիսիք կան): Ասոցիացված կազմակերպություններից ստացված շահաբաժինները նվազեցնում են ասոցիացված կազմակերպություններում ներդրման հաշվեկշռային արժեքը: Ձեռքբերումից հետո ասոցիացված կազմակերպության զուտ ակտիվներում Խմբի բաժնեմասին վերաբերող այլ փոփոխությունները ճանաչվում են հետևյալ կերպ. (ա) ասոցիացված ընկերության շահույթում կամ վնասում Խմբի մասնաբաժինը ներառվում է տվյալ տարվա համախմբված շահույթ/վնասում՝ որպես ասոցիացված կազմակերպությունների արդյունքի մաս, (բ) այլ համապարփակ ֆինանսական արդյունքում Խմբի բաժնեմասը ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում՝ առանձին տողով, (գ) ասոցիացված ընկերության զուտ ակտիվների հաշվեկշռային արժեքի՝ Խմբի բաժնեմասին վերաբերող այլ փոփոխությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ որպես ասոցիացված կազմակերպության արդյունքների մաս:

Սակայն երբ ասոցիացված կազմակերպության վնասներում Խմբի մասնաբաժինը հավասար է կամ գերազանցում է ասոցիացված կազմակերպությունում իր ունեցած բաժնեմասին, ներառյալ ցանկացած այլ չապահովված դեբիտորական պարտքեր, Խումբն այլևս չի ճանաչում հետագա վնասները, բացառությամբ այն դեպքերի, երբ այն ձեռք է բերել պարտավորություններ կամ կատարել է վճարումներ ասոցիացված կազմակերպության անունից:

2. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփում (շարունակություն)

(ը) Արտարժույթի փոխարկում և արտարժութային հոդվածների ներկայացում

Արտարժույթով իրականացված գործարքները սկզբնապես ճանաչվում են ֆունկցիոնալ արժույթով՝ գործարքի օրվա դրությամբ Բանկի կողմից հրապարակված փոխարժեքով: Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները վերահաշվարկվում են ֆունկցիոնալ արժույթի՝ այդ օրվա դրությամբ Բանկի կողմից հրապարակված փոխարժեքով:

Արտարժույթի փոխարկումից ստացված օգուտները և վնասները ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ որպես փոխարժեքային տարբերություններից զուտ օգուտ/(վնաս): Տարեվերջի փոխարժեքով փոխարկում կատարելու սկզբունքը չի կիրառվում սկզբնական արժեքով գնահատվող ոչ դրամային հոդվածների նկատմամբ:

Արտարժույթով արտահայտված ոչ դրամային հոդվածները, որոնք չափվում են իրական արժեքով (ներառյալ՝ բաժնային ներդրումները), վերահաշվարկվում են ֆունկցիոնալ արժույթի իրական արժեքի որոշման օրվա փոխարժեքով:

Արտարժույթով իրականացվող գործարքների պայմանագրային փոխարժեքի և այդ օրվա դրությամբ Բանկի կողմից հրապարակված փոխարժեքի տարբերությունը ներառվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվության մեջ:

Խմբի կողմից համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման նպատակով օգտագործվել են հետևյալ փոխարժեքները 2020 և 2019 թվականների դեկտեմբերի 31-ի դրությամբ.

	31 դեկտեմբերի 2020թ.	*31 դեկտեմբերի 2019թ.*
ՀՀ դրամ/ 1 ԱՄՆ դոլար	522.59	479.70
ՀՀ դրամ/ 1 եվրո	641.11	537.26
ՀՀ դրամ/ 1 բրիտանական ֆունտ	709.47	629.13
ՀՀ դրամ/ 1 ՀՓԻ (Հատուկ փոխառության իրավունք)	752.67	663.34
ՀՀ դրամ/ 1 ճապոնական իեն	5.06	4.40
ՀՀ դրամ/ 1 ռուսական ռուբլի	7.02	7.77

(թ) Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվության ներքո դրամական միջոցները և դրանց համարժեքները այն միավորներն են, որոնք ազատ փոխարկելի են նախապես հայտնի դրամական գումարների և ենթակա են արժեքի փոփոխության ոչ նշանակալի ռիսկի: Խումբը դրամական միջոցներ և դրանց համարժեքներ է համարում կանխիկ դրամը, բանկերում տեղաբաշխված նոստրո հաշիվները և ԱՄՀ-ում տեղաբաշխված ՀՓԻ միջոցները: Միջոցները, որոնց օգտագործումը սահմանափակվում է ձևավորման պահից երեք ամսից ավելի ժամանակահատվածով, չեն հանդիսանում դրամական միջոցներ և դրանց համարժեքներ: Դրամական միջոցները և դրանց համարժեքները հաշվառվում են ամորտիզացված արժեքով:

(ժ) Ֆինանսական գործիքներ – գնահատման հիմնական պայմաններ

Խումբը չափում է ֆինանսական գործիքները, ինչպիսիք են իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքները, իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ֆինանսական ակտիվները և ածանցյալ գործիքները, իրական արժեքով՝ յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ: Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական գործիքների իրական արժեքը բացահայտված է Ծանոթագրություն 29-ում:

Իրական արժեքն այն գինն է, որը կստացվեր ակտիվը վաճառելիս կամ կվճարվեր պարտավորությունը փոխանցելիս՝ չափման ամսաթվի դրությամբ շուկայի մասնակիցների միջև կանոնավոր գործարքում: Իրական արժեքի լավագույն վկայությունն է գործող շուկայում գինը: Գործող շուկան այն շուկան է, որում ակտիվի կամ պարտավորության հետ կապված գործարքները տեղի են ունենում բավականաչափ հաճախականությամբ և ծավալով՝ շարունակական կերպով գնային տեղեկատվություն տրամադրելու համար:

2. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփում (շարունակություն)

(ժ) Ֆինանսական գործիքներ – գնահատման հիմնական պայմաններ (շարունակություն)

Գործող շուկայում վաճառվող ֆինանսական գործիքների իրական արժեքը գնահատվում է որպես անհատական ակտիվի կամ պարտավորության գնանշված գնի և Խմբի կողմից պահվող քանակի արտադրյալ: Նշված սահմանումը գործում է նույնիսկ այն դեպքում, երբ շուկայում բնականոն օրական վաճառքի ծավալը բավարար չէ պահվող ծավալը կլանելու համար, և մեկ գործարքում դիրքը վաճառելու պատվերների տեղադրումը կարող է ազդեցություն ունենալ գնանշված գնի վրա: Գնահատման մեթոդները, ինչպիսիք են զեղչված դրամական հոսքերի մոդելները կամ վերջերս կատարված «անկախ կողմերի միջև գործարքների» կամ ներդրում ստացող կազմակերպությունների ֆինանսական տվյալների ստացման վրա հիմնված մոդելները, օգտագործվում են՝ որոշելու այն ֆինանսական գործիքների իրական արժեքը, որոնց համար արտաքին շուկայական գնանշման տեղեկատվությունը հասանելի չէ:

Իրական արժեքի գնահատումների վերլուծությունը կատարվում է ըստ իրական արժեքի հիերարխիայի մակարդակի հետևյալ կերպ. (ա) մակարդակ 1՝ գնահատումներ գործող շուկայում համանման ակտիվների կամ պարտավորությունների գնանշված (չճշգրտված) գներով, (բ) մակարդակ 2՝ գնահատման մեթոդներ, որոնցում ակտիվի կամ պարտավորության համար բոլոր էական ելակետային տվյալները ուղղակիորեն (գներ) կամ անուղղակիորեն (գների հիման վրա ստացված) դիտարկելի են, (գ) մակարդակ 3՝ գնահատումներ, որոնք հիմնված չեն բացառապես շուկայի դիտարկելի տվյալների վրա (այն է՝ գնահատման համար անհրաժեշտ են նշանակալի ոչ դիտարկելի ելակետային տվյալներ):

Գործարքի հետ կապված ծախսումները լրացուցիչ ծախսումներն են, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական գործիքի ձեռքբերմանը, թողարկմանը կամ օտարմանը: Լրացուցիչ ծախսումը այն ծախսումն է, որը կազմակերպությունը չէր կրի, եթե գործարքը տեղի չունենար: Գործարքի հետ կապված ծախսումները ներառում են գործակալներին (ներառյալ՝ որպես վաճառքի գործակալ հանդես եկող աշխատակիցներին), խորհրդատուներին, միջնորդներին վճարված գումարները և կոմիսիոն վճարները, կարգավորման գործակալությունների կողմից և արժեթղթերի փոխանակումներից գանձումները, գույքի սեփականության իրավունքի փոխանցման հետ կապված հարկերը և վճարները: Գործարքի հետ կապված ծախսումները չեն ներառում պարտքի պարգևավճարներն ու զեղչերը, ֆինանսավորման ծախսումները կամ ներքին կառավարչական կամ պահպանման ծախսումները:

Ամորտիզացված արժեքը այն գումարն է, որով ֆինանսական գործիքը չափվել է սկզբնական ճանաչման պահին՝ հանած հիմնական գումարի մարումները, գումարած հաշվեգրված տոկոսները և ֆինանսական ակտիվների համար՝ հանած արժեզրկման վնասի գծով ցանկացած նվազեցում: Հաշվեգրված տոկոսները ներառում են սկզբնական ճանաչման ժամանակ գործարքի հետ կապված հետաձգված ծախսումների և մինչև մարման գումարը ցանկացած պարգևավճարի կամ զեղչի ամորտիզացիան՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Հաշվեգրված տոկոսային եկամուտը և հաշվեգրված տոկոսային ծախսը, ներառյալ հաշվեգրված արժեկտրոնը և ամորտիզացված զեղչը կամ պարգևավճարը (ներառյալ՝ առաջացման պահին հետաձգված վճարները, եթե կան այդպիսիք), առանձին չեն ներկայացվում, այլ ներառվում են ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվության համապատասխան հոդվածի հաշվեկշռային արժեքում:

Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը համապատասխան ժամանակահատվածի կտրվածքով տոկոսային եկամտի կամ տոկոսային ծախսի բաշխման այնպիսի մեթոդ է, որը հանգեցնում է հաշվեկշռային արժեքի նկատմամբ կիրառվող հաստատուն պարբերական տոկոսադրույքի (արդյունավետ տոկոսադրույքի):

Արդյունավետ տոկոսադրույքը այն դրույքն է, որը ֆինանսական գործիքի գործողության ակնկալվող ժամկետի կամ որոշակի դեպքերում ավելի կարճ ժամանակահատվածի համար գնահատված դրամական միջոցների ապագա վճարումները կամ ստացվելիք գումարները (չներառելով ապագա արժեզրկման կորուստները) զեղչում է ճշգրիտ՝ մինչև ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության զուտ հաշվեկշռային արժեքը: Արդյունավետ տոկոսադրույքը զեղչում է փոփոխական տոկոսադրույք ունեցող գործիքների դրամական միջոցների հոսքերը մինչև հաջորդ տոկոսադրույքի վերագանձնման ամսաթիվը, բացառությամբ այն պարգևավճարի կամ զեղչի, որն արտացոլում է գործիքում սահմանված լողացող տոկոսադրույքի կամ շուկայական դրույքներով չսահմանված այլ փոփոխականների նկատմամբ վարկային սպրեդը: Այդպիսի պարգևավճարները և զեղչերը ամորտիզացվում են գործիքի ակնկալվող գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում: Ներկա արժեքի հաշվարկը ներառում է պայմանագրի կողմերի միջև վճարված կամ ստացված բոլոր վճարները, որոնք արդյունավետ տոկոսադրույքի անբաժանելի մասն են կազմում:

Սկզբնական չափում

Ֆինանսական գործիքների դասակարգումը սկզբնական ճանաչման պահին կախված է պայմանագրային պայմաններից և գործիքների կառավարման բիզնես մոդելից: Ֆինանսական գործիքները սկզբնապես չափվում են իրական արժեքով և գործարքի ծախսերը նվազեցվում կամ ավելացվում են տվյալ գումարին, բացառությամբ շահույթի կամ վնասի միջոցով հաշվառվող ֆինանսական ակտիվների և պարտավորությունների:

2. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփում (շարունակություն)

(ժ) Ֆինանսական գործիքներ – գնահատման հիմնական պայմաններ (շարունակություն)

Խումբն իր բոլոր ֆինանսական ակտիվները դասակարգում է՝ ելնելով ակտիվների կառավարման բիզնես մոդելից և ակտիվի պայմանագրային պայմաններից, չափումն իրականացնելով.

- Ամորտիզացված արժեքով,
- Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով,
- Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով:

Խումբն իր ածանցյալ գործիքները և առևտրային պորտֆելը դասակարգում և չափում է իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով: Խումբը կարող է հաշվառել ֆինանսական գործիքները իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, եթե այդ կերպ վերանում է կամ զգալիորեն նվազեցվում են չափման կամ ճանաչման անհամապատասխանությունները:

Ճանաչման ամսաթիվ

Ֆինանսական ակտիվների բոլոր կանոնավոր գնումներն ու վաճառքներն արտացոլվում են վերջնահաշվարկի ամսաթվով: Կանոնավոր կերպով գնմանը կամ վաճառքին է վերաբերում ֆինանսական ակտիվների այնպիսի գնումը կամ վաճառքը, որը պահանջում է ակտիվի մատակարարում՝ շուկայում գործող կարգավորման միջոցով կամ գործարար սովորույթով սահմանված ժամկետի ընթացքում:

Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ

Որպես առևտրային նպատակներով պահվող ֆինանսական գործիքները ներառվում են «Իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ» դասակարգման մեջ: Ֆինանսական ակտիվները դասակարգվում են որպես առևտրային նպատակներով պահվող, եթե դրանք ձեռք են բերվել մոտ ապագայում իրացման նպատակով: Ածանցյալ գործիքները նույնպես դասակարգվում են որպես առևտրային նպատակով պահվող, եթե դրանք իրենց նպատակային նշանակությամբ չեն հանդիսանում գործող հեջավորման գործիքներ: Առևտրային նպատակներով պահվող ֆինանսական ակտիվների գծով օգուտները կամ վնասները, այդ թվում պարտքային արժեթղթերի առքուվաճառքից գոյացած տոկոսային եկամուտը, ճանաչվում են շահույթում կամ վնասում որպես իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների գծով զուտ օգուտ/(վնաս):

Խումբը իր բնականոն գործունեության ընթացքում արժութային և կապիտալի շուկաներում օգտագործում է տարատեսակ ածանցյալ ֆինանսական գործիքներ, ներառյալ՝ ֆորվարդները, ֆյուչերսները, սվոպերը և օպցիոնները: Սրանք առևտրային նպատակներով պահվող ֆինանսական գործիքներ են, որոնք հաշվառվում են իրական արժեքով:

Իրական արժեքը որոշվում է շուկայական գնանշման կամ գնորոշման մոդելների հիման վրա, որոնք հաշվի են առնում դրանց հիմքում ընկած գործիքների ընթացիկ շուկայական և պայմանագրային արժեքները և այլ գործոններ:

Ֆինանսական պարտավորություններում և ոչ ֆինանսական հիմնական պայմանագրերում պարունակվող ածանցյալ գործիքները հաշվառվում են որպես առանձին ածանցյալ գործիքներ և արտացոլվում են իրական արժեքով, եթե դրանք համապատասխանում են ածանցյալ գործիքի սահմանմանը (որը ներկայացված է վերևում), եթե դրանց տնտեսական բնութագրերը և ռիսկերը սերտորեն կապված չեն հիմնական պայմանագրերի բնութագրերի և ռիսկերի հետ, իսկ հիմնական պայմանագրերը ինքնին չեն հանդիսանում առևտրային նպատակներով պահվող կամ գնահատվում իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով: Հիմնական պայմանագրից առանձնացված պարունակվող ածանցյալ գործիքները առևտրային պորտֆելի կազմում հաշվառվում են իրական արժեքով, ընդ որում՝ իրական արժեքի բոլոր փոփոխությունները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունում:

Ֆինանսական ակտիվները դասակարգվում են բիզնես մոդելի և միայն մայր գումարի և տոկոսի վճարման (SPPI) գնահատումների հիման վրա:

Պահանջներ վարկային հաստատությունների նկատմամբ, հաճախորդներին տրված վարկեր, ամորտիզացված արժեքով ներդրումային արժեթղթեր

Խումբը չափում է պահանջները վարկային հաստատությունների նկատմամբ, հաճախորդներին տրված վարկերը և այլ ֆինանսական գործիքները ամորտիզացված արժեքով միայն այն դեպքում, եթե միաժամանակ բավարարվում են հետևյալ երկու պայմաններ՝

- Ֆինանսական ակտիվը պահվում է բիզնես մոդելի շրջանակներում, որի նպատակն է ֆինանսական ակտիվները պահել պայմանագրային դրամական միջոցների հոսքերի հավաքագրման նպատակով,
- Ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի ամսաթվերին առաջացնում են դրամական միջոցների հոսքեր, որոնք իրենցից ներկայացնում են միայն մայր գումարի և դրա չմարված մասի դիմաց տոկոսների վճարումներ (SPPI):

2. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփում (շարունակություն)

(ժ) Ֆինանսական գործիքներ – գնահատման հիմնական պայմաններ (շարունակություն)

Այս պայմանների մանրամասները ներկայացված են ստորև:

Բիզնես մոդելի գնահատում

Խումբն իր բիզնես մոդելը սահմանում է այն մակարդակի վրա, որը լավագույն կերպով արտացոլում է գործունեության նպատակների իրագործման համար ֆինանսական ակտիվների խմբերի կառավարման ուղղությամբ որդեգրած մեթոդները:

Խմբի բիզնես մոդելը չի գնահատվում առանձին գործիքների հիմունքով, այլ ավելի բարձր՝ համախմբված պորտֆելների մակարդակով, և հիմնվում է այնպիսի դիտարկելի գործոնների վրա, ինչպիսիք են՝

- Բիզնես մոդելի արդյունավետության և այդ բիզնես մոդելի շրջանակներում պահվող ակտիվների գնահատման և կազմակերպության առանցքային ղեկավար անձնակազմին ներկայացման մեխանիզմները,
- Բիզնես մոդելի արդյունավետության (և այդ բիզնես մոդելի շրջանակներում պահվող ակտիվների) վրա ազդող ռիսկերը, մասնավորապես, այդ ռիսկերի կառավարման մեխանիզմները,
- Վաճառքների ակնկալվող հաճախականությունը, արժեքը և ժամկետները նույնպես հանդիսանում են Խմբի գնահատման կարևոր գործոններ:

Բիզնես մոդելի գնահատման հիմքում ընկած են ողջամիտ ակնկալվող սցենարները՝ առանց հաշվի առնելու «վատագույն» կամ «սթրեսային» սցենարները: Եթե սկզբնական ճանաչումից հետո դրամական միջոցների հոսքերը տեղի են ունենում Խմբի սկզբնական ակնկալիքներից տարբեր կերպով, Խումբը չի փոխում տվյալ բիզնես մոդելում պահվող մնացած ֆինանսական ակտիվների դասակարգումը, սակայն հաշվի է առնում այդ տեղեկատվությունը հետագայում նոր սկզբնավորվող կամ նոր ձեռքբերվող ֆինանսական ակտիվները գնահատելիս:

Միայն մայր գումարի և տոկոսի վճարման (SPPI) գնահատումներ

Որպես դասակարգման գործընթացի երկրորդ քայլ, Խումբը գնահատում է ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները՝ պարզելու համար, թե արդյոք դրանք բավարարում են SPPI գնահատման պահանջներին:

Այս գնահատման նպատակով, մայր գումար հասկացությունը սահմանվում է որպես ֆինանսական ակտիվի իրական արժեք սկզբնական ճանաչման ժամանակ և կարող է փոխվել ֆինանսական ակտիվի կյանքի ընթացքում (օրինակ՝ եթե կան մայր գումարի մարումներ կամ պարգևավճարի/զեղչի ամորտիզացիա):

Վարկային պարտավորվածության մեջ սովորաբար տոկոսի ամենակարևոր տարրերն են՝ փողի ժամանակային արժեքը և պարտքային ռիսկը: SPPI գնահատումը իրականացնելու համար Խումբը կիրառում է դատողություն և հաշվի է առնում համապատասխան գործոններ, ինչպիսիք են ֆինանսական ակտիվի արժույթը և տոկոսադրույքի գործողության ժամանակահատվածը:

Համեմատության համար, այն պայմանագրային դրույթները, որոնք առաջացնում են ավելի քան նվազագույն ենթարկվածություն ռիսկերին կամ պայմանագրով նախատեսված դրամական հոսքերի տատանողականության, որոնք կապված չեն բազային վարկային պարտավորվածության հետ, չեն առաջացնում միայն մայր գումարի և դրա չմարված մասի վրա տոկոսի վճարում հանդիսացող պայմանագրային դրամական միջոցների հոսքեր: Այս դեպքերում ֆինանսական ակտիվը պետք է չափվի իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով:

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային գործիքներ

Խումբը չափում է պարտքային գործիքները իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով, եթե միաժամանակ բավարարվում են հետևյալ երկու պայմանները.

- Գործիքը պահվում է բիզնես մոդելի շրջանակներում, որի նպատակն է ինչպես պայմանագրային դրամական միջոցների հոսքերի հավաքագրումը, այնպես էլ ֆինանսական ակտիվների վաճառքը,
- Ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները բավարարում են SPPI ստուգման չափանիշները:

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային գործիքները հետագայում չափվում են իրական արժեքով՝ իրական արժեքի փոփոխություններից առաջացող օգուտները և վնասները ճանաչելով այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում: Տոկոսային եկամուտը և փոխարժեքային տարբերություններից օգուտը և վնասը ճանաչվում են շահույթում կամ վնասում նույն կերպ, ինչպես ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների համար: Ապաճանաչման պահին, նախկինում այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում ճանաչված գումարային օգուտները կամ վնասները վերադասակարգվում են որպես շահույթ կամ վնաս:

2. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփում (շարունակություն)

(ժ) Ֆինանսական գործիքներ – գնահատման հիմնական պայմաններ (շարունակություն)

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային գործիքների համար ակնկալվող պարտքային կորուստները չեն նվազեցնում այդ ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքները, որոնք ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում շարունակվում են ներկայացվել իրական արժեքով: Փոխարենը, այն պահուստի չափով գումարը, որը կառաջանար, եթե ակտիվները չափվեին ամորտիզացված արժեքով, ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում՝ որպես կուտակված արժեզրկման գումար, շահույթում կամ վնասում համապատասխան ծախսագրմամբ: Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում ճանաչված կուտակված վնասը ակտիվի ապաճանաչումից հետո վերադասակարգվում է շահույթի և վնասի կազմ:

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող բաժնային գործիքներ

Սկզբնական ճանաչումից հետո Խումբը երբեմն ընտրում է իր բաժնային ներդրումների մի մասն առանց հետագա վերանայման դասակարգել որպես իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող բաժնային գործիքներ, երբ դրանք համապատասխանում են կապիտալի գործիքի սահմանմանը՝ համաձայն ՀՀՄՍ 32-ի «*Ֆինանսական գործիքներ. Ներկայացում*» ստանդարտի, և չեն պահվում առևտրային նպատակով: Նման դասակարգումը որոշվում է առանձին՝ յուրաքանչյուր գործիքի համար:

Այս բաժնային գործիքներից օգուտները կամ վնասները երբեք չեն վերադասակարգվում շահույթի կամ վնասի կազմ: Շահաբաժինները ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ որպես այլ եկամուտ, երբ վճարման իրավունքը հաստատվել է, բացառությամբ, երբ Խումբը օգուտ է ստանում տվյալ մուտքերից՝ գործիքի արժեքի մի մասի վերականգնման միջոցով: Այդ դեպքում նման օգուտները հաշվառվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում: Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող բաժնային գործիքները ենթակա չեն արժեզրկման գնահատման: Այդ գործիքների օտարումից հետո, կուտակված վերագնահատման պահուստը փոխանցվում է չբաշխված շահույթին:

Ֆինանսական ակտիվների վերադասակարգում

Խումբը սկզբնական ճանաչումից հետո չի վերադասակարգում իր ֆինանսական ակտիվները, չհաշված բացառիկ դեպքերը, երբ Խումբը փոխում է ֆինանսական ակտիվների կառավարման բիզնես մոդելը: Ֆինանսական պարտավորությունները երբեք չեն վերադասակարգվում:

Ներգրավված փոխառու միջոցներ

Թողարկված ֆինանսական գործիքները կամ դրանց բաղկացուցիչները դասակարգվում են որպես պարտավորություններ, եթե պայմանագրային համաձայնության արդյունքում Խումբն ունի պարտավորություն փոխանցել դրամական միջոցներ կամ այլ ֆինանսական ակտիվներ կամ այլ կերպ կատարելու պարտավորությունները, բացի դրամական միջոցների՝ հաստատուն գումարով կամ այլ ֆինանսական ակտիվներով սեփական բաժնային գործիքների հաստատուն քանակով փոխարինելը: Նման գործիքները ներառում են ֆինանսական և այլ հաստատությունների ավանդները և հաշիվների մնացորդները, պարտավորությունները Կառավարության հանդեպ, պարտավորությունները ԱՄՀ-ի հանդեպ, այլ փոխառու միջոցները, թողարկված պարտատոմսերը:

Սկզբնական ճանաչումից հետո փոխառված միջոցները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով: Պարտավորության ապաճանաչման դեպքում, ինչպես նաև ամորտիզացիայի ընթացքում, եկամուտներն ու ծախսերը ճանաչվում են շահույթում կամ վնասում:

Զրոյական տոկոսադրույքով վարկերի հաշվառում

Խմբի կողմից միջազգային ֆինանսական հաստատություններից զրոյական տոկոսադրույքով ստացված միջոցների օգուտը դիտարկվում և հաշվառվում է որպես պետական շնորհ: Զրոյական տոկոսադրույքով օգուտը չափվում է որպես ստացված միջոցների իրական արժեքի և միջոցների սկզբնական ճանաչման ամսաթվի դրությամբ ստացված և որպես հետաձգված եկամուտ ճանաչված մուտքերի միջև տարբերություն: Հետաձգված եկամտի գումարը ճանաչվում է շահույթում կամ վնասում այն ժամանակաշրջանում, որում Խումբը՝ որպես ծախս է ճանաչում համապատասխան ծախսումները: Կատարվում է շնորհին վերաբերող եկամուտի չափով նվազեցում՝ համապատասխան ծախսը ներկայացնելիս:

2. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփում (շարունակություն)

(ժ) Ֆինանսական գործիքներ – գնահատման հիմնական պայմաններ (շարունակություն)

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների ապաճանաչում

Ֆինանսական ակտիվը (կամ ֆինանսական ակտիվի մասը, կամ նմանատիպ ֆինանսական ակտիվների խմբի մասը) ապաճանաչվում է, երբ՝

- ակտիվից դրամական հոսքեր ստանալու պահանջի իրավունքի ժամկետն ավարտվում է,
- Խումբը փոխանցում է ակտիվից դրամական հոսքեր ստանալու պահանջի իրավունքը կամ պահպանում է այդ իրավունքը, բայց պարտավորվում է ստացված գումարներն ամբողջությամբ և առանց էական ուշացման փոխանցել երրորդ կողմին՝ փոխանցման համաձայնագրի համաձայն, ինչպես նաև
- Խումբը կամ (ա) փոխանցել է ակտիվի գծով բոլոր ռիսկերի և օգուտների զգալի մասը, կամ (բ) ո՛չ փոխանցել և ո՛չ էլ պահպանում է ակտիվի գծով բոլոր ռիսկերի և օգուտների զգալի մասը, սակայն փոխանցել է ակտիվի նկատմամբ վերահսկողության իրավունքը:

Այն դեպքում, երբ Խումբը փոխանցել է ակտիվից դրամական հոսքեր ստանալու պահանջի իրավունքը և ո՛չ փոխանցել ու ո՛չ էլ պահպանում է ակտիվի գծով բոլոր ռիսկերի և օգուտների զգալի մասը, ինչպես նաև չի փոխանցել ակտիվի նկատմամբ վերահսկողությունը, ակտիվը ճանաչվում է Խմբի շարունակվող մասնակցության չափով: Երբ շարունակվող մասնակցությունը ձեռք է բերում փոխանցվող ակտիվի երաշխիքային ապահովման ձև, այդպիսի մասնակցությունը չափվում է հետևյալ երկու մեծություններից նվազագույնով՝ ակտիվի սկզբնական հաշվեկշռային արժեք և Խմբից պահանջվող փոխհատուցման առավելագույն գումար:

Երբ շարունակվող մասնակցությունը ձեռք է բերում փոխանցվող ակտիվի գծով թողարկված և/կամ գնված օպցիոնի ձև (ներառյալ՝ դրամական միջոցներով մարվող օպցիոններ կամ նմանատիպ պահուստներ), Խմբի մասնակցության չափը որոշվում է այն գումարի չափով, որով Խումբը կարող է հետ գնել փոխանցված ակտիվը, բացառությամբ իրական արժեքով գնահատված ակտիվի գծով թողարկված վաճառքի օպցիոնի (ներառյալ՝ դրամական միջոցներով մարվող օպցիոններ կամ նմանատիպ պահուստներ), երբ Խմբի շարունակվող մասնակցության չափը համարվում է հետևյալ երկու մեծություններից նվազագույնը՝ փոխանցված ակտիվի իրական արժեք և օպցիոնի իրագործման գին:

Ֆինանսական պարտավորությունը ապաճանաչվում է, երբ մարվում, չեղարկվում կամ դադարում է:

Եթե փոխառուի և փոխատուի միջև պարտքային գործիքը փոխարինվում է մեկ այլ պարտքային գործիքով, որի պայմաններն էականորեն տարբերվում են, կամ եթե կատարվում է գործող պարտքային գործիքի պայմանների էական փոփոխություն, այդպիսի փոխարինումը կամ փոփոխությունը հանգեցնում է այդ պարտքի ապաճանաչմանը և նոր պարտքային գործիքի ճանաչմանը, իսկ համապատասխան հաշվեկշռային արժեքների տարբերությունը ձևակերպվում է շահույթում կամ վնասում:

(ի) Վարձակալություն

i. Խումբը որպես վարձակալ

Խումբը կիրառել է ճանաչման և չափման միասնական մոտեցում բոլոր վարձակալությունների համար, բացառությամբ կարճաժամկետ վարձակալությունների և փոքրարժեք ակտիվների վարձակալությունների: Խումբը ճանաչում է վարձակալության գծով պարտավորություններ՝ վարձակալության գծով վճարումներ կատարելու համար և օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ, որոնք ներկայացնում են հիմքում ընկած ակտիվները օգտագործելու իրավունքը:

Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ

Խումբը ճանաչում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ վարձակալության մեկնարկի ամսաթվի դրությամբ (այն ամսաթիվը, երբ հիմքում ընկած ակտիվը հասանելի կդառնա վարձակալի կողմից օգտագործման համար): Օգտագործման իրավունքի ձևով ակտիվները չափվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կուտակված կորուստները, և ճշգրտված վարձակալության գծով պարտավորության ցանկացած վերաչափմամբ: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների սկզբնական արժեքը ներառում է ճանաչված վարձակալության գծով պարտավորությունների գումարը, սկզբնավորման ցանկացած ուղղակի ծախսումներ, վարձակալության մեկնարկի ամսաթվին կամ դրանից առաջ կատարված վարձավճարները՝ հանած ստացված ցանկացած վարձակալության խրախուսումներ: Բացառությամբ եթե Խումբը խելամտորեն համոզված է ձեռք բերել վարձակալված ակտիվը սեփականության իրավունքով, օգտագործման իրավունքի ձևով ակտիվի մաշվածությունը հաշվարկում է գծային հիմունքով վարձակալության մեկնարկի ամսաթվից մինչև օգտագործման իրավունքի ձևով ակտիվի օգտակար ծառայության ավարտի ամսաթվից կամ վարձակալության ժամկետի ավարտի ամսաթվից ամենավաղը: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվները ենթակա են արժեզրկման գնահատման:

2. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփում (շարունակություն)

(h) Վարձակալություն (շարունակություն)

Վարձակալության գծով պարտավորություններ

Վարձակալության մեկնարկի ամսաթվի դրությամբ Խումբը ճանաչում է վարձակալության գծով պարտավորությունը վարձակալության ժամկետի ընթացքում վճարման ենթակա վարձավճարների ներկա արժեքով: Վարձավճարները պարունակում են հաստատուն վճարումները (ներառյալ՝ ըստ էության հաստատուն վճարումներ)՝ հանած վարձակալության ցանկացած ստացվելիք խրախուսումը, վարձակալության փոփոխուն վճարումներ, որոնք կախված են ինդեքսից կամ դրույքից, գումարները, որոնք սպասվում է, որ կվճարվեն վարձակալի կողմից՝ մնացորդային արժեքի երաշխիքի ներքո: Վարձավճարները ներառում են նաև գնման օպցիոնի իրագործման գին, երբ Խումբը խելամտորեն համոզված է, որ կիրագործի այդ օպցիոնը, և վարձակալությունը դադարեցնելու հետ կապված տուգանքների վճարումներ, եթե վարձակալության ժամկետն արտացոլում է Խմբի՝ վարձակալությունը դադարեցնելու օպցիոնի իրագործումը: Փոփոխուն վարձավճարներ, որոնք կախված չեն ինդեքսից կամ դրույքից, ճանաչվում են որպես ծախս այն ժամանակաշրջանում, որի ընթացքում տեղի է ունենում այդ վճարումներին հանգեցնող դեպքը կամ իրավիճակը:

Վարձավճարների ներկա արժեքը հաշվելիս Խումբն օգտագործում է սկզբնական կիրառման ամսաթվին լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը, եթե վարձակալությամբ ենթադրվող տոկոսադրույքը հնարավոր չէ հեշտությամբ որոշել: Մեկնարկի ամսաթվից հետո վարձակալության գծով պարտավորության գումարը ավելացվում է՝ վարձակալության գծով պարտավորության տոկոսը արտացոլելու համար, և նվազեցվում է՝ կատարված վարձավճարները արտացոլելու համար: Ավելին, վարձակալության գծով պարտավորության հաշվեկշռային արժեքը վերաչափվում է, եթե տեղի են ունենում վերափոխումներ, վարձակալության ժամկետի փոփոխություն, ըստ էության հաստատուն վարձավճարների փոփոխություն կամ հիմքում ընկած ակտիվի գնման օպցիոնի գնահատումներում փոփոխություն: Վարձակալության գծով պարտավորությունները համախմբված ֆինանսական հաշվետվություններում ներառված են «Այլ պարտավորություններ» հոդվածում:

Կարճաժամկետ վարձակալություններ և փոքրարժեք ակտիվների վարձակալություններ

Խումբը կիրառում է կարճաժամկետ վարձակալությունների ճանաչման բացառությունը կարճաժամկետ վարձակալությունների համար (այն վարձակալությունները, որոնց վարձակալության ժամկետը մեկնարկի ամսաթվի դրությամբ 12 ամիս է կամ դրանից պակաս, և չեն պարունակում գնման օպցիոն): Խումբը կիրառում է նաև փոքրարժեք ակտիվների վարձակալության ճանաչման բացառությունը այն գրասենյակային գույքի համար, որոնք համարվում են փոքրարժեք: Կարճաժամկետ վարձակալությունների և փոքրարժեք ակտիվների վարձակալությունների գծով վարձավճարները ճանաչվում են որպես ծախս՝ գծային հիմունքով վարձակալության ժամկետի ընթացքում:

ii. Գործառնական – Խումբը որպես վարձատու

Վարձակալությունները, երբ Խումբը չի փոխանցում հիմքում ընկած ակտիվի սեփականության հետ կապված նշանակալի բոլոր ռիսկերն ու հատույցները, դասակարգվում են որպես գործառնական վարձակալություն: Վարձակալական եկամուտը ճանաչվում է գծային հիմունքով վարձակալության ժամկետի ընթացքում և ներառվում է այլ եկամտի կազմում համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, քանի որ գործառնական բնույթի է: Գործառնական վարձակալության բանակցությունների և պայմանավորվածությունների գծով կրած սկզբնավորման ուղղակի ծախսումները ավելացվում են տրամադրված ակտիվի հաշվեկշռային արժեքին և ճանաչվում են որպես ծախս վարձակալության ժամկետի ընթացքում նույն հիմունքով, որը կիրառվում է վարձակալական եկամուտը ճանաչելիս: Պայմանական վարձավճարները ճանաչվում են որպես եկամուտ այն ժամանակահատվածի ընթացքում, որում դրանք ստացվում են:

(l) Հաշվանցում

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում՝ արտացոլվելով զուտ գումարով, եթե գոյություն ունի ճանաչված գումարները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք, ինչպես նաև հաշվարկը զուտ հիմունքով իրականացնելու կամ միաժամանակ ակտիվն իրացնելու և պարտավորությունը մարելու մտադրություն: Հաշվանցման այդպիսի իրավունքը (ա) չպետք է պայմանավորված լինի ապագա իրադարձությամբ և (բ) պետք է իրավաբանորեն կիրառելի լինի հետևյալ բոլոր հանգամանքներում. (i) բնականոն գործունեության ընթացքում, (ii) դեֆոլտի դեպքում և (iii) անվճարունակության կամ սնանկության դեպքում:

(խ) Հետգնման և հակադարձ հետգնման պայմանագրեր

Վաճառքի և հետգնման պայմանագրերով («ռեպո») վաճառված արժեթղթերը հաշվառվում են որպես գրավով ապահովված ֆինանսավորման գործարքներ:

2. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփում (շարունակություն)

(խ) Հետգնման և հակադարձ հետգնման պայմանագրեր (շարունակություն)

Արժեթղթերն արտացոլվում են ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում և այն դեպքում, երբ գնորդն ունի նշված արժեթղթերի վաճառքի կամ գրավադրման պայմանագրային իրավունք կամ համաձայնություն, դրանք վերադասակարգվում են որպես «Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր», իսկ պայմանագրային կողմի պարտավորությունը՝ ֆինանսական և այլ հաստատությունների նկատմամբ պարտավորությունների կազմում: Վաճառքի և հետգնման գների տարբերությունը դիտվում է որպես տոկոսային ծախս և ճանաչվում է հետգնման պայմանագրի գործողության ընթացքում:

Հետգնման պայմանագրերի ներքո («հակադարձ ռեպո պայմանագրեր») արժեթղթերի ձեռքբերման համար վճարված միջոցները գրանցվում են որպես բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ: Վաճառքի և հետգնման գնի միջև տարբերությունը՝ ճշտված տոկոսադրույքով և գործընկերոջ կողմից ստացվող շահաբաժնի եկամտով, դիտարկվում է որպես տոկոսային եկամուտ և հաշվեգրվում է ռեպո պայմանագրերի ողջ գործողության ընթացքում՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

(ծ) Փոխառության տրված և ստացված արժեթղթեր

Արժեթղթերը, որոնք փոխառության են տրվել գնորդներին, շարունակվում են հաշվառվել ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում: Փոխառությամբ ներգրավված արժեթղթերն արտացոլվում են ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում միայն երրորդ անձանց վաճառքի դեպքում: Այս դեպքում առքուվաճառքի գործարքները հաշվառվում են շահույթում կամ վնասում՝ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով հաշվառվող ֆինանսական գործիքներից զուտ շահույթի կազմում: Այդպիսի արժեթղթերի վերադարձի պարտավորությունը արտացոլվում է իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող պարտավորություններում:

(կ) Շրջանառության մեջ գտնվող թղթադրամներ և մետաղադրամներ

Բանկի կողմից թողարկված շրջանառության մեջ գտնվող թղթադրամները և մետաղադրամները ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում արտացոլվում են անվանական արժեքով՝ որպես պարտավորություն դրանց տիրապետողների հանդեպ: Թղթադրամների տպագրման և մետաղադրամների հատման ծախսերը ճանաչվում են շահույթում կամ վնասում դրանց կատարման պահին:

(հ) Դրամագիտական արժեքներ

Դրամագիտական արժեքները չափվում են ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Դրամագիտական արժեքների ինքնարժեքը որոշվում է «առաջին մուտք, առաջին ելք» սկզբունքով և ներառում է մետաղադրամների ձեռքբերման ծախսումները և նրանց ներկա գտնվելու վայր և վիճակի բերելու հետ կապված այլ ծախսումներ: Իրացման զուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի գնահատված գինն է՝ հանած վաճառքը կազմակերպելու համար գնահատված ծախսումները: Վաճառքի ժամանակ գնահատված վաճառքից մուտքերի գումարը ճանաչվում է որպես եկամուտ ընթացիկ տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունում, իսկ հաշվեկշռային արժեքի գումարը ճանաչվում է որպես ծախս ընթացիկ տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունում:

(ձ) Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Այդ գումարը ներառում է սարքավորման փոխարինման ժամանակ կատարված ծախսերը, եթե դրանք բավարարում են ճանաչման չափանիշներին: Նմանապես, խոշոր կապիտալ ներդրումներ կատարելիս, ծախսը ներառվում է հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքի մեջ որպես փոխարինում, եթե ճանաչման չափանիշները բավարարված են:

Երբ հիմնական միջոցի նշանակալի մասերը անհրաժեշտ է պարբերաբար փոխարինել, Խումբը ճանաչում է նման մասերը՝ որպես առանձին ակտիվներ իրենց հատուկ օգտակար ծառայության ժամկետներով և համապատասխանաբար հաշվարկում է մաշվածություն:

Հիմնական միջոցների վերանորոգման և պահպանման հետ կապված բոլոր ծախսումները շահույթում կամ վնասում ճանաչվում են որպես ծախս՝ դրանց կատարման պահին:

Սկզբնապես ճանաչված հիմնական միջոցի միավոր և ցանկացած էական մաս ապաճանաչվում է օտարման դեպքում, և երբ ակտիվի օգտագործումից կամ օտարումից ոչ մի տնտեսական օգուտ չի ակնկալվում: Ակտիվի ապաճանաչումից առաջացող ցանկացած օգուտ կամ վնաս (հաշվարկված որպես օտարումից զուտ մուտքերի/հատույցների և ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերություն) ներառվում է շահույթում կամ վնասում, երբ ակտիվն ապաճանաչվում է:

2. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփում (շարունակություն)

(ձ) Հիմնական միջոցներ (շարունակություն)

Մաշվածություն

Մաշվածության հաշվարկը սկսվում է հիմնական միջոցի օգտագործման համար մատչելի դառնալու պահից: Մաշվածությունը հաշվարկվում է՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցների օգտակար ծառայության հետևյալ ժամկետների ընթացքում.

	2020թ.	*2019թ.*
Հող և շենքեր		
► Շենքեր	30-80 տարի	30-80 տարի
► Շենքերի սպասարկման համակարգեր	3-20 տարի	3-20 տարի
Ցանցեր, համակարգչային և այլ սարքավորումներ	2-15 տարի	2-15 տարի
Փոխադրամիջոցներ	5 տարի	5 տարի

Ակտիվի մնացորդային արժեքը ակտիվի այն մոտավոր գումարն է, որը Խումբը ներկայումս կստանար ակտիվի օտարումից՝ հանած ակտիվի օտարման գնահատված ծախսերը, եթե ակտիվը արդեն լիներ իր օգտակար ծառայության վերջին սպասվող տարիքին և պայմաններում: Ակտիվների մնացորդային արժեքները և օգտակար ծառայության ժամկետները վերանայվում և, եթե անհրաժեշտ է, փոփոխվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ:

(ղ) Վաճառքի համար պահվող ոչ ընթացիկ ակտիվներ

Ոչ ընթացիկ ակտիվները ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվության մեջ դասակարգվում են որպես «վաճառքի համար պահվող ոչ ընթացիկ ակտիվներ», եթե դրանց հաշվեկշռային արժեքը փոխհատուցվելու է հիմնականում վաճառքի գործարքի միջոցով՝ հաշվետու ժամանակաշրջանից հետո տասներկու ամսվա ընթացքում: Ակտիվը «վաճառքի համար պահվող ոչ ընթացիկ ակտիվ» դասակարգվելու համար պետք է բավարարի հետևյալ բոլոր պայմաններին. ա) ակտիվը իր ներկա վիճակում պետք է պատրաստ (մատչելի) լինի անմիջապես վաճառքի համար, բ) Խմբի ղեկավարությունը պետք է ձեռնարկի գնորդ գտնելու և վաճառքի պլանը կատարելու ակտիվ ծրագիր, գ) ակտիվը ողջամիտ գնով պետք է ակտիվորեն առաջարկվի շուկայում, դ) պետք է ակնկալվի, որ մեկ տարվա ընթացքում վաճառքը կբավարարի որպես ավարտվող վաճառք ճանաչվելու պայմաններին, ե) պլանն ավարտին հասցնելու համար անհրաժեշտ գործողությունները պետք է ցուցանշեն, որ պլանում նշանակալի փոփոխությունների կատարումը կամ պլանի դադարեցումը հավանական չէ: Վաճառքի համար պահվող ոչ ընթացիկ ակտիվները չափվում են իրենց հաշվեկշռային արժեքից և իրական արժեքի և վաճառքի գծով ծախսումների տարբերությունից նվազագույնով: Վաճառքի համար պահվող ոչ ընթացիկ ակտիվների համար մաշվածություն չի հաշվարկվում:

(ճ) Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները ներառում են համակարգչային ծրագրերն ու լիցենզիաները: Առանձին ձեռքբերված ոչ նյութական ակտիվները սկզբնապես ճանաչվում են ձեռքբերման արժեքով: Չեռնարկատիրական միավորման արդյունքում ձեռքբերված ոչ նյութական ակտիվների արժեքը ձեռքբերման ամսաթվի դրությամբ դրանց իրական արժեքն է: Սկզբնական ճանաչումից հետո ոչ նյութական ակտիվները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և ճանաչումից և արժեզրկումից կուտակված վնասները:

Որոշակի օգտակար ծառայության ժամկետ ունեցող ոչ նյութական ակտիվները ամորտիզացվում են գծային մեթոդով օգտակար ծառայության ընթացքում, որը կազմում է 1-10 տարի, և գնահատվում են արժեզրկման տեսանկյունից, երբ առկա են արժեզրկման հայտանիշեր:

Համակարգչային ծրագրերի ընթացիկ սպասարկման ծախսերը ճանաչվում են շահույթում կամ վնասում դրանց կատարման պահին:

(մ) Արժեզրկում

Ֆինանսական ակտիվների արժեզրկումը

Ֆինանսական ակտիվների արժեզրկման գնահատման վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է Ծանոթագրություն 30-ում:

Ոչ ֆինանսական ակտիվներ

Խումբը յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ գնահատում է, արդյոք առկա է որևէ հայտանիշ, ըստ որի ակտիվը կարող է արժեզրկված համարվել: Եթե առկա է այդպիսի հայտանիշ, կամ երբ անհրաժեշտ է իրականացնել ակտիվի տարեկան արժեզրկման ստուգում, ապա Խումբը գնահատում է ակտիվի փոխհատուցվող գումարը:

2. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփում (շարունակություն)

(մ) Արժեզրկում (շարունակություն)

Ակտիվի փոխհատուցվող գումարն ակտիվի կամ դրամաստեղծ միավորի իրական արժեքից՝հանած վաճառքի համար անհրաժեշտ ծախսումները, և օգտագործման արժեքից առավելագույնն է, և որոշվում է առանձին ակտիվի համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ակտիվը չի առաջացնում դրամական միջոցների ներհոսքեր, որոնք մեծապես անկախ են այլ ակտիվներից կամ ակտիվների խմբերից առաջացող դրամական միջոցների ներհոսքերից:

Այն դեպքում, երբ ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը գերազանցում է վերջինիս փոխհատուցվող գումարը, ակտիվը համարվում է արժեզրկված և արժեքը նվազեցվում է մինչև փոխհատուցվող գումարը: Օգտագործման արժեքի գնահատման ժամանակ դրամական միջոցների գնահատված հոսքերը զեղչվում են ներկա արժեքի՝ օգտագործելով զեղչման այն դրույքը, որն արտացոլում է ժամանակի մեջ փողի արժեքի և տվյալ ակտիվին հատուկ ռիսկերի ընթացիկ շուկայական գնահատումները՝ առանց հաշվի առնելու հարկային ազդեցությունը:

Ակտիվների գծով արժեզրկումից կորուստները ճանաչվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունում և հակադարձվում են միայն այն դեպքում, եթե փոխվել են փոխհատուցվող գումարը որոշելու համար օգտագործվող գնահատումները: Արժեզրկումից կորուստը հակադարձվում է միայն այն չափով, որ ակտիվի հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ, առանց համապատասխան մաշվածության և ամորտիզացիայի, եթե արժեզրկումից կորուստ ճանաչված չլիներ:

(յ) Պահուստներ

Պահուստը ճանաչվում է, երբ Խումբն ունի իրավական կամ կառուցողական պարտավորություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք և հավանական է, որ այդ պարտավորությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք, իսկ պարտավորության գումարը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

(ն) Հարկում

Բանկն ազատված է բոլոր հարկերից և տուրքերից, բացառությամբ ապրանքների ներմուծման համար մաքսային սահմանին վճարման ենթակա հարկերից, մաքսատուրքերից և մաքսավճարներից: Միաժամանակ Բանկը հանդես է գալիս որպես հարկային գործակալ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով: Խմբի դուստր կազմակերպությունները Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հաշվարկում են շահութահարկ և այլ հարկեր ու տուրքեր:

(շ) Թողարկված կապիտալ

Թողարկված կապիտալը Բանկի կանոնադրական կապիտալն է, որը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության սեփականությունը և չի կարող գրավադրվել, բռնագանձվել կամ որևէ այլ կերպ օտարվել Հայաստանի Հանրապետության պարտավորությունների դիմաց:

Համաձայն Օրենքի 11.4 հոդվածի՝ Խմբի վնասը պահուստների հանրագումարը գերազանցելու դեպքում Կառավարության կողմից տրամադրվող անտոկոս հասարակ մուրհակը ճանաչվում է որպես Կառավարության կողմից թողարկված մուրհակ Խմբի կապիտալում:

(ո) Շահույթի բաշխում

Խմբի շահույթը, որը որոշվում է վերջինիս համախմբված ֆինանսական հաշվետվությունների հրապարակումից հետո, բաշխվում է հետևյալ կերպ.

- շահույթի 20%-ն ուղղվում է գլխավոր պահուստի համալրմանը՝ մինչև դրա ընդհանուր չափը կազմի առկա դրամական զանգվածի 25%-ը,
- մասհանումներ պետք է կատարվեն՝ Կառավարության կողմից նախկինում Բանկին տրամադրված մուրհակի մարման ծախսերը ծածկելու նպատակով:

Նշված մասհանումները կատարելուց հետո Խմբի ստացված շահույթի մնացորդը փոխանցվում է պետական բյուջե:

Պետական բյուջե վճարման ենթակա Խմբի շահույթի հաշվարկի մեջ չեն ընդգրկվում ոսկու, հատուկ փոխառության իրավունքների, արտարժույթների և դրանցով արտահայտված արժեքների վերագնահատումից և ձեռքբերումից առաջացած եկամուտների և ծախսերի դրական տարբերությունը՝ ճշգրտված նախորդ ժամանակաշրջանների բացասական արդյունքների հատուցմանն ուղղված գումարների չափով (Ծնթգ. 25):

2. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփում (շարունակություն)

(է) Պայմանական ակտիվներ և պարտավորություններ

Պայմանական պարտավորությունները չեն արտացոլվում ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում, այլ բացահայտվում են հաշվետվություններին կից ծանոթագրություններում, բացառությամբ այն դեպքերի, երբ պարտավորության մարման հետ կապված միջոցների արտահոսքը համարվում է քիչ հավանական: Պայմանական ակտիվները չեն արտացոլվում ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում, սակայն բացահայտվում են հաշվետվություններին կից ծանոթագրություններում այն դեպքերում, երբ դրանց հետ կապված տնտեսական օգուտների ներհոսքը համարվում է հավանական:

(ը) Տոկոսային եկամուտներ և ծախսեր

Խումբը հաշվարկում է տոկոսային եկամուտ ամորտիզացված արժեքով կամ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային ֆինանսական ակտիվների գծով, կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը ֆինանսական ակտիվների համախառն հաշվեկշռային արժեքի նկատմամբ, բացառությամբ արժեզրկված ակտիվների: Արդյունավետ տոկոսադրույքը (EIR) այն տոկոսադրույքն է, որով զեղչված ակնկալվող ապագա դրամական վճարումները կամ ներհոսքերը ֆինանսական գործիքի ենթադրվող ողջ օգտագործման ժամանակահատվածում կամ՝ կիրառելի դեպքերում, ավելի կարճ ժամանակահատվածում, ճշգրտորեն զեղչվում են մինչև ֆինանսական ակտիվի կամ պարտավորության զուտ հաշվեկշռային արժեքը: Հաշվարկի ժամանակ հաշվի են առնվում ֆինանսական գործիքի գծով բոլոր պայմանագրային պայմանները (օրինակ՝ ժամկետից շուտ մարման իրավունքը) և միջնորդավճարների գծով կամ լրացուցիչ ծախսերը, որոնք անմիջականորեն կապված են գործիքի հետ և որոնք կազմում են արդյունավետ տոկոսադրույքի բաղկացուցիչ մաս, սակայն հաշվի չեն առնվում ապագա վնասները: Ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքները ճշգրտվում են Խմբի կողմից միջոցների ելքերի կամ մուտքերի գնահատումների վերանայման դեպքում: Ճշգրտված հաշվեկշռային արժեքը հաշվարկվում է սկզբնական արդյունավետ տոկոսադրույքի հիման վրա, իսկ հաշվեկշռային արժեքի փոփոխությունը դիտվում է որպես տոկոսային եկամուտ կամ ծախս:

Երբ ֆինանսական ակտիվի կամ համանման ֆինանսական ակտիվների խմբի հաշվառված արժեքը նվազեցվել է՝ արժեզրկումից կորստի հիմունքով, տոկոսային եկամուտը շարունակում է ճանաչվել՝ օգտագործելով սկզբնապես գործող արդյունավետ տոկոսադրույքը նոր հաշվեկշռային արժեքի նկատմամբ:

(ջ) Միջնորդավճարների գծով եկամուտ

Տվյալ ժամանակաշրջանում ծառայությունների մատուցման արդյունքում վաստակված միջնորդավճարները հաշվեգրվում են այդ ժամանակահատվածի ընթացքում:

3. Հաշվապահական հաշվառման նոր հրապարակումներ

Սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթվի դրությամբ հրապարակվել են, սակայն դեռևս ուժի մեջ չեն որոշակի նոր ստանդարտներ, գոյություն ունեցող ստանդարտների փոփոխություններ կամ մեկնաբանություններ: Խումբը վաղաժամկետ չի ընդունել նոր ստանդարտները:

Ղեկավարությունն ակնկալում է, որ բոլոր հրապարակված ստանդարտներն ու փոփոխությունները կներառվեն Խմբի հաշվապահական հաշվառման քաղաքականության մեջ՝ սկսած դրանց ուժի մեջ մտնելու ամսաթվից հետո սկսվող առաջին ժամանակաշրջանից: Ստորև ներկայացված է տեղեկատվություն նոր ստանդարտների, փոփոխությունների և մեկնաբանությունների վերաբերյալ, որոնք, ըստ ղեկավարության գնահատման, կիրառելի են Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների նկատմամբ: Մի շարք այլ ստանդարտներ և մեկնաբանություններ են հրապարակվել, որոնք էական ազդեցություն չունեն Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա:

ՖՀՄՍ 9 Ֆինանսական գործիքներ – Ֆինանսական պարտավորությունների ապաճանաչման համար «10 տոկոս» թեստում ներառվող վճարներ

Որպես 2018-2020թթ. ՖՀՄՍ ստանդարտների տարեկան բարելավումների գործընթացի մաս, ՀՀՄՍԽ-ն թողարկել է ՖՀՄՍ 9-ի փոփոխությունները: Փոփոխությունները պարզաբանում են այն վճարները, որոնք կազմակերպությունը ներառում է գնահատելիս, թե արդյոք նոր կամ փոփոխված ֆինանսական պարտավորության պայմանները ըստ էության տարբեր են սկզբնական ֆինանսական պարտավորության պայմաններից: Այս վճարները ներառում են միայն նրանց, որոնք վճարվում կամ ստացվում են փոխառուի և փոխատուի միջև, ներառյալ երրորդ կողմի անունից փոխառուի կամ փոխատուի կողմից վճարված կամ ստացված վճարները: Կազմակերպությունը կիրառում է փոփոխությունը այն ֆինանսական պարտավորությունների նկատմամբ, որոնք փոփոխված կամ փոխանակված են՝ կազմակերպության կողմից փոփոխության առաջին անգամ կիրառման պահին սկսվող կամ դրան հաջորդող տարեկան ժամանակաշրջանների համար:

3. Հաշվապահական հաշվառման նոր հրապարակումներ (շարունակություն)

ՖՀՄՍ 9 Ֆինանսական գործիքներ – Ֆինանսական պարտավորությունների ապաճանաչման համար «10 տոկոս» թեստում ներառվող վճարներ (շարունակություն)

Փոփոխությունն ուժի մեջ է մտնում 2022թ. հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար, սակայն վաղաժամկետ կիրառումը թույլատրվում է: Խումբը կկիրառի փոփոխությունները այն համախմբված ֆինանսական պարտավորությունների նկատմամբ, որոնք ձևափոխված կամ փոխանակված են կազմակերպության կողմից փոփոխության առաջին անգամ կիրառման սկսվող կամ դրան հաջորդող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար, և չի ակնկալվում, որ փոփոխությունները էական ազդեցություն կունենան Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա:

Տոկոսադրույքի ուղենիշի բարեփոխում – Փուլ 2. Փոփոխություններ ՖՀՄՍ 9, ՀՀՄՍ 39, ՖՀՄՍ 7, ՖՀՄՍ 4 և ՖՀՄՍ 16 ստանդարտներում

2020թ. օգոստոսին ՀՀՄՍԽ-ն թողարկել է Տոկոսադրույքի ուղենիշի բարեփոխում – Փուլ 2. Փոփոխություններ ՖՀՄՍ 9, ՀՀՄՍ 39, ՖՀՄՍ 7, ՖՀՄՍ 4 և ՖՀՄՍ 16 ստանդարտներում՝ պարզաբանելու հաշվապահական հաշվառման այն խնդիրները, որոնք առաջանում են IBOR-ը (միջբանկային մեկօրյա տոկոսադրույքը) RFR-ով (ոչ ռիսկային տոկոսադրույքով) փոխարինելիս:

Տոկոսադրույքի ուղենիշի բարեփոխման 2-րդ փուլը ներառում է մի շարք մեղմացումներ և լրացուցիչ բացահայտումներ: Մեղմացումները կիրառելի են այն ժամանակ, երբ ֆինանսական գործիքը անցում է կատարում IBOR-ից (միջբանկային մեկօրյա տոկոսադրույքից) RFR-ի (ոչ ռիսկային տոկոսադրույքի):

Տոկոսադրույքի ուղենիշի բարեփոխման արդյունքում պայմանագրային դրամական հոսքերի որոշման հիմունքների փոփոխությունները, հանդիսանալով գործնական միջոց, պետք է դիտարկվեն (practical expedient to be treated) որպես լողացող տոկոսադրույքի փոփոխության արդյունք, պայմանով որ այդ ֆինանսական գործիքի համար անցումը IBOR (միջբանկային մեկօրյա տոկոսադրույք) ուղենիշային տոկոսադրույքից RFR-ի (ոչ ռիսկային տոկոսադրույք) տեղի է ունենում տնտեսապես հավասար հիմունքներով:

Խումբը կկիրառի IBOR-ի (միջբանկային մեկօրյա տոկոսադրույքի) 2-րդ փուլի բարեփոխումը 2021թ. հունվարի 1-ից:

Փոփոխություններ ՖՀՄՍ 10-ում և ՀՀՄՍ 28-ում՝ Ներդրողի և նրա հետ ասոցիացված ընկերության կամ համատեղ ձեռնարկման միջև ակտիվների վաճառք կամ ներդրում (թողարկված է 2014թ. սեպտեմբերի 11-ին և ուժի մեջ լինելու ամսաթիվը կսահմանվի ՀՀՄՍ Խորհրդի կողմից)

Փոփոխությունները պարզաբանում են ՖՀՄՍ 10-ի և ՀՀՄՍ 28-ի միջև առկա հակասությունը վաճառվող կամ ասոցիացված ընկերությունում կամ համատեղ ձեռնարկման մեջ ներդրվող դուստր կազմակերպության նկատմամբ վերահսկողության կորստի վերաբերյալ: Փոփոխությունները հստակեցնում են, որ ներդրողի և նրա հետ ասոցիացված կազմակերպության կամ համատեղ ձեռնարկման միջև ՖՀՄՍ 3-ի բնորոշման համաձայն ձեռնարկատիրական գործունեություն հանդիսացող ակտիվների վաճառքի կամ ներդրման արդյունքում առաջացած շահույթը կամ վնասը ճանաչվում է ամբողջությամբ: Այնուամենայնիվ, ձեռնարկատիրական գործունեություն չհանդիսացող ակտիվների վաճառքից կամ ներդրումից ստացված ցանկացած շահույթ կամ վնաս ճանաչվում է միայն ասոցիացված կազմակերպությունում կամ համատեղ ձեռնարկման մեջ չփոխկապակցված ներդրողների բաժնեմասի չափով: ՀՀՄՍԽ-ն անորոշ ժամանակով հետաձգել է այս փոփոխությունների ուժի մեջ մտնելու ժամկետը, սակայն փոփոխությունները վաղաժամկետ ընդունողները դրանք պետք է կիրառեն առաջընթաց կերպով: Խումբը կկիրառի փոփոխությունները, երբ ուժի մեջ մտնեն:

4. Տոկոսային եկամուտ

Հազար ՀՀ դրամ	*2020թ.*	*2019թ.*
Տոկոսային եկամուտ արտարժույթով արտահայտված ակտիվների գծով		
Նոստրո հաշիվներ	639,647	2,754,182
Ժամկետային ավանդներ	225,797	382,698
ԱՄՀ-ում տեղաբաշխված միջոցներ	13,096	24,634
Այլ	41,685	70,469
Ընդամենը տոկոսային եկամուտ արտարժույթով արտահայտված ակտիվների գծով	**920,225**	**3,231,983**
Տոկոսային եկամուտ տեղական արժույթով արտահայտված ակտիվների գծով		
Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ և ներդրումներ	32,151,420	30,722,771
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ	1,271,924	1,317,084
Ընդամենը տոկոսային եկամուտ տեղական արժույթով արտահայտված ակտիվների գծով	**33,423,344**	**32,039,855**
Ընդամենը տոկոսային եկամուտ՝ հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքով	**34,343,569**	**35,271,838**

5. Տոկոսային ծախս

Հազար ՀՀ դրամ	*2020թ.*	*2019թ.*
Տոկոսային ծախս արտարժույթով արտահայտված պարտավորությունների գծով		
Այլ փոխառություններ	3,314,406	3,676,153
Պարտավորություններ ԱՄՀ-ի հանդեպ	1,332,940	2,518,184
Ընդամենը տոկոսային ծախս արտարժույթով արտահայտված պարտավորությունների գծով	**4,647,346**	**6,194,337**
Տոկոսային ծախս տեղական արժույթով արտահայտված պարտավորությունների գծով		
Պարտավորություններ ՀՀ Կառավարության հանդեպ (Ծնթգ. 27)	16,914,428	13,737,026
Թողարկված պարտատոմսեր	664,147	677,398
Ֆինանսական և այլ հաստատությունների ավանդներ և հաշիվների մնացորդներ	402,717	281,005
Այլ	207,571	202,443
Ընդամենը տոկոսային ծախս տեղական արժույթով արտահայտված պարտավորությունների գծով	**18,188,863**	**14,897,872**
Ընդամենը տոկոսային ծախս	**22,836,209**	**21,092,209**

6. Զուտ օգուտ/(վնաս) փոխարժեքային տարբերություններից

Հազար ՀՀ դրամ	*2020թ.*	*2019թ.*
Զուտ օգուտ/(վնաս) արտարժույթի վերագնահատումից	63,453,637	(1,982,331)
Զուտ օգուտ սփոթ գործարքներից	1,975,283	526,539
Ընդամենը զուտ օգուտ/(վնաս) փոխարժեքային տարբերություններից	**65,428,920**	**(1,455,792)**

Դրամային ակտիվների և պարտավորությունների վերագնահատումից ստացված զուտ օգուտ/(վնասի) կազմում ներառված է 84,405,394 հազար ՀՀ դրամ գումարով արտարժույթի վերագնահատումից զուտ օգուտը իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքների գծով (2019թ՝ 7,563,296 հազար ՀՀ դրամի զուտ վնաս):

7. Զուտ վնաս ածանցյալ գործիքներից

Հազար ՀՀ դրամ	*2020թ.*	*2019թ.*
Զուտ վնաս Կառավարության հետ կնքված ֆորվարդ պայմանագրից (Ծնթգ. 27)	(3,461,039)	(453,848)
Զուտ (վնաս)/օգուտ սվոպ պայմանագրերից	(395,885)	5,851
Զուտ օգուտ/(վնաս) ֆյուչերսային պայմանագրերից	30,118	(29,635)
Ընդամենը զուտ վնաս ածանցյալ գործիքներից	**(3,826,806)**	**(477,632)**

2007թ. հունվարի 5-ին Կառավարության հետ կնքված պայմանագրի համաձայն Բանկը պարտավորվել է փոխարկել պետական բյուջեի հիմնական արտարժութային մուտքերն ու ելքերը Կառավարության բյուջետային ուղերձում տվյալ տարվա համար սահմանված փոխարժեքներով, ինչը հիմք է հանդիսանում «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի մասին» օրենքում ցուցանիշների հաշվարկման համար: Արտարժույթի փոխանակման այդպիսի գործարքներից օգուտը կամ վնասը Բանկը հաշվառում է որպես ածանցյալ գործիքներից ֆինանսական արդյունք:

2021թ հունվարի 1-ից պետական բյուջեի հիմնական արտարժութային մուտքերն ու ելքերը կիրականացվեն գործարքի ամսաթվի դրությամբ ձևավորված փոխարժեքի հիման վրա:

8. Զուտ օգուտ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներից

Հազար ՀՀ դրամ	*2020թ.*	*2019թ.*
Զուտ օգուտ սեփական կառավարման ներքո գտնվող արտերկրյա արժեթղթերի գծով	9,083,463	14,508,756
Զուտ վնաս հավատարմագրային կառավարման ներքո գտնվող ակտիվների գծով	–	(33,271)
Զուտ օգուտ սեփական կառավարման ներքո գտնվող փողի շուկայի գործիքների գծով	36,871	44,229
Հավատարմագրային կառավարման գծով վճարներ	–	(17,763)
Ընդամենը զուտ օգուտ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներից	**9,120,334**	**14,501,951**

9. Այլ եկամուտ

Հազար ՀՀ դրամ	*2020թ.*	*2019թ.*
Դրամագիտական արժեքներ	1,467,887	725,162
Ֆինանսական գործակալության վճար	427,496	163,865
Այլ	3,061,150	3,337,231
Ընդամենը այլ եկամուտ	**4,956,533**	**4,226,258**

Ֆինանսական գործակալության վճարն իրենից ներկայացնում է Բանկի՝ որպես Կառավարության գործակալի կողմից ստացված վճար՝ գործակալության պայմանագրերի համաձայն: Հիմք ընդունելով գործակալության պայմանագրերի դրույթները՝ Բանկը վարկեր է տրամադրում առևտրային բանկերին և այլ ֆինանսական հաստատություններին:

2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում «Այլ» տողում ներառված 2,453,011 հազար ՀՀ դրամ գումարը ներկայացնում է Բանկի երկու դուստր կազմակերպությունների հասույթը, որոնք տրամադրում են կանխիկի հավաքագրման և պլաստիկ քարտերով վճարումների ծառայություններ (2019թ.՝ 2,460,686 հազար ՀՀ դրամ):

10. Թղթադրամների, դրամագիտական արժեքների թողարկման և մետաղադրամների հատման ծախսեր

Հազար ՀՀ դրամ	*2020թ.*	*2019թ.*
Վաճառված դրամագիտական արժեքների թողարկման ծախսեր	1,234,814	618,159
Թղթադրամների թողարկման և մետաղադրամների հատման ծախսեր	247,066	210,762
Ընդամենը թղթադրամների, դրամագիտական արժեքների թողարկման և մետաղադրամների հատման ծախսեր	**1,481,880**	**828,921**

11. Այլ ծախսեր

Հազար ՀՀ դրամ	*2020թ.*	*2019թ.*
Աշխատակիցների հատուցումներ, վերապատրաստման ծախսեր և հարակից վճարներ	8,033,175	8,292,421
Մաշվածություն և ամորտիզացիա	3,858,750	4,231,048
Վերանորոգում և տեխնիկական սպասարկում	1,560,537	1,672,598
Անվտանգության և ապահովագրական ծախսեր	497,493	562,394
Վճարահաշվարկային համակարգի զարգացման և սպասարկման ծախսեր	457,576	467,193
Մասնագիտական ծառայություններ	57,436	136,632
Այլ	4,368,542	2,533,032
Ընդամենը այլ ծախսեր	**18,833,509**	**17,895,318**

2020թ. դեկտեմբերի 31-ին և 2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների ընթացքում «Այլ» տողում ներառված ծախսերը ներկայացնում են Բանկի և իր դուստր կազմակերպությունների բաժանորդագրության վճարներ, կապի ապահովման, կոմունալ, վարձակալության, գրասենյակային և այլ ծախսեր:

2020թ դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար «Այլ» տողում ներառված են նաև հիմնական միջոցների դուրսգրման ծախսերը, որոնք բացահայտված են Ծնթգ.17-ում:

2020թ. դեկտեմբերի 31-ին և 2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների համար աշխատակիցների հատուցումների, վերապատրաստման ծախսերի և հարակից վճարների, մաշվածության և ամորտիզացիայի ու վերանորոգման և սպասարկման ծախսերի գումարները նաև ներառում են Խմբի դուստր կազմակերպությունների համապատասխան ծախսերի գումարները:

12. Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ և ներդրումներ

Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ արտարժույթով

Հազար ՀՀ դրամ	*31 դեկտեմբերի 2020թ.*	*31 դեկտեմբերի 2019թ.*
Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ արտարժույթով		
Նոստրո հաշիվներ	380,277,935	534,601,773
Ժամկետային ավանդներ	4,173,434	25,536,096
Ածանցյալների պարտադիր մարժա	637,304	2,015
Արժեզրկման պահուստ	(69,667)	(147,896)
Ընդամենը բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ արտարժույթով	**385,019,006**	**559,991,988**

Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում արտարժույթով տեղաբաշխված միջոցների կենտրոնացում

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբն ուներ տեղաբաշխված միջոցներ երկու բանկում, որի մնացորդը գերազանցում էր բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված ընդհանուր միջոցների 10%-ը: 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այդ մնացորդի ընդհանուր գումարը կազմում է 295,730,920 հազար ՀՀ դրամ (2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ երեք բանկում, մնացորդի ընդհանուր գումարը կազմում է 458,250,623 հազար ՀՀ դրամ):

12. Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ և ներդրումներ (շարունակություն)

Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ արտարժույթով (շարունակություն)

Արժեզրկման պահուստ բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում արտարժույթով տեղաբաշխված միջոցների համար

Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված արտարժույթով միջոցների համախառն հաշվեկշռային արժեքի և համապատասխան ԱՊԿ-ի փոփոխության վերլուծությունը 2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում հետևյալն է.

Հազար ՀՀ դրամ	*Փուլ 1*	*Ընդամենը*
Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ արտարժույթով		
Համախառն հաշվեկշռային արժեք 2020թ. հունվարի 1-ի դրությամբ	**560,139,884**	**560,139,884**
Ստեղծված կամ ձեռքբերված նոր ակտիվներ	381,508,352	**381,508,352**
Մարված ակտիվներ	(556,559,563)	**(556,559,563)**
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**385,088,673**	**385,088,673**

Հազար ՀՀ դրամ	*Փուլ 1*	*Ընդամենը*
Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ արտարժույթով		
ԱՊԿ 2020թ հունվարի 1-ի դրությամբ	**147,896**	**147,896**
Ստեղծված կամ ձեռքբերված նոր ակտիվներ	4,412	**4,412**
Մարված ակտիվներ	(65,406)	**(65,406)**
ԱՊԿ հաշվարկման մոդելների կամ օգտագործվող ելակետային տվյալների փոփոխություններ	(17,235)	**(17,235)**
2020թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	**69,667**	**69,667**

Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված արտարժույթով միջոցների համախառն հաշվեկշռային արժեքի և համապատասխան ԱՊԿ-ի փոփոխության վերլուծությունը 2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում հետևյալն է.

Հազար ՀՀ դրամ	*Փուլ 1*	*Ընդամենը*
Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ արտարժույթով		
Համախառն հաշվեկշռային արժեք 2019թ. հունվարի 1-ի դրությամբ	**348,152,134**	**348,152,134**
Ստեղծված կամ ձեռքբերված նոր ակտիվներ	556,509,344	**556,509,344**
Մարված ակտիվներ	(344,521,594)	**(344,521,594)**
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**560,139,884**	**560,139,884**

Հազար ՀՀ դրամ	*Փուլ 1*	*Ընդամենը*
Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ արտարժույթով		
ԱՊԿ 2019թ հունվարի 1-ի դրությամբ	**85,277**	**85,277**
Ստեղծված կամ ձեռքբերված նոր ակտիվներ	72,815	**72,815**
Մարված ակտիվներ	(85,268)	**(85,268)**
ԱՊԿ հաշվարկման մոդելների կամ օգտագործվող ելակետային տվյալների փոփոխություններ	75,072	**75,072**
2019թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	**147,896**	**147,896**

12. Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ և ներդրումներ (շարունակություն)

Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ և ներդրումներ տեղական արժույթով

Հազար ՀՀ դրամ	*31 դեկտեմբերի 2020թ.*	*31 դեկտեմբերի 2019թ.*
Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ և ներդրումներ տեղական արժույթով		
Վարկեր բանկերին և ֆինանսական կազմակերպություններին KfW, Համաշխարհային բանկի, Ասիական զարգացման բանկի և Եվրոպական ներդրումային բանկի հետ համաձայնագրերի շրջանակներում	140,847,175	127,976,053
Հետգնման պայմանագրեր և այլ մեկօրյա միջոցներ	345,952,769	126,669,774
Հիփոթեքային վերաֆինանսավորում	106,377,016	90,373,958
Առևտրային բանկերում ավանդներ և ընթացիկ հաշիվներ	87,282,360	63,926,423
Ներդրումներ՝ ամորտիզացված արժեքով չափված	24,305,412	24,082,487
Այլ վարկեր	3,208,943	3,447,368
Արժեզրկման պահուստ	(3,438,912)	(2,593,195)
Ընդամենը բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ և ներդրումներ տեղական արժույթով	**704,534,763**	**433,882,868**

Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղական արժույթով տեղաբաշխված միջոցների և ներդրումների կենտրոնացում

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ երկու բանկի մնացորդները գերազանցում են բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղական արժույթով տեղաբաշխված միջոցների ընդհանուր գումարի 10%-ը (2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ երկու բանկ):

Հակադարձ հետգնման համաձայնագրերով գրավի առարկա են հանդիսանում արժեթղթերը, որոնք Խումբը կարող է վաճառել կամ վերագրավադրել: 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հակադարձ հետգնման պայմանագրեր են կնքվել 12 տեղական բանկի հետ (2019 դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 6 տեղական բանկ): Այս պայմանագրերով գրավի առարկա հանդիսացող արժեթղթերի իրական արժեքները ներկայացված են ստորև.

Հազար ՀՀ դրամ	*31 դեկտեմբերի 2020թ.*	*31 դեկտեմբերի 2019թ.*
Կառավարության գանձապետական արժեթղթեր	306,786,374	116,749,671
Կառավարության կողմից թողարկված Եվրոպարտատոմսեր	11,951,592	5,354,434
Կորպորատիվ պարտատոմսեր	43,406,326	10,350,452
Ընդամենը	**362,144,292**	**132,454,557**

12. Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ և ներդրումներ (շարունակություն)

Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ և ներդրումներ տեղական արժույթով (շարունակություն)

KfW-ի, Ասիական զարգացման բանկի (ԱԶԲ), Եվրոպական ներդրումային բանկի (ԵՆԲ) և Համաշխարհային բանկի հետ պայմանագրերի շրջանակներում վարկեր են տրամադրվել տեղական առևտրային բանկերին հետևյալ ծրագրերի ներքո, որոնք ֆինանսավորվում են KfW բանկային խմբի, ԵՆԲ, ԱԶԲ և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի (Համաշխարհային բանկի անդամ կազմակերպություն) կողմից.

- *ՓՄՁ աջակցություն.* Համաշխարհային բանկի և KfW-ի ՓՄՁ աջակցության ծրագրերի նպատակն է՝ Հայաստանում զարգացնել ՓՄՁ-ները, մասնավորապես՝ առևտրային բանկերին և ունիվերսալ վարկային կազմակերպություններին ապահովելով անհրաժեշտ ֆինանսական միջոցներ՝ միկրո, փոքր և միջին ձեռնարկությունների վարկավորումը առավել արդյունավետ և շահութաբեր դարձնելու նպատակով: Սա իրականացվում է գործընկեր բանկերում նոր վարկային գործիքակազմի /տեխնոլոգիաների/ ներդրման և բարձրակարգ վարկային մասնագետների ուսուցման և վերապատրաստումների կազմակերպման միջոցով: 2014թ. ընթացքում նոր վարկային գիծ է ստացվել ԱԶԲ-ի «Կանանց ձեռներեցության ոլորտի աջակցման և զարգացման» ծրագրի շրջանակներում: Ծրագրի հիմնական նպատակն է ՀՀ ֆինանսական համակարգի միջոցով խթանել ձեռներեցության զարգացումը կանանց շրջանում՝ մեծացնելով ազգային արժույթով ֆինանսական միջոցների հասանելիությունը կանանց պատկանող ՓՄՁ-ների համար: 2015թ. ընթացքում նոր վարկ է ստացվել ԵՆԲ-ից՝ հիմնականում գյուղմշակման, գյուղատնտեսության և զբոսաշրջության ոլորտների ՓՄՁ-ներին առևտրային բանկերի և ունիվերսալ վարկային կազմակերպությունների միջոցով փոխառություններ տրամադրելու նպատակով: 2017թ. ընթացքում ևս մեկ վարկ է ստացվել ԵՆԲ-ից «Հայաստանի Գյուղատնտեսության և տուրիզմի ֆինանսավորում 2 վարկ ՓՄՁ-ներին և միջին կապիտալիզացիա ունեցող կազմակերպություններին» Ծրագրի շրջանակներում: Այս վարկի պայմանները հիմնականում նույնն են, ինչ առաջին փուլի պայմանները: Հիմնական տարբերությունը կլիմայական փոփոխությունների տարրի ներառումն է, որը պահանջում է ենթավարկառուներից ձեռնարկել որոշակի քայլեր շրջակա միջավայրի վրա ազդեցությունը բարելավելու համար: 2020թ. ընթացքում ևս մեկ վարկ է ստացվել ԵՆԲ-ից «Մասնավոր Հատվածի Ֆինանսավորում» վարկային ծրագրի շրջանակներում (ԵՆԲ-III): Ծրագրի նպատակն է զարգացնել գյուղատնտեսության, զբոսաշրջության և արտադրության ոլորտները, ինչպես նաև խթանել արտահանումը Հայաստանի Հանրապետությունում: 2016թ. ընթացքում նոր վարկ է ստացվել «Էներգաարդյունավետություն փոքր և միջին ձեռնարկությունների համար» վարկային ծրագրի շրջանակներում: Ծրագրի հիմնական նպատակն է՝ ստեղծել և ընդլայնել էներգաարդյունավետության վարկերի առաջարկը Հայաստանի ֆինանսական կազմակերպություններում, և միաժամանակ բավարարել էներգաարդյունավետության վարկերի պահանջարկը միկրո, փոքր և միջին ձեռնարկությունների համար: Ծրագրի նպատակն է՝ նպաստել հայկական ՓՄՁ-ների կողմից էներգիայի պահանջարկի և վնասակար գազերի արտանետման նվազմանը, ինչպես նաև խթանել ձեռնարկությունների մրցունակությունը:
- *Վերականգնվող էներգիայի զարգացում.* Ծրագրի ընդհանուր նպատակն է՝ նպաստել էներգամատակարարման բարելավմանը և Հայաստանում մասնավոր հատվածի հետագա զարգացմանը՝ էլեկտրաէներգիայի արտադրության համար վերականգնվող էներգիայի աղբյուրների ծախսարդյունավետ օգտագործումն ապահովելու միջոցով: Ծրագրով նախատեսվում է աջակցել վերականգնվող էներգիայի օգտագործմանը, մասնավորապես փոքր հիդրոէլեկտրակայաններին (ՓՀԷԿ)՝ վարկեր տրամադրելով անհատ ձեռնարկատերերին և մասնավոր ձեռնարկություններին:
- *Բնակարանային ֆինանսավորման կայուն շուկայի զարգացում.* Ծրագրի նպատակն է՝ ընդլայնել առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից անշարժ գույքի ձեռքբերման և վերանորոգման նպատակով տնային տնտեսություններին հատկացվող վարկավորումը:

Ծրագրերի պայմանների համաձայն, Խումբը, կիրառելով տեխնիկական և ֆինանսական չափանիշներ, սահմանում է համապատասխան հայաստանյան բանկեր և ֆինանսական հաստատություններ, որոնցում տեղաբաշխում է միջոցներ՝ այդ գործընկերների հետ ստորագրված պայմանագրերի համաձայն: Բանկերը և ֆինանսական հաստատությունները որոշում են վերջնական փոխառուներին՝ ստանձնելով տրամադրված վարկերի հետ կապված ռիսկերը:

12. Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ և ներդրումներ (շարունակություն)

Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ և ներդրումներ տեղական արժույթով (շարունակություն)

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ KfW-ի, Համաշխարհային բանկի, ԵՆԲ-ի և ԱՋԲ-ի հետ պայմանագրերի շրջանակներում վարկեր են տրամադրվել տեղական 14 բանկերի (2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 13 տեղական բանկերի) և 9 այլ ֆինանսական կազմակերպությունների (2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 9 այլ ֆինանսական կազմակերպությունների):

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հիփոթեքային վերաֆինանսավորումը ֆինանսական կազմակերպություններին կատարվել է մինչև 10 տարի մարման ժամկետով (2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 10 տարի):

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հիփոթեքային վերաֆինանսավորման վարկերն ապահովված են գրավով՝ հաճախորդներին տրամադրված վարկային պայմանագրերի շրջանակներում պահանջի իրավունքով՝ 106,094,093 հազար ՀՀ դրամի գումարով (2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 90,766,893 հազար ՀՀ դրամ):

Առևտրային բանկերում տեղաբաշխված ավանդները և ընթացիկ հաշիվները ներառում են Խմբի դուստր կազմակերպությունների կողմից առևտրային բանկերում կատարված ցպահանջ և կարճաժամկետ տեղաբաշխումները:

Խմբի ղեկավարությունը 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 24,305,412 հազար ՀՀ դրամ ներդրումները դասակարգել է որպես ամորտիզացված արժեքով չափվող ներդրումներ (2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 24,082,487 հազար ՀՀ դրամ): Որոշումը կայացվել է հիմք ընդունելով ներդրումների կառավարման բիզնես մոդելը, որի նպատակն է պահել այդ ֆինանսական ակտիվները պայմանագրային դրամական միջոցների հոսքերի հավաքագրման նպատակով:

Այլ վարկերն ապահովված են 2,657,699 հազար ՀՀ դրամ արժեքով անշարժ գույքով (2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 2,830,489 հազար ՀՀ դրամ) և 124,105 ՀՀ դրամ արժեքով շարժական գույքով և այլ ակտիվներով (2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 126,009 հազար ՀՀ դրամ):

Արժեզրկման պահուստ բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղական արժույթով տեղաբաշխված միջոցների և ներդրումների համար

Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված տեղական արժույթով միջոցների և ներդրումների համախառն հաշվեկշռային արժեքի և համապատասխան ԱՊԿ-ի փոփոխության վերլուծությունը 2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում հետևյալն է.

Հազար ՀՀ դրամ	*Փուլ 1*	*Ընդամենը*
Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ և ներդրումներ տեղական արժույթով		
Համախառն հաշվեկշռային արժեք 2020թ. հունվարի 1-ի դրությամբ	**436,476,063**	**436,476,063**
Ստեղծված կամ ձեռքբերված նոր ակտիվներ	472,592,109	**472,592,109**
Մարված ակտիվներ	(201,094,497)	**(201,094,497)**
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**707,973,675**	**707,973,675**

Հազար ՀՀ դրամ	*Փուլ 1*	*Ընդամենը*
Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ և ներդրումներ տեղական արժույթով		
ԱՊԿ 2020թ. հունվարի 1-ի դրությամբ	**2,593,195**	**2,593,195**
Ստեղծված կամ ձեռքբերված նոր ակտիվներ	870,474	**870,474**
Մարված ակտիվներ	(299,699)	**(299,699)**
ԱՊԿ հաշվարկման մոդելների կամ օգտագործվող ելակետային տվյալների փոփոխություններ	274,942	**274,942**
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**3,438,912**	**3,438,912**

12. Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ և ներդրումներ (շարունակություն)

Արժեզրկման պահուստ բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղական արժույթով տեղաբաշխված միջոցների և ներդրումների համար (շարունակություն)

Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված տեղական արժույթով միջոցների և ներդրումների համախառն հաշվեկշռային արժեքի և համապատասխան ԱՊԿ-ի փոփոխության վերլուծությունը 2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում հետևյալն է.

Հազար ՀՀ դրամ	*Փուլ 1*	*Ընդամենը*
Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ և ներդրումներ տեղական արժույթով		
Համախառն հաշվեկշռային արժեք 2019թ. հունվարի 1-ի դրությամբ	**446,449,344**	**446,449,344**
Ստեղծված կամ ձեռքբերված նոր ակտիվներ	217,104,057	**217,104,057**
Մարված ակտիվներ	(227,077,338)	**(227,077,338)**
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**436,476,063**	**436,476,063**

Հազար ՀՀ դրամ	*Փուլ 1*	*Ընդամենը*
Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ և ներդրումներ տեղական արժույթով		
ԱՊԿ 2019թ. հունվարի 1-ի դրությամբ	**2,801,183**	**2,801,183**
Ստեղծված կամ ձեռքբերված նոր ակտիվներ	632,756	**632,756**
Մարված ակտիվներ	(222,275)	**(222,275)**
ԱՊԿ հաշվարկման մոդելների կամ օգտագործվող ելակետային տվյալների փոփոխություններ	(618,469)	**(618,469)**
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**2,593,195**	**2,593,195**

13. Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ

Հազար ՀՀ դրամ	*31 դեկտեմբերի 2020թ.*	*31 դեկտեմբերի 2019թ.*
Ակտիվներ		
Պարտքային և հաստատագրված եկամտով այլ գործիքներ արտարժույթով		
Արտերկրյա պարտատոմսեր	825,951,385	763,710,331
Փողի շուկայի գործիքներ	104,520,482	9,648,011
Ընդամենը իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ արտարժույթով	**930,471,867**	**773,358,342**

2020թ. և 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող արտերկրյա պարտատոմսերն իրենցից ներկայացնում են.

Հազար ՀՀ դրամ	*31 դեկտեմբերի 2020թ.*	*31 դեկտեմբերի 2019թ.*
Պետական պարտատոմսեր	737,180,656	639,177,514
Պետական գործակալությունների պարտատոմսեր	–	24,001,326
Այլ արժեթղթեր	88,770,729	100,531,491
Ընդամենը	**825,951,385**	**763,710,331**

Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող գնանշված արտերկրյա արժեթղթերն իրենցից ներկայացնում են եվրոպական երկրների կառավարությունների կողմից թողարկված արժեթղթեր և ԱՄՆ գանձապետական մուրհակներ, պետական գործակալությունների, արտերկրյա բանկերի և այլ ֆինանսական հաստատությունների կողմից թողարկած արժեթղթեր:

14. Ածանցյալ ֆինանսական գործիքներ

Հազար ՀՀ դրամ	*31 դեկտեմբերի 2020թ.*	*31 դեկտեմբերի 2019թ.*
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ		
Արտարժութային սվոփ պայմանագրեր ներքին շուկայում	70,825	–
Արտարժութային սվոփ պայմանագրեր արտաքին շուկայում	66,743	–
Արտարժութային ֆյուչերս պայմանագրեր արտաքին շուկայում	5,553	1,645
Ֆորվարդ պայմանագիր Կառավարության հետ (Ծնթգ. 7)	–	79,455
Ընդամենը ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	**143,121**	**81,100**

15. Ներդրումային արժեթղթեր

Հազար ՀՀ դրամ	*31 դեկտեմբերի 2020թ.*	*31 դեկտեմբերի 2019թ.*
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ արտարժույթով		
Բաժնային ներդրումներ– չգնանշվող		
Արտերկրյա արժեթղթեր	2,615,495	1,937,372
SWIFT	3,211	3,211
Ընդամենը բաժնային ներդրումներ	**2,618,706**	**1,940,583**
Պարտքային գործիքներ		
Կորպորատիվ պարտատոմսեր արտարժույթով	840,759	761,584
Ընդամենը պարտքային գործիքներ	**840,759**	**761,584**
Ընդամենը իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ արտարժույթով	**3,459,465**	**2,702,167**
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ տեղական արժույթով		
Պարտքային գործիքներ		
ՀՀ Կառավարության գանձապետական արժեթղթեր	11,578,230	13,189,425
ՀՀ Կառավարության կողմից թողարկված մուրհակ (Ծնթգ. 25)	66,055,949	73,810,843
Ընդամենը պարտքային գործիքներ	**77,634,179**	**87,000,268**
Բաժնային ներդրումներ		
Այլ ներդրումներ	909,514	871,874
Ընդամենը բաժնային ներդրումներ	**909,514**	**871,874**
Ընդամենը իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ տեղական արժույթով	**78,543,693**	**87,872,142**
Ընդամենը իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ	**82,003,158**	**90,574,309**

2020թ. դեկտեմբերի 31-ի և 2019թ դեկտեմբերի 31-ի դրությամբ արտերկրյա արժեթղթերի կազմում ներառված են բաժնային ներդրումներ՝ դասակարգված որպես իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ արտարժույթով, որոնք հանդիսանում են Խմբի դուստր կազմակերպություններից մեկի ներդրումը զարգացման հիմնադրամում, որի նախաձեռնողն ու կառավարողը KfW-ն է: Զարգացման հիմնադրամը ստեղծվել է Հարավարևելյան Եվրոպայի տարածաշրջանի, ներառյալ Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացումն ու բարեկեցությունը խթանելու համար՝ լրացուցիչ զարգացման ֆինանսավորման կայուն ապահովման միջոցով:

2020թ դեկտեմբերի 31-ի և 2019թ դեկտեմբերի 31-ի դրությամբ տեղական արժույթով՝ դասակարգված որպես իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ներդրումներ, արժեթղթերն իրենցից ներկայացնում են ՀՀ Կառավարության պետական արժեկտրոնային արժեթղթեր: 2020թ դեկտեմբերի 31-ի և 2019թ դեկտեմբերի 31-ի դրությամբ արտարժույթով պարտքային արժեթղթերը, դասակարգված որպես իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ներդրումներ արտարժույթով, թողարկված են մեկ տեղական բանկի կողմից:

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ներդրումային արժեթղթերը չափվում են իրական արժեքով՝ օգտագործելով գնահատման տեխնիկա, որը օգտագործում է ընթացիկ շուկայական տոկոսադրույքները՝ այդ ֆինանսական գործիքների ապագա դրամական հոսքերը զեղչելու համար:

15. Ներդրումային արժեթղթեր (շարունակություն)

2020 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Կառավարության կողմից թողարկված անտոկոս ցպահանջ հասարակ մուրհակի արժեքը 66,055,949 հազար ՀՀ դրամ է (2019թ.՝ 73,810,843 հազար ՀՀ դրամ): Ղեկավարությունը գտնում է, որ մուրհակի հաշվեկշռային արժեքը մոտավորապես հավասար է դրա իրական արժեքին (Ծնթգ. 25):

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող տեղական արժույթով պարտքային գործիքների համախառն հաշվեկշռային արժեքի և համապատասխան ԱՊԿ-ի փոփոխության վերլուծությունը 2020թ դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում հետևյալն է՝

Հազար ՀՀ դրամ	*Փուլ 1*	*Ընդամենը*
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային գործիքներ տեղական արժույթով – ՀՀ պետական արժեթղթեր		
Համախառն հաշվեկշռային արժեք 2020թ. հունվարի 1-ի դրությամբ	**13,189,425**	**13,189,425**
Ստեղծված կամ ձեռքբերված նոր ակտիվներ	23,853	**23,853**
Մարված ակտիվներ	(1,635,048)	**(1,635,048)**
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**11,578,230**	**11,578,230**

Հազար ՀՀ դրամ	*Փուլ 1*	*Ընդամենը*
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային գործիքներ տեղական արժույթով – ՀՀ պետական արժեթղթեր		
ԱՊԿ 2020թ. հունվարի 1-ի դրությամբ	**34,320**	**34,320**
Ստեղծված կամ ձեռքբերված նոր ակտիվներ	132	**132**
Մարված ակտիվներ	(4,133)	**(4,133)**
ԱՊԿ հաշվարկման մոդելների կամ օգտագործվող ելակետային տվյալների փոփոխություններ	28,270	**28,270**
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**58,589**	**58,589**

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող տեղական արժույթով պարտքային գործիքների համախառն հաշվեկշռային արժեքի և համապատասխան ԱՊԿ-ի փոփոխության վերլուծությունը 2019թ դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում հետևյալն է՝

Հազար ՀՀ դրամ	*Փուլ 1*	*Ընդամենը*
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային գործիքներ տեղական արժույթով – ՀՀ պետական արժեթղթեր		
Համախառն հաշվեկշռային արժեք 2019թ. հունվարի 1-ի դրությամբ	**13,707,676**	**13,707,676**
Ստեղծված կամ ձեռքբերված նոր ակտիվներ	742,495	**742,495**
Մարված ակտիվներ	(1,260,746)	**(1,260,746)**
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**13,189,425**	**13,189,425**

Հազար ՀՀ դրամ	*Փուլ 1*	*Ընդամենը*
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային գործիքներ տեղական արժույթով – ՀՀ պետական արժեթղթեր		
ԱՊԿ 2019թ. հունվարի 1-ի դրությամբ	**60,164**	**60,164**
Ստեղծված կամ ձեռքբերված նոր ակտիվներ	1,940	**1,940**
Մարված ակտիվներ	(1,964)	**(1,964)**
ԱՊԿ հաշվարկման մոդելների կամ օգտագործվող ելակետային տվյալների փոփոխություններ	(25,820)	**(25,820)**
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**34,320**	**34,320**

15. Ներդրումային արժեթղթեր (շարունակություն)

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող արտարժույթով պարտքային գործիքների համախառն հաշվեկշռային արժեքի և համապատասխան ԱՊԿ-ի փոփոխության վերլուծությունը 2020թ դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում դրությամբ հետևյալն է՝

Հազար ՀՀ դրամ	*Փուլ 1*	*Ընդամենը*
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային գործիքներ արտարժույթով		
Համախառն հաշվեկշռային արժեք 2020թ. հունվարի 1-ի դրությամբ	**761,584**	**761,584**
Ստեղծված կամ ձեռքբերված նոր ակտիվներ	79,175	**79,175**
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**840,759**	**840,759**

Հազար ՀՀ դրամ	*Փուլ 1*	*Ընդամենը*
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային գործիքներ արտարժույթով		
ԱՊԿ 2020թ. հունվարի 1-ի դրությամբ	**6,973**	**6,973**
Ստեղծված կամ ձեռքբերված նոր ակտիվներ	1,335	**1,335**
ԱՊԿ հաշվարկման մոդելների կամ օգտագործվող ելակետային տվյալների փոփոխություններ	6,078	**6,078**
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**14,386**	**14,386**

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող արտարժույթով պարտքային գործիքների համախառն հաշվեկշռային արժեքի և համապատասխան ԱՊԿ-ի փոփոխության վերլուծությունը 2019թ դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում հետևյալն է՝

Հազար ՀՀ դրամ	*Փուլ 1*	*Ընդամենը*
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային գործիքներ արտարժույթով		
Համախառն հաշվեկշռային արժեք 2019թ. հունվարի 1-ի դրությամբ	**1,067,864**	**1,067,864**
Մարված ակտիվներ	(306,280)	**(306,280)**
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**761,584**	**761,584**

Հազար ՀՀ դրամ	*Փուլ 1*	*Ընդամենը*
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային գործիքներ արտարժույթով		
ԱՊԿ 2019թ. հունվարի 1-ի դրությամբ	**11,999**	**11,999**
Մարված ակտիվներ	(3,018)	**(3,018)**
ԱՊԿ հաշվարկման մոդելների կամ օգտագործվող ելակետային տվյալների փոփոխություններ	(2,008)	**(2,008)**
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**6,973**	**6,973**

16. Գործարքներ Արժույթի միջազգային հիմնադրամի հետ

ԱՄՀ-ում տեղաբաշխված միջոցներ

Հազար ՀՀ դրամ	*31 դեկտեմբերի 2020թ.*	*31 դեկտեմբերի 2019թ.*
ԱՄՀ-ում տեղաբաշխված միջոցներ		
Բաժնեմասը ԱՄՀ-ում (անդամակցություն)	96,943,896	85,438,192
ԱՄՀ-ում ՀՓԻ միջոցներ	4,690,218	2,953,756
Հաշվեգրված տոկոսներ	2,834	6,282
Ընդամենը ԱՄՀ-ում տեղաբաշխված միջոցներ	**101,636,948**	**88,398,230**

Հայաստանի Հանրապետությունը ԱՄՀ-ի անդամ է: Բանկը հանդես է գալիս որպես Հայաստանի Հանրապետության՝ ԱՄՀ-ում անդամակցության բաժնեմասի պահառու:

16. Գործարքներ Արժույթի միջազգային հիմնադրամի հետ (շարունակություն)

ԱՄՀ-ում տեղաբաշխված միջոցներ (շարունակություն)

Բաժնեմասի հաշվեկշիռն ակտիվի հատուկ տեսակ է: Բաժնեմասերը լինում են տարբեր՝ կախված յուրաքանչյուր երկրի տնտեսության չափից, և որոշվում են ԱՄՀ-ի կառավարիչների խորհրդի կողմից: Բաժնեմասով որոշվում են ԱՄՀ-ում անդամ երկրի ձայնի իրավունքը, ԱՄՀ-ի ֆինանսական միջոցների հասանելիության սահմանաչափերը և մասնակցի մասնաբաժինը ԱՄՀ-ի հաշվարկային միավորի՝ ՀՓԻ-ների տեղաբաշխում իրականացնելիս: Հայաստանի Հանրապետության բաժնեմասի 75%-ի համար վճարումը կատարվել է Բանկի կողմից ԱՄՀ-ին թողարկված անտոկոս հասարակ մուրհակի տեսքով: 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Հայաստանի Հանրապետության բաժնեմասը ԱՄՀ-ում կազմել է 128,800 հազար ՀՓԻ կամ 96,943,896 հազար ՀՀ դրամ՝ հիմք ընդունելով տարվա վերջի՝ ՀՓԻ-ի նկատմամբ ՀՀ դրամի պաշտոնական փոխարժեքը (2019թ.՝ 128,800 հազար ՀՓԻ կամ 85,438,192 հազար ՀՀ դրամ՝ հիմք ընդունելով տարվա վերջի՝ ՀՓԻ-ի նկատմամբ ՀՀ դրամի պաշտոնական փոխարժեքը): Անդամակցության բաժնեմասն անտոկոս է և ոչ ընթացիկ ակտիվ է:

Բանկն ԱՄՀ-ում ՀՓԻ-ով արտահայտված ընթացիկ հաշիվն օգտագործում է ԱՄՀ-ի հետ գործարքներ կատարելիս: Այդ ընթացիկ հաշիվը տոկոսային է. տոկոսները հաշվարկվում են՝ հիմք ընդունելով շաբաթական կտրվածքով ԱՄՀ-ի կողմից հրապարակվող ՀՓԻ տոկոսադրույքը:

Ստորև ներկայացված են 2020թ. դեկտեմբերի 31-ին և 2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների ընթացքում ՀՓԻ հաշվում շարժերը.

Հազար ՀՀ դրամ	*2020թ.*	*2019թ.*
ՀՓԻ հաշվի մնացորդը հունվարի 1-ի դրությամբ	**2,953,756**	**2,887,490**
ՀՓԻ-ների ավելացում	40,947,302	37,649,890
Վարկերի մարում ԱՄՀ-ին.		
Բանկի անունից՝		
(Poverty Reduction and Growth Trust (PRGT)	(4,476,013)	(4,182,497)
Extended Fund Facility (EFF)	(19,595,543)	(17,289,350)
Կառավարության անունից՝		
(Poverty Reduction and Growth Trust (PRGT)	(16,150,746)	(13,514,842)
Վարկերին վերաբերող միջնորդավճարների վճարում	–	(76,712)
Այլ եկամուտ	9,701	–
Այլ վճարներ	(764)	(913)
ԱՄՀ միջոցների օգտագործման դիմաց տոկոսագումարների վճարում.		
Բանկի անունից	(1,243,503)	(2,003,820)
ՀՓԻ տեղաբաշխումից ստացված միջոցների օգտագործման դիմաց տոկոսագումարի վճարում	(182,800)	(611,525)
ՀՓԻ միջոցներից եկամուտ	16,791	23,945
Փոխարժեքային տարբերություններ	2,412,037	72,090
ՀՓԻ հաշվի մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	**4,690,218**	**2,953,756**

Վերը ներկայացված աղյուսակում ներառված գործարքների գումարները ՀՀ դրամի համարժեքով են՝ հիմք ընդունելով գործարքների տեղի ունենալու ամսաթվի դրությամբ ՀՓԻ/դրամ փոխարժեքը:

Պարտավորություններ ԱՄՀ-ի հանդեպ

Հազար ՀՀ դրամ	*31 դեկտեմբերի 2020թ.*	*31 դեկտեմբերի 2019թ.*
Արժեթղթերի հաշիվ	95,000,000	159,285,304
ԱՄՀ-ի հանդեպ պարտավորությունների ճշգրտման հաշիվ	23,091,131	(823,199)
Թիվ 1 հաշիվ	51,438,805	9,436,432
Թիվ 2 հաշիվ	2,547	2,590
ՀՓԻ տեղաբաշխում	66,226,424	58,366,397
ECF վարկ՝	11,515,851	14,341,411
Հաշվեկշռային արժեք	*11,315,776*	*13,795,377*
Հետաձգված եկամուտ	*200,075*	*546,034*
Հաշվեգրված տոկոսներ	221,810	339,968
Ընդամենը պարտավորություններ ԱՄՀ-ի հանդեպ	**247,496,568**	**240,948,903**

Արժեթղթերի հաշիվը, ճշգրտման հաշիվը և թիվ 1 հաշիվը ներառում են Բանկի պարտավորությունները EFF վարկի և անդամակցության գումարների գծով: Ներկայումս ԱՄՀ-ի հետ բոլոր հիմնական հաշվարկներն իրականացվում են թիվ 1 հաշվի միջոցով: Թիվ 2 հաշիվն օգտագործվում է ԱՄՀ-ի կողմից վարչական նպատակների համար:

16. Գործարքներ Արժույթի միջազգային հիմնադրամի հետ (շարունակություն)

Պարտավորություններ ԱՄՀ-ի հանդեպ (շարունակություն)

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ԱՄՀ-ի հանդեպ Բանկի պարտավորությունների մի մասը և անդամակցության գումարը ծածկվում են Խմբի թողարկած հասարակ մուրհակով՝ 95,000,000 հազար ՀՀ դրամի (2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 159,285,304 հազար ՀՀ դրամի) չափով: Բացառությամբ անդամակցության բաժնեմասի և ՀՓԻ տեղաբաշխման մասով պարտավորության՝ Բանկի պարտավորությունը ԱՄՀ-ի հանդեպ 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ներառում է պարտավորություններն ըստ «Երկարաժամկետ վարկային գործիք» (Extended Credit Facility (ECF)) ծրագրի և «Երկարաձգվող ֆինանսավորում» (Extended Fund Facility (EFF)) ծրագրի: «Երկարաձգվող ֆինանսավորում» ծրագրի ներքո ստացված միջոցները հաշվառվում են թիվ 1 հաշվում:

ECF (Extended Credit Facility) վարկը ֆինանսական աջակցություն է տրամադրում վճարային հաշվեկշռի հետ երկարատև խնդիրներ ունեցող երկրներին: ECF-ը ստեղծվել է նոր հաստատված «Աղքատության կրճատում և տնտեսական աճ» ծրագրի ներքո և մաս է կազմում առավել լայն շրջանակի բարեփոխումների, որոնք ուղղված են ԱՄՀ-ի ֆինանսական աջակցությունն առավել ճկուն դարձնելու համար և որոնք առավել հարմարեցված են ցածր եկամուտ ունեցող երկրների բազմազան կարիքներին, ներառյալ ճգնաժամային ժամանակաշրջաններում: 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ECF-ն անտոկոս է (2019թ.՝ 0%): 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ չմարված վարկերը ենթակա են մարման 2021թ. հունիսից մինչև 2023թ. հունիս (2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ չմարված վարկեր՝ 2020թ. հունիսից մինչև 2023թ. հունիս):

EFF (Extended Fund Facility) վարկը տրամադրվում է երկրներին միջնաժամկետ վճարման խնդիրների հաղթահարման համար: EFF վարկի տոկոսադրույքը լողացող է և հրապարակվում է ԱՄՀ-ի կողմից շաբաթական կտրվածքով: 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ չմարված վարկերը ենթակա են մարման 2021թ. մարտից մինչև 2027թ. հունիս (2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ չմարված վարկեր՝ 2020թ. մարտից մինչև 2027թ. հունիս):

ԱՄՀ անդամ երկրների միջազգային պահուստներն ավելացնելու նպատակով ԱՄՀ-ն ՀՓԻ տեղաբաշխում է իրականացնում անդամ երկրներին: ՀՓԻ տեղաբաշխման տոկոսադրույքը լողացող է և հրապարակվում է ԱՄՀ-ի կողմից շաբաթական կտրվածքով: ՀՓԻ տեղաբաշխումը չունի սահմանված մարման ժամկետ, սակայն կարող է չեղարկվել ԱՄՀ-ի կողմից:

17. Հիմնական միջոցներ

Հազար ՀՀ դրամ	*Հող և շենքեր*	*Ցանցեր, համակարգչային և այլ սարքավորումներ*	*Փոխադրամիջոցներ*	*Անավարտ շինարարություն*	*Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ*	*Ընդամենը*
Սկզբնական արժեք						
Մնացորդը առ 1 հունվարի 2019թ.	**75,506,282**	**23,199,768**	**682,951**	**12,849**	**–**	**99,401,850**
ՖՀՄՍ 16-ի կիրառման ազդեցությունը	–	–	–	–	482,988	**482,988**
Ավելացումներ	–	710,342	33,110	209,466	25,346	**978,264**
Օտարումներ	(888,809)	(175,310)	(88,674)	–	(2,640)	**(1,155,433)**
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2019թ.	**74,617,473**	**23,734,800**	**627,387**	**222,315**	**505,694**	**99,707,669**
Ավելացումներ	–	515,241	–	189,795	30,051	**735,087**
Օտարումներ և դուրսգրում	(2,171,743)	(1,391,037)	(10,138)	–	(1,774)	**(3,574,692)**
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2020թ.	**72,445,730**	**22,859,004**	**617,249**	**412,110**	**533,971**	**96,868,064**
Մաշվածություն						
Մնացորդը առ 1 հունվարի 2019թ.	**16,448,507**	**13,696,853**	**515,571**	**–**	**–**	**30,660,931**
Տարվա մաշվածության ծախս	2,419,263	1,220,232	44,250	–	102,501	**3,786,246**
Օտարումներ	(159,832)	(172,230)	(84,741)	–	(2,640)	**(419,443)**
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2019թ.	**18,707,938**	**14,744,855**	**475,080**	**–**	**99,861**	**34,027,734**
Տարվա մաշվածության ծախս	2,199,854	1,064,349	36,376	–	99,548	**3,400,127**
Օտարումներ և դուրսգրում	(750,703)	(1,052,387)	(9,327)	–	(355)	**(1,812,772)**
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2020թ.	**20,157,089**	**14,756,817**	**502,129**	**–**	**199,054**	**35,615,089**
Հաշվեկշռային արժեք						
2020թ. դեկտեմբերի 31-ին	**52,288,641**	**8,102,187**	**115,120**	**412,110**	**334,917**	**61,252,975**
2019թ. դեկտեմբերի 31-ին	**55,909,535**	**8,989,945**	**152,307**	**222,315**	**405,833**	**65,679,935**

2020թ. տարեվերջին Ադրբեջանի կողմից սանձազերծված լայնածավալ ռազմական գործողությունների արդյունքում Բանկը դուրս է գրել հիմնական միջոցներ 1,415,090 հազար ՀՀ դրամ հաշվեկշռային արժեքով:

18. Ոչ նյութական ակտիվներ

Հազար ՀՀ դրամ	*Համակարգչային ծրագրեր*	*Անավարտ պայմանագրեր*	*Ընդամենը*
Սկզբնական արժեք			
Մնացորդը առ 1 հունվարի 2019թ.	**4,278,236**	**1,073,675**	**5,351,911**
Ավելացումներ	694,758	35,000	**729,758**
Օտարումներ	(91,382)	–	**(91,382)**
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2019թ.	**4,881,612**	**1,108,675**	**5,990,287**
Ավելացումներ	335,568	–	**335,568**
Օտարումներ	(827)	–	**(827)**
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2020թ.	**5,216,353**	**1,108,675**	**6,325,028**
Ամորտիզացիա			
Մնացորդը առ 1 հունվարի 2019թ.	**2,561,188**	**–**	**2,561,188**
Տարվա ամորտիզացիոն ծախս	444,802	–	**444,802**
Օտարումներ	(36,447)	–	**(36,447)**
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2019թ.	**2,969,543**	**–**	**2,969,543**
Տարվա ամորտիզացիոն ծախս	458,623	–	**458,623**
Օտարումներ	(197)	–	**(197)**
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2020թ.	**3,427,969**	**–**	**3,427,969**
Հաշվեկշռային արժեք			
2020թ. դեկտեմբերի 31-ին	**1,788,384**	**1,108,675**	**2,897,059**
2019թ. դեկտեմբերի 31-ին	**1,912,069**	**1,108,675**	**3,020,744**

19. Այլ ակտիվներ տեղական արժույթով

Հազար ՀՀ դրամ	*31 դեկտեմբերի 2020թ.*	*31 դեկտեմբերի 2019թ.*
Դրամագիտական արժեքներ	6,563,894	7,596,449
Կանխավճարներ և դեբիտորական պարտքեր	2,246,227	3,108,299
Այլ	1,262,214	1,545,359
Արժեզրկման պահուստ	–	(10,998)
Ընդամենը այլ ակտիվներ	**10,072,335**	**12,239,109**

2019թ դեկտեմբերի 31-ի դրությամբ Կանխավճարների և դեբիտորական պարտքերի հոդվածում ներառված 800,217 հազար ՀՀ դրամ գումարի այլ ֆինանսական ակտիվները մարվել են 2020թ. ընթացքում: Այլ ֆինանսական ակիվների գծով պարտքային կորուստների գծով պահուստի հակադարձումը կազմել է 7,986 հազար ՀՀ դրամ (2019թ դեկտեմբերի 31-ին պարտքային կորուստների գծով պահուստի հակադարձումը՝ 22,290 հազար ՀՀ դրամ):

20. Ֆինանսական և այլ հաստատությունների ավանդներ և հաշիվների մնացորդներ

Հազար ՀՀ դրամ	*31 դեկտեմբերի 2020թ.*	*31 դեկտեմբերի 2019թ.*
Պարտավորություններ արտարժույթով		
Տեղական բանկերի լորո հաշիվներ և ավանդներ	483,273,909	373,816,783
Կապակցված կողմերի ընթացիկ հաշիվներ	304,266	1,475,390
Այլ իրավաբանական անձանց ընթացիկ հաշիվներ	24,695,093	989,282
Ընդամենը պարտավորություններ արտարժույթով	**508,273,268**	**376,281,455**
Պարտավորություններ տեղական արժույթով		
Տեղական բանկերի լորո հաշիվներ և ավանդներ	299,345,038	343,857,702
Կապակցված կողմերի ընթացիկ հաշիվներ և ժամկետային ավանդ	9,464,497	284,157
Այլ իրավաբանական անձանց ընթացիկ հաշիվներ	1,591,372	975,287
Այլ ավանդներ	–	2,002,678
Ընդամենը պարտավորություններ տեղական արժույթով	**310,400,907**	**347,119,824**
Ընդամենը ֆինանսական և այլ հաստատությունների ավանդներ և հաշիվների մնացորդներ	**818,674,175**	**723,401,279**

20. Ֆինանսական և այլ հաստատությունների ավանդներ և հաշիվների մնացորդներ (շարունակություն)

Ֆինանսական և այլ հաստատությունների ավանդներ և հաշիվների մնացորդների կենտրոնացում

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 2 բանկի մնացորդ գերազանցել է Խմբի ընդհանուր ֆինանսական և այլ հաստատությունների ավանդների և հաշիվների մնացորդների 10%-ը: Այդ մնացորդը 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 335,788,998 հազար ՀՀ դրամ (2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 3 բանկ, 390,862,187 հազար ՀՀ դրամ):

21. Այլ փոխառություններ

Հազար ՀՀ դրամ	*31 դեկտեմբերի 2020թ.*	*31 դեկտեմբերի 2019թ.*
Վարկեր KfW-ից	68,130,265	59,582,037
Վարկեր ԵՆԲ-ից	60,195,486	51,891,908
Վարկեր Համաշխարհային բանկից	20,968,206	20,267,749
Վարկեր ԱԶԲ-ից	7,288,058	6,590,621
Այլ	4,003,625	4,409,806
Ընդամենը այլ փոխառություններ	**160,585,640**	**142,742,121**

KfW-ի կողմից Խմբին տրամադրվել են վարկեր Հայաստանի Հանրապետության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության ֆինանսական համագործակցության միջկառավարական պայմանագրի շրջանակներում, որի նպատակը վարկային հատուկ ծրագրերի ֆինանսավորումն է տեղական առևտրային բանկերի միջոցով (Ծնթգ. 12):

Վարկերի մարման ժամկետայնությունը 2021թ-ից մինչև 2048թ. ընկած ժամանակաշրջանն է (2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 2020թ-ից մինչև 2048թ.): Վարկերի մարումը KfW-ին երաշխավորված է Կառավարության կողմից:

Բանկին տրամադրվել են վարկեր Համաշխարհային բանկի կողմից, որի նպատակը փոքր և միջին ձեռնարկությունների ֆինանսավորումն է տեղական առևտրային բանկերի և ֆինանսական կազմակերպությունների միջոցով (Ծնթգ. 12): Վարկերի մարման ժամկետայնությունը 2021թ-ից 2035թ. ընկած ժամանակաշրջանն է (2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 2020թ-ից 2035թ.):

ԱԶԲ-ի կողմից տրամադրվել է վարկ՝ առևտրային բանկերի և ֆինանսական հաստատությունների միջոցով կանանց պատկանող փոքր և միջին ձեռնարկությունների ֆինանսավորման նպատակով (Ծնթգ. 12): Վարկի մարման ժամկետայնությունը 2021թ-ից մինչև 2044թ. ընկած ժամանակաշրջանն է (2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 2020թ-ից 2044թ.):

Բանկին տրամադրվել են վարկեր Եվրոպական ներդրումային բանկի կողմից, որի նպատակը գյուղատնտեսության և զբոսաշրջության ոլորտների ֆինանսավորումն է տեղական առևտրային բանկերի և ֆինանսական կազմակերպությունների միջոցով (Ծնթգ. 12): Վարկերի մարման ժամկետայնությունը 2021թ-ից մինչև 2030թ. ընկած ժամանակաշրջանն է (2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 2020թ-ից 2030թ.):

Խմբի դուստր կազմակերպություններից մեկը փոխառություն է ստացել Ֆրանսիական Զարգացման Գործակալությունից՝ ներառված «Այլ» դասում: Վարկի մարման ժամկետայնությունը 2021թ-ից մինչև 2025թ. ընկած ժամանակահատվածն է (2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 2020թ-ից մինչև 2025թ.): 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այս վարկային ծրագրի գծով մնացորդը կազմում է 4,003,625 հազար ՀՀ դրամ (2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 4,409,806 հազար ՀՀ դրամ):

22. Այլ պարտավորություններ տեղական արժույթով

Հազար ՀՀ դրամ	*31 դեկտեմբերի 2020թ.*	*31 դեկտեմբերի 2019թ.*
Այլ պարտավորություններ տեղական արժույթով		
Կրեդիտորական պարտքեր	2,305,013	2,133,087
Աշխատակիցների ցպահանջ ավանդներ	1,103,853	1,251,847
Այլ պարտավորություններ	1,112,953	1,023,623
Ընդամենը այլ պարտավորություններ տեղական արժույթով	**4,521,819**	**4,408,557**

23. Պարտավորություններ Հայաստանի Հանրապետության Կառավարության հանդեպ

Հազար ՀՀ դրամ	*31 դեկտեմբերի 2020թ.*	*31 դեկտեմբերի 2019թ.*
Պարտավորություններ արտարժույթով		
Կառավարության ընթացիկ հաշիվներ	1,506,451	1,248,593
Ընդամենը պարտավորություններ արտարժույթով	**1,506,451**	**1,248,593**
Պարտավորություններ տեղական արժույթով		
Ժամկետային ավանդներ	202,637,377	285,000,475
Կառավարության ընթացիկ հաշիվներ	62,398,287	41,045,292
Ընդամենը պարտավորություններ տեղական արժույթով	**265,035,664**	**326,045,767**
Ընդամենը պարտավորություններ ՀՀ Կառավարության հանդեպ	**266,542,115**	**327,294,360**

Կառավարության ժամկետային ավանդների ժամկետայնությունը մինչև 3 ամիս է, և տոկոսադրույքը կազմում է 4.93%-ից մինչև 5.64% (2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 5.25%-ից մինչև 5.93%):

24. Թողարկված պարտատոմսեր

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խմբի դուստր կազմակերպությունն ուներ թողարկած 9,500,000 հազար ՀՀ դրամ անվանական արժեքով 3 տարի ժամկետայնությամբ արժեկտրոնային պարտատոմսեր (2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 6,500,000 հազար ՀՀ դրամ անվանական արժեքով 3 տարի ժամկետայնությամբ արժեկտրոնային պարտատոմսեր):

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ պարտատոմսերի միջին տարեկան եկամտաբերությունը կազմել է 7.25%-ից 8.30% (2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 7.36%-ից մինչև 8.13%): 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ թողարկված պարտատոմսերի հաշվեկշռային արժեքը կազմում է 9,655,324 հազար ՀՀ դրամ (2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 6,626,428 հազար ՀՀ դրամ):

25. Կապիտալի կառավարում

Խմբի կապիտալը ներառում է Խմբի ակտիվների մնացորդային արժեքը՝ պարտավորությունների չափով նվազեցում կատարելուց հետո:

Կապիտալի չափը սահմանվում է Օրենքով:

Համաձայն Օրենքի՝ Բանկի կանոնադրական կապիտալը կազմում է 100,000 հազար ՀՀ դրամ: Բանկի կանոնադրական կապիտալը Հայաստանի Հանրապետության սեփականությունն է և չի կարող գրավ դրվել, բռնագանձվել կամ այլ կերպ օտարվել Հայաստանի Հանրապետության պարտավորությունների դիմաց:

Կապիտալը կառավարելիս Բանկի նպատակն է պահպանել կապիտալի համապատասխան մակարդակ՝ Բանկի տնտեսական անկախությունն ու իր գործառույթներն իրականացնելու կարողությունն ապահովելու համար: Բանկի ղեկավարությունը կառավարման ներքո գտնվող ողջ կապիտալը դիտարկում է որպես սեփական կապիտալ, ինչպես ներկայացված է ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում:

Բանկի կապիտալի բաղադրիչների կառավարման նպատակներն ու քաղաքականությունը սահմանված են Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի (այսուհետ՝ «Խորհուրդ») որոշումներով հաստատված համապատասխան ներքին կանոնակարգերով: Իր գործառույթների իրականացման հետ կապված ֆինանսական ռիսկերը ծածկելու նպատակով միջոցների և պահուստների ձևավորումը կատարվում է Խորհրդի կողմից հաստատված կանոնակարգերին և Օրենքին համապատասխան:

Գլխավոր պահուստը ձևավորվում է Օրենքի համաձայն և ենթակա չէ բաշխման: Գլխավոր պահուստը ձևավորվում է բանկային գործունեության արդյունքում առաջացող ընդհանուր ռիսկերը (հնարավոր վնասները) ծածկելու համար: Կառավարության կողմից թողարկված մուրհակը իրենից ներկայացնում է ցպահանջ անտոկոս հասարակ մուրհակի տեսքով Կառավարության ներդրումը, որը կատարվում է Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվություններում ֆինանսական տարվա արդյունքում առաջացած վնասը՝ պահուստների հանրագումարը գերազանցելու դեպքում:

Օրենքի համաձայն, 2020թ. ընթացքում 2019թ ֆինանսական տարվա շահույթը բաշխվել է հետևյալ կերպ.

- 20% Գլխավոր պահուստին,
- 80% ՀՀ Կառավարության կողմից թողարկված մուրհակի մասնակի մարմանը:

25. Կապիտալի կառավարում (շարունակություն)

Արդյունքում, ՀՀ Կառավարությունը թողարկել է նոր անտոկոս հասարակ մուրհակ 66,055,949 հազար ՀՀ դրամ արժեքով (2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 73,810,843 հազար ՀՀ դրամ): Շահույթի բաշխումը և մուրհակի վերաթողարկումը չեն հանդիսանում դրամական միջոցների և դրանց համարժեքների հոսքեր:

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ֆինանսական ակտիվների վերագնահատման պահուստը, որը կազմում է 2,626,918 հազար ՀՀ դրամ (դրական ազդեցություն) (2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 2,422,299 հազար ՀՀ դրամ (դրական ազդեցություն)), ներկայացնում է հաշվետու ամսաթվի դրությամբ Խմբի՝ դասակարգված որպես այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով վերաչափվող իրական արժեքով ֆինանսական ակտիվների իրական արժեքի և դրանց սկզբնական ճանաչման իրական արժեքի միջև տարբերությունը:

26. Պայմանական պարտավորություններ

Կապիտալ բնույթի պայմանագրային հանձնառություններ

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կապիտալ բնույթի պայմանագրային հանձնառությունները, որոնք վերաբերում են Խմբի ոչ ընթացիկ ակտիվներին, կազմում են 542,276 հազար ՀՀ դրամ (2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 488,542 հազար ՀՀ դրամ):

Իրավական պարտավորություններ

Խմբի ղեկավարությանը հայտնի չէ Խմբի դեմ հարուցված որևէ փաստացի, անավարտ կամ սպառնացող էական հայցերի մասին:

27. Գործարքներ կապակցված կողմերի հետ

Գործարքներ ղեկավար անձնակազմի անդամների հետ

Ստորև ներկայացված է «Աշխատակիցների հատուցումներ, վերապատրաստման ծախսեր և հարակից վճարներ» հոդվածում ներառված ղեկավար անձնակազմի անդամների ընդհանուր վարձատրությունը (Ծնթգ. 11):

Հազար ՀՀ դրամ	***2020թ.***	***2019թ.***
Ղեկավար անձնակազմ, ներառյալ Խորհրդի անդամները	316,936	319,776
Ընդամենը	**316,936**	**319,776**

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ղեկավար անձնակազմի անդամներին տրամադրված վարկերի մնացորդը կազմել է 240,704 հազար ՀՀ դրամ (2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 173,288 հազար ՀՀ դրամ): 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ղեկավար անձնակազմի անդամների կողմից Բանկում տեղաբաշխված ավանդների մնացորդը կազմել է 116,533 հազար ՀՀ դրամ (2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 194,873 հազար ՀՀ դրամ): 2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում Խումբը ղեկավար անձնակազմի անդամների հետ գործարքների գծով ճանաչել է տոկոսային ծախս 19,622 հազար ՀՀ դրամ և տոկոսային եկամուտ 7,123 հազար ՀՀ դրամ (2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 25,540 հազար ՀՀ դրամ և 5,790 հազար ՀՀ դրամ): Համաձայն Բանկի ներքին կանոնակարգերի՝ վարկեր չեն կարող տրամադրվել Բանկի այն աշխատակիցներին, որոնք ունեն Բանկում տեղաբաշխված ավանդներ:

27. Գործարքներ կապակցված կողմերի հետ (շարունակություն)

Գործարքներ Հայաստանի Հանրապետության Կառավարության հետ

Ստորև ներկայացված են Կառավարության հետ գործարքների մնացորդները և պայմանագրով սահմանված միջին տոկոսադրույքները.

	31 դեկտեմբերի 2020թ.		*31 դեկտեմբերի 2019թ.*	
Հազար ՀՀ դրամ	*Մնացորդ*	*Պայմանագրով սահմանված միջին տոկոսադրույք*	*Մնացորդ*	*Պայմանագրով սահմանված միջին տոկոսադրույք*
Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն				
Ակտիվներ				
Հայաստանի Հանրապետության պետական արժեթղթեր՝ դասակարգված որպես իրական արժեքով՝այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ (Ծնթգ. 15)	11,578,230	11.5%	13,189,425	11.4%
	11,578,230		**13,189,425**	
Կառավարության կողմից թողարկված մուրհակ (Ծնթգ. 15)				
Մնացորդը հունվարի 1-ին	**73,810,843**		**73,810,843**	
Շահույթի բաշխում	(7,754,894)		–	
Մնացորդը դեկտեմբերի 31-ին	**66,055,949**		**73,810,843**	
Ակտիվներ դեկտեմբերի 31-ին	**77,634,179**		**87,000,268**	
Պարտավորություններ				
Պարտավորություններ ՀՀ Կառավարության նկատմամբ (տեղական արժույթով) (Ծնթգ. 23)	265,035,664	4,9%	326,045,767	4.9%
Պարտավորություններ ՀՀ Կառավարության նկատմամբ (արտարժույթով) (Ծնթգ. 23)	1,506,451		1,248,593	
Պարտավորություններ դեկտեմբերի 31-ին	**266,542,115**		**327,294,360**	

Տեղական արժույթով Կառավարության նկատմամբ պարտավորություններում ներառված ավանդների շարժը.

Հազար ՀՀ դրամ	*2020թ.*	*2019թ.*
Մնացորդը հունվարի 1-ին	**285,000,475**	**135,487,725**
Ավելացում	1,477,000,000	1,033,000,000
Տոկոսային ծախս	16,787,029	13,324,977
Մարում (ներառյալ՝տոկոսի վճարումը)	(1,576,150,127)	(896,812,227)
Մնացորդը դեկտեմբերի 31-ին	**202,637,377**	**285,000,475**

Կառավարության հետ գործարքների գծով համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունում արտացոլված գումարները հետևյալն են.

Հազար ՀՀ դրամ	*2020թ.*	*2019թ.*
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվություն		
Տոկոսային եկամուտ Կառավարության արժեթղթերից (Ծնթգ. 4)	1,271,924	1,317,084
Տոկոսային ծախս (Ծնթգ. 5)	(16,914,428)	(13,737,026)
Զուտ վնաս փոխարժեքային տարբերություններից	(660,013)	(59,234)
Զուտ վնաս Կառավարության հետ կնքված ֆորվարդ պայմանագրից (Ծնթգ. 7)	(3,461,039)	(453,848)

27. Գործարքներ կապակցված կողմերի հետ (շարունակություն)

Գործարքներ այլ կապակցված կողմերի հետ

Ստորև բերված աղյուսակներում ներառված տեղեկատվությունը վերաբերում է այլ կապակցված կողմերի հետ գործարքների արդյունքներին և մնացորդներին, որոնց կառավարման մարմիններում Բանկն ունի ներկայացուցիչներ.

	31 դեկտեմբերի 2020թ.		*31 դեկտեմբերի 2019թ.*	
Հազար ՀՀ դրամ	*Մնացորդ*	*Պայմանագրով սահմանված միջին տոկոսադրույք*	*Մնացորդ*	*Պայմանագրով սահմանված միջին տոկոսադրույք*
Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն				
Պարտավորություններ				
Ընթացիկ հաշիվներ և ժամկետային ավանդ (տեղական արժույթով, Ծնթգ.20)	9,464,497	5.25%	284,157	5.5%
Ընթացիկ հաշիվներ (արտարժույթով, Ծնթգ. 20)	304,266	0.0%	1,475,390	0.0%
Ընդամենը	**9,768,763**		**1,759,547**	

Ավանդների և ընթացիկ հաշիվների շարժը այլ կապակցված կողմերի հետ հետևյալն է.

Հազար ՀՀ դրամ	*2020թ.*	*2019թ.*
Մնացորդը հունվարի 1-ին	**1,759,547**	**1,794,975**
Ավելացում	701,779,586	119,887,747
Տոկոսային ծախս	121,060	28,256
Մարում (ներառյալ՝ տոկոսի վճարումը)	(693,891,430)	(119,951,431)
Մնացորդը դեկտեմբերի 31-ին	**9,768,763**	**1,759,547**

28. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունում տարեվերջի դրությամբ արտացոլված դրամական միջոցները և դրանց համարժեքները բաղկացած են հետևյալ հոդվածներից.

Հազար ՀՀ դրամ	*31 դեկտեմբերի 2020թ.*	*31 դեկտեմբերի 2019թ.*
Կանխիկ դրամ	51,108,237	39,603,848
Նոստրո հաշիվներ (Ծնթգ. 12)	380,277,935	534,601,773
ԱՄՀ-ում ՀՓԻ միջոցներ (Ծնթգ. 16)	4,690,218	2,953,756
Ընդամենը դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	**436,076,390**	**577,159,377**

29. Ֆինանսական գործիքների իրական արժեք

Իրական արժեքի գնահատումների վերլուծությունը կատարվում է ըստ իրական արժեքի հիերարխիայի մակարդակի հետևյալ կերպ. (ա) մակարդակ 1՝ գնահատումներ գործող շուկայում համանման ակտիվների կամ պարտավորությունների գնանշված (չճշգրտված) գներով, (բ) մակարդակ 2՝ գնահատման մեթոդներ, որոնցում ակտիվի կամ պարտավորության համար բոլոր էական ելակետային տվյալները ուղղակիորեն (գներ) կամ անուղղակիորեն (գների հիման վրա ստացված) դիտարկելի են, (գ) մակարդակ 3՝ գնահատումներ, որոնք հիմնված չեն շուկայի դիտարկելի տվյալների վրա (այն է՝ ոչ դիտարկելի ելակետային տվյալներ):

Ֆինանսական գործիքները դասակարգելիս Ղեկավարությունը կիրառում է դատողություն՝ օգտագործելով իրական արժեքի հիերարխիան: Եթե իրական արժեքի գնահատման համար օգտագործվում են էական ճշգրտում պահանջող դիտարկելի ելակետային տվյալներ, ապա տվյալ գնահատումը մակարդակ 3-ի գնահատում է: Գնահատման ելակետային տվյալների էականությունը գնահատվում է իրական արժեքի ամբողջական գնահատման համադրությամբ:

29. Ֆինանսական գործիքների իրական արժեք (շարունակություն)

(ա) Իրական արժեքի պարբերական գնահատումներ

Իրական արժեքի պարբերական գնահատումներն այն գնահատումներն են, որոնք հաշվապահական հաշվառման ստանդարտներով պահանջվում կամ թույլատրվում են ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում: Իրական արժեքի պարբերական գնահատումների դասակարգումն ըստ իրական արժեքի հիերարխիայի մակարդակի ներկայացված է ստորև.

	31 դեկտեմբերի 2020թ.				*31 դեկտեմբերի 2019թ.*			
Հազար ՀՀ դրամ	*Մակարդակ 1*	*Մակարդակ 2*	*Մակարդակ 3*	*Ընդամենը*	*Մակարդակ 1*	*Մակարդակ 2*	*Մակարդակ 3*	*Ընդամենը*
Իրական արժեքով հաշվառվող ակտիվներ								
Ֆինանսական ակտիվներ								
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ								
- Պետական պարտատոմսեր (Ծնթգ.13)	737,180,656	–	–	**737,180,656**	639,177,514	–	–	**639,177,514**
- Պետական գործակալությունների պարտատոմսեր (Ծնթգ.13)	–	–	–	**–**	24,001,326	–	–	**24,001,326**
- Այլ արժեթղթեր (Ծնթգ.13)	88,770,729	–	–	**88,770,729**	100,531,491	–	–	**100,531,491**
-Փողի շուկայի գործիքներ (Ծնթգ.13)	–	104,520,482	–	**104,520,482**	–	9,648,011	–	**9,648,011**
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ								
- Արտերկրյա արժեթղթեր (Ծնթգ.15)	285,955	2,329,540	–	**2,615,495**	219,577	1,717,795	–	**1,937,372**
- ՀՀ Կառավարության գանձապետական արժեթղթեր (Ծնթգ.15)	–	11,578,230	–	**11,578,230**	–	13,189,425	–	**13,189,425**
- Կառավարության կողմից թողարկված մուրհակ (Ծնթգ.15)	–	66,055,949	–	**66,055,949**	–	73,810,843	–	**73,810,843**
- Կորպորատիվ պարտատոմսեր արտարժույթով (Ծնթգ.15)	–	840,759	–	**840,759**	–	761,584	–	**761,584**
Ընդամենը ակտիվներ իրական արժեքի պարբերական գնահատմամբ	**826,237,340**	**185,324,960**	**–**	**1,011,562,300**	**763,929,908**	**99,127,658**	**–**	**863,057,566**

	31 դեկտեմբեր 2020թ.				*31 դեկտեմբեր 2019թ.*			
Հազար ՀՀ դրամ	*Մակարդակ 1*	*Մակարդակ 2*	*Մակարդակ 3*	*Ընդամենը*	*Մակարդակ 1*	*Մակարդակ 2*	*Մակարդակ 3*	*Ընդամենը*
Իրական արժեքով հաշվառվող պարտավորություններ								
Ֆինանսական պարտավորություններ								
Արտարժութային ֆյուչերս պայմանագրեր արտաքին շուկայում (Ծնթգ.14)	5,553	**–**	**–**	**5,553**	1,645	**–**	**–**	**1,645**
Ֆորվարդ պայմանագիր Կառավարության հետ (Ծնթգ. 14)	–	–	–	**–**	–	–	79,455	**79,455**
Արտարժութային սվոփ պայմանագրեր ներքին շուկայում (Ծնթգ.14)	–	–	70,825	**70,825**	–	–	–	**–**
Արտարժութային սվոփ պայմանագրեր արտաքին շուկայում (Ծնթգ.14)	–	66,743	–	**66,743**	**–**	–	–	**–**
Ընդամենը պարտավորություններ իրական արժեքի պարբերական գնահատմամբ	**5,553**	**66,743**	**70,825**	**143,121**	**1,645**	**–**	**79,455**	**81,100**

29. Ֆինանսական գործիքների իրական արժեք (շարունակություն)

(ա) Իրական արժեքի պարբերական գնահատումներ (շարունակություն)

Մակարդակ 2-ի իրական արժեքի գնահատումներում օգտագործված ելակետային տվյալների և գնահատման մեթոդի նկարագիրը 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ներկայացված է ստորև.

Հազար ՀՀ դրամ	*Իրական արժեք*	*Գնահատման մեթոդ*	*Օգտագործված ելակետային տվյալներ*
Իրական արժեքով հաշվառվող ակտիվներ			
Ֆինանսական ակտիվներ			
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ			
Փողի շուկայի գործիքներ (Ծնթգ.13)	104,520,482	ԶՂՄՀ	BIS տոկոսադրույք
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր			
Արտերկրյա արժեթղթեր (Ծնթգ.15)	2,329,540	ԶՂՄՀ	Ոչ ռիսկային տոկոսադրույք՝ եվրո
Կորպորատիվ պարտատոմսեր արտարժույթով (Ծնթգ.15)	840,759	ԶՂՄՀ	Գնանշված գներ
ՀՀ Կառավարության գանձապետական արժեթղթեր (Ծնթգ.15)	11,578,230	ԶՂՄՀ	Պետական պարտատոմսերի եկամտաբերության կոր
Կառավարության կողմից թողարկված մուրհակ (Ծնթգ.15)	66,055,949	ԶՂՄՀ	Պետական պարտատոմսերի եկամտաբերության կոր
Ընդամենը մակարդակ 2-ում իրական արժեքի պարբերական գնահատումներ	**185,324,960**		

Հազար ՀՀ դրամ	*Իրական արժեք*	*Գնահատման մեթոդ*	*Օգտագործված ելակետային տվյալներ*
Իրական արժեքով հաշվառվող պարտավորություններ			
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ			
Արտարժութային սվոփ պայմանագրեր արտաքին շուկայում (Ծնթգ.14)	66,743	ԶՂՄՀ	ԱՄՆ դոլարի OIS կոր Արտարժույթի սփոթ փոխարժեքներ Արտարժույթի ֆորվարդ կետեր
Ընդամենը մակարդակ 2-ում իրական արժեքի պարբերական գնահատումներ	**66,743**		

Մակարդակ 2-ի իրական արժեքի գնահատումներում օգտագործված ելակետային տվյալների և գնահատման մեթոդի նկարագիրը 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ներկայացված է ստորև.

Հազար ՀՀ դրամ	*Իրական արժեք*	*Գնահատման մեթոդ*	*Օգտագործված ելակետային տվյալներ*
Իրական արժեքով հաշվառվող ակտիվներ			
Ֆինանսական ակտիվներ			
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ			
Փողի շուկայի գործիքներ (Ծնթգ.13)	9,648,011	ԶՂՄՀ	BIS տոկոսադրույք
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր			
Արտերկրյա արժեթղթեր (Ծնթգ.15)	1,717,795	ԶՂՄՀ	Ոչ ռիսկային տոկոսադրույք՝ եվրո
Կորպորատիվ պարտատոմսեր արտարժույթով (Ծնթգ.15)	761,584	ԶՂՄՀ	Գնանշված գներ
ՀՀ Կառավարության գանձապետական արժեթղթեր (Ծնթգ.15)	13,189,425	ԶՂՄՀ	Պետական պարտատոմսերի եկամտաբերության կոր
Կառավարության կողմից թողարկված մուրհակ (Ծնթգ.15)	73,810,843	ԶՂՄՀ	Պետական պարտատոմսերի եկամտաբերության կոր
Ընդամենը մակարդակ 2-ում իրական արժեքի պարբերական գնահատումներ	**99,127,658**		

29. Ֆինանսական գործիքների իրական արժեք (շարունակություն)

(ա) Իրական արժեքի պարբերական գնահատումներ (շարունակություն)

Մակարդակ 3-ի իրական արժեքի գնահատման մեթոդի, գնահատումներում օգտագործված ելակետային տվյալների և այդ ելակետային տվյալներում հնարավոր ողջամիտ փոփոխությունների նկատմամբ համապատասխան զգայունության նկարագիրը 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ներկայացված է ստորև.

Հազար ՀՀ դրամ	*Իրական արժեք*	*Գնահատման մեթոդ*	*Օգտագործված ելակետային տվյալներ*	*Ելակետային տվյալների միջակայքը (միջին կշռված)*	*Ողջամիտ փոփոխություն*	*Իրական արժեքի գնահատման զգայունություն*
Իրական արժեքով հաշվառվող պարտավորություններ						
Ֆինանսական պարտավորություններ						
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ (սվոփ)	70,825	ԶՊՄՀ	1) Ոչ ռիսկային տոկոսադրույք՝ ՀՀ դրամ	1) 5.83%	1) +110/-110 բ.կ.	1) (5,586)/5,318

Մակարդակ 3-ի իրական արժեքի գնահատման մեթոդի, գնահատումներում օգտագործված ելակետային տվյալների և այդ ելակետային տվյալներում հնարավոր ողջամիտ փոփոխությունների նկատմամբ համապատասխան զգայունության նկարագիրը 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ներկայացված է ստորև.

Հազար ՀՀ դրամ	*Իրական արժեք*	*Գնահատման մեթոդ*	*Օգտագործված ելակետային տվյալներ*	*Ելակետային տվյալների միջակայքը (միջին կշռված)*	*Ողջամիտ փոփոխություն*	*Իրական արժեքի գնահատման զգայունություն*
Իրական արժեքով հաշվառվող պարտավորություններ						
Ֆինանսական պարտավորություններ						
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ (Ֆորվարդ պայմանագիր Կառավարության հետ)	79,455	ԶՊՄՀ	1) Ոչ ռիսկային տոկոսադրույք՝ ՀՀ դրամ	1) 5.60%	1) +100/-100 բ.կ.	1) (6,796)/6,866
			2) Ոչ ռիսկային տոկոսադրույք՝ ԱՄՆ դոլար	2) 3.17%	2) +100/-100 բ.կ.	2) 6,973/(7,047)
			3) Ոչ ռիսկային տոկոսադրույք՝ Եվրո	3) 0.97%	3) +15/-15 բ.կ.	3) 6.8/(6.8)
			4) ԱՄՆ դոլար/ ՀՀ դրամ սփոթ դրույք տարվա վերջին	4) 479.70	4) առկա չէ	4) առկա չէ
			5) Եվրո/ ՀՀ դրամ սփոթ դրույք տարվա վերջին	5) 537.26	5) առկա չէ	5) առկա չէ
			6) Արտաքին պարտքի ակնկալվող գումար –ԱՄՆ դոլար	6) 18,856 հազար ԱՄՆ դոլար	6) ± 10%	6) (7,423)/7,423
			7) Արտաքին պարտքի ակնկալվող գումար-եվրո	7) 100 հազար եվրո	7) ± 10%	7) (81)/81

Ներկայացված աղյուսակները բացահայտում են ածանցյալ ֆինանսական պարտավորությունների գնահատման ելակետային տվյալների նկատմամբ զգայունությունն այն դեպքում, երբ խելամտորեն հնարավոր այլընտրանքային ենթադրություններն արտացոլելու համար ոչ դիտարկելի ելակետային տվյալներից մեկի կամ մի քանիսի փոփոխությունը հանգեցնում է իրական արժեքի էական փոփոխության: Ներկայացված աղյուսակում բացահայտված իրական արժեքի գնահատման զգայունությունը ցույց է տալիս գնահատման արդյունքի փոփոխության ուղղությունը համապատասխան ելակետային փոփոխականների ավելացման կամ նվազեցման դեպքում:

29. Ֆինանսական գործիքների իրական արժեք (շարունակություն)

(բ) Մակարդակ 3-ի իրական արժեքի պարբերական գնահատումների գործընթացներ

Իրական արժեքի հիերարխիայի մակարդակ 3-ում իրական արժեքի գնահատումները պարբերաբար դիտարկվում են Բանկի հաշվապահական հաշվառման և ֆինանսական վարչությունների կողմից՝ որոշում կայացնելով գնահատման մեթոդի ելակետային տվյալների վերլուծության և օգտագործվող գնահատման մեթոդի համապատասխանության վերաբերյալ: Մակարդակ 3-ում գործիքները գնահատվում են գնահատված ապագա դրամական միջոցների հոսքերի զուտ բերված արժեքով՝ օգտագործելով յուրաքանչյուր ֆինանսական գործիքի առանձնահատկությունների հիման վրա որոշված զեղչման դրույքները: Անհրաժեշտության դեպքում Խմբի կողմից կիրառվում է հետադարձ թեստավորում:

(գ) Ակտիվներ և պարտավորություններ, որոնք չեն գնահատվում իրական արժեքով, սակայն որոնց համար կատարվում է իրական արժեքի վերաբերյալ տեղեկատվության բացահայտում

Ստորև ներկայացված է իրական արժեքով չգնահատվող ակտիվների հաշվեկշռային արժեքը և իրական արժեքի վերլուծությունն ըստ իրական արժեքի հիերարխիայի մակարդակի.

	31 դեկտեմբերի 2020թ.		*31 դեկտեմբերի 2019թ.*	
Հազար ՀՀ դրամ	*Մակարդակ 2*	*Հաշվեկշռային արժեք*	*Մակարդակ 2*	*Հաշվեկշռային արժեք*
Ֆինանսական ակտիվներ				
Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ արտարժույթով				
- Նոստրո հաշիվներ	380,277,935	380,276,878	534,601,773	534,601,093
- Ժամկետային ավանդներ	4,257,941	4,104,824	25,490,105	25,388,880
- Ածանցյալների պարտադիր մարժա	637,304	637,304	2,015	2,015
Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ և ներդրումներ տեղական արժույթով				
- Հետգնման պայմանագրեր և այլ մեկօրյա միջոցներ	345,952,769	345,952,769	126,669,774	126,669,774
- Վարկեր բանկերին և ֆինանսական կազմակերպություններին KfW-ի, Համաշխարհային բանկի, Ասիական զարգացման բանկի և Եվրոպական ներդրումային բանկի հետ համաձայնագրերի շրջանակներում	142,528,780	138,082,116	126,172,483	125,805,219
- Հիփոթեքային վերաֆինանսավորում	106,708,374	106,346,889	91,827,494	90,352,136
- Առևտրային բանկերում տեղաբաշխված ավանդներ և թղթակցային հաշիվներ	87,282,360	86,772,875	63,899,322	63,580,371
- Այլ վարկեր և ներդրումներ	25,785,975	27,380,114	26,159,797	27,475,368
Ընդամենը	**1,093,431,438**	**1,089,553,769**	**994,822,763**	**993,874,856**

Խմբի ղեկավարությունը կարծում է, որ ֆինանսական և այլ հաստատություններում արտերկրյա և տեղական արժույթով հաշիվների և ավանդների, ԱՄՀ-ին վճարվելիք գումարների և այլ փոխառու միջոցների հաշվեկշռային արժեքը մոտարկում է դրանց իրական արժեքին: Իրական արժեքի հիերարխիայում այդ ֆինանսական պարտավորությունները ներառված են մակարդակ 2-ում:

Ստորև ներկայացված է իրական արժեքով չգնահատվող պարտավորությունների հաշվեկշռային արժեքը և իրական արժեքի դասակարգումն ըստ իրական արժեքի հիերարխիայի մակարդակի.

	31 դեկտեմբերի 2020թ.		*31 դեկտեմբերի 2019թ.*	
Հազար ՀՀ դրամ	*Մակարդակ 2*	*Հաշվեկշռային արժեք*	*Մակարդակ 2*	*Հաշվեկշռային արժեք*
Ֆինանսական պարտավորություններ				
Պարտավորություններ ՀՀ Կառավարության նկատմամբ				
Պարտավորություններ արտարժույթով				
- Կառավարության ընթացիկ հաշիվներ	1,506,451	1,506,451	1,248,593	1,248,593
Պարտավորություններ տեղական արժույթով				
- Կառավարության ընթացիկ հաշիվներ	62,398,287	62,398,287	41,045,292	41,045,292
- Ժամկետային ավանդներ	202,564,143	202,637,377	285,098,705	285,000,475
- Թողարկված պարտատոմսեր	9,657,601	9,655,324	6,756,066	6,626,428
Ընդամենը	**276,126,482**	**276,197,439**	**334,148,656**	**333,920,788**

29. Ֆինանսական գործիքների իրական արժեք (շարունակություն)

(գ) Ակտիվներ և պարտավորություններ, որոնք չեն գնահատվում իրական արժեքով, սակայն որոնց համար կատարվում է իրական արժեքի վերաբերյալ տեղեկատվության բացահայտում (շարունակություն)

Իրական արժեքի հիերարխիայի մակարդակ 2-ում և մակարդակ 3-ում իրական արժեքները գնահատվել են՝ օգտագործելով զեղչված դրամական միջոցների մեթոդը: Գործող շուկայում չգնանշված՝ լողացող տոկոսադրույքով գործիքների իրական արժեքը գնահատվել է որպես դրանց հաշվեկշռային արժեքին հավասար: Չգնանշված՝ ֆիքսված տոկոսադրույքով գործիքների իրական արժեքը գնահատվել է՝ հիմք ընդունելով ապագա դրամական միջոցների հոսքերի զեղչման մեթոդը՝ կիրառելով համանման պարտքային ռիսկ և մարման ժամկետ ունեցող նոր գործիքների համար շուկայում գործող տոկոսադրույքները:

30. Ռիսկերի կառավարում

Ներածություն

Խմբի գործունեությանը բնորոշ են ռիսկեր: Ռիսկերի կառավարումը Խումբն իրականացնում է բացահայտման, գնահատման, մոտեցումների, մոնիթորինգի և հաշվետվողականության մշտական գործընթացների, ինչպես նաև ռիսկերի սահմանաչափերի հաստատման և ներքին վերահսկողության այլ միջոցառումների միջոցով: Ռիսկերի կառավարման այդ գործընթացը չափազանց կարևոր է Խմբի հիմնական գործառույթների իրականացման համար, և Խմբում յուրաքանչյուր անհատ պատասխանատու է իր պարտականություններին առնչվող ռիսկերի ազդեցության մասով: Խմբի գործունեությունը ենթարկվում է պարտքային, իրացվելիության և շուկայական ռիսկերի: Վերջինս ներառում է առևտրային և ոչ առևտրային ռիսկեր: Խմբի գործունեությունը ենթարկվում է նաև գործառնական ռիսկերի:

Ռիսկերի կառավարման գործընթացը չի ընդգրկում գործարար ռիսկերը, ինչպիսիք են միջավայրի, տեխնոլոգիաների և ոլորտի փոփոխությունը: Նման ռիսկերը վերահսկվում են Խմբի կողմից ռազմավարական պլանավորման գործընթացի միջոցով:

Խորհուրդը վերջնական պատասխանատու է ռիսկերի կառավարման համար, սակայն գոյություն ունեն ռիսկերի կառավարման և մոնիթորինգի համար պատասխանատու առանձին անկախ մարմիններ:

Խորհուրդը

Խորհուրդը հաշվետու է ռիսկերի կառավարման ընդհանուր մոտեցումների, ռազմավարության և ռիսկերի կառավարման սկզբունքների հաստատման համար:

Ինստիտուցիոնալ հիմքերը

ՀՀ միջազգային պահուստները Բանկի պահանջներն են ոչ ռեզիդենտների նկատմամբ՝ արտահայտված ազատ փոխարկելի արտարժույթով: Պահուստներն արտացոլվում են Խմբի ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում: Բանկը պահուստների կառավարումն իրականացնում է Օրենքի 52-րդ հոդվածում նշված սկզբունքներին համապատասխան՝ ներդրումներ կատարելով Խորհրդի կողմից հաստատված ներդրումային ծրագրի շրջանակներում:

Պահուստները նախատեսված են արտաքին վճարային/առևտրային անհավասարակշռությունները ֆինանսավորելու, փոխարժեքի վրա այդ անհավասարակշռությունների ազդեցությունը անուղղակի կարգավորելու, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորությունների անխոչընդոտ կատարումն ապահովելու համար: Բանկը պահուստներն օգտագործում է ՀՀ Կառավարության և պետական գործակալությունների արտարժութային սպասարկման համար, օրինակ՝ արտարժույթի փոխարկման կամ արտաքին պարտքի գծով վճարումների համար:

Բանկն ունի որոշումների կայացման եռամակարդակ համակարգ, ըստ որի Խորհրդի կողմից սահմանվում է «Ակտիվների ռազմավարական տեղաբաշխումը», այսինքն՝ պահուստների կառավարման հիմնական սկզբունքները երկարաժամկետ՝ 3 տարի միջակայքի համար, իսկ ավելի կարճաժամկետ, մարտավարական ուղենիշերի ընտրության իրավասությունը պատվիրակվել է Բանկի ներդրումային հանձնաժողովին: Պորտֆելի կառավարիչները, իրենց հերթին, ունեն մարտավարական ուղենիշերի և թույլատրելի ակտիվ ռիսկի սահմաններում ընթացիկ կառավարման որոշումներ կայացնելու իրավասություններ:

30. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

Կառավարում և վերահսկողություն

Ըստ Բանկի կառուցվածքի՝ ՀՀ միջազգային պահուստների կառավարման համար պատասխանատու է Ֆինանսական շուկաների դեպարտամենտը: Ֆինանսական գործառնությունների վարչությունը իրականացնում է պահուստների ամենօրյա կառավարման հետ կապված գործառնություններ: Ռիսկերի կառավարման վարչությունը պատասխանատու է ռիսկերի գնահատման համար, աջակցում է ակտիվների ռազմավարական տեղաբաշխմանը և ուղենիշների մշակմանը, սահմանաչափերի պահպանման մոնիթորինգի, ինչպես նաև պահուստների կառավարման կատարողականի գնահատման և հաշվետվությունների ներկայացման համար:

Պահուստների կառավարման հետ կապված խնդիրներն ամսական պարբերականությամբ քննարկվում են Բանկի Ներդրումային հանձնաժողովի կողմից, որում ընդգրկված են պահուստների կառավարման գործընթացում ներգրավված բոլոր ստորաբաժանումների ղեկավարները, ինչպես նաև Բանկի նախագահը և նախագահի տեղակալները: Պահուստների կառավարման կատարողականի վերաբերյալ Ռիսկերի կառավարման վարչությունը եռամսյակային պարբերականությամբ զեկուցում է Ներդրումային հանձնաժողովին և կիսամյակային պարբերականությամբ՝ Խորհրդին: Բանկը յուրաքանչյուր եռամսյակ Կառավարությանն է ներկայացնում միջազգային պահուստների վիճակի և կազմի մասին տեղեկատվություն և հրապարակում է այն:

Ակտիվների տեղաբաշխումը և ռիսկերի կառավարումը

Համաձայն Օրենքի 52-րդ հոդվածի՝ ՀՀ միջազգային պահուստները կառավարվում են իրացվելիության և անվտանգության պատշաճ մակարդակի ապահովման սկզբունքով, ապահովելով եկամտաբերության մաքսիմալացում: Այս նպատակով Բանկի Ռիսկերի կառավարման վարչությունը մշակում է ակտիվների ռազմավարական տեղաբաշխման և մարտավարական ուղենիշերի նախագծերը, որոնք հաստատվում են համապատասխանաբար Բանկի Խորհրդի և Ներդրումային հանձնաժողովի կողմից: Ներդրումային ուղենիշերը ներառում են ներդրումային գործընթացը կարգավորող բոլոր սահմանաչափերը և պահանջները, ինչպես նաև ակտիվների այն կառուցվածքը, որը համապատասխանում է Խորհրդի կողմից պահուստների կառավարմանը ներկայացվող սկզբունքներին:

Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկն այն ռիսկն է, որ Խումբը կարող է կրել վնասներ՝ հաճախորդների կամ գործընկերների պարտավորությունների չկատարման կամ վարկային որակի վատացման դեպքում: Խումբն իրականացնում է պարտքային ռիսկի վերահսկում և կառավարում՝ գործընկերոջ համապատասխանելիության և ռիսկի առավելագույն չափի սահմանման միջոցով, որը Խումբը կարող է ընդունել ըստ առանձին գործընկերների, աշխարհագրական կամ ոլորտային ռիսկի կենտրոնացումների, ինչպես նաև սահմանված ռիսկի սահմանաչափերի պահպանման վերահսկողության միջոցով:

Խումբը մշակել է վարկային որակի ստուգման ընթացակարգ՝ ապահովելու գործընկերների վճարունակության հնարավոր փոփոխությունների վաղաժամկետ հայտնաբերումը: Միջազգային պահուստների վարկային որակը գնահատելու համար Բանկը գնահատում է գործընկերների վարկունակությունը՝ հիմք ընդունելով միջազգային հեղինակավոր վարկանշային կազմակերպությունների կողմից շնորհված վարկանիշները:

Խումբը սահմանում է նվազագույն ընդունելի վարկանիշներ պետական, պետական գործակալությունների, այլ պետական մարմինների, ֆինանսական կազմակերպությունների և վերազգային կազմակերպությունների թողարկած արժեթղթերի համար: Այդ վարկանիշները չեն կարող ցածր լինել որոշակի սահմանված նվազագույն մակարդակից, որը պարբերաբար վերանայվում է:

Պարտքային ռիսկի մոնիթորինգի համար կիրառվում է ներքին ռեսուրսներով մշակված մոդելը: Վերջինս գործընկերոջ բաժնետոմսերի գների վարքագծի, ինչպես նաև մի շարք հաշվեկշռային ցուցանիշների հիման վրա թույլ է տալիս գնահատել ընկերության անվճարունակության հավանականությունը: Այն պատկանում է կառուցվածքային մոդելների տիպին, որն ընկերության անվճարունակությանը տալիս է տնտեսագիտորեն իմաստալից բացատրություն՝ հիմնվելով ակտիվների և պարտավորությունների կառուցվածքի, ինչպես նաև պարտքի չափի վրա: Մոդելը հիմնված է սահմանային օպցիոնի գնի հաշվարկման բանաձևի վրա, որը նաև հեղինակավոր FITCH վարկանշային կազմակերպության կողմից ընկերություններին շնորհվող վարկանիշների բաղադրիչներից մեկն է: Վարկանիշների և կիրառվող մոդելի արդյունքների հիման վրա կառուցվում է ըստ վարկանիշների և ժամկետայնությունների, առանձին գործընկերների և գործիքների գծով ներդրումների առավելագույն ծավալների սահմանաչափերի մատրիցը, որը և պարտքային ռիսկի կառավարման հիմնական գործիքն է:

Ածանցյալ ֆինանսական գործիքներ

Պարտքային ռիսկը, որն առաջանում է ածանցյալ ֆինանսական գործիքներից, ժամանակի ցանկացած պահին սահմանափակվում է դրական իրական արժեքով հաշվառվող ածանցյալ գործիքներով, որոնք ճանաչված են ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում:

30. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

Պարտքային ռիսկի առավելագույն չափը՝ առանց գրավի կամ պարտքի որակի բարելավման այլ միջոցների

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվության տարրերի (ներառյալ՝ ածանցյալ գործիքների) պարտքային ռիսկին առավելագույն ենթարկվածությունը, նախքան գլխավոր հաշվանցման և գրավադրման պայմանագրերի միջոցով ռիսկի նվազեցման, լավագույնս ներկայացված է դրանց հաշվեկշռային արժեքով:

Երբ ֆինանսական գործիքները հաշվառվում են իրական արժեքով, հաշվեկշռային արժեքները ցույց են տալիս ընթացիկ, բայց ոչ առավելագույն պարտքային ռիսկին ենթարկվածությունը, որը կարող է առաջանալ ապագայում իրական արժեքների փոփոխություններից:

Ֆինանսական գործիքների յուրաքանչյուր դասի համար պարտքային ռիսկին առավելագույն ենթարկվածության մանրամասների համար անհրաժեշտ է դիտարկել համապատասխան ծանոթագրությունները:

Պարտքային ռիսկն ըստ ֆինանսական ակտիվների դասերի

Խմբի ֆինանսական ակտիվները, բացառությամբ բաժնային ներդրումների, դասակարգվում են ըստ Խմբի գործընկերներին Fitch IBCA, Moody's և Standard & Poor's ռեյտինգային գործակալությունների կողմից շնորհված վարկանիշներից նվազագույնի: Ստորև ներկայացված են վարկանիշներն ըստ Moody's վարկանիշային գործակալության կոդերի՝ օգտագործելով Bloomberg տեղեկատվական համակարգի վարկանիշների համապատասխանության աղյուսակը: AAA վարկանիշն օգտագործվում է չափազանց հուսալի ֆինանսական հաստատությունների, ինչպիսին է Միջազգային հաշվարկների բանկը (BIS), նույնականացման համար:

		31 դեկտեմբերի 2020թ.		*31 դեկտեմբերի 2019թ.*	
Հազար ՀՀ դրամ	*Վարկային վարկանիշ*	*Գումար*	*%-ը ֆինանսական ակտիվներում*	*Գումար*	*%-ը ֆինանսական ակտիվներում*
Ֆինանսական ակտիվներ՝ ոչ ժամկետանց և ոչ արժեզրկված					
Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ արտարժույթով՝					
- Նոստրո հաշիվներ	P-1	378,347,677	98.3	532,987,070	95.2
	P-2	124,129	0.0	–	–
	P-3	1,055,570	0.3	917,020	0.2
	NP	680,551	0.2	479,581	0.1
	Վարկանիշ առկա չէ	70,008	0.0	218,102	0.0
- Ժամկետային ավանդներ	P-1	–	–	16,802,086	3.0
	Վարկանիշ առկա չէ	1,310,245	0.3	5,291,040	0.9
	NP	2,863,189	0.7	3,442,970	0.6
- Հավատարմագրային կառավարման ներքո գտնվող ակտիվներում ներառված դրամական միջոցներ և տոկոսադրույքի ֆյուչերսի պարտադիր մարժա	P-1	637,304	0.2	2,015	0.0
Արժեզրկման պահուստ		(69,667)		(147,896)	
Ընդամենը բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ արտարժույթով		**385,019,006**	**100.0**	**559,991,988**	**100.0**
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ					
- Պետական պարտատոմսեր	Aaa	651,746,838	70.0	554,666,536	71.7
	Aa1-Aa3	85,433,818	9.0	84,510,978	11.0
- Պետական գործակալությունների պարտատոմսեր և այլ արժեթղթեր	Aaa	–	–	24,001,326	3.1
- Այլ արժեթղթեր	Aaa	88,770,729	10.0	92,376,738	11.9
	Aa1-Aa3	–	–	8,154,753	1.1
- Փողի շուկայի գործիքներ	Վարկանիշ առկա չէ*	104,520,482	11.0	9,648,011	1.2
Ընդամենը իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ		**930,471,867**	100.0	**773,358,342**	**100.0**
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ներդրումներ, բացառությամբ բաժնային ներդրումների)					
- ՀՀ Կառավարության պետական արժեթղթեր	B1	11,578,230	14.7	–	–
- ՀՀ Կառավարության պետական արժեթղթեր	Ba3	–	–	13,189,425	15.0
- Կառավարության կողմից թողարկված մուրհակ	B1	66,055,949	84.2	–	–
- Կառավարության կողմից թողարկված մուրհակ	Ba3	–	–	73,810,843	84.1
- Կորպորատիվ պարտատոմսեր արտարժույթով	Վարկանիշ առկա չէ	840,759	1.1	761,584	0.9
Ընդամենը իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ներդրումներ, բացառությամբ բաժնային ներդրումների		**78,474,938**	**100.0**	**87,761,852**	**100.0**

*2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ վարկանիշ չունեցող վարկային խմբում ներառված փողի շուկայի գործիքները հանդիսանում են Միջազգային հաշվարկների բանկի կողմից թողարկված արժեթղթեր:

30. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

Պարտքային ռիսկն ըստ ֆինանսական ակտիվների դասերի (շարունակություն)

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ վարկանիշ չունեցող վարկային խմբում ներառված ընթացիկ հաշիվներն ու ժամկետային ավանդները կազմել են համապատասխանաբար 62,886 հազար ՀՀ դրամ և 1,310,245 հազար ՀՀ դրամ գումարի չափով (2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 207,768 հազար ՀՀ դրամ և 5,291,040 հազար ՀՀ դրամ), հանդիսանում են Խմբի դուստր կազմակերպությունների կողմից տեղական առևտրային բանկերում ընթացիկ հաշիվներ և ներդրված ավանդներ:

		31 դեկտեմբերի 2020թ.		*31 դեկտեմբերի 2019թ.*	
Հազար ՀՀ դրամ	***Վարկային վարկանիշ***	***Գումար***	***%-ը ֆինանսական ակտիվներում***	***Գումար***	***%-ը ֆինանսական ակտիվներում***
Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ և ներդրումներ տեղական արժույթով					
- Վարկեր բանկերին և ֆինանսական կազմակերպություններին KfW-ի, Համաշխարհային բանկի, Ասիական զարգացման բանկի և Եվրոպական ներդրումային բանկի հետ համաձայնագրերի շրջանակներում	Մարվել են հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո	13,204,400	9.4	6,122,724	4.8
	Վճարման ենթակա չեն համախմբված ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթվի դրությամբ	127,642,775	90.6	121,853,329	95.2
Ընդամենը		**140,847,175**	**100.0**	**127,976,053**	**100.0**
- Հիփոթեքային վերաֆինանսավորում	Մարվել են հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո	5,442,659	5.1	4,349,372	4.8
	Վճարման ենթակա չեն համախմբված ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթվի դրությամբ	100,934,357	94.9	86,024,586	95.2
Ընդամենը		**106,377,016**	**100.0**	**90,373,958**	**100.0**
- Առևտրային բանկերում տեղաբաշխված ավանդներ և թղթակցային հաշիվներ	Մարվել են հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո	13,993,998	16.0	7,457,060	11.7
	Վճարման ենթակա չեն համախմբված ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթվի դրությամբ	73,288,362	84.0	56,469,363	88.3
Ընդամենը		**87,282,360**	**100.0**	**63,926,423**	**100.0**
- Հետգնման պայմանագրեր և այլ մեկօրյա միջոցներ	Մարվել են հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո	345,952,769	100.0	126,669,774	100.0
Ընդամենը		**345,952,769**	**100.0**	**126,669,774**	**100.0**
- Ներդրումներ՝ դասակարգված որպես ամորտիզացված արժեքով չափվող	Մարվել են հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո	547,614	2.3	2,549,404	10.6
	Վճարման ենթակա չեն համախմբված ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթվի դրությամբ	23,757,798	97.7	21,533,083	89.4
Ընդամենը		**24,305,412**	**100.0**	**24,082,487**	**100.0**
- Այլ վարկեր		3,208,943	100.0	3,447,368	100.0
Ընդամենը		**3,208,943**	**100.0**	**3,447,368**	**100.0**
Արժեզրկման պահուստ		**(3,438,912)**		**(2,593,195)**	
Ընդամենը բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ և ներդրումներ տեղական արժույթով		**704,534,763**	**–**	**433,882,868**	**–**

Բանկը որոշումներ է կայացնում տեղական բանկերում և ֆինանսական կազմակերպություններում միջոցների տեղաբաշխման վերաբերյալ՝ հաշվի առնելով իր՝ որպես բանկային ոլորտի կարգավորողի և վերջին ատյանի վարկատուի դերակատարումը և հետևաբար չի շնորհում վարկանիշներ տեղական բանկերին և ֆինանսական կազմակերպություններին: Այսպիսով, տվյալ ակտիվների վարկային որակի վերլուծությունը սահմանափակվում է համապատասխան գործարքի փուլով:

30. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

Արժեզրկման գնահատում

Խումբը ԱՊԿ-ն հաշվարկում է հավանականությամբ կշռված մի շարք սցենարներով՝ գնահատելու ակնկալվող դրամական միջոցների պակասորդները՝ զեղչված արդյունավետ տոկոսադրույքի մոտարկմամբ: Դրամական միջոցների պակասորդը կազմակերպությանը պայմանագրով վճարման ենթակա դրամական միջոցների հոսքերի և կազմակերպության ակնկալվող դրամական միջոցների հոսքերի միջև տարբերությունն է: ԱՊԿ հաշվարկի մեխանիզմները ներկայացված են ստորև, և դրանց հիմնական տարրերը հետևյալն են՝

Դեֆոլտի հավանականություն (PD)	Դեֆոլտի հավանականությունը որոշակի ժամանակային հորիզոնի ընթացքում դեֆոլտի հավանական լինելու գնահատումն է: Դեֆոլտը միայն կարող է տեղի ունենալ գնահատված ժամանակահատվածում որոշակի պահի, եթե գործիքը նախկինում չի ապաճանաչվել և դեռևս պայուսակում է:
Դեֆոլտի ժամանակ գործիքի արժեք (EAD)	Դեֆոլտի ժամանակ գործիքի արժեքը ապագա դեֆոլտի ամսաթվի դրությամբ գործիքի գնահատված արժեքն է՝ հաշվի առնելով հաշվետու ամսաթվից հետո ակնկալվող փոփոխությունների ազդեցությունը, ներառյալ մայր գումարի և տոկոսների վճարումները՝ պայմանագրով նախատեսված կամ այլ կերպ, չկատարված վճարումների վրա հաշվեգրված տոկոսները և այլն:
Դեֆոլտի դեպքում կորստի չափը (LGD)	Դեֆոլտի դեպքում կորստի չափը դրամական միջոցների կորստի գնահատումն է, որն առաջանում է, երբ որոշակի պահի տեղի է ունենում դեֆոլտ: Դա պայմանագրով սահմանված դրամական միջոցների հոսքերի և այն դրամական միջոցների հոսքերի տարբերությունն է, որոնք վարկատուն ակնկալում է ստանալ՝ ներառյալ գրավների իրացումից միջոցները: Այն սովորաբար արտահայտվում է որպես դեֆոլտի դեպքում գործիքի արժեքից (EAD) տոկոս:

ԱՊԿ պահուստը հիմնվում է պարտքային կորուստների վրա, որոնք ակնկալվում է, որ կառաջանան ակտիվի կյանքի ընթացքում (ակտիվի կյանքի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստ կամ ԱԿԱՊԿ), եթե առկա չէ պարտքային ռիսկի զգալի աճ սկզբնական ճանաչումից հետո, որի դեպքում պահուստը հիմնվում է 12 ամսվա ընթացքում ակնկալվող պարտքային կորուստի վրա (12ամԱՊԿ): 12ամԱՊԿ-ը ԱԿԱՊԿ-ի այն մասն է, որը ներկայացնում է ֆինանսական գործիքի գծով պարտավորությունների չկատարման դեպքերի արդյունք հանդիսացող ԱՊԿ-ները, որոնք հնարավոր են հաշվետու ամսվան հաջորդող 12 ամիսների ընթացքում: Ինչպես ԱԿԱՊԿ-ն, այնպես էլ 12ամԱՊԿ-ն հաշվարկվում են անհատական կամ խմբային հիմունքով՝ ելնելով ֆինանսական գործիքների համապատասխան պայուսակի բնույթից:

Խումբը քաղաքականություն է սահմանել՝ յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի ավարտին իրականացնել գնահատում՝ արդյոք ֆինանսական գործիքի պարտքային ռիսկը զգալիորեն աճել է սկզբնական ճանաչումից հետո, հաշվի առնելով ֆինանսական գործիքի գործողության մնացած ժամկետի ընթացքում դեֆոլտի տեղի ունենալու ռիսկի փոփոխությունը: Վերոնշյալ գործընթացի հիման վրա, Խումբը խմբավորում է իր վարկերը՝ ըստ փուլերի, ինչպես նկարագրված է ստորև.

Փուլ 1:	Սկզբնական ճանաչման ժամանակ Խումբը պահուստ է ճանաչում 12 ամսվա ԱՊԿ-ի հիման վրա: 1-ին փուլի վարկերը ընդգրկում են նաև գործիքներ, որոնց դեպքում պարտքային ռիսկը բարելավվել է, և վարկը վերադասակարգվել է 2-րդ փուլից:
Փուլ 2:	Երբ գործիքի պարտքային ռիսկը զգալիորեն աճել է սկզբնական ճանաչումից հետո, Խումբը պահուստը ճանաչում է վարկի գործողության ամբողջ ժամկետի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստների (ԱԿԱՊԿ) համար: 2-րդ փուլի վարկերը ընդգրկում են նաև գործիքներ, որոնց դեպքում պարտքային ռիսկը բարելավվել է, և վարկը վերադասակարգվել է 3-րդ փուլից:
Փուլ 3:	Ակտիվը համարվում է պարտքային առումով արժեզրկված: Խումբը ձևակերպում է ԱԿԱՊԿ պահուստ:
Գնված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ակտիվները (POCI)	Գնված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված (POCI) ակտիվները ֆինանսական ակտիվներ են, որոնք արժեզրկված են սկզբնական ճանաչման ժամանակ: Տվյալ ակտիվները սկզբնական ճանաչման ժամանակ հաշվառվում են իրական արժեքով, և տոկոսային եկամուտը հետագայում ճանաչվում է պարտքային ռիսկով ճշգրտված արդյունավետ տոկոսադրույքի հիման վրա: ԱՊԿ-ն միայն ճանաչվում կամ ապաճանաչվում է այնքանով, որքանով որ հետագայում փոխվում է ակտիվի գործողության ամբողջ ժամկետի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստների գնահատականը:

Դեֆոլտի և վերականգնման սահմանումը

Խումբը համարում է, որ ֆինանսական գործիքի գծով առկա է դեֆոլտ, և հետևաբար այն դասում է որպես Փուլ 3-ին պատկանող ֆինանսական գործիք (այսինքն՝ պարտքային առումով արժեզրկված) ԱՊԿ հաշվարկի նպատակով, երբ գործընկերոջ վարկանիշը նվազում է Խմբի կողմից նախապես սահմանված վարկանիշից: Անկախ վարկանիշի փոփոխությունից, բոլոր այն դեպքերում, երբ փոխառուի պայմանագրային վճարումները ժամկետանց են 90 օրով, ֆինանսական գործիքը համարվում է արժեզրկված:

30. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

Արժեզրկման գնահատում (շարունակություն)

Հաճախորդի անվճարունակության որակական գնահատման շրջանակներում Խումբը նաև դիտարկում է տարատեսակ դեպքերը, որոնք կարող են վկայել վճարման անհավանականության մասին: Նման դեպքեր տեղի ունենալիս, Խումբը մանրամասն դիտարկում է, թե արդյոք տվյալ դեպքի արդյունքում հաճախորդը պետք է ճանաչվի անվճարունակ և դասակարգվի Փուլ 3-ում ԱՊԿ հաշվարկների նպատակով, թե պատշաճ է Փուլ 2-ի կիրառումը: Նման դեպքերը ներառում են՝

- Փոխառուի անվճարունակության կամ դրան մոտ իրավիճակի մասին վկայող ներքին վարկանիշը
- Փոխառուի կողմից Խմբին հասցեագրված պահանջը արտակարգ ֆինանսավորման մասին,
- Գրավի առարկայի արժեքի էական նվազեցումը, այն դեպքում, երբ վարկի վերականգնումը ակնկալվում է իրագործել գրավի առարկայի վաճառքի միջոցով,
- Պայմանագրային դրույթի խախտումը, որը չի զիջվել Խմբի կողմից,
- Պարտատիրոջ (կամ պարտատիրոջ խմբում ներառված որևէ իրավաբանական անձի) դիմումը սնանկության ճանաչման վերաբերյալ,
- Պարտատուի ցուցակված պարտքի կամ կապիտալի կասեցումը առաջնային արժեթղթերի շուկայում՝ ելնելով ֆինանսական դժվարությունների մասին կասկածներից կամ փաստերից:

Խմբի քաղաքականության համաձայն, ֆինանսական գործիքի կարգավիճակը համարվում է վերականգնված և հետևաբար այն վերադասակարգվում է Փուլ 3-ից այն դեպքում, երբ պարտավորության չկատարման չափանիշներից ոչ մեկը առկա չի եղել առնվազն վեց հաջորդական ամիսների ընթացքում: Ակտիվի վերականգնումից հետո այն որպես Փուլ 2 կամ Փուլ 1 դասակարգելու մասին որոշումը կախված է վերականգնման պահին վերանայված վարկային գնահատականից՝ թե արդյոք այն վկայում է սկզբնական ճանաչման պահից ի վեր պարտքային ռիսկի զգալի մեծացման մասին:

Դեֆոլտի հավանականության գնահատման գործընթացը

Այն գործընկերների գծով, որոնք ունեն միջազգային վարկանիշային գործակալությունների կողմից շնորհված վարկանիշ, կիրառվում է «Մուդիզ» վարկանիշային ընկերության տարեկան անցումային աղյուսակը:

Այն գործընկերների գծով, որոնք չունեն միջազգային վարկանիշային գործակալությունների կողմից շնորհված վարկանիշ, դեֆոլտի հավանականությունը գնահատվում է ներքին ֆինանսական կայունության ինդեքսի հիման վրա, օգտագործելով վարկանշված գործընկերների դեֆոլտի հավանականության էքստրապոլյացիայի մեթոդը:

Դեֆոլտի ժամանակ գործիքի արժեքը

Դեֆոլտի ժամանակ գործիքի արժեքը (EAD) իրենից ներկայացնում է արժեզրկման գնահատման ենթակա ֆինանսական գործիքների համախառն հաշվեկշռային արժեքը:

Դեֆոլտի դեպքում կորստի չափը (LGD)

Ֆինանսական ակտիվների յուրաքանչյուր խմբի համար LGD հաշվարկելու համար օգտագործվում են տվյալ ֆինանսական գործիքի պարտքի առաջնայնության կարգավիճակին համապատասխան վերականգնման դրույքները («Մուդիզ») կամ գտնվելու վայրի երկրի համար սահմանված վերականգնման ցուցանիշները (ԱՄՀ):

Պարտքային ռիսկի զգալի աճ

Խումբը շարունակաբար մշտադիտարկում է բոլոր ակտիվները, որոնք ենթակա են ԱՊԿ-ի: Որոշելու համար, թե արդյոք գործիքը կամ գործիքների պորտֆելը ենթակա են 12ամԱՊԿ-ի, Խումբը գնահատում է, թե արդյոք տեղի է ունեցել պարտքային ռիսկի զգալի աճ սկզբնական ճանաչումից հետո: Խումբը համարում է, որ պարտքային ռիսկը զգալիորեն աճել է այն դեպքում, երբ գործընկերոջ վարկանիշը փոփոխվել է սկզբնական ճանաչման պահից հետո, համաձայն ռիսկերի կառավարման ներքին ընթացակարգերի:

Պարտքային ռիսկի զգալի աճի գնահատումը տեղական առևտրային բանկերի և ֆինանսական հաստատությունների համար, որոնք չունեն միջազգային վարկանիշ, հիմնվում է անհատական գործիքների վարքի և առևտրային բանկերի և ֆինանսական հաստատությունների ֆինանսական կայունության ընդհանուր ցուցանիշների վրա: Համակարգային ֆինանսական ռիսկերի տիրույթի մակրոգնահատումները ևս մեկ գործիք են որոշակի ակտիվների՝ Փուլ 1-ից Փուլ 2 տեղափոխման անհրաժեշտությունը գնահատելու համար:

Անկախ վարկանիշների փոփոխություններից, համարվում է, որ պարտքային ռիսկը զգալիորեն աճել է սկզբնական ճանաչման պահից հետո, եթե պայմանագրային վճարումները ուշացվել են ավելի քան 30 օրով:

30. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

Արժեզրկման գնահատում (շարունակություն)

Ապագայամետ տեղեկատվություն և բազմակի տնտեսական սցենարներ

Խմբի ԱՊԿ մոդելները հիմնվում են հետագա ժամանակաշրջանների գծով տարատեսակ տեղեկատվության վրա, որոնք հանդիսանում են որպես տնտեսական ելակետային տվյալներ և թվարկված են ստորև.

- ՀՆԱ աճը,
- Գործազրկության ցուցանիշը,
- ՍԳԻ,
- Միջազգային պահուստները,
- Դրամավարկային քաղաքականության դրույքը,
- Կապիտալի գնի ինդեքսը,
- Արտարժույթի փոխարժեքները,
- Վարկ/ՀՆԱ հարաբերակցությունը,
- Այլ մակրոտնտեսական գործոններ՝ ելնելով տվյալ երկրի առանձնահատկություններից:

ԱՊԿ հաշվարկներում օգտագործվող ելակետային տվյալները և մոդելները հնարավոր է, որ չարտացոլեն տվյալ շուկայի բոլոր բնութագրերը ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ: Այս առումով ժամանակ առ ժամանակ կատարվում են որակական ճշգրտումներ կամ վերագնահատումներ՝ ժամանակավոր ճշգրտումների միջոցով, եթե տարբերությունները կրում են զգալիորեն էական բնույթ:

Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվանցում

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ առևտրային բանկերի հետ Խումբն ուներ հակադարձ հետգնման պայմանագրեր, որոնք ներառված են հաշվանցման գլխավոր համաձայնություններում, և որոնք դեֆոլտի դեպքում ենթական են կատարման: Խումբը կատարել է նաև մարժային ավանդներ, որոնք գրավ են հանդիսանում իր չհատուցված ածանցյալ գործիքների համար:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են հաշվանցման ենթակա իրավաբանորեն ամրագրված հաշվանցման գլխավոր համաձայնագրի կամ նմանատիպ պայմանագրերի առարկա (ISDA, RISDA և այլն) հանդիսացող ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները, որոնք չեն հանգեցնում հաշվանցման ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում:

Հազար ՀՀ դրամ	*Ճանաչված ֆինանսական ակտիվների համախառն գումար*	*Ֆին. վիճակի մասին հաշվետվությունում հաշվանցված ճանաչված ֆինանսական պարտավորությունների համախառն գումար*	*Ֆին. վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված ֆինանսական ակտիվների զուտ գումար*	*Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում չհաշվանցված գումարներ*		*Զուտ գումար*
				Ֆինանսական գործիքներ		
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ						
Ֆինանսական ակտիվներ						
Հետգնման պայմանագրեր և այլ մեկօրյա միջոցներ (Ծնթգ.12)	345,952,769	–	345,952,769	345,952,769		–
Ընդամենը	**345,952,769**	**–**	**345,952,769**	**345,952,769**		**–**

Հազար ՀՀ դրամ	*Ճանաչված ֆինանսական ակտիվների համախառն գումար*	*Ֆին. վիճակի մասին հաշվետվությունում հաշվանցված ճանաչված ֆինանսական պարտավորությունների համախառն գումար*	*Ֆին. վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված ֆինանսական ակտիվների զուտ գումար*	*Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում չհաշվանցված գումարներ*		*Զուտ գումար*
				Ֆինանսական գործիքներ		
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ						
Ֆինանսական ակտիվներ						
Հետգնման պայմանագրեր և այլ մեկօրյա միջոցներ (Ծնթգ.12)	126,669,774	–	126,669,774	126,669,774		–
Ընդամենը	**126,669,774**	**–**	**126,669,774**	**126,669,774**		**–**

30. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվանցում (շարունակություն)

	31 դեկտեմբերի 2020թ.				*31 դեկտեմբերի 2019թ.*			
Հազար ՀՀ դրամ	*Հայաստան*	*ՏՀԶԿ*	*ԱՊՀ և այլ երկրներ*	*Ընդամենը*	*Հայաստան*	*ՏՀԶԿ*	*ԱՊՀ և այլ երկրներ*	*Ընդամենը*
Ակտիվներ								
Կանխիկ դրամ	51,108,237	–	–	**51,108,237**	39,603,848	–	–	**39,603,848**
Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ արտարժույթով	4,325,169	379,108,638	1,585,199	**385,019,006**	8,866,115	547,390,347	3,735,526	**559,991,988**
Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ և ներդրումներ տեղական արժույթով	704,534,763	–	–	**704,534,763**	433,882,868	–	–	**433,882,868**
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ	–	930,471,867	–	**930,471,867**	–	773,358,342	–	**773,358,342**
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ներդրումներ	79,384,452	2,618,706	–	**82,003,158**	88,633,726	1,940,583	–	**90,574,309**
ԱՄՀ-ում տեղաբաշխված միջոցներ	–	101,636,948	–	**101,636,948**	–	88,398,230	–	**88,398,230**
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	64,150,034	–	–	**64,150,034**	68,700,679	–	–	**68,700,679**
Այլ ակտիվներ	10,072,335	71,109	111,845	**10,255,289**	12,239,109	60,029	111,846	**12,410,984**
Ընդամենը ակտիվներ	**913,574,990**	**1,413,907,268**	**1,697,044**	**2,329,179,302**	**651,926,345**	**1,411,147,531**	**3,847,372**	**2,066,921,248**
Պարտավորություններ								
Թղթադրամներ և մետաղադրամներ շրջանառության մեջ	751,465,873	–	–	**751,465,873**	607,209,301	–	–	**607,209,301**
Ֆինանսական և այլ հաստատությունների ավանդներ և հաշիվների մնացորդներ	818,064,536	18,545	591,094	**818,674,175**	722,819,276	13,072	568,931	**723,401,279**
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	70,825	72,296	–	**143,121**	79,455	1,645	–	**81,100**
Պարտավորություններ Կառավարության հանդեպ	266,542,115	–	–	**266,542,115**	327,294,360	–	–	**327,294,360**
Պարտավորություններ ԱՄՀ-ի հանդեպ	–	247,496,568	–	**247,496,568**	–	240,948,903	–	**240,948,903**
Այլ փոխառություններ	–	153,297,582	7,288,058	**160,585,640**	–	136,151,500	6,590,621	**142,742,121**
Թողարկված պարտատոմսեր	9,655,324	–	–	**9,655,324**	6,626,428	–	–	**6,626,428**
Այլ պարտավորություններ	4,678,594	639,968	646,189	**5,964,751**	4,557,977	177,340	618,296	**5,353,613**
Ընդամենը պարտավորություններ	**1,850,477,267**	**401,524,959**	**8,525,341**	**2,260,527,567**	**1,668,586,797**	**377,292,460**	**7,777,848**	**2,053,657,105**
Զուտ ակտիվներ	**(936,902,277)**	**1,012,382,309**	**(6,828,297)**	**68,651,735**	**(1,016,660,452)**	**1,033,855,071**	**(3,930,476)**	**13,264,143**

Ստորև ներկայացված աղյուսակում ներառված են Խմբի ակտիվները և պարտավորություններն ըստ աշխարհագրական կենտրոնացման.

30. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

Իրացվելիության ռիսկ և ֆինանսական միջոցների կառավարում

Իրացվելիության ռիսկն այն ռիսկն է, որ Խումբը սովորական կամ չկանխատեսված իրավիճակում չի կարողանա կատարել իր պարտավորությունները վերջիններիս մարման ժամկետում: Բանկը, որպես Կառավարության բանկային գործակալ և երկրի գլխավոր դրամավարկային մարմին, պատասխանատու է պետական պարտքի սպասարկման և Կառավարության արտաքին վճարումների սպասարկման համար: Այս տեսանկյունից, կարևորվում է կանխիկի և իրացվելիության ծավալների ճիշտ կառավարումը:

Հաշվի առնելով պահուստների կառավարման նպատակները, ՀՀ միջազգային պահուստները բաժանվել են 3 մասի՝ գործառնական, իրացվելի և ներդրումային պայուսակների: Եթե առաջին երկուսը նախատեսվում են կարճաժամկետ/պահային և միջնաժամկետ իրացվելիության ապահովման համար, ապա վերջինի նպատակը հարստության կուտակումն է:

Տրանշների նպատակները պայմանավորում են նաև դրանց կառավարման քաղաքականությունը՝ ուղենիշերի ընտրությունը, կառավարման պասիվ կամ ակտիվ տարբերակի ընտրությունը:

Ֆինանսական պարտավորությունների վերլուծությունը՝ մինչև պայմանագրերում նշված մարմանը մնացած ժամկետների համաձայն

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2020 և 2019 թվականների դեկտեմբերի 31-ի դրությամբ պարտավորությունները՝ ըստ մնացորդային պայմանագրային ժամկետայնության: Ժամկետայնության աղյուսակում բացահայտված պարտավորությունների գումարները պայմանագրային չզեղչված դրամական միջոցների հոսքեր են: Այդ չզեղչված դրամական միջոցների հոսքերը տարբերվում են ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում ներկայացված գումարից, քանի որ ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում ներառված գումարը հիմնված է զեղչված դրամական միջոցների հոսքերի վրա: Ածանցյալ ֆինանսական գործիքները ներառված են վճարվելիք կամ ստացվելիք պայմանագրային գումարներով, բացառությամբ այն դեպքերի, երբ Խումբն ակնկալում է մինչև մարման ժամկետը փակել ածանցյալի դիրքը, որի դեպքում ածանցյալները ներառվում են՝ ակնկալվող դրամական միջոցների հոսքերի հիման վրա:

	31 դեկտեմբերի 2020թ.						
Հազար ՀՀ դրամ	*Ցպահանջ և 1 ամսից քիչ*	*1-ից մինչև 3 ամիս*	*3 ամսից մինչև 1 տարի*	*1-ից մինչև 5 տարի*	*5 տարուց ավելի*	*Առանց մարման ժամկետի*	*Ընդամենը*
Ֆինանսական պարտավորություններ							
Թղթադրամներ և մետաղադրամներ շրջանառության մեջ	751,465,873	–	–	–	–	–	**751,465,873**
Ֆինանսական և այլ հաստատությունների ավանդներ և հաշիվների մնացորդներ	818,702,938	–	–	–	–	–	**818,702,938**
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	143,121	–	–	–	–	–	**143,121**
Պարտավորություններ Կառավարության հանդեպ	95,790,052	172,005,247	–	–	–	–	**267,795,299**
Պարտավորություններ ԱՄՀ-ի հանդեպ	–	1,056,590	25,383,822	59,452,305	993,657	163,080,453	**249,966,827**
Այլ փոխառություններ	543,943	63,310	21,748,095	80,357,139	72,192,146	–	**174,904,633**
Թողարկված պարտատոմսեր	–	3,124,500	480,000	7,088,750	–	–	**10,693,250**
Ընդամենը չզեղչված ֆինանսական պարտավորություններ	**1,666,645,927**	**176,249,647**	**47,611,917**	**146,898,194**	**73,185,803**	**163,080,453**	**2,273,671,941**

30. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

Իրացվելիության ռիսկ և ֆինանսական միջոցների կառավարում (շարունակություն)

	31 դեկտեմբերի 2019թ.						
Հազար ՀՀ դրամ	*Ցպահանջ և 1 ամսից քիչ*	*1-ից մինչև 3 ամիս*	*3 ամսից մինչև 1 տարի*	*1-ից մինչև 5 տարի*	*5 տարուց ավելի*	*Առանց մարման ժամկետի*	*Ընդամենը*
Ֆինանսական պարտավորություններ							
Թղթադրամներ և մետաղադրամներ շրջանառության մեջ	607,209,301	–	–	–	–	–	**607,209,301**
Ֆինանսական և այլ հաստատությունների ավանդներ և հաշիվների մնացորդներ	721,432,655	–	2,100,625	–	–	–	**723,533,280**
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	81,100	–	–	–	–	–	**81,100**
Պարտավորություններ Կառավարության հանդեպ	56,578,091	150,046,431	125,058,221	–	–	–	**331,682,743**
Պարտավորություններ ԱՄՀ-ի հանդեպ	–	1,110,868	23,094,242	65,167,801	11,972,325	143,675,049	**245,020,285**
Այլ փոխառություններ	738,484	–	16,943,615	73,311,020	70,873,733	–	**161,866,852**
Թողարկված պարտատոմսեր	–	124,500	387,000	7,149,500	–	–	**7,661,000**
Ընդամենը չզեղչված ֆինանսական պարտավորություններ	**1,386,039,631**	**151,281,799**	**167,583,703**	**145,628,321**	**82,846,058**	**143,675,049**	**2,077,054,561**

Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկը Խմբի ֆինանսական գործիքների ապագա դրամական հոսքերի կամ դրանց իրական արժեքի փոփոխության ռիսկն է՝ շուկայական գների, ներառյալ փոխարժեքի, տոկոսադրույքների և սեփական կապիտալի գների փոփոխության արդյունքում: Խումբը դասակարգում է շուկայական ռիսկն ըստ առևտրային և ոչ առևտրային պայուսակների:

Տոկոսադրույքի փոփոխման ռիսկ

Տոկոսադրույքի ռիսկը ֆինանսական գործիքների ապագա դրամական հոսքերի կամ դրանց իրական արժեքի հնարավոր փոփոխության ռիսկն է՝ տոկոսադրույքների փոփոխման արդյունքում:

Եռամակարդակ կառավարման ներքո Բանկի Խորհուրդը սահմանում է այսպես կոչված՝ «ռիսկի նկատմամբ իր հանդուրժողականության աստիճանը», որը նախանշում է երկարաժամկետում տոկոսադրույքի ռիսկի ընդունելի սահմանները: Այն նաև սահմանում է պայուսակի օպտիմալացման սկզբունքները: «Ռիսկի նկատմամբ իր հանդուրժողականության աստիճանը» արտահայտվում է որոշակի ժամանակահատվածում (ներկայումս՝ երեք տարի) և 95% հավանականությամբ ակնկալվող եկամտաբերության նվազագույն մակարդակի տեսքով: Նշված տրամաբանությունից ելնելով, ակտիվների օպտիմալ տեղաբաշխման մարտավարական ուղենիշերի ընդունման իրավասությունը պատվիրակվել է Ներդրումային հանձնաժողովին:

Ուղենիշերի սահմանման հիմնական նպատակը եկամտաբերության մաքսիմալացումն է ավելի կարճ (մեկ տարի) ժամանակահատվածում: Այդ որոշումների հիմքում, ի տարբերություն ռազմավարական որոշումների, դրվում են շուկայի ընթացիկ միտումները և կանխատեսումները: Օպտիմալ պայուսակի ընտրության նպատակով եկամտաբերության և ռիսկայնության գնահատումն իրականացվում է ապագա հնարավոր սցենարների մշակման միջոցով՝ մասնավորապես օգտագործելով VAR-MGARCH մոդելի սիմուլյացիաների միջոցով ստացված եկամտաբերության կորի արդյունքները, ինչպես նաև սեփական և շուկայի այլ մասնակիցների փորձագիտական կանխատեսումները տոկոսադրույքների և վարկային սպրեդերի վերաբերյալ: Օպտիմալ պայուսակի ընտրությունը կատարվում է Բլեք-Լիթերմանի և Մարկովիցի մոդելների միջոցով, սակայն որոշակի սահմանափակումների պայմաններում:

Ռիսկի մոնիթորինգի և կառավարման նպատակով, Ֆինանսական դեպարտամենտի Ռիսկերի կառավարման վարչության կողմից կիրառվում են միջազգային պրակտիկայում ընդունված մի շարք ցուցանիշներ. Ռիսկային արժեքի մեթոդ (VaR), Առանցքային կետի դյուրացիա, Ինֆորմացիոն գործակից, Սպրեդ դյուրացիա, PCA դյուրացիա և հետևման սխալ:

30. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

Տոկոսադրույքի փոփոխման ռիսկ (շարունակություն)

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս Խմբի սեփական կապիտալի զգայունությունը, որը հաշվարկվում է 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաստատուն տոկոսադրույքով իրական արժեքով՝ այլ համապարփակ եկամտով չափվող ֆինանսական ակտիվները, վերագնահատելով՝ ելնելով տոկոսադրույքների փոփոխման ենթադրությունից: Սեփական կապիտալի զգայունությունը վերլուծվում է ըստ ակտիվի մարման ժամկետների: Սեփական կապիտալի զգայունությունը հիմնված է այն ենթադրության վրա, որ եկամտաբերության կորում կան զուգահեռ փոփոխություններ:

	2020թ.		*2019թ.*	
Հազար ՀՀ դրամ	*Եկամտաբերության կորի փոփոխությունը, բ.կ.*	*Ազդեցությունը սեփական կապիտալի վրա*	*Եկամտաբերության կորի փոփոխությունը բ.կ.*	*Ազդեցությունը սեփական կապիտալի վրա*
Արժույթ				
ՀՀ դրամ	+110	(587,436)	+100	(617,272)
ՀՀ դրամ	-110	642,517	-100	671,185
ԱՄՆ դոլար	100	14,433	+35	(19,763)
ԱՄՆ դոլար	-25	1,353	-35	7,868

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս Խմբի շահույթի զգայունությունը, որը հաշվարկվել է 2020 և 2019 թվականների դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական ակտիվները իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով վերագնահատելով՝ ելնելով տոկոսադրույքների փոփոխման ենթադրությունից: Աղյուսակում բացահայտված գումարներն արտահայտված են ներկայացման արժույթով:

	2020թ.		*2019թ.*	
Հազար ՀՀ դրամ	*Բազիսային կետերի փոփոխություն*	*Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքների և սեփական կապիտալի զուտ արդյունքի աճ/(նվազում)*	*Բազիսային կետերի փոփոխություն*	*Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքների և սեփական կապիտալի զուտ արդյունքի աճ/(նվազում)*
Արժույթ				
ԱՄՆ դոլար	+100/-40	(4,151,813)/1,660,725	+100/-100	(4,380,747)/4,380,747
Եվրո	+60/-60	(651,992)/651,992	+50/-50	(503,299)/503,299
Բրիտանական ֆունտ	+80/-80	(86,624)/86,624	+20/-20	(26,083)/26,083

Խումբն ունի նաև 2020թ. դեկտեմբերի 31-ի և 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ լողացող տոկոսադրույքով չմարված պարտավորություններ:

Ստորև աղյուսակը ներկայացնում է 2020թ. դեկտեմբերի 31-ի և 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խմբի շահույթի կամ վնասի և սեփական կապիտալի զգայունությունը, որը հաշվարկվում է՝ ելնելով Խմբի կողմից ստացված փոխառությունների տոկոսադրույքների փոփոխման ենթադրությունից:

	2020թ.		*2019թ.*	
Հազար ՀՀ դրամ	*Բազիսային կետերի փոփոխություն*	*Զուտ տոկոսային ծախսի աճ/(նվազում) և սեփական կապիտալի նվազում/(աճ)*	*Բազիսային կետերի փոփոխություն*	*Զուտ տոկոսային ծախսի աճ/(նվազում) և սեփական կապիտալի նվազում/(աճ)*
Արժույթ				
ԱՄՆ դոլար	+/-252	658,102/(658,102)	+/-145	299,205/(299,205)
ՀՓԻ	+/-70	617,372/(617,372)	+/-41	394,759/(394,759)
Եվրո	+/-20	1,044/(1,044)	–	–

Իրական արժեքի հիերարխիայի մակարդակ 3-ում ներառված իրական արժեքի գնահատման մեթոդի համար օգտագործված ելակետային տվյալների զգայունությունը բացահայտված է Ծանոթագրություն 29-ում:

30. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

Արտարժույթի ռիսկ

Արտարժույթի ռիսկը արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների հետևանքով ֆինանսական գործիքների արժեքի տատանման ռիսկն է: Բանկի Խորհուրդը սահմանել է արտարժույթի տեղաբաշխման հստակ սկզբունքներ, իսկ Ներդրումային հանձնաժողովը սահմանում և վերանայում է համապատասխան արժույթների կշիռները:

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս շահույթի կամ վնասի և սեփական կապիտալի զգայունությունը հաշվետու ժամանակաշրջանի վերջում ՀՀ դրամի նկատմամբ կիրառված փոխարժեքների ողջամտորեն հնարավոր փոփոխությունների հանդեպ՝ բոլոր այլ փոփոխականները հաստատուն պահելով:

	2020թ.		*2019թ.*	
Հազար ՀՀ դրամ	*Փոխարժեքի աճ %*	*Շահույթի և սեփական կապիտալի աճ/(նվազում)*	*Փոխարժեքի աճ %*	*Շահույթի և սեփական կապիտալի աճ/(նվազում)*
Արժույթ				
ԱՄՆ դոլար	5.00%	24,889,215	3.00%	18,882,379
Եվրո	8.50%	13,728,477	6.50%	11,089,753
Բրիտանական ֆունտ	11.00%	3,025,918	9.00%	3,316,392
Ճապոնական իեն	8.50%	2,731,413	6.50%	1,034,228
Ռուսական ռուբլի	16.00%	(25,649)	13.00%	50,093
ՀՓԻ	7.00%	(10,720,337)	5.00%	(7,957,065)

	2020թ.		*2019թ.*	
Հազար ՀՀ դրամ	*Փոխարժեքի նվազում %*	*Շահույթի և սեփական կապիտալի աճ/(նվազում)*	*Փոխարժեքի նվազում %*	*Շահույթի և սեփական կապիտալի աճ/(նվազում)*
Արժույթ				
ԱՄՆ դոլար	-5.00%	(24,889,215)	-3.00%	(18,882,379)
Եվրո	-8.50%	(13,728,477)	-6.50%	(11,089,753)
Բրիտանական ֆունտ	-11.00%	(3,025,918)	-9.00%	(3,316,392)
Ճապոնական իեն	-8.50%	(2,731,413)	-6.50%	(1,034,228)
Ռուսական ռուբլի	-16.00%	25,649	-13.00%	(50,093)
ՀՓԻ	-7.00%	10,720,337	-5.00%	7,957,065

Փոխարժեքների ակնկալվող փոփոխությունը որոշվել է Խմբի կողմից՝ վերլուծելով տարեկան ստանդարտ շեղումները՝ հիմք ընդունելով համապատասխան փոխարժեքների պատմական շուկայական տվյալները:

Պահուստների արժութային կազմը որոշվում է յուրաքանչյուր իրացվելիության տրանշի համար առանձին, յուրաքանչյուր տրանշի ստեղծման հիմքում ընկած գործոնները հեջավորելու նպատակով: Ներկայում, ՀՀ արտաքին պարտքը պահուստներ ունենալու հիմնական պատճառն է: Հետևաբար, պահուստների արժութային կազմը հիմնականում արտացոլում է պարտքի արժութային կառուցվածքը: Կարճաժամկետ իրացվելիության տրանշի արժութային կառուցվածքը պայմանավորված է արտաքին առևտրի հետևանքով առաջացած արժույթների հոսքերով, ինչպես նաև հնարավոր միջամտման կարիքներով և ընթացիկ ծախսերով: Արժութային կառուցվածքը ենթակա է վերանայման տարեկան առնվազն 2 անգամ:

Գործառնական ռիսկ – հսկողություն դուստր կազմակերպությունների նկատմամբ

Ինչպես բացահայտված է Ծանոթագրություն 2-ում, Բանկն ունի կապիտալ ներդրումներ մի քանի դուստր կազմակերպություններում, որոնք ներգրավված են ֆինանսական հատվածի զարգացման և ենթակառուցվածքային գործունեության մեջ: Նման ներդրումների նպատակն է աջակցել Հայաստանի Հանրապետության ֆինանսական հատվածի զարգացմանը, ապահովել ֆինանսական համակարգի կայունությունը և բնականոն գործունեությունը, որը, ինչպես նշված է Օրենքում, Բանկի նպատակներից մեկն է:

30. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

Գործառնական ռիսկ – հսկողություն դուստր կազմակերպությունների նկատմամբ (շարունակություն)

Բանկը դուստր կազմակերպությունների գործունեության նկատմամբ հսկողությունն իրականացնում է հետևյալ կերպ.

- Բաժնետերերի ժողովներին մասնակցություն:
- Դուստր կազմակերպությունների ղեկավարների նշանակում (յուրաքանչյուր դուստր կազմակերպության Տնօրենների խորհուրդը նշանակվում է բաժնետերերի կողմից, և յուրաքանչյուր դուստր կազմակերպության Տնօրենների խորհուրդը նշանակում է Գործադիր տնօրեններ):
- Առնվազն յուրաքանչյուր տարի, դուստր կազմակերպությունների գործունեության արդյունքների վերլուծություն՝ ֆինանսական տեղեկատվության դիտարկման միջոցով, ներառյալ դուստր կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների արտաքին աուդիտի արդյունքների դիտարկումը:
- Դուստր կազմակերպությունների հետագա ռազմավարական զարգացման վերլուծություն, անհրաժեշտության դեպքում նաև ներդրումների դադարեցման ռազմավարություն մշակում:
- Ռիսկերի գնահատման արդյունքների հիման վրա՝ դուստր կազմակերպությունների գործունեությունների վերանայում, Բանկի ներքին աուդիտի աշխատանքների շրջանակում:

2015 թվականին Բանկը որդեգրել է քաղաքականություն՝ ակտիվացնելու բանակցությունները հնարավոր ինստիտուցիոնալ ներդրողների հետ՝ դուստր կազմակերպություններում Բանկի ներդրումների օտարման ուղղությամբ:

31. Ակտիվների և պարտավորությունների մարման ժամկետների վերլուծություն

Աղյուսակներում ներկայացված է հաշվետու ժամանակաշրջանի ավարտից տասներկու ամսվա ընթացքում կամ ավելի ուշ փոխհատուցվող կամ մարվող գումարների վերաբերյալ տեղեկատվություն:

	31 դեկտեմբերի 2020թ.		
Հազար ՀՀ դրամ	*Ընթացիկ*	*Ոչ ընթացիկ*	*Ընդամենը*
Ակտիվներ			
Կանխիկ դրամ	51,108,237	–	**51,108,237**
Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ արտարժույթով	382,189,873	2,829,133	**385,019,006**
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ	930,471,867	–	**930,471,867**
Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ և ներդրումներ տեղական արժույթով	475,937,559	228,597,204	**704,534,763**
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ	67,531,128	14,472,030	**82,003,158**
ԱՄՀ-ում տեղաբաշխված միջոցներ	4,693,052	96,943,896	**101,636,948**
Հիմնական միջոցներ	–	61,252,975	**61,252,975**
Ոչ նյութական ակտիվներ	–	2,897,059	**2,897,059**
Այլ ակտիվներ	9,237,744	1,017,545	**10,255,289**
Ընդամենը ակտիվներ	**1,921,169,460**	**408,009,842**	**2,329,179,302**
Պարտավորություններ			
Թղթադրամներ և մետաղադրամներ շրջանառության մեջ	751,465,873	–	**751,465,873**
Ֆինանսական և այլ հաստատությունների ավանդներ և հաշիվների մնացորդներ	818,674,175	–	**818,674,175**
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	143,121	–	**143,121**
Պարտավորություններ Կառավարության հանդեպ	266,542,115	–	**266,542,115**
Պարտավորություններ ԱՄՀ-ի հանդեպ	25,553,548	221,943,020	**247,496,568**
Այլ փոխառություններ	19,824,309	140,761,331	**160,585,640**
Թողարկված պարտատոմսեր	3,155,324	6,500,000	**9,655,324**
Այլ պարտավորություններ	5,193,920	770,831	**5,964,751**
Ընդամենը պարտավորություններ	**1,890,552,385**	**369,975,182**	**2,260,527,567**
Զուտ դիրք 2020թ. դեկտեմբերի 31-ին	**30,617,075**	**38,034,660**	**68,651,735**

31. Ակտիվների և պարտավորությունների մարման ժամկետների վերլուծություն (շարունակություն)

	31 դեկտեմբերի 2019թ.		
Հազար ՀՀ դրամ	*Ընթացիկ*	*Ոչ ընթացիկ*	*Ընդամենը*
Ակտիվներ			
Կանխիկ դրամ	39,603,848	–	**39,603,848**
Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ արտարժույթով	556,489,586	3,502,402	**559,991,988**
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ	773,358,342	–	**773,358,342**
Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ և ներդրումներ տեղական արժույթով	224,131,595	209,751,273	**433,882,868**
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ	75,374,736	15,199,573	**90,574,309**
ԱՄՀ-ում տեղաբաշխված միջոցներ	2,960,039	85,438,191	**88,398,230**
Հիմնական միջոցներ	–	65,679,935	**65,679,935**
Ոչ նյութական ակտիվներ	–	3,020,744	**3,020,744**
Այլ ակտիվներ	11,576,011	834,973	**12,410,984**
Ընդամենը ակտիվներ	**1,683,494,157**	**383,427,091**	**2,066,921,248**
Պարտավորություններ			
Թղթադրամներ և մետաղադրամներ շրջանառության մեջ	607,209,301	–	**607,209,301**
Ֆինանսական և այլ հաստատությունների ավանդներ և հաշիվների մնացորդներ	723,401,279	–	**723,401,279**
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	81,100	–	**81,100**
Պարտավորություններ Կառավարության հանդեպ	327,294,360	–	**327,294,360**
Պարտավորություններ ԱՄՀ-ի հանդեպ	23,072,079	217,876,824	**240,948,903**
Այլ փոխառություններ	14,940,400	127,801,721	**142,742,121**
Թողարկված պարտատոմսեր	126,428	6,500,000	**6,626,428**
Այլ պարտավորություններ	4,889,874	463,739	**5,353,613**
Ընդամենը պարտավորություններ	**1,701,014,821**	**352,642,284**	**2,053,657,105**
Զուտ դիրք 2019թ. դեկտեմբերի 31-ին	**(17,520,664)**	**30,784,807**	**13,264,143**

32. Ֆինանսավորման գործունեության արդյունքում առաջացող պարտավորությունների փոփոխություն

Հազար ՀՀ դրամ	*Պարտավորություններ ԱՄՀ-ի նկատմամբ*	*Այլ փոխառություններ*	*Վարձակալության գծով պարտավորություններ*	*Ընդամենը պարտավորություններ ֆինանսավորման գործունեությունից*
Հաշվեկշռային արժեք 2019թ. հունվարի 1-ի դրությամբ	**266,323,100**	**152,032,617**	**482,988**	**418,838,705**
Ստացված վարկեր	–	6,346,555	–	6,346,555
Մարված վարկեր	(21,471,847)	(12,949,290)	–	(34,421,137)
Վճարումներ վարձակալության գծով	–	–	(82,489)	(82,489)
Արտարժույթի վերագնահատում	(3,855,835)	(2,536,524)	–	(6,392,359)
Այլ	(46,515)	(151,237)	25,346	(172,406)
Հաշվեկշռային արժեք 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**240,948,903**	**142,742,121**	**425,845**	**384,116,869**
Հաշվեկշռային արժեք 2020թ. հունվարի 1-ի դրությամբ	**240,948,903**	**142,742,121**	**425,845**	**384,116,869**
Ստացված վարկեր	–	14,258,245	–	14,258,245
Մարված վարկեր	(24,071,556)	(15,303,555)	–	(39,375,111)
Վճարումներ վարձակալության գծով	–	–	(89,123)	(89,123)
Արտարժույթի վերագնահատում	30,802,225	18,632,037	–	49,434,262
Այլ	(183,004)	256,792	30,050	103,838
Հաշվեկշռային արժեք 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**247,496,568**	**160,585,640**	**366,772**	**408,448,980**

«Այլ» տողը ներառում է հաշվեգրված, սակայն դեռևս չվճարված տոկոսները: Խումբը վճարված տոկոսները դասակարգում է որպես դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից:



Տեսարան Նալբանդյան փողոցից (1930-ական թթ.)



ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ